Էլեկտրական ցանցերի (շղթաների) հետազոտումը կառուցվածքային թվերի կիրառմամբ հնարավորություն է ընձեռում, հատկապես բլոկ-սխեմաների և բազմաբևեռների փոխանցման ֆունկցիաների հետազոտման բնագավառում, մշակել միասնական, տեսական և գործնական մեծ արժեք ներկայացնող մեթոդներ: Բարդ էլեկտրական շղթաների հետազոտումը հաճախ նպաստակահարմար է իրագործել մասերով՝ ներկայացնելով այն առանձին բազմաբևեռներով (բլոկներով): Բլոկ-սխեմաները հետազոտելիս դիտարկում են երկու դեպք. ա) բազմաբևեռների (բլոկների) ներքին կառուցվածքները հայտնի են, բ) բազմաբևեռների (բլոկների) ներքին կառուցվածքներն անհայտ են: Առաջին դեպքում բլոկ-գրաֆի բլոկները կարելի է փոխարինել առանձին բազմաբևեռների գրաֆներով ու որոշել յուրաքանչյուր բլոկի կառուցվածքային թիվը և ուսումնասիրությունը կատարել օգտվելով այդ կառուցվածքային թվերից: Երկրորդ դեպքում անհրաժեշտ է օգտվել միայն բազմաբևեռների ընդհանրացված պարամետրերից (մուտքային դիմադրություն կամ հաղորդականություն, լարման կամ հոսանքի փոխանցման ֆունկցիա և այլն): Այս աշխատանքում դիտարկված է առաջին դեպքը: Կատարենք բլոկ-սխեմաների կառուցվածքային թվերի հաշվարկը, երբ նրանց բլոկների ներքին կառուցվածքը հայտնի է: Գրաֆների մոդելավորումը կառուցվածքային թվերի միջոցով թույլ է տալիս գրաֆների հետ կատարվող տոպոլոգիական ձևափոխությունները արտահայտել կառուցվածքային թվերի հանրահաշվի օգնությամբ: Կառուցվածքային թվերի մեթոդը հնարավորություն է տալիս էլեկտրական շղթաների ֆունկցիաները ստանալ սիմվոլիկ (անալիտիկ) տեսքով, որոնց վերլուծությամբ հնարավոր է բացահայտել շղթաների նոր հատկություններ և օրինաչափություններ՝ օգտագործելով այն նոր մեթոդները և մոտեցումները մշակման մեջ:

Նախ դիտարկենք “T”-աձև և “Π”-աձև քառաբևեռներից կազմված բլոկ-սխեմաները:


1. “ΠΠ” տեսքի բլոկ-սխեմա՝




3. “TT” տեսքի բլոկ-սխեմա՝




5. “Π”-աձև քառաբևեռի միացումը երկբևեռին տեսքի բլոկ-սխեմա




2. “ΠΠ” տեսքի բլոկ-սխեմա՝



4. “ΠΠ” տեսքի բլոկ-սխեմա՝




6. “T”-աձև քառաբևեռի միացումը երկբևեռին տեսքի բլոկ-սխեմա



Այժմ բերենք վերը դիտարկված բլոկ-սխեմաների կառուցվածքային թվերը, համարելով, որ բլոկների ներքին կառուցվածքները հայտնի են:

1. ΠΠ-դեպք



Նկ.1 “ΠΠ” դեպքի բլոկ-գրաֆը (ա) և նրա ուրվագրաֆը (բ)

Հաշվենք բլոկ-գրաֆի 2A կառուցվածքային թիվը և ${}^2A^d$ լրացուցիչ կառուցվածքային թիվը

$$A_0^d = \begin{bmatrix} 4 \\ 2 \end{bmatrix}, A_1 = \begin{bmatrix} 2 \\ 3 \end{bmatrix}, A_2 = \begin{bmatrix} 5 \\ 6 \end{bmatrix}, A_1^d = \begin{bmatrix} 2 & 3 \\ 4 & 5 \\ 6 & 6 \end{bmatrix}, A_2^d = \begin{bmatrix} 4 & 5 \\ 6 & 6 \end{bmatrix}$$

A_0^d -ն ուրվագրաֆի լրացուցիչ կառուցվածքային թիվն է, A_1, A_2 առանձին բլոկների կառուցվածքային թվերն են: A_1^d, A_2^d առանձին բլոկների լրացուցիչ կառուցվածքային թվերն են:

$${}^2A = \begin{bmatrix} \frac{\partial A_1}{\partial A_0^d} \\ \frac{\partial A_2}{\partial A_0^d} \end{bmatrix} = \begin{bmatrix} \frac{\partial A_1}{\partial} & A_1 \\ A_2 & \frac{\partial A_2}{\partial} \end{bmatrix} = \begin{bmatrix} 2 & \begin{bmatrix} 4 & 5 \\ 6 & 6 \end{bmatrix} \\ \begin{bmatrix} 1 & 2 \\ 3 & 3 \end{bmatrix} & 6 \end{bmatrix} = \begin{bmatrix} 1 & 1 & 2 & 2 & 2 & 5 & 5 & 5 & 6 & 6 & 6 \\ 4 & 5 & 4 & 4 & 5 & 1 & 1 & 2 & 1 & 1 & 2 \\ 6 & 6 & 5 & 6 & 6 & 2 & 3 & 3 & 2 & 3 & 3 \end{bmatrix}$$

$${}^2A^d = A_0^d \begin{bmatrix} A_1^d \\ A_2^d \end{bmatrix} = \begin{bmatrix} A_1^d \\ A_2^d \end{bmatrix} = \begin{bmatrix} 2 & 3 \\ 5 & 6 \\ 2 & 3 \\ 5 & 6 \end{bmatrix} = \begin{bmatrix} 4 & 5 & 5 & 6 & 6 & 1 & 1 & 2 & 2 & 3 & 3 \\ 3 & 3 & 3 & 3 & 3 & 4 & 4 & 4 & 4 & 4 & 4 \\ 2 & 1 & 2 & 1 & 2 & 5 & 6 & 5 & 6 & 5 & 6 \end{bmatrix}$$

Համաձայն տեղաբանական մեթոդների [19, 20], հանգուցային հաղորդականությունների (բջջային դիմադրությունների) մատրիցայի դետերմինանտը հավասար է էլեկտրական սխեմայի համապատասխան գրաֆի բոլոր հնարավոր ծառ (լրացում) ենթագրաֆների ճյուղերի հաղորդականությունների (դիմադրությունների) արտադրյալների գումարին:


Համապատասխան դետերմինանտային ֆունկցիաները կլինեն՝

$$\Delta = \sum Y_4 Y_5 + \sum Y_4 Y_6 + \sum Y_5 Y_6 + \sum Y_4 Y_5 + \sum Y_4 Y_6 + \sum Y_5 Y_6 + \sum Y_1 Y_2 + \sum Y_1 Y_3 + \sum Y_2 Y_3 + \sum Y_1 Y_2 + \sum Y_1 Y_3 + \sum Y_2 Y_3$$

$$\Delta = \sum Z_4 Z_3 Z_1 + \sum Z_4 Z_3 Z_2 + \sum Z_5 Z_3 Z_1 + \sum Z_5 Z_3 Z_2 + \sum Z_6 Z_3 Z_1 + \sum Z_6 Z_3 Z_2 + \sum Z_1 Z_4 Z_5 + \sum Z_1 Z_4 Z_6 + \sum Z_2 Z_4 Z_5 + \sum Z_2 Z_4 Z_6 + \sum Z_3 Z_4 Z_5 + \sum Z_3 Z_4 Z_6$$

Ստուգում՝ $A = \begin{bmatrix} 1 \\ 3 & 4 & 5 \\ 6 \end{bmatrix} = \begin{bmatrix} 5 & 5 & 5 & 5 & 6 & 6 & 6 & 6 & 6 & 6 \\ 2 & 1 & 1 & 1 & 2 & 2 & 2 & 1 & 1 & 1 & 1 \\ 4 & 2 & 3 & 4 & 3 & 4 & 5 & 2 & 3 & 4 & 5 \end{bmatrix}$

2. TΠ-դեպք



Նկ.2 “TΠ” դեպքի գրաֆը (ա) և նրա ուրվագրաֆը (բ) բլոկ-

հաշվենք ուրվագրաֆի լրացուցիչ կառուցվածքային թիվը՝ $A_0^d = \begin{bmatrix} 3 & 4 \\ 2 \end{bmatrix}$

հաշվենք առանձին բլոկների A_1, A_2 կառուցվածքային թվերը՝

$$A_1 = \begin{bmatrix} 2 & 3 \\ 4 & 5 \\ 6 & 6 \end{bmatrix}, A_2 = \begin{bmatrix} 5 \\ 6 \end{bmatrix}$$

Հաշվենք առանձին բլոկների A_1^d, A_2^d լրացուցիչ կառուցվածքային թվերը՝

$$A_1^d = , \quad A_2^d = \begin{bmatrix} 5 & 6 \\ 2 \end{bmatrix}$$

Բլոկ-գրաֆի 2A կառուցվածքային և ${}^2A^d$ լրացուցիչ կառուցվածքային թվերը կլինեն

$${}^2A = \frac{\partial \begin{bmatrix} A_1 \\ A_2 \end{bmatrix}}{\partial \begin{bmatrix} 3 & 4 \end{bmatrix}} = \begin{bmatrix} \frac{\partial A_1}{\partial 3} & \frac{\partial A_1}{\partial 4} & A_1 \\ A_2 & A_2 & \frac{\partial A_2}{\partial 3} \end{bmatrix} \quad \frac{\partial A_1}{\partial 3} = \begin{bmatrix} 1 \\ 1 \end{bmatrix}, \quad \frac{\partial A_1}{\partial 4} = \begin{bmatrix} 1 \\ 1 \end{bmatrix}, \quad \frac{\partial A_2}{\partial 3} = \begin{bmatrix} 5 \\ 6 \end{bmatrix}$$


$${}^2A = \begin{bmatrix} 1 & 1 & 1 & 1 & 1 & 5 & 6 \\ 3 & 3 & 2 & 2 & 2 & 1 & 1 \\ 4 & 5 & 4 & 4 & 5 & 3 & 3 \\ 6 & 6 & 5 & 6 & 6 & 2 & 2 \end{bmatrix}$$

$${}^2A^d = A_0^d \begin{bmatrix} A_1^d \\ A_2^d \end{bmatrix} = \begin{bmatrix} 3 & 4 \\ 5 & 6 \end{bmatrix} = \begin{bmatrix} 2 & 2 & 3 & 3 & 3 & 4 & 4 \\ 5 & 6 & 4 & 5 & 6 & 5 & 6 \end{bmatrix}$$

Ստուգում՝

$$A = \begin{bmatrix} 2 & 3 \\ 4 & 5 \\ 6 \end{bmatrix} = \begin{bmatrix} 5 & 5 & 6 & 6 & 6 & 6 & 6 \\ 4 & 4 & 3 & 4 & 4 & 5 & 5 \\ 1 & 1 & 1 & 1 & 1 & 1 & 1 \\ 2 & 3 & 2 & 2 & 3 & 2 & 3 \end{bmatrix}$$

3. TT- դեպք



Նկ.3 “T T” դեպքի բլոկ-Ուրվագրաֆի լրացուցիչ կառուցվածքային թիվը կլինի՝

գրաֆը (ուրվագրաֆը նույնն է)

$$A_0^d = \begin{bmatrix} 3 & 4 \\ 5 \end{bmatrix}$$

A_1, A_2 կառուցվածքային և A_1^d, A_2^d լրացուցիչ կառուցվածքային թվերը կլինեն՝

$$A_1 = \begin{bmatrix} 2 & 3 \end{bmatrix}, \quad A_2 = \begin{bmatrix} 5 & 6 \\ 2 \end{bmatrix}, \quad A_1^d = , \quad A_2^d = ,$$

Բլոկ-գրաֆի 2A կառուցվածքային և ${}^2A^d$ լրացուցիչ կառուցվածքային թվերը կլինեն


$${}^2A = \frac{\partial \begin{bmatrix} A_1 \\ A_2 \end{bmatrix}}{\partial \begin{bmatrix} 3 & 4 & 5 \end{bmatrix}} = \begin{bmatrix} \frac{\partial A_1}{\partial 3} & \frac{\partial A_1}{\partial 4} & A_1 & A_1 \\ A_2 & A_2 & \frac{\partial A_2}{\partial 3} & \frac{\partial A_2}{\partial 4} \end{bmatrix} \quad \frac{\partial A_1}{\partial 3} = \begin{bmatrix} 1 \\ 1 \end{bmatrix}, \quad \frac{\partial A_1}{\partial 4} = \begin{bmatrix} 1 \\ 1 \end{bmatrix}, \quad \frac{\partial A_2}{\partial 3} = \begin{bmatrix} 6 \\ 5 \end{bmatrix}, \quad \frac{\partial A_2}{\partial 4} = \begin{bmatrix} 6 \\ 5 \end{bmatrix}$$

$${}^2A = \begin{bmatrix} 1 & 6 & 6 \\ 2 & 5 & 4 \\ 6 & 1 & 1 \\ 4 & 3 & 3 \\ 5 & 2 & 2 \end{bmatrix}, \quad {}^2A^d = A_0^d \begin{bmatrix} A_1^d \\ A_2^d \end{bmatrix} = \begin{bmatrix} 3 & 4 \\ 5 \end{bmatrix}$$

Ստուգում՝

$$A = \begin{bmatrix} 2 & 3 & 4 & 5 & 6 \\ 5 & 5 & 5 \\ 3 & 4 & 4 \\ 6 & 6 & 6 \\ 1 & 1 & 1 \\ 2 & 2 & 3 \end{bmatrix}$$

4. ՊՏ-դեպ



Նկ.4

ա) բլոկ գրաֆ

բ) ուրվագրաֆ

“ՊՏ”

դեպքի բլոկ-գրաֆը (ա) և նրա ուրվագրաֆը (բ)

Ուրվագրաֆի լրացուցիչ կառուցվածքային թիվը կլինի՝

$$A_0^d = \begin{bmatrix} 4 & 5 \end{bmatrix}$$

A_1, A_2 կառուցվածքային և A_1^d, A_2^d լրացուցիչ կառուցվածքային թվերը կլինեն՝

$$A_1 = \begin{bmatrix} 2 & 3 \\ 1 & 2 \\ 3 & 3 \end{bmatrix}, \quad A_2 = \begin{bmatrix} 5 & 6 \end{bmatrix}, \quad A_1^d = \begin{bmatrix} 2 & 3 \end{bmatrix}, \quad A_2^d = \begin{bmatrix} \cdot \\ \cdot \end{bmatrix}$$

Բլոկ-գրաֆի 2A կառուցվածքային և ${}^2A^d$ լրացուցիչ կառուցվածքային թվերը կլինեն

$${}^2A = \frac{\partial \begin{bmatrix} A_1 \\ A_2 \end{bmatrix}}{\partial \begin{bmatrix} A_0^d \end{bmatrix}} = \frac{\partial \begin{bmatrix} A_1 \\ A_2 \end{bmatrix}}{\partial} = \begin{bmatrix} \frac{\partial A_1}{\partial} & A_1 & A_1 \\ A_2 & \frac{\partial A_2}{\partial} & \frac{\partial A_2}{\partial} \end{bmatrix}, \quad \frac{\partial A_1}{\partial} = \begin{bmatrix} 2 \\ \cdot \end{bmatrix}, \quad \frac{\partial A_2}{\partial} = \begin{bmatrix} 6 \\ 5 \end{bmatrix}, \quad \frac{\partial A_2}{\partial} = \begin{bmatrix} \cdot \\ \cdot \end{bmatrix}$$


$${}^2A = \begin{bmatrix} 2 \\ \cdot \end{bmatrix} \begin{bmatrix} 1 & 2 \\ 3 & 3 \end{bmatrix} + \begin{bmatrix} 1 & 2 \\ 3 & 3 \end{bmatrix} \begin{bmatrix} 5 & 6 \end{bmatrix} = \begin{bmatrix} 2 & 6 & 6 & 6 & 6 & 6 & 6 \\ 6 & 5 & 5 & 5 & 4 & 4 & 4 \\ 4 & 1 & 1 & 2 & 1 & 1 & 2 \\ 5 & 2 & 3 & 3 & 2 & 3 & 3 \end{bmatrix}$$

$${}^2A^d = A_0^d \begin{bmatrix} A_1^d \\ A_2^d \end{bmatrix} = \begin{bmatrix} 4 & 5 \\ 2 & 3 \end{bmatrix} \begin{bmatrix} 3 & 4 & 4 & 4 & 5 & 5 & 5 \\ 2 & 1 & 2 & 3 & 1 & 2 & 3 \end{bmatrix}$$

Ստուգում՝

$$A = \begin{bmatrix} 2 & 3 & 4 & 5 & 6 \\ 4 & 4 & 5 & 5 & 5 & 5 & 5 \\ 6 & 6 & 6 & 6 & 6 & 6 & 6 \\ 1 & 2 & 1 & 1 & 1 & 2 & 2 \\ 3 & 3 & 2 & 3 & 4 & 3 & 4 \end{bmatrix}$$

5. “Պ”-աձև քառաբևեռի միացումը երկբևեռին:



ա) բլոկ գրաֆ

բ) ուրվագրաֆ

Նկ.5 Դիտարկված դեպքի բլոկ-գրաֆը (ա) և նրա ուրվագրաֆը (բ)

$$A_0^d = \begin{bmatrix} 4 \\ 2 \end{bmatrix} \quad A_1 = \begin{bmatrix} 2 \\ 3 \end{bmatrix} \quad A_2 = \begin{bmatrix} 1 & 2 \\ 3 & 3 \end{bmatrix} \quad A_1^d = \begin{bmatrix} 2 & 3 \\ 2 & 3 \end{bmatrix} \quad A_2^d = \begin{bmatrix} 4 & 1 & 1 & 2 \\ 2 & 2 & 3 & 3 \end{bmatrix}$$


$${}^2A = \frac{\partial \begin{bmatrix} A_1 \\ A_2 \end{bmatrix}}{\partial A_0^d} = \begin{bmatrix} \frac{\partial A_1}{\partial A_0^d} & A_1 \\ A_2 & \frac{\partial A_2}{\partial A_0^d} \end{bmatrix} \quad \frac{\partial A_1}{\partial A_0^d} = \begin{bmatrix} 2 \\ 3 \end{bmatrix} \quad \frac{\partial A_2}{\partial A_0^d} = \begin{bmatrix} 1 & 2 \\ 3 & 3 \end{bmatrix}$$

$${}^2A^d = A_0^d \begin{bmatrix} A_1^d \\ A_2^d \end{bmatrix} = \begin{bmatrix} 4 \\ 2 \end{bmatrix} \begin{bmatrix} 2 & 3 \\ 2 & 3 \end{bmatrix} = \begin{bmatrix} 3 & 4 & 4 & 4 \\ 2 & 1 & 2 & 3 \end{bmatrix}$$

Ստուգում՝

$$A = \begin{bmatrix} 2 & 3 \\ 4 & 1 \end{bmatrix} \begin{bmatrix} 1 & 2 & 2 & 2 \\ 4 & 1 & 3 & 4 \end{bmatrix}$$

6. “T”-աձև քառարկեռի միացումը երկրենոին:



Նկ.6 Դիտարկված դեպքի բլոկ-գրաֆը

(ուրվագրաֆը նույնն է)

$$A_0^d = \begin{bmatrix} 3 & 4 \\ 2 \end{bmatrix} \quad A_1 = \begin{bmatrix} 1 & 3 \end{bmatrix} \quad A_2 = \begin{bmatrix} 4 & 3 \\ 2 & 2 \\ 1 & 1 \end{bmatrix} \quad A_1^d = \begin{bmatrix} 1 & 3 \end{bmatrix} \quad A_2^d = \begin{bmatrix} 4 & 3 \\ 2 & 2 \\ 1 & 1 \end{bmatrix}$$

$${}^2A = \frac{\partial \begin{bmatrix} A_1 \\ A_2 \end{bmatrix}}{\partial A_0^d} = \frac{\partial \begin{bmatrix} A_1 \\ A_2 \end{bmatrix}}{\partial \begin{bmatrix} 3 & 4 \\ 2 \end{bmatrix}} = \begin{bmatrix} \frac{\partial A_1}{\partial A_0^d} & \frac{\partial A_1}{\partial A_0^d} & A_1 \\ A_2 & A_2 & \frac{\partial A_2}{\partial A_0^d} \end{bmatrix} \quad \frac{\partial A_1}{\partial A_0^d} = \begin{bmatrix} 1 & 3 \end{bmatrix} \quad \frac{\partial A_2}{\partial A_0^d} = \begin{bmatrix} 4 & 3 \\ 2 & 2 \\ 1 & 1 \end{bmatrix} \quad \frac{\partial A_2}{\partial A_0^d} = \begin{bmatrix} 4 & 3 \\ 2 & 2 \\ 1 & 1 \end{bmatrix}$$

$${}^2A^d = A_0^d \begin{bmatrix} A_1^d \\ A_2^d \end{bmatrix} = \begin{bmatrix} 3 & 4 \\ 2 \end{bmatrix} \begin{bmatrix} 1 & 3 \\ 4 & 3 \\ 2 & 2 \\ 1 & 1 \end{bmatrix} = \begin{bmatrix} 4 & 4 \\ 2 & 2 \\ 1 & 3 \end{bmatrix}$$

Ստուգում՝

$$A = \begin{bmatrix} 1 & 3 \\ 4 & 1 \end{bmatrix} \begin{bmatrix} 4 & 4 \\ 2 & 2 \\ 1 & 3 \end{bmatrix}$$

Գրականություն

1. Беллерт С., Возняцки Г. Анализ и синтез электрических цепей методом структурных чисел. – М.: Мир, 1972.
2. Акопджанян Г.Д., Сафарян В.С. Исследование электрических цепей методом структурных чисел: Учебное пособие, ГИУА, Ереван, 1995.
3. Акопджанян Г.Д., Сафарян В.С. Анализ электрических блок-схем с применением алгебры структурных чисел: Моделирование, оптимизация, управление, вып. 4, Ереван-2001.
4. Атабеков Г.И. Основы теории цепей, 1966.

**Վազգեն Առստամյան, Արթուր Մնացականյան
ԱրՊՀ Կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոն
Գուրգեն Դալլաքյան,
ՀՊՄՀ, ինֆորմատիկայի և դրա դաս. մեթոդիկայի ամբիոնի դոցենտ**

ՕՐԱԳՐԱՎՈՐՄԱՆ ԴԱՄԱՎԱՂՄԱՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սույն հոդվածում փորձ է արվում ընդհանրացնել ծրագրավորման ուսուցման հիմնախնդիրների վերաբերյալ արևմտյան երկրների ներկայիս մոտեցումները: Այդ նկատառումներով ուսումնասիրվել և վերլուծվել են որոշ ատենախոսական հետազոտություններ:

Բանալային բառեր. ծրագրավորման ուսուցման մեթոդիկա, կոգնիտիվ ծանրաբեռնվածության տեսություն, ծրագրերի իրականացման վիզուալ իմիտացիա, վեբ-կոդմոնորնշված միջավայր

**Вазген Арстамян, Артур Мнсакакян
кафедра прикладной математики и информатики АГУ
Гурген Даллакян,
доцент кафедры информатики и методов ее преподавания АГПУ**

ОБ ИННОВАЦИОННЫХ ПОДХОДАХ ОБУЧЕНИЯ ПРОГРАММИРОВАНИЮ

Данная статья представляет собой попытку обобщить текущую позицию западных стран по вопросу обучения программированию. Эти соображения изучены и проанализированы некоторые тезис исследования.

Ключевые слова: методы учебного программирования, нагрузка когнитивной теории, имитация визуальных программ, веб-среда

**Vazgen Arstamyan, Arthur Mnatsakanyan
The Department of Applied Mathematics and Informatics, ASU
Gurgen Dallakyan,
The Chair of Informatics and Methods of its of teaching, ASPU**

THE INNOVATIVE APPROACHES OF TEACHING PROGRAMMING

This article is an attempt to summarize the current position of the Western countries on the issue of programming training. These considerations are studied and some thesis research are analyzed.

Keywords: methods of learning programming, cognitive theory load, visual program simulation, web-based environment

Ներկայումս գոյություն ունեն ծրագրավորման ուսուցման բազմաթիվ մոտեցումներ: Այդ բնագավառում այլևս հայտնի աշխատանքներ են համարվում Մ.Ե. Կասփերսենի, Բ.Մ. Հենքոբի, Յ. Սորվայի, Ա. Էքերդալի, Փ.Դ.ԴեՊասկուալեի ատենախոսությունները: Քննարկենք նշված արդյունքներում ներկայացված մոտեցումները:

Մ.Ե. Կասփերսենի [1] կողմից նկարագրված ծրագրավորման ուսուցման մեթոդիկան հիմնված է կոգնիտիվ ծանրաբեռնվածության տեսության վրա: Նշենք, որ կոգնիտիվ ծանրաբեռնվածությունը դա խնդրի լուծման և հետազոտման պրոցեսի ընթացքում աշխատանքային հիշողության վրա ընկած ծանրաբեռնվածությունն է: Համաձայն կոգնիտիվ ծանրաբեռնվածության տեսության ֆունդամենտալ աքսիոմի՝ ուսուցման արդյունքը լինում է լավագույնը, երբ որ կոգնիտիվ ծանրաբեռնվածությունը լիարժեք է օգտագործում աշխատանքային հիշողության այն մասը, որն անհրաժեշտ է գիտելիքների արդյունավետ ձեռքբերման համար: Այսինքն, չափազանց մեծ, կամ չափազանց փոքր ծանրաբեռնվածությունը բերում է ոչ ցանկալի արդյունքի: Հետևաբար, ուսուցման օպտիմիզացիայի համար պետք է հասնել կոգնիտիվ ծանրաբեռնվածության հավասարակշռմանը:

Ներկայումս կոգնիտիվ ծանրաբեռնվածությունը (L) բաժանվում է երեք կատեգորիաների.

1. օտար կոգնիտիվ ծանրաբեռնվածություն (E) - ծանրաբեռնվածություն, որը խոչնդոտում է ուսուցմանը, քանի որ հաճախ է գերազանցում աշխատանքային հիշողության չափերը,
2. տեղին կոգնիտիվ ծանրաբեռնվածություն (G) – ծանրաբեռնվածություն, որն ավելի շատ խթանում է ուսուցման գործընթացը, քան՝ խանգարում, այդպիսով՝ օգնում ձեռք բերել գիտելիքներ: Այն ձևավորվում է կոգնիտիվ

գործընթացների մակարդակի բարձրացման ճանապարհով, որն էլ խթանում է գիտելիքների արդյունավետ ընկալումը,

3. ներքին կոգնիտիվ ծանրաբեռնվածություն (I) – ծանրաբեռնվածություն, որի իջեցումը բերում է հասկանալիության ցածրացմանը: Այն կախված է ուսումնասիրվող նյութի հարաբերական բարդությունից և ուսանողի ընկալունակության մակարդակից:

Արդյունքում, L, E, G և I մեծությունների միջև կապը ներկայացվում է հետևյալ կերպ. $L=E+G+I$: Այս պայմաններում կոգնիտիվ ծանրաբեռնվածության հավասարակշռման խնդիրը հանգում է E-ի մինիմիզացիայի և G-ի մաքսիմիզացիայի խնդրին:

Եթե փորձենք կիրառել կոգնիտիվ ծանրաբեռնվածության տեսությունը սկսնակ ծրագրավորողներին ուսուցման գործում, ապա ամենարդյունավետ մեթոդ կհամարվի այն մեթոդը, որի ժամանակ ուսուցման գործընթացը իրականանում է դասավանդողի կողմից տրվող խորհուրդների և աջակցության միջոցով: Այդպիսի մոտեցման դեպքում կարելի է վստահեցնել, որ ուսանողները կընկալեն ծրագրավորման կարևոր ասպեկտները՝ պահպանելով կոգնիտիվ ծանրաբեռնվածությունը թույլատրելի սահմաններում: Այս մեթոդի հիման վրա կատարված ուսուցումը իրականացվում է ուսուցման միջոցների համալիր օգտագործմամբ (դասագիրք, հանձնարարություններ, տեսանյութեր):

Մասնավորապես, [1]-ում կատարված գիտափորձի ժամանակ օգտագործվել է դասագիրք, որը ստեղծվել է օբյեկտկոդմանորոշված ծրագրավորման ուսուցման մանկավարժական սկզբունքների և „աշակերտման“, սկզբունքների հիման վրա: Համաձայն այդ մեթոդի, սկզբում ուսանողները հետևում են այն գործընթացին, թե ինչպես է դասավանդողը ցուցադրում ծրագրերի ստեղծման մեջ նոր մեթոդների և կառուցվածքների օգտագործումը, ապա փորձում են կիրառել այդ մեթոդները դասավանդողի ղեկավարությամբ և վերջում՝ ինքնուրույն իրականացնում ծրագրերը: Կարևոր է, որ առաջարկվող խնդիրներն ու վարժություններն ունենան ցուցումներ, որոնք կօգնեն ուսանողին ծրագրի իրականացման տարբեր էտապներում կողմնորոշվելու հարցում: „Աշակերտման“, մեթոդի հատկություններից մեկն էլ տեսանյութերի օգտագործումն է, որոնք ցուցադրում են խնդրի լուծման ամբողջ գործընթացը՝ սկսած ալգորիթմացումից, մինչև ծրագրի կազմումն ու վերջնական իրականացումը: Այն կարող է ցուցադրել ոչ միայն ծրագրավորման հիմնական տեխնոլոգիաները, այլև՝ այնպիսի փոքր դետալներ, որոնք սովորաբար ակնհայտ են համարվում և մանրամասն չեն մեկնաբանվում ուսանողներին: Նշված մեթոդը, իհարկե, բավականին հարմար է, քանի որ ուժեղ ուսանողները կարող են ուղղակի բաց թողնել այն, ինչ իրենց համար պարզ և հասկանալի է, իսկ մյուսները՝ դիտել տեսանյութը մի քանի անգամ:

Հաջորդ մոտեցումը, որ մենք կքննարկենք, նկարագրված է Յ. Սորվայի աշխատանքում [2]: Այն իրականացվել է Ֆինլանդիայի Աալտոյի համալսարանում գործող գիտական դպրոցում: Այդ մոտեցման հիմքում ընկած է ծրագրի իրականացման վիզուալ իմիտացիան՝ երբ ուսանողն իր վրա է վերցնում ծրագիրն իրականացնողի դերը՝ կարդում է կոդը, կատարում է հրահանգները համապատասխան հաջորդականությամբ և վերահսկում արդյունքի ստացումը: Ծրագրի իրականացման վիզուալ իմիտացիան կարելի է դիտարկել որպես վարժանք, որի կատարման ընթացքում ուսանողները գործնական հմտություններ են ձեռք բերում: Կատարելով այդ վարժանքը՝ սովորողը պետք է ոչ միայն հասկանա, թե ինչպես է աշխատում ծրագիրը, այլև ինչ-որ կերպ դասավանդողին „ցուցադրաբար“, տեղեկացնի այդ մասին:

Սկսնակ ծրագրավորողներին վիզուալ իմիտացիա կատարել կարելի է սովորեցնել՝ օգտագործելով ծրագրերի վիզուալիզացիայի համակարգեր, այսինքն՝ հատուկ ծրագրեր, որոնք ցուցադրում են ծրագրի կատարման ընթացքը տեքստային կամ գրաֆիկական ռեժիմում: Հայտնի է, որ ծրագրերի վիզուալիզացիայի համակարգերը նախ և առաջ տարանջատվում են հետևյալ պարամետրերով,

1. խնդիրներ՝ որոնց համար անհրաժեշտ է վիզուալիզացիա (օրինակ, սխալի տեղի հայտնաբերում)
2. լսարան՝ ում է անհրաժեշտ կատարել վիզուալիզացիա (օրինակ, փորձառու ծրագրավորող, խմբի ղեկավար)
3. նպատակ՝ այն ինչ վիզուալացնում է համակարգը (օրինակ, ելակետային կոդը, ծրագրի աշխատանքի արդյունքը)

4. ներկայացման ձև՝ ինչպես է ներկայացվում վիզուալիզացիան (օրինակ, երկչափ գրաֆիկա, եռաչափ օբյեկտներ)

5. ներկայացման եղանակ՝ ինչ եղանակով է ներկայացվում վիզուալիզացիան (օրինակ, արտացոլում էկրանի վրա, վիրտուալ իրականություն):

Եթե այս դասակարգումը կիրառենք ծրագրավորման ուսուցման գործընթացում, ապա կունենանք հետևյալ պարամետրերը.

1. խնդիր՝ օգնություն ծրագրավորման հիմունքների ուսուցման հարցում,
2. լսարան՝ սկսնակ ծրագրավորողներ և ծրագրավորման հիմունքների դասավանդողներ
3. նպատակ՝ ծրագրերի քայլային կատարման վիզուալիզացիա
4. ներկայացման ձևը դեր չի խաղում
5. ներկայացման եղանակը՝ ցուցադրում էկրանի վրա:

Ներկայումս, ծրագրերի վիզուալիզացիայի համակարգեր գոյություն ունեն տարբեր ծրագրավորման լեզուների համար: Այսպես, օրինակ, Pascal լեզվի ուսուցման համար նախատեսված են Amethist, EROSI, PlanAni համակարգերը, Basic-ի համար՝ Basic Programming-ը, C լեզվի համար՝ Bradman, CMeRun, VINCE, OGRE, PlanAni, VIP, ViLLE և այլն, Java-ի համար՝ JAVAVIS, OOP-Anim, JavaMod, JIVE, MemView, JavaTool, PlanAni և այլն, Python-ի համար՝ PlanAni, ViLle, Jype, Online Phyton Tutor, SUhistle համակարգերը: Վերջին հաշվով, թեկուզ և անուղղակի ձևով, այս համակարգերը խթանում են ծրագրերի կազմման գործընթացների զարգացումը:

Ուշադրության է արժանի նաև Ն. Տրոունգի (Քվինսլենդի տեխնոլոգիական համալսարան, Ավստրալիա) [3] աշխատանքը: Այնտեղ նկարագրվում է ծրագրավորման ուսուցման մեթոդիկա՝ վեբ-կողմնորոշված միջավայրի օգտագործմամբ: Ըստ Տրոունգի, ստանդարտ միջավայրերում աշխատելիս ուսանողները հանդիպում են այսպիսի դժվարություններին.

1. ծրագրավորման միջավայրի տեղադրում,
2. ծրագրավորման միջավայրի խմբագրի օգտագործում,
3. ճանապարհների նախագծում և իրագործում՝ կապված խնդրի լզգործիքացման, ծրագրային լուծման և արդյունքի մեկնաբանման հետ,

4. կոմպիլյացիայի սխալների մեկնաբանում,
5. կարգաբերում:

Այս դժվարություններն ավելի են մեծանում, երբ ուսանողները սովորում են այնպիսի լեզուներ, ինչպիսիք են՝ C++-ը, Java-ն, C#-ը, քանի, որ այդ լեզուները պարունակում են արտարկցիայի բարձր մակարդակ և նախատեսված են հիմնականում փորձառու ծրագրավորողների համար: Որպեսզի ազատենք ուսանողներին ծրագրավորման միջավայրի տեղադրման և խմբագրի օգտագործման ուսուցման գործընթացներից, Տրոունգը առաջարկում է առավելապես օգտվել վեբ-կողմնորոշված միջավայրերից: Ներկայումս գոյություն ունեն մի շարք վեբ-կողմնորոշված միջավայրեր: Դրանցից ամենահայտնիները հետևյալն են.

1. CodeSaw՝ աջակցում է C, C++, Java, Perl, Python, Ruby, XML, HTML, PHP, SQL, PL/SQL, Java-Script լեզուներին:
2. CourseMaster՝ աջակցում է C++, Java լեզուներին:
3. WebToTeach- աջակցում է Java, C, C++ լեզուներին:
4. CodeLab՝ աջակցում է Java, C, C++ լեզուներին:
5. InSTEP՝ աջակցում է Java, C, C++ լեզուներին:
6. WWWforLearningC++;
7. W4AP – աջակցում է Java, C լեզուներին:
8. JERPA – աջակցում է Java լեզվին:
9. VECR – աջակցում է Java, C լեզուներին:
10. Ludwig – աջակցում է C++ լեզվին:
11. ALECS – աջակցում է C++ լեզվին :
12. ELP – աջակցում է Java, C, C# լեզուներին:

Նշված միջավայրերի վերլուծությունը ցույց է տալիս, որ նրանցից ամենաարդյունավետը ELP վեբ-կողմնորոշված միջավայրն է: ELP-ը հանդիսանում է կլիենտ-սերվերային միջավայր: Կլիենտը աշխատում է վեբ-բրուզերի միջոցով, որի գործարկման համար անհրաժեշտ է *JavaRuntimeEnvironment* փաթեթը: ELP-ում նախատեսված է երկու ռեժիմ՝ „Ուսանող, և „Դասախոս,:

Ուսանողների համար նախատեսված տարբերակում բերված է „լրացնել բացթողածը, տիպի վարժությունների համակարգ, որոնք պահվում են սերվերի վրա: Յուրաքանչյուր վարժություն իրենից ներկայացնում է ծրագիր, որի կողում կան բաց թողնված տողեր և այդ տողերը պետք է լրացնեն ուսանողները: Ընդ որում, կողի մնացած մասը հասանելի չէ խմբագրման համար: Այդպիսով ուսանողները չեն ծախսում ավելորդ ժամանակ ծրագրավորման միջավայրի տեղակայման վրա և անմիջապես կենտրոնանում են խնդիրների ծրագրային եղանակով լուծման վրա: Վարժությունները դասավորված են ըստ բարդության աճի: Սկզբնական մի քանի վարժություններն ընդհանրապես չեն պարունակում բացթողումներ, ուստի ուսանողներն անմիջապես կոմպիլյացիա են անում և թողարկում դրանք: Մյուս վարժությունները կարող են պարունակել ինչպես մեկ, այնպես էլ՝ մի քանի բացթողումներ:

Ուսանողների համար նախատեսված է աշխատանքային երեք ռեժիմ՝ hint (խորհուրդ), solution (լուծում), My Program: My Program-ը հիմնական ռեժիմն է, այստեղ իրականանում են ծրագրերը: Անցնելով hint ռեժիմին՝ կարելի է ստանալ խորհուրդներ բացթողումների լրացման վերաբերյալ, իսկ solution ռեժիմում՝ տեսնել լուծումը: Կողի բացթողած տողերը լրացնելուց հետո ուսանողը պետք է պահի այն հիշողության մեջ՝ մինչ կոմպիլյացիա անելը: Այնուհետև վարժությունը ուղարկվում է սերվեր՝ կոմպիլյացիայի և էկրանին պատասխանի արտացոլման համար: Եթե ծրագրում սխալ չկա, ապա ուսանողները կարող են բեռնել և թողարկել այն սեփական համակարգիչների վրա՝ „offline, ռեժիմում: Իսկ սխալի առկայության դեպքում՝ կոմպիլյատորը տալիս է հաղորդագրություն այդ մասին: Հաղորդագրությունը պարունակում է հղումներ, որոնք թույլ են տալիս սովորողներին արագ և հեշտ գտնել սխալի տեղը և տեսակը: Այդպիսով, ELP միջավայրը ուսանողներին տալիս է ակնթարթային հետադարձ կապ, որի հիման

վրա ուսանողները ստանում են մանրամասն ինֆորմացիա ինչպես ծրագրի սխալների, այնպես էլ՝ դրանք ուղղելու հնարավորությունների մասին:

„Դասախոս,, ռեժիմում, բացի hint, solution, MyProgram ռեժիմների, գոյություն ունի նաև template ռեժիմը, որտեղ դասախոսները կարող են ստեղծել և վերացնել վարժությունների բացթողումները: Նրանք կարող են նաև փոխել hint ռեժիմի խորհուրդները, կատարել փոփոխություններ ծրագրերի մեջ MyProgram ռեժիմում: Բացի այդ, դասախոսներն հնարավորություն ունեն տեղեկանալու ուսանողների կատարած վարժությունների մասին, կողի մեջ կատարած լրացումների և կոմպիլյացիաների միջև եղած ինտերվալների մասին: Վերջապես, վերլուծելով այդ ամբողջ ինֆորմացիան, նրանք կարող են կարգիք կազմել ուսանողների ծրագրավորելու ունակությունների վերաբերյալ և, ըստ այդմ, նրանց համապատասխան օգնություն ցուցաբերել [4]:

Վերջում քննարկենք ծրագրավորման ուսուցման Դ. Տիգի [5] (Քլինսլենդի տեխնոլոգիական համալսարան, Ավստրալիա) մեթոդիկան: Այն հիմնված է համատեղ ծրագրավորման (pairprogramming) վրա: Համատեղ ծրագրավորումը հանդիսանում է „էքստրեմալ,, ծրագրավորման պրակտիկա՝ երբ երկու ծրագրավորողներ կողք-կողքի աշխատում են միևնույն համակարգչի վրա: Նրանցից մեկը իր վրա է վերցնում „առաջնորդի,, դերը, այսինքն՝ գրառում է կոդը և լուծում խնդիրը տակտիկական տեսանկյունից, մյուսը՝ տանում է „ուղղորդի,, (ադրման) դերը՝ կատարում է ստրատեգիական վերլուծություն, հարցեր է տալիս առաջնորդին և հետևում է կոդի սխալներին: Նրանք, իհարկե, աշխատանքի ընթացքում հաճախ փոխվում են դերերով:

Այս հետազոտության արդյունքում Դ. Տիգը բացահայտել է համատեղ ծրագրավորման առավելությունները.

1. սխալների քիչ քանակություն,
2. կոդի ավելի լավ ըմբռնում,
3. ավելի որակյալ կոդ,
4. զույգից սովորելու հնարավորություն,
5. դիզայնի լավացում,
6. կոդի մշտադիտարկում,
7. կրեատիվություն և մտքային լայնածավալ հարձակում,
8. թեստավորման և կարգաբերման որակի լավացում,
9. առաջացող խնդիրների արագ լուծում:

Այս մեթոդով ուսուցման ժամանակ կարող են առաջանալ որոշ խոչընդոտներ.

1. ուսանողների զույգի պատրաստվածության և ունակությունների խիստ տարբերությունը,
2. համատեղ ծրագրավորման կանոնների վերաբերյալ ուսանողների ընկալունակության մակարդակը և պատրաստակամությունը,

3. ուսանողների հաճախելիությունը,
 4. համատեղ ծրագրավորման պրոցեսի վերահսկումը դասախոսի կողմից:
- Որպեսզի այս մեթոդով ուսուցումը արդյունավետ լինի, անհրաժեշտ է առաջնորդվել հետևյալ սկզբունքներով.

1. ցանկալի է, որ զույգի մեջ ընդգրկված լինեն իրենց ունակություններով իրարից քիչ տարբերվող ուսանողներ,
2. համատեղ աշխատող ուսանողներին պետք է հարմար լինի նստել մի համակարգչի դիմաց և օգտվել մեկ ստեղնաշարից ու մկնիկից,

3. զույգի կազմը կիսամյակի ընթացքում պետք է մի քանի անգամ փոխվի,

4. համատեղ աշխատելիս ուսանողներից մեկը, նկատելով մյուսի թե՛ հասկանալու, և թե՛ իր հետ համագործակցելու առումով առաջացած խնդիրները, պետք է այդ մասին տեղյակ պահի դասախոսին,

5. զույգը պետք է աշխատի համագործակցության միջավայրում՝ մինչև նպատակի վերջնական իրականացումը,

6. լավ կլինի առաջարկել այնպիսի խնդիրներ, որոնք լուծելի են մեկ լաբորատոր աշխատանքի ընթացքում,
7. հաստատել կողավորման ստանդարտներ, որոնց պետք է հետևեն բոլոր ուսանողները,
8. վերահսկել ուսանողների հաճախելիությունը և ուշացումները,
9. վերահսկել անհատական և համատեղ աշխատանքի բալանսը,
10. դասախոսներն իրենք պետք կազմեն համատեղ աշխատողների կազմը և լուծեն առաջացած կազմակերպչական խնդիրները:

Այսպիսով, ծրագրավորման ուսուցման ժամանակակից մեթոդներից կարելի առանձնացնել հետևյալ մոտեցումները.

1. մոտեցում՝ հիմնված կոգնիտիվ ծանրաբեռնվածության վրա,
2. մոտեցում՝ հիմնված ծրագրերի իրականացման վիզուալ իմիտացիայի վրա,
3. մոտեցում՝ հիմնված վեբ-կողմնորոշված միջավայրի օգտագործման վրա,
4. մոտեցում՝ հիմնված համատեղ ծրագրավորման վրա:

Նշված մոտեցումների արդյունավետությունը ապացուցվել է փորձարարական ճանապարհով [1]-[8], ուստի հայկական բուհերի դասախոսներին օգտակար կլինի ծանոթանալ և օգտագործել այս և նմանատիպ մոտեցումներն իրենց դասավանդման պրակտիկայում:

Գրականություն

1. Caspersen M. E. Educating novices in the skills of programming: dissertation for the PhD degree / M. E. Caspersen. – Aarhus, 2007. – 311 p.
2. Sorva J. Visual program simulation in introductory programming education: doctoral dissertation for the degree of doctor of science in technology / J. Sorva. – Aalto, 2012. – 422 p.
3. Truong N. A web-based programming environment for novice programmers: dissertation for the degree of doctor of philosophy / N. Truong. – Queensland, 2007. – 286 p.
4. Eckerdal A. Novice students' learning of object-oriented programming: dissertation for the degree of licentiate of philosophy in computer science / A. Eckerdal. – Uppsala, 2006. – 114 p.
5. Teague D. Pedagogy of introductory computer programming: a people-first approach: thesis for the degree of master of information technology (research) / D. Teague. – Queensland, 2011. – 129 p.
6. DePasquale III P. J. Implications on the learning of programming through the implementation of subsets in program development environments: dissertation for the degree of doctor of philosophy in computer science and applications / P. J. DePasquale III. – Blacksburg, 2003. – 575 p.
7. Hancock C. M. Real-time programming and the big ideas of computational literacy: dissertation for the degree of doctor of philosophy in media arts and sciences / C. M. Hancock. – Cambridge, 2003. – 121 p.
8. Miller J. A. Promoting computer literacy through programming python: dissertation for the degree of doctor of philosophy (Education) / J. A. Miller. – Ann Arbor, 2004. – 288 p.

**Ա.Ռ. Ավագյան, աշխ.գիտ դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ
Ս.Ռ. Սուվարյան, աշխ. գիտ թեկն, դոցենտ, ԵՊՀ**

ԿԱՅՈՒՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾՈՆ

Կայուն զբոսաշրջությունը որպես մարդկային ռեսուրսների կառավարման գործոն

Հասարակական կյանքի զարգացման արդի ժամանակաշրջանում կարևոր խնդիրներից մեկը մարդկային ռեսուրսների նպատակային օգտագործումն է: Ռեսուրսօգտագործման արդյունավետ ձևերի ստեղծման համար կարևոր դեր կարող են կատարել տնտեսական, հումանիստական գործոնների համատեղման միջոցով: Մարդկային ռեսուրսների նպատակային օգտագործման մեջ մեծ դեր կարող է կատարել տուրիզմը /կայուն տուրիզմը/: Տուրիզմն օգնում է կարգավորելու մարդկային փոխհարաբերությունները, ընդ որում որքան ներդաշնակ են այդ հարաբերությունները այնքան մեծ հնարավորություններ կան հասարակական կյանքի զարգացման համար:

Բանալի բառեր՝ Տուրիզմ, տնտեսական, հումանիստական, կայուն մարդկային ռեսուրսներ, համակարգային կրթություն, համերկրային, հոգեբանություն:

**A. Avagyan - Doctor of geographical sciences, Professor YSU
S. Suvaryan - Associate professor of geographical sciences, YSU**

SUSTAINABLE TOURISM AS A FACTOR OF HUMAN RESOURCE MANAGEMENT

In contemporary period of social life development straightly increases the educational level of people. The role of moral, spiritual and psychological values grows in human-human, human-nature, human-society relations. The humanistic mentality becomes a social category and the society goes to a gradual stabilization.

On the other hand, current societal developments lead the movement of capital and human resources (human capital) to the service, especially tourism industry. The issue is the elaboration of strategy of human resource management, which is possible through the systemic usage of socio-economic and humanistic factors.

Tourism (sustainable tourism) has all the capacities for human resource management and for the application of efficient usage forms.

Key words: tourism, economic, humanistic, sustainable human resources, systematic education, global, psychology.

**Авагян А.Р., ЕГУ, профессор, доктор географических наук
Суварян С.Р., ЕГУ, доцент, кандидат географических наук**

УСТОЙЧИВЫЙ ТУРИЗМ КАК ФАКТОР УПРАВЛЕНИЯ ЧЕЛОВЕЧЕСКИХ РЕСУРСОВ

В развитии современной общественной жизни одной из наиболее важных проблем является целенаправленное использование человеческих ресурсов. Для создания эффективных форм использования ресурсов, важную роль могут играть процессы объединения экономических и человеческих факторов. В целенаправленном использовании человеческих ресурсов важна роль туризма (устойчивого туризма). Туризм помогает регулировать человеческие отношения и возможности для развития общественной жизни становяться большими, когда эти отношения более гармоничны.

Ключевые слова - Туризм, экономические, гуманистические, устойчивые человеческие ресурсы, система образования, глобал, психология.

Մարդկային ռեսուրսները արդյունք են հասարակության գիտակրթական մակարդակի բարձրացման, մարդ-մարդ, մարդ-բնություն, մարդ-հասարակություն փոխհարաբերություններում բարոյական, հոգևոր-հոգեբանական, հումանիստական այլ արժեքների արմատավորման:

Մարդկային ռեսուրսները աշխատանքային ռեսուրսներ են, իրենց գիտելիքներով, որակական բովանդակությամբ: Որակն է մարդկային ռեսուրսների արժեքավորումը: Որակյալ աշխատանքային ռեսուրսները (մարդկային ռեսուրսներ) աստիճանաբար դառնում են աշխատանքի կազմակերպման կարևոր գործոն:

Համերկրային և տեղական մակարդակներում տեղի է ունենում սպասարկման ոլորտի դերի մեծացում: Որակյալ սպասարկումը մարդկային ռեսուրսների կարողությունների բարձրացման միջոցներից մեկն է:

Սպասարկումը դարձել է կապիտալի և մարդկային ռեսուրսների կուտակման և օգտագործման կարևոր ոլորտը: Խնդիրը մնում է բարձրացնել նրանց օգտագործման արդյունավետությունը: Սպասարկման ոլորտի ամենաարագ զարգացող բնագավառներից մեկը զբոսաշրջությունն է: Նույնիսկ պետական մակարդակներում՝ շատ երկրներում, այդ թվում նաև ՀՀ-ում այն համարվում է տնտեսության զարգացման գերակա ուղղություն: Այս հայեցակարգը կապված է երկրի կամ նրա առանձին շրջաններում կայուն զարգացման միտումների հետ:

Իսկ կայուն զարգացումը դա զարգացում է, որը ներկա և ապագա սերունդների ներկայացուցիչներին երաշխավորում է արժանապատիվ, առավել հնարավոր հավասար մեկնարկային պայմաններ՝ իրենց ընդունակությունների դրսևորման և կենսական պահանջումներին բավարարման համար (3):

Կայուն հասարակական միջավայրում առավելագույն պայմաններ են ստեղծվում զբոսաշրջության (կայուն զբոսաշրջության) զարգացման համար, որի կարևոր գործառնություններից մեկը կայուն աշխատատեղ ստեղծելն է և կայուն եկամուտներ ապահովելն է: Կայուն հասարակական միջավայրի, կայուն զբոսաշրջության ապահովումը հնարավոր է միայն բարձրացնել աշխատուժի՝ մարդկային ռեսուրսների միջոցով: Զբոսաշրջության ոլորտում ռազմավարական կառավարումը հիմնված է մարդկային ռեսուրսների վրա՝ որպես հիմք կայուն զբոսաշրջության զարգացման համար: Հետևաբար մարդկային ռեսուրսների կառավարման ռազմավարությունը հետապնդում է մեկ գերնպատակ՝ խթանել կազմակերպչական, թիմային և անհատական արդյունավետությունը, ստեղծելով համապատասխան պայմաններ մասնագիտական կարողությունների, հմտությունների զարգացման և բարելավման համար (2):

Շրջանառվում է մարդկային ռեսուրսների կառավարման երկու հիմնական հայեցակարգ՝ տնտեսական և հումանիստական:

Տնտեսական հայեցակարգի պայմաններում մարդկային ռեսուրսները դիտվում են որպես մեկ ամբողջական մեխանիզմի կազմակերպման մասնիկ, որի դեպքում կադրային մենեջմենթի հիմնական խնդիրներից է անհրաժեշտ ունակություններով աշխատողների ընտրությունը, նրանց աշխատանքի նորմավորումը և խթանումը (4):

Այստեղ խթանման ուժը տնտեսական (սոցիալ-տնտեսական) գործուն է: Տնտեսական գործունը իր կարևորությամբ հանդերձ չի կարող հասցնել խնդրի լիարժեք լուծմանը՝ «զարգացումը» ֆինանսարդունաբերական համալիր չէ, պետք չէ հոգին ծախել սպառողական ապրանքների և արագ հարստացման սխեմաների համար: Զարգացումը արթնացնում է մարդու և հասարակության իրական ներուժի, ներքին հարստության գիտակցումը: Ներքին հարստությունը արդեն մարդու մարդկային հումանիստական բովանդակություն է, մտածելակերպը, հայեցակարգը: Հումանիստական հայեցակարգի հիմնական խնդիրն է՝ հարմարվողականությունը, կազմակերպման մշակույթի զարգացումը, արժեքների սահմանումը, հասարակության և միջանձնային հարաբերությունների կանոնների և նորմերի ձևավորումը (6):

Հումանիստական հոգևոր-հոգեբանական բարոյական նորմերը, հնարավորություն են տալիս տեսնելու և զգալու շրջակա միջավայրում գտնվող բոլոր իրերը, կատարվող երևույթները, միաժամանակ ցանկանալ կարգավորել այդ իրերի և երևույթների զարգացման ընթացքը (10): Տեսնելը և զգալը գուտ մարդկային հատկանիշներ են և գալիս են մարդու բարոյական, հոգևոր, հոգեբանական վիճակից, կուլտուրայի մակարդակից: Ինչպես նշում է Վ. Ի. Վերնադսկին «հոգևոր գաղտնիքների մեջ խորանալով կարելի է լսել երկնային լուսատուների ու երկրի շրջակա միջավայրի ներդաշնակությունը» (5): Այստեղ լուծման ուղին որոշակի է, մարդն է գլխավոր իրագործողը ինչպես հոչակում է դասական թեզը՝ «մարդու ճակատագիրը կախված է սեփական ակտիվությունից» (8):

Տնտեսական և հումանիստական հայեցակարգերը ավելի արդյունավետ են, երբ փոխհամագործակցում են միմյանց հետ: Ընդ որում փոխհամագործակցության արդյունքը ավելի մեծ է, քան երկուսինը առանձին-առանձին: Փոխհամագործակցության շրջանակներում յուրաքանչյուր առարկա իր բովանդակությունը հարստացնում է ի հաշիվ այլ առարկաների՝ փոխադարձաբար նրանց տալով իր ունեցածը (18): Փոխհամագործակցության համակարգում առաջնային հումանիստականն է, նա է ընթացք տալիս տնտեսականին, որոշում նրա գործունեության ձևը: Իր հերթին հումանիստականը հենվում է մարդկային վարքի վրա: Վարք, որը ձևավորվում է կրթության և դաստիարակության միջոցով: Հայտնի փիլիսոփայական թեզը հոչակում է «կրթությունը վերափոխում է մարդուն»: Դեմոկրիտը «մարդու բնությունը» համարում է տիեզերքի օբյեկտիվ պրոցեսներին զուգահեռ դաստիարակության արդյունք (7):

Կրթվածության և դաստիարակվածության աստիճանով է որոշվում մարդու կուլտուրայի չափը, որով էլ մարդը որոշում է իր շրջապատի իրերի և երևույթների բովանդակությունը: Ինչպես նշում է Մ. Վեբերը «ամեն տեսակի սոցիալ-տնտեսական երևույթների էությունը որոշվում է ոչ միայն նրանց օբյեկտիվ կողմերով, այլ ավելի շատ այն կուլտուրական նշանակությամբ, որ տալիս է հետազոտողը տվյալ երևույթին» (8): Մարդկային ռեսուրսների կառավարման համակարգային մոտեցման բիհեյվորիստական (վարքաբանական) տեսությունները հիմնվելով «մարդկային հարաբերությունների» դպրոցի հիմնադրողների վրա, կառավարման մեջ կարևորում են միջանձնային հարաբերությունների կարգավորումը: Իսկ միջանձնային հարաբերությունները ցայտուն ձևով դրսևորվում են զբոսաշրջության մեջ:

Զբոսաշրջությունը օգնում է կարգավորելու մարդկային փոխհարաբերությունները, ընդ որում որքան ներդաշնակ են այդ փոխհարաբերությունները, այնքան մեծ են տնտեսության զարգացման հնարավորությունները: Իսկ զարգացած տնտեսությունը կայուն հասարակություն ստեղծելու գրավականն է: Կայուն հասարակությունը՝ կայուն մարդկային զարգացում:

Զբոսաշրջության և մարդկային ռեսուրսների օգտագործման ներդաշնակությունը բերում է կայուն զբոսաշրջության ձևավորման, որը իր հերթին նպաստում է

- Փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացմանը
- Փոքր կապիտալ ներդրումներով շահավետ գործունեության ապահովմանը
- Փոքր ու միջին ձեռնարկատիրության, փոքր կապիտալի աշխարհագրության ընդարձակմանը
- Հեռավոր ու ծայրամասային փոքր բնակավայրերում կապիտալի ներդրման շահավետ գործունեության ապահովմանը
- Տարբեր ռեզիդենտների համամասնական զարգացմանը

Կայուն զբոսաշրջությունը լավագույն պայմաններ է ստեղծում

- Խոշոր ձեռնարկատիրության զարգացման
- Մեծաքանակ կապիտալի ներդրման
- Մեծ ծավալի աշխատատեղերի ստեղծման
- Առանձին ռեզիդենտների արագ զարգացման համար

Փոքր, միջին ու խոշոր ձեռնարկատիրության զարգացման կայուն պայմանների ստեղծումը, կապիտալի ներդրումային նպաստավոր դաշտի ապահովումը մեծացնում է ներդրման գրավչությունը զբոսաշրջության մեջ: Զբոսաշրջային ինդուստրիան տնտեսության ամենաարագ զարգացող ոլորտն է, նրան բնորոշ է՝

- Կայուն և արագ զարգացումը
- Կապիտալի արագ տեղաշարժի ապահովումը
- Մարդկային ռեսուրսների օգտագործման ճկունությունը

Զբոսաշրջային ինդուստրիային բնորոշ է՝

- Ներքին կառուցվածքի արագ փոփոխությունը
- Նոր ձևերի առաջացումը
- Մարդու պահանջմունքների փոփոխությանը արագ արձագանքումը
- Պահանջմունքների նորագույն ձևերի առաջադրումը

Փոքր կապիտալի տեղաշարժը և փոքր ու միջին ձեռնարկատիրությունը զբոսաշրջության մեջ հնարավորություն է տալիս փոքր ու միջին ձեռնարկություններ, ընդհուպ մինչև ընտանեկան տուրիստական օջախներ ստեղծել ամենահեռավոր, մեկուսի բնակավայրերում, առանց անհրաժեշտ պարտադիր ենթակառուցվածքների: Ընտանեկան օջախները գրավիչ են փոքր զբոսաշրջային խմբերի, առանձին ընտանիքի, անհատ զբոսաշրջիկների համար: Նրանք լրացուցիչ եկամուտներ են բերում մեկուսի և հեռավոր բնակավայրերում ապրողներին:

Ընտանեկան զբոսաշրջային օջախները հնարավորություն են տալիս աշխատանքային ոլորտ ընդգրկել նույնիսկ ամենացածր որակավորում ունեցող աշխատողին: Ընտանեկան զբոսաշրջությունը արագ մեծացնում է զբոսաշրջության ինդուստրիայի հնարավորությունները: Այս ոլորտից կարող են օգտվել և շատ մեծահարուստներ և նյութական քիչ միջոցներ ունեցողները, մեծահասակները և փոքր ու միջին տարիք ունեցողները:

Ընտանեկան զբոսաշրջությունը կայուն մարդկային զարգացում տանող կարևոր միջոց է: Այս ոլորտում կարևորը մշակութային, հոգևոր-հոգեբանական շփումներն են, բարոյական արժեքներն են և միջլեռնակական հակասությունների վերացումը:

Խոշոր կապիտալը հնարավորություն է տալիս առանձին թույլ զարգացած ռեզիդենտներում ստեղծել խոշոր զբոսաշրջային ինդուստրիա: Այն իր հերթին պայմաններ կստեղծի ենթակառուցվածքների զարգացման համար: Խոշոր կապիտալ ներդրումները, զբոսաշրջության հզոր կենտրոնների ստեղծումը, մարդկային ռեսուրսների զբաղվածության մեծացման կարևոր ձևերից մեկն է: Եվ խոշոր, և փոքր կապիտալ ներդրումները նպաստավոր պայմաններ են ստեղծում տնտեսական զարգացման մեծ եկամուտների ստացման համար: Այդ եկամուտների մի մասը կարող են օգտագործվել սոցիալական նպատակներով:

Սոցիալական լավ պայմանները ամրապնդում են մարդկային ռեսուրսների կառավարման համակարգը, այն դարձնելով ավելի կայուն: Սոցիալապես ամուր հասարակարգում ավելի լավ պայմաններ են ստեղծվում հոգևոր-հոգեբանական արժեքների շրջանառության համար: Հոգևոր-հոգեբանական, մշակութային արժեքները զբոսաշրջության զարգացման կարևոր գործոն են, բացառիկ ենրանց դերը կայուն հասարակության ստեղծման համար: Հասարակություն, որտեղ տիրապետում են բարոյական արժեքները, աստիճանաբար կողմ են մղվում միջլեռնակական հակասությունները, խորը հարգանք է առաջանում այլոց մշակույթի նկատմամբ:

Կայուն զբոսաշրջության սկզբունքները ռեզիդենտ համակարգերում հաստատում են կայուն մարդկային զարգացում: Այսպիսով, մարդկային ռեսուրսների կառավարումը նպաստում է զբոսաշրջության զարգացմանը, նրան տալիս է նոր բովանդակություն, մարդկային հարաբերությունները դառնում են ավելի կատարյալ, հասարակության մեջ սոցիալական բնեռացումը աստիճանաբար նվազում է: Կայուն զբոսաշրջությունը օգնում է ստեղծելու էկոլոգիապես, բարոյապես մաքուր միջավայր, որտեղ լավագույն պայմաններ են ստեղծվում մարդկային ռեսուրսների կառավարման, օգտագործման համար: Իր հերթին մարդկային ռեսուրսների կառավարումը իր ազդեցությունն է թողնում հասարակական կյանքի զարգացման վրա: Հասարակական կյանքը զարգացման ընթացքում որակական

խորը փոփոխության է ենթարկվում: Փոխվում է նրա բովանդակությունը, շրջանառության մեջ են մտնում նոր գործոններ, ցուցանիշներ:

Առանձնակի չափով մեծանում է այն գործոնների դերը, որոնց գործունեության ծավալման համար ավելի քիչ նյութական միջոցներ են պահանջվում: Քանակական և որակական գործոնները կայուն զբոսաշրջությանը տալիս են գործնական բովանդակություն, օգնում են ավելի արդյունավետ դարձնելու զբոսաշրջության ինդուստրիան: Այսպիսով մարդկային ռեսուրսների կառավարումը և կայուն զբոսաշրջության զարգացումը հասարակական կյանքի անբաժանելի մասն է: Նրանք օգնում են հասարակական կյանքի գործունեությունը դարձնելու ավելի արդյունավետ:

Օգտագործված գրականություն

1. Ավագյան Ա. Ռ., Հայաստանի հանրապետության ընդերքի ռեսուրսների աշխարհագրական գնահատումը, Երևան 2000
2. Կայուն զբոսաշրջության կառավարում /SuToma/, կարողությունների ձևավորում զբոսաշրջության համար, Մարդկային ռեսուրսների կառավարում, Երևան 2014, էջ 26, 115
3. Կայուն մարդկային զարգացման հիմունքներ, Երևան 2004
4. Մենեջմենթ, Յու. Սուվարյանի խմբագրությամբ, 2008թ.
5. Вернадский В.И., Избранные труды по истории, Москва 1981, стр. 51-52
6. Управление персоналом, под ред. Т.Ю. Базарова, Б.Л. Еремина, Москва 1998
7. Филосовский словарь, Москва 1976
8. Филосовский словарь, Москва 1986
9. Marketing Tourism More Sustainable, A Guide for Policy Markess UNEP and UNWTO, 2005 pp.11-15.

Ռազմելյա Ավետիսյան, Աննա Գալստյան
ԱրՊՀ կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոն

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՂՈՂՐԱԿՑԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ (ՏՀՏ)
ԿՈՄՊԵՏԵՆՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՄՆԴԻՐԸ

Հոդվածում քննարկվում է տեղեկատվա-հաղորդակցական-տեխնոլոգիաների (ՏՀՏ) կոմպետենտությունը: Տրվում է ուսուցիչների կողմից ՏՀ տեխնոլոգիաների օգտագործման խնդիրների, դրանց հաղթահարման ուղիների և ՏՀՏ-կոմպետենտության զարգացման հեռանկարների վերլուծություն: Հիմնավորվում է գիտամեթոդոլոգիական մոտեցման անհրաժեշտությունը ՏՀՏ-կոմպետենտության ձևավորման մեջ:

Բանալի բառեր. Կոմպետենտություն, ՏՀՏ-կոմպետենտություն, տեղեկատվա-տեխնոլոգիական տեխնոլոգիաներ, ուսուցիչների ՏՀՏ-կոմպետենտություն, կրթություն:

Размела Аветисян , Анна Галстян,
кафедра прикладной математики и информатики АрГУ

О ПРОБЛЕМАХ ИКТ-КОМПЕТЕНТНОСТИ

В статье рассматривается содержание информационно-коммуникационно-технологической компетентности. Дается анализ проблем использования ИКТ для учителей, пути их преодоления и перспективы развития ИКТ-Компетентности. Обосновывается необходимость разработки научно-методологического подхода в применении ИКТ.

Ключевые слова. Компетентность, компетентность в области ИКТ, технологическая информация и технологии, компетентность ИКТ учителей, образование.

Razmela Avetisyan, Anna Galstyan
The Chair of Applied Mathematics and Informatics,

OF ICT COMPETENCY PROBLEMS

In the paper the content of ICT-competency is considered. The problems of ICT usage for teachers, ways of their overcoming and perspectives of ICT competence development are analysed. The necessity of methodological approach in ICT usage is substantiated.

Keywords: Competence, ICT competence, technological information and technology, ICT competence of teachers, education

Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների արագընթաց զարգացումը և կիրառումը առօրյա կյանքում անհրաժեշտություն է ստեղծում վերլուծելու ուսուցիչների «ՏՀՏ-կոմպետենտություն» հասկացությունը, բացահայտելու նրա կառուցվածքն ու բնութագրիչները:

Հասարակության տեղեկատվայնացման խնդրի վերաբերյալ կարելի է առանձնացնել երկու հիմնական տեսական-մեթոդաբանական մոտեցում՝ տեխնոկրատական և սոցիոլոգիական:

Տեխնոկրատական մոտեցումը ուղղորդում է դեպի մարդկանց աշխատանքային գործունեության, արտադրության և ղեկավարման ոլորտներում տեխնիկա-տեխնոլոգիական սարքավորումների հարստացմանը և տեղեկատվական տեխնոլոգիաները դիտվում են որպես արտադրողականության բարձրացման միջոց:

Կրթության տեղեկատվայնացումը արդի ժամանակաշրջանում հասարակության համար կարևոր նշանակություն ունի, քանի որ ներկայումս կրթության մակարդակից և որակից մեծ կախում ունի ոչ միայն տվյալ անձի ապագան, այլ նաև՝ ամբողջ քաղաքակրթության: Այս կապակցությամբ Ա. Դ. Ուրսուլը նշել է. «Կարելի է ասել, որ աշխարհում ընդհանուր առմամբ կա այնպիսի իրավիճակ, որ ապագայում կրթության զարգացումից է կախված քաղաքակրթության զարգացման ճակատագիրը. կգերիշխի արդյոք աշխարհում սպասվող ողջամիտ կարգ ու կանոնը, թե՛ հիմնովին կհաստատվի քաոս» [1]:

Կան բազմաթիվ գործոններ, որոնք ազդում են կրթական համակարգի վրա: Դրանցից, մեր կարծիքով, առավել կարևորները հետևյալն են.

- հանրության զարգացման հարցում տեղեկույթի հիմնարար դերի գիտակցումը,
- տեղեկույթի քանակական աճը,

- տեղեկատվական տեխնոլոգիաների արագ զարգացումը,
- տեղեկատվական հաղորդակցության ինտենսիվության աճը:

Այսպիսով, կրթության տեղեկատվայնացումը կարելի է դիտել որպես ուսուցման և դաստիարակության գործընթացի տեխնոլոգիական ապահովման կարևորագույն բաղադրիչ:

Կրթության տեղեկատվայնացումը թույլ է տալիս՝

- բարձրացնել գիտելիքների ընկալման խորությունը,
- բարելավել մատուցվող նյութի որակը և նվազեցնել ծախսվող ժամանակը,
- նոր գիտելիքներ ստանալու աշխատատար գործընթացը նվազեցնել:

Այս հիմնահարցերն են, որ ստիպում են խոսելու SՀS-կոմպլեքսայինության մասին: SՀS-կոմպլեքսայինությունը ժամանակակից մարդու կարողությունների ամբողջություն է, որը դրսևորվում է մարդկային գործունեության տարբեր խնդիրների լուծման մեջ:

«Կոմպլեքսոս մարդ» հասկացության հիմքում ընկած է մարդու իր առջև դրված խնդիրների լուծման գործում անհրաժեշտ կոմպլեքսների և պատասխանատվության դրսևորումը և յուրաքանչյուր առարկայական ոլորտի համար կոմպլեքսայինությունը պարզաբանվում է տարբեր իմացաբանական հասկացությունների միջոցով:

Ս. Գալոյանի [2] աշխատանքում մանրամասն քննարկված են կոմպլեքսայինության (կամ որ նույնն է՝ մտահասության) մի շարք հեղինակների կողմից տրված սահմանումներ: Քննարկումների արդյունքում հեղինակը գալիս է այն եզրակացության, որ կոմպլեքսայինություն ինչպիսի սահմանում էլ դրվում է, պետք է ցուցաբերել կառուցողական մոտեցում և չփորձել տալ հասկացության միանշանակ և համընդգրկուն սահմանում:

Ա. Լ. Մեմյոնովը [3] SՀS-կոմպլեքսայինության իմաստը հասկացվում է որպես փոխկապակցված հմտությունների տիրապետում՝ տեղեկույթի հետ աշխատանք, օբյեկտների և գործընթացների մոդելավորում և նախագծում՝ ժամանակակից մատչելի տեղեկատվական գործիքների և աղբյուրների օգտագործմամբ: Հեղինակը մատնանշում է, որ SՀS-որակավորումը՝ դրանք տվյալ մասնագիտական ոլորտի խնդիրների SՀS-ների կիրառմամբ լուծման կարողություններն են: Մասնավորապես, ուսուցչի SՀS-կոմպլեքսայինությունը դա անհատական որակների համալիր է, որոնք ապահովում են անհատի ճկունությունը և պատրաստակամությունը՝ կապված հասարակության տեղեկատվայնացման հետ, այսինքն՝

- գաղափարների մի բնագավառից մյուսը տեղափոխելը,
- գիտելիքների ինքնուրույն ձեռք բերման հմտությունների ձևավորում,
- իրականացնել հետազոտական-որոնողական գործունեություն,
- ղեկավարել կրթական համակարգը,
- տիրապետել օգտագործվող SՀS հիմնական համակարգերին:

Ներկայացված կետերը, ըստ էության, բնութագրում են ուսուցչի SՀS-գրագիտությունը: Այս տերմինի առավել ընդհանուր սահմանումը հետևյալն է՝ SՀS-գրագիտությունը, դա համակարգիչների, թվային տեխնոլոգիաների և հաղորդակցական ցանցերի օգտագործումն է տեղեկույթի ստեղծման, գնահատման և հասանելիության ստեղծման գործընթացում:

SՀS-գրագիտությունը անհատին տրամադրում է միջոցներ հաջող կյանքի և աշխատանքի համար:

SՀS-կոմպլեքսայինության բաղադրիչներն ունեն հետևյալ հաջորդականությունը.

- տեղեկույթի մատչելիություն,
- տեղեկույթի կառավարում,
- տեղեկատվավերլուծական ինտեգրում,
- տեղեկույթի գնահատում և ստեղծում,
- տեղեկույթի հաղորդակցում:

Ներկայումս դպրոցի հենքի վրա SՀS-կոմպլեքսոս շրջանավարտի պատրաստումը նոր տեղեկատվահաղորդակցական կրթական հարացույցում հանդիսանում է բնական գործընթաց: Կրթության նոր ռազմավարությունը կողմնորոշվում է էլեկտրոնային ուսուցման մեխանիզմով և տեղեկատվայնացումը դիտվում է որպես նպատակաուղղված գործընթաց իր տեխնոլոգիաներով և գործնական կիրառություններով:

Վերջին տարիներին կրթության տեղեկատվայնացման հիմնախնդիրներին ավելի ու ավելի մեծ ուշադրություն է դարձվում, հատկապես՝ կրթական գործընթացի նպատակային կողմնորոշվածությանը և բովանդակային միջուկին: Այդ կապակցությամբ կրթության տեղեկատվայնացման խնդիրը չի կարող համարվել միայն գործիքատեխնոլոգիական: Անհրաժեշտ է տեղեկատվական միջոցների հիմքում ստեղծել նոր մանկավարժական գործիքներ: Այսօր անհրաժեշտ է վերանայել հենց կրթության նպատակը՝ ապահովելով նրա արդիական կողմնորոշումը տեղեկատվական հասարակության կազմավորման պայմաններում: Դրա համար, նպատակահարմար ենք գտնում առանձնացնել մի քանի առավել կարևոր հիմնախնդիրներ.

- 1) SՀS-կոմպլեքսոս ուսուցիչների պատրաստում,
- 2) հասարակության մեջ նոր տեղեկատվական մշակույթի ձևավորում,
- 3) մարդկանց մեջ նոր՝ տեղեկատվական աշխարհայացքի զարգացում:

Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը էապես փոխում է ուսուցչի և աշակերտի տեղն ու դերը «ուսուցիչ-աշակերտ» համակարգում: Փոխվում է ուսուցչի գործունեության բովանդակությունը՝ այն դադարում է լինել գիտելիքների «վերարտադրող» և դառնում է ուսուցման նոր տեխնոլոգիաների հետազոտող և բարձրացվում է նրա ստեղծագործական ակտիվությունը: Այդ առումով, Կ.Ա. Ռոտոբիլսկին իր աշխատանքում առանձնացնում է հատկապես ինֆորմատիկայի ժամանակակից ուսուցչի ՏՀՏ-կումպետենտության ցուցիչները՝ ընդհանուր առարկայական, առարկայական-կողմնորոշված, արտադրա-տեխնիկական, սոցիալ-մասնագիտական, մոտիվացիոն, ստեղծագործական [4]:

Հարկ է նշել, որ զգալի աճ է գրանցվել «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային ծրագրի իրականացման պահից [5]:

Հանրակրթության ոլորտում ՏՀՏ-ների ներդրումն ուղղված էր ուսումնական գործընթացի զարգացմանը՝ հետևյալ հիմնական ուղղություններով.

- դպրոցների համալրում համակարգիչներով,
- դպրոցների միացում ինտերնետին,
- ուսուցիչների վերապատրաստում ՏՀՏ-ների կիրառման ուղղությամբ,
- էլեկտրոնային բովանդակության՝ ներառյալ կրթական պորտալի ստեղծում:

Վերլուծելով ՏՀՏ-ների օգտագործման ոլորտում ժամանակակից գիտամեթոդական զարգացումները՝ կարելի է նշել հետևյալը.

- 1) անհրաժեշտ է հստակեցնել և զարգացնել կրթության տեղեկատվայնացման մոտեցումները,
- 2) անհրաժեշտ է ժամանակակից պահանջներին համապատասխան հաշվի առնել հոգեբանամանկավարժական և տեխնիկատեխնոլոգիական ազդակները,
- 3) բարելավել ուսուցիչների ՏՀՏ-կումպետենտության բարձրացման ուղղությամբ կատարվող վերապատրաստումները՝ օգտագործելով հեռավար ուսուցման նոր տեխնոլոգիաներ:

Հետագայում, էլեկտրոնային կառավարման միջազգայնորեն ընդունված սկզբունքների կիրառումը թույլ կտա զարկ տալ գոյություն ունեցող տեղեկատվական ռեսուրսների ընդլայնմանը և համադրմանը: Էլեկտրոնային անվտանգության ապահովմանն ուղղված բազմակողմանի միջոցառումները թույլ կտան ունենալու ժամանակակից, պաշտպանված էլեկտրոնային համակարգեր: Առաջիկա տարիների ընթացքում կզարգանան ինչպես կառավարական (էլեկտրոնային կառավարում, հետագայում՝ e-gov /e-gov.am), այնպես էլ՝ առևտրային հատվածի ծառայությունները և ծրագրային կիրառումները:

Այդպիսով, տեղեկատվական գիտելիքների տարածման ՏՀ տեխնոլոգիաները կրթական հաստատություններում կունենան նշանակալից ազդեցություն էլեկտրոնային հասարակության ձևավորման գործում:

Մեր կարծիքով, ՏՀՏ-ների զարգացման հայեցակարգերի ու ծրագրերի մեջ առանձնահատուկ և հիմնական տեղ պետք է զբաղի «Հաջորդ սերնդի ցանցի» (Next Generation Access Networks) ներդրումը տնտեսության մեջ: Ներկայումս բազմաթիվ երկրներ դիտարկում են «Հաջորդ սերնդի ցանցը» որպես միջազգային մրցունակության բաղադրիչ: Բացի բարձր ճշտությամբ զվարճանքներից և խաղերից «Հաջորդ սերնդի ցանցը» կառաջարկի նաև այլ կիրառություններ: Այն կներառի նաև հեռուստատեսությունը, որը թույլ կտա ունենալ աշխատանքի ավելի ճկուն պայմաններ, տեղեկատվական առողջապահություն տնային պայմաններում, ինչպես նաև փոքր բիզնեսում ամպային համակարգչային գործողություններ ունենալու հնարավորություն (Cloud computing): Վերջինս իր հերթին զգալիորեն կկրճատի ծախսերը, հնարավորություն կընձեռի ստանալ նորարարական արագ արտադրանք և մատուցել նոր ծառայություններ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Урсул А.Д. Проблема информатизации в современной науке. М., Наука, 1975, 288 с.
2. Գալոյան Ս., Մտահասական մոտեցումը հանրակրթության մեջ:
Մանկավարժություն, 2013, N3, էջ 5-23:
3. Семенов А.Л. Качество информатизации школьного образования // Вопросы образования, 2005, N 3, 56-68.
4. Ротобильский К.А Развитие информационно-технологической компетентности учителя информатики в системе повышения квалификации: автореф. дисс. канд. пед. наук, М., 2009.
5. www.mineconomy.am/up/files/el_hasarakutyun_hayecakarg-80.doc

ՀՀԴ 504.054

Մենդի Էկոլոգիա

Քրիստինե Բագրյան,
ԱրՊՀ Կենսաբանության ամբիոնի ավ. դաս.**ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ԵՎ ԼՂՀ-Ի ՄՆԿԴԱՍԹԵՐՔՈՒՄ ՆԻՏՐԱՏՆԵՐԻ ԱՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐՊԵՍ
ՍՈՑԻԱԼ-ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԽՆԴԻՐ**

Այսօր հասարակության սոցիալ-էկոլոգիական խնդիրներից մեկը մթերելի որակն է: Նիտրատներով հարուստ մթերքները բացասական ազդեցություն ունեն մարդու օրգանիզմի վրա՝ բերելով ծանր հիվանդությունների ու քաղցկեղի առաջացմանը: 2015 թվականին հետազոտեցինք Արցախի և Հայաստանի տարածքում բանջարեղենը: Հետազոտված տեսականու մեջ նիտրատների պարունակությունը գերազանցում էր թույլատրելի նորման: Մթերքների որակի բարելավման համար անհրաժեշտ է ագրոհամակարգերում խիստ վերահսկողություն սահմանել:

Բանալի բառեր՝ նիտրատներ, պարարտանյութեր, սննդամթերք, չափաբաժին, նիտրատոչափիչ, օքսիհեմոգլոբին, մեթեմոգլոբին, նիտրոզոմիացություններ, քաղցկեղ, ասկորբինաթթու, ագրոէկոհամակարգ, մոնիտորինգ, վերահսկողություն:

*Кристина Багрян,
Ст. преподаватель кафедры Биологии АрГУ***НИТРАТЫ В ПРОДУКТАХ ПИТАНИЯ КАК СОЦИАЛЬНО-ЭКОЛОГИЧЕСКАЯ ПРОБЛЕМА**

В настоящее время одним из социально-экологических проблем нашего общества является качество продуктов. Продукты, богатые нитратами, отрицательно влияют на организм человека, приводя к образованию тяжелых заболеваний и рака. Нами за 2015 год были исследованы овощи из агросистем на территории Нагорного Карабаха (Арцах) и Армении. В исследуемых овощах содержание нитратов было выше предельно-допустимой концентрации. Для улучшения качества продуктов необходимо ввести строгий контроль в агросистемах.

Ключевые слова: удобрения, продукты, норма, нитратопределитель, оксигемоглобин, метгемоглобин, нитрозосоединения, раковые заболевания, аскорбиновая кислота, агроэкологическая система, мониторинг, контроль.

*Christine Bagiryan,
ASU, the Chair of Biology***NITRATES IN FOOD, AS A SOCIO-ENVIRONMENTAL PROBLEM**

Food quality is considered to be one of the socio-ecological problems. Nitrate – rich food adversely affects human health causing cancer and other severe health conditions. In 2015 we examined vegetables grown in NK and Armenia and found, that nitrate level exceeds the acceptable limits. We consider agrosystems should be strictly monitored to improve the quality of food.

Key words: nitrates, fertilizers, products, norm, nitrate determinant, oxyhemoglobin, methemoglobin, nitrosated derivatives substance, disease cancer, ascorbic acid, agro-ecological system, monitoring, control.

Մարդու առողջության կարևորագույն գրավականը համարվում է առողջ սնունդը, ուղիղ կապ է հաստատված սննդամթերքի ու մարդու առողջության միջև: Մենք գնում ենք բանջարեղեն ու մրգեր տաղավարներից՝ հաճախ չմտածելով, թե ինչ պարարտանյութերով են դրանք աճեցրել: Մինչդեռ այսօր շատ դժվար է գտնել էկոլոգիապես մաքուր սննդամթերք: Հայտնի է, որ բույսերի բերքատվության բարձրացման նպատակով հող ներմուծվում են տարբեր տիպի ազոտական պարարտանյութեր (օրինակ ամոնիակային կամ կալիումային սելիտրան), որոնց ոչ ճիշտ, մասնավորապես բարձր քանակով և միակողմանի կիրառումը նպաստում է բերքի մեջ նիտրատների թույլատրված քանակից ավելի կուտակմանը, ինչը մարդու օրգանիզմի վրա ունենում է բացասական ազդեցություն:

Մենդի հետ մուտք գործելով օրգանիզմ՝ նիտրատներն արյան բաղադրության մեջ փոփոխություններ են առաջացնում (օքսիհեմոգլոբինը օրգանիզմում փոխակերպվում է մեթեմոգլոբինի): Արյունն ի վիճակի չի լինում թթվածինը տեղափոխել դեպի հյուսվածքներ, որի հետևանքով առաջացնում է թթվածնային քաղց, որը կարող է մահվան պատճառ դառնալ: Դրա հետևանքով խախտվում է նյութափոխանակությունը, տուժում է նյարդային համակարգը և ընկնում է օրգանիզմի պաշտպանական ֆունկցիան: Եթե նիտրատները թեկուզ փոքր, բայց կանոնավոր չափաբաժիններով են ստնում օրգանիզմ, սպառնում են առաջացնել սրտանոթային հիվանդություններ, նյարդային խանգարումներ ու նույնիսկ լյարդի կամ ստամոքսի քաղցկեղ: Նիտրատները կարող են առաջացնել հղիության ընդհատում և երեխաների զարգացման բնածին արատներ:

Ըստ ՄԱԿ-ի հաստատված նորմայի, մարդու համար նիտրատների մեկ օրվա չափաբաժինը կազմում է 5 մգ/կգ: Ինչպես նշեցինք ստամոքսի քաղցկեղի առաջացման պատճառներից մեկը, սննդամթերքներում նիտրատների բարձր քանակն է, չէ որ նիտրատները քայքայում են ստամոքսի պատերը և մուտացիայի ենթարկում ստամոքսի բջիջները, բերելով նաև նրա pH – ի բարձրացմանը: Դա բերում է որոշ մանրէների արագ զարգացմանը և նպաստում ստամոքսում նիտրատներից նիտրոզոմիացությունների առաջացմանը, իսկ վերջինս բերում է ստամոքսի քաղցկեղի առաջացմանը: Գիտնականների ուսումնասիրության ժամանակ պարզվել է, որ ասկորբինաթթուն՝ vit C չեզոքացնում է նիտրոզոմիացությունները և նվազեցնում ստամոքսի քաղցկեղով հիվանդանալու ռիսկը:

Սննդամթերքում նիտրատների որոշման տարբեր մեթոդներ կան և մեր կողմից նիտրատները սննդում որոշվել էր նիտրատ-չափիչ սարքի միջոցով (նկ.1): Հաշվի առնելով, որ նիտրատները բանջարեղեններում կուտակվում են անհամաչափ, կարևոր է ոչ թե նիտրատների որոշման, այլ նիտրատներով հարուստ սննդամթերքների ճիշտ օգտագործման կարգը: Նիտրատներից կարելի է մասամբ ազատվել ճիշտ լվանալու և մաքրելու միջոցով: Եթե նատրիումի քլորիդը (սովորական կերակրի աղը) լցնենք ջրի մեջ, ստացվում է իոնացված լուծույթ, որը շատ ավելի արագ է նատրիումի նիտրատը դուրս հանվում բանջարեղեններից: Գիտնականների կարծիքով տարբեր միջոցներով կարելի է մասամբ ազատվել նիտրատներից: Օրինակ հանելով կաղամբի վերին թերթերը և կուրծը կարելի է ազատվել այդ բանջարեղենում եղած նիտրատների մեծ մասից:

ՆԿ.1 Նիտրատ-չափիչ (COՅԿՏ – нитратомер)



Լուլիկի սպիտակ պտղամիսը և հաստ միջներակները մեզ վկայում են մեծ քանակությամբ նիտրատների մասին: Մատղաշ դղմիկներն ու սմբուկը պետք է կեղևահան անել, ինչպես նաև կտրել պտղակոթի մասը՝ այն ամենաթունավորն է:

Ելնելով սոցիալ-տնտեսական այս արդի խնդրից, մեր կողմից 2015 թ. հետազոտական աշխատանք է իրականացվել ԼՂՀ և ՀՀ տարածքներից բաց գրունտից բերված որոշ բանջարեղեններում նիտրատների առկայության որոշումը (աղյուսակ 1):


ԼՂՀ և ՀՀ տարածքներից բերված որոշ բանջարեղեններում նիտրատների պարունակությունն ըստ 2015 թ. կատարած փորձերի
Աղյուսակ 1

h/h	ՀՀ տարածքից բերված բանջարեղեն մգ/կգ		ԼՂՀ տարածքից բերված բանջարեղեն մգ/կգ		Սննդում նիտրատների ՍԹԿ մգ/կգ
1.	Լուլիկ Կենտրոնական մասում Կոթունի մեջ	450,0 105,5	Լուլիկ Կենտրոնական մասում Կոթունի մեջ	305,5 99,0	250-300
2.	Վարունգ Կենտրոնական մասում Կոթունի մեջ	480,0 120,6	Վարունգ Կենտրոնական մասում Կոթունի մեջ	320,8 115,2	300
3.	Գազար Կենտրոնական մասում Արտաքին մասում	270,0 150,5	Գազար Կենտրոնական մասում Արտաքին մասում	140,4 98,9	250-300
4.	Կարտոֆիլ Տարբեր մասերում	350,7 Միջ.	Կարտոֆիլ Տարբեր մասերում	80,5 միջ	250
5.	Ծաղկակաղամբ Կենտրոնական մասում Կոթունի մեջ	220,8 320,0	Ծաղկակաղամբ Կենտրոնական մասում Կոթունի մեջ	304,9 169,8	500-900
6.	Դդում Կեղևում Կենտրոնական մասում Կոթունի մեջ	145,5 67,0 90,7	Դդում Կեղևում Կենտրոնական մասում Կոթունի մեջ	65,0 60,0 84,5	90

--	--	--	--	--

Աղյուսակ և գրաֆիկ 1-ից երևում է, որ ՀՀ ագրոէկոհամակարգերից բերված և հետազոտված բանջարեղեններում նիտրատների պարունակությունը բարձր էր սահմանային թույլատրելի քանակությունից, քան Լեռնային Ղարաբաղում աճեցված բանջարեղեններում: Հետազոտության ընթացքում նաև պարզվեց, որ տարբեր բանջարեղեններում նիտրատները տարբեր մասերում և տարբեր չափով էին կուտակվում: Ծաղկակաղամբում և դդում մենք տեսանք, որ նիտրատները մեծ չափով կուտակվում են կոթունում կան թե կենտրոնական մասում: Աղյուսակից երևում է, որ ԼՂՀ ագրոէկոհամակարգերից բերված դդումի կոթունում նիտրատները 85,0 մգ/կգ են կազմում, սակայն կենտրոնականում նրանց քանակությունը համեմատաբար ցածր է և կազմում է 60,0 մգ/կգ, սակայն այս երկու ցուցանիշն էլ դուրս չէին նորմայից, ինչը չենք կարող ասել ՀՀ ագրոէկոհամակարգերից բերված բանջարեղենների մասին, որտեղ նիտրատների քանակը համեմատաբար բարձր էր: ՀՀ բերված լոլիկի և վարունգի մեջ նիտրատները բարձր էին ՍԹԿ-ից: Գազարի արմատապտղում են հիմնականում կուտակվում նիտրատները և ՀՀ ներմուծված գազարի մեջ նիտրատները բարձր էին ՍԹԿ-ից և կազմում էին 270,0 մգ/կգ: Նիտրատների քանակը կախված է բանջարեղենների արմատապտղի մեծությունից:

Գրաֆիկ 1.



Դեկտեմբերի 21-ին 2006թ. Հայաստանի Հանրապետության կառավարությունը ընդունեց որոշում (N 1913 – Ն) << Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգը >> հաստատելու մասին, սակայն պետության կողմից վերահսկողությունը բանջարեղեններում և ներմուծված սննդամթերքում նիտրատների և ծանր մետաղների առկայության վերաբերյալ թույլ է իրականացվում ու արդյունքում մեր սեղանների վրա հայտնվում են էկոլոգիապես ոչ մաքուր սննդամթերքներ, ինչն էլ բացասական գործոն է հանդիսանում մեր առողջության համար: Ելնելով դրանից անհրաժեշտ է պարբերաբար ԼՂՀ և ՀՀ ագրոէկոհամակարգերում մոնիթորինգ-փորձաքննություն անցկացնել, թե հողերի պարարտացման վերաբերյալ և թե սննդամթերքի որակի ճիշտ գնահատման համար:

Գրականություն

1. В.А.Борисов – Экологические проблемы накопления нитратов в окружающей среде, 1990.
2. Г.П. Зарубин, М. Т. Дмитриев, Е. И. Приходько, В. А. Мишина - Гигиеническая оценка нитратов в пищевых продуктах, 1990.

Կարինե Բալայան
ԱրՊՀ, Կ.գ.թ., ավագ դասախոս, կենսաբանության ամբիոն

**ԼԵՈՒՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՃՈՂ ՄՈՐՄԱԶԳԻՆԵՐԻ /SOLANACEAE /
ԸՆՏԱՆԻՔԻ ՄԵԱԿՆՈՎԻ ԲՈՒՄԱՏԵՍԱԿՆԵՐՆ ԱՆՏԱՀԱՐՈՂ ՄՆԿԱՅԻՆ ՀԻՎԱՆՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ներկայացված աշխատանքի մեջ ամփոփված են Լեռնային Ղարաբաղի տարածքում մորմազգիների /Solanaceae / ընտանիքին պատկանող մշակովի բուսատեսակներն այստեղի սնկային հիվանդությունների վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքները, որոնք իրականացվել են 2014 – 2016 թթ.: Այստեղից բուսատեսակների ուսումնասիրությունները և գիտական հետազոտությունները հնարավորություն կտան ժամանակին այստեղ նույն ծեղանկով պայքարի միջոցներ աշխատանքում նշված հիվանդությունների դեմ: Այս սնկերի ուսումնասիրությունը խիստ անհրաժեշտ է, քանի որ լինելով մակաբույծներ, հեշտությամբ վարակում են բազմաթիվ վայրի աճող և մշակովի բույսերի: Ներկայացված են նաև մորմազգիների ընտանիքի մշակովի բուսատեսակների սնկային հիվանդությունների դեմ պայքարի միջոցները:

Բանալի բառեր՝ մորմազգիներ, սնկային հիվանդություն, սպորներ, միցելիում, անտրակնոզ, այստեղից, մակրոսպորիոզ, ֆիտոֆտորոզ, բոտրիտոզ, սկլերոտիոզ:

Каринэ Балаян,
Старший преподаватель, АргУ, кафедра биологии

**ГРИБКОВЫЕ ЗАБОЛЕВАНИЯ, ПОРАЖАЮЩИЕ КУЛЬТУРНЫЕ РАСТЕНИЯ СЕМЕЙСТВА ПАСЛЕНОВЫХ НА
ТЕРРИТОРИИ НАГОРНОГО КАРАБАХА**

В представленной работе обобщены исследования грибковых заболеваний культурных растений семейства пасленовых / Solanaceae / на территории Нагорного Карабаха, реализованный в 2014 - 2016 период. При научных исследований пораженных видов растений возможно обеспечить своевременную диагностику и принять меры по борьбе этих заболеваний. Это исследование грибов строго необходимо, так как будучи паразитами, легко заражают множество диких и культурных растений.

Ключевые слова: пасленовые, грибковые заболевания, споры, мицелиум, антракноз, поражение, макроспориоз, фитофтороз, ботритиоз, склеротиниоз.

Karine Balayan,
Senior lecturer, ASU, Chair of Biology

**FUNGAL DISEASES AFFECTING CULTIVATED PLANTS IN THE FAMILY SOLANACEAE IN THE TERRITORY OF
THE MOUNTAIN KARABAKH**

The presented work summarizes the study of fungal diseases of the cultivated plants of the nightshade family / Solanaceae / the territory of the Mountain Karabakh, implemented in the 2014 - 2016 period. Research affected plants may obespечivat timely diagnosis and to take measures against these diseases. The study of fungi is strictly necessary, as being parasites, easily infect many wild and cultivated plants.

Keywords: Solanaceae, fungal diseases, spores, mycelium, anthracnose, defeat, macrosporiosis, late blight, botrytis, sclerotinia.

ԼՂՀ բուսական աշխարհը և բնակլիմայական պայմանները բարենպաստ են մակաբույծ մի շարք սնկերի զարգացման համար: Պետք է նշել նաև, որ 2014 - 16 թթ. մեր ուսումնասիրությունների ընթացքում ընթացիկ տարին աչքի է ընկել խոնավության բարձր ցուցանիշներով և սնկերի զարգացման համար առավել նպաստավոր պայմաններով: Այսպիսով, աշխատանքում նկարագրվում են մորմազգիների /Solanaceae / մշակովի բուսատեսակներն այստեղից սնկային հիվանդությունների դրսևորման ձևերը ու դրանց բնորոշ առանձնահատկությունները: Մշակովի բույսերի վրա զարգացող լայն տարածում ստացած “ժանգ”, “ալրացող”, “չոր” կամ “թաց” փոխում հիվանդությունները, որոնց հարուցիչները մանրադիտակային սնկերն են, հանդիպում են Լեռնային Ղարաբաղի տարբեր շրջաններում, ինչպես նաև Ստեփանակերտի պտուղ-բանջարեղենի վաճառակետերում: Սնկատեսակներն իդենտիֆիկացվել են մակրոսկոպիկ / բույսի արտաքին զննում/ և միկրոսկոպիկ / այստեղից ստացված պատրաստուկի մանրադիտակային հետազոտություն / մեթոդների գույակցմամբ, որոշիչների կիրառմամբ [1,3,4]:

Մեր կողմից կատարված հետազոտությունների արդյունքում հայտնաբերվել է մորմազգիների ընտանիքին պատկանող մշակովի բուսատեսակներն այստեղից 28 սնկատեսակ, որոնց վերաբերյալ տեղեկությունները ներկայացվում են ստորև:

Տերմինալ Լուիկ սպորուկան - մշակովի միամյա խոտաբույս է:

1. *Alternaria solani* /syn. *Macrosporium solani*

Նկարագրվող սնկի զարգացումը սկսվում է դաշտում: Այստեղից սկսվում են նախ տերևները, որոնց վրա առաջանում է տեղային բծավորություն: Պտուղների վրա այտերնարիոցն արտահայտվում է կնճռոտ սեղմված բծերով: Հաճախ հիվանդությունը սկսվում է զարգանալ պտղակոթունի հիմքից կամ էլ պտղի մեխանիկական վնասվածքներից: Բնորոշ տարբերիչ հատկանիշ է համարվում բծերի շատ մուգ գունավորությունը, որոնց վրա խոնավ պայմանների առկայության դեպքում առաջանում են մուգ, գրեթե սև փառ, որը նկարագրվող սնկի սնկամարմինն է հարուցիչի կոնիդիալ սպորակրոյության: Կոնիդիալ կոնիդիաներն ուղիղ են, երբեմն թեթև սեղմված միջնորմով, գորշ գունավորության: Կոնիդիաները զարգացման փուլից կախված տարբեր կառուցվածք ունեն: Երիտասարդ կոնիդիաները միաբջջիչ են և անգույն, հասուն կոնիդիաները ունեն 1 կամ 2 միջնորմ, դեղնավուն են կամ գորշ, առավել հասունները՝ քորոցանման և ունեն 7-10 միջնորմ: Հաշվի առնելով, որ *Alternaria solani*-ն ջերմասեր է, հիվանդությունը տարածվում է նաև շոգ եղանակներին: Տեր-բույսի պտուղներն այտերնարիոցով այստեղից սկսվում են ոչ միայն դաշտերում այլ նաև պահպանման վայրերում, որտեղ հնարավոր է կրկնակի վարակի առաջացում: Նկարագրվող սնկը զարգանում է նաև բաղրիջանի և կարտոֆիլի վրա: Սնկի զարգացումը նպաստում է պտուղների թեկուզ և ամենաչնչին մեխանիկական վնասվածքները և ջերմաստիճանային փոփոխությունները /ցուրտ և տաք ջերմաստիճանների հերթազարկում/:

2. *Diplodina destructiva* - Սև փտում - Այստեղից սկսվում է պտղակոթունի և պտղի միացման հատվածում: Կանաչ պտուղների վրա սկզբում ձևավորվում է ոչ մեծ թեթև սեղմված ջրալցված /թաց/ բաց մոխրագույն բիծ, որն աստիճանաբար մեծանում է, իսկ այստեղից օջախի կենտրոնական մասը սևանում է ինչը պայմանավորված է պիկնիդների առաջացմամբ: Հասուն պտուղների վրա պիկնիդները ձևավորվում են ավելի արագ, քան կանաչ պտուղների վրա: Այդ իսկ պատճառով հասուն պտուղների այստեղից օջախներն իսկույն ստանում են սև գունավորում: Սպորները պիկնիդներում երկբջջիչ են, գլանաձև կամ կլորավոր: Այստեղից սկսվում է հարուցիչի ներթափանցմանը և զարգացմանը նպաստում են տարբեր մեխանիկական վնասվածքները և խոնավ պայմանների առկայությունը: Որոշ դեպքերում սև փտում կարող է առաջացնել մեկ ուրիշ պիկնիդիալ սուրճ, ինչպիսին է *Phoma destructiva*, որի սպորները պիկնիդներում նույնպես գլանաձև են երբեմն օվալաձև կամ թույլ սեղմված, բայց միաբջջիչ են և ավելի փոքր չափերով: Երբեմն դրան դիտում են որպես *Diplodina destructiva* –ի հումանիչ:

3. *Phytophthora infestans* - ֆիտոֆտորոզ: Նկարագրվող սուրճը ֆիտոֆտորոզ հիվանդություն է հարուցում կարտոֆիլի վրա, ինչի պատճառով հիմնական վարակի աղբյուրը համարվում է կարտոֆիլը: Հիվանդ պտուղների վրա առաջանում է փտման օջախներ, որոնք առաջանում են դաշտում պտղի հասունացման և հասուն ժամանակ: Պտուղների վարակված օջախն արտաքինից և ներքին գորշանում է ու պնդանում: Պտուղների վաղ վարակը հանգեցնում է դեֆորմացված պտուղների ձևավորման: Կոնիդիալ սպորակրոյությունը պտուղների վրա հազվադեպ է առաջանում, բերքի տեղափոխման կամ պահպանման ժամանակ կրկնակի վարակի տեղի չի ունենում: Պտուղների ֆիտոֆտորոզ հիվանդության հիմնական օջախը հարակից դաշտերում գանձած հիվանդ կարտոֆիլի պալարներն են: Հատկապես ինտենսիվ է արտահայտվում հիվանդությունը, երբ պտուղները գանձում են բաց տարածությունում և երբ սնկի զարգացման համար առկա են բարենպաստ պայմաններ /խոնավություն/: Հարուցիչը տեղափոխվում է քամու միջոցով՝ հարակից կարտոֆիլի դաշտերում կամ վարակի այլ աղբյուրներից: Ֆիտոֆտորոզից բերքը մասամբ փրկելու համար խորհուրդ է տրվում գանձել վաղահաս սորտեր և արագ կատարել բերքահավաք: Հավաքի և տեղափոխման ժամանակ պետք է խուսափել քրոնեցումից, քանի որ դաշտից բերքի հետ տեղափոխվող սպորները նման պայմաններում ինտենսիվ կերպով զարգանում են:

4. *Phytophthora nicotianae* - Պտուղների վրա ի հայտ են գալիս տարբեր գունավորության տեղային երբեմն գրեթե տարբեր կոնցենտրիկ բծեր: Վարակի նախնական փուլում դրանք մոխրականաչավուն են, այնուհետև դառնում են կարմրադարչնագույն: Պտուղների այստեղից օջախները ջրալցվում են: Բարձր խոնավության առկայության դեպքում այստեղից օջախների վրա առաջանում են թույլ արտահայտված սպիտակավուն փառ, որն իրենից ներկայացնում է հարուցիչի գոտսպորանգիակիրներ և գոտսպորանգիումներ:

Զոոսպորանգիումները ի տարբերություն *Phytophthora infestans*-ի պարզ են, առանց բնորոշ մոնոպոդիալ ճյուղավորության: Զոոսպորանգիումները հիմքով լայն ձվաձև և կամ գրեթե գնդաձև գազաթույն թույլ սեղմված և ծծակով: Չափերով համեմատաբար մեծ են: Պտուղների պտղամիջուկ կարող է այստեղից ֆիտոֆտորոզով, ինչպես բաց դաշտերում, այնպես էլ ջերմոցներում: Վարակը կատարվում է միայն տեր-բույսերի վեգետացիայի փուլում:

5. Անտրակնոզ - *Colletotrichum phomoides* - Նկարագրվող սնկի վարակը տարածվում է հասունացող և հասուն պտուղների վրա: Սկզբում առաջանում են փոքր, թաց, թույլ սեղմված կլոր բծեր, որոնք ժամանակի ընթացքում գորշանում են և չափերով կարող են հասնել 1.5 սմ –ի: Բծերի վրա առաջանում են բազմաթիվ մուգ գորշագույն կամ սև բարձիկներ /սպորակրոյություն/ գորշ ատամիկներով: Սպորանոսկոպ սկզբում էպիդերմի տակ է, հետագայում այն պատռվում է: Սպորները բարձիկներում անգույն են, քորոցանման, յուղի 2 կաթիլներով: Այստեղից օջախները կորցնում են որակական հատկանիշները և պիտանելիությունը, երբեմն ունենում են դառը համ:

6. Անտրակնոզ - *Colletotrichum kruegerianum* - Նշված սնկի այստեղից օջախների ժամանակ պտուղների վրա առաջանում են սեղմված բծեր, որոնք թույլ տարբերվում են պտղի հիմնական գունավորությունից: Սպորանոսկոպ գունատ դեղնագույն է, տեղ-տեղ ձևավորվում են նարնջագույն ատամիկներ: Սպորները միաբջջիչ են, քորոցանման, հիմքում սեղմված: Անտրակնոզով այստեղից սկսվող վարակը է սկսվել դաշտում և հետագայում շարունակվել պահպանման վայրերում:

7. *Sklerotinia sclerotiorum* - Սպիտակ փտում, սկլերոտիոնոզ: Սուրճը այստեղից սկսվում է մի շարք բանջարեղենների և գյուղատնտեսական նշանակության կուլտուրաների: Պտուղների պտուղները նկարագրվող սնկով այստեղից սկսվում են փափուկ, լարժում և սկզբում ծածկվում են սպիտակ փառով, իսկ հետագայում՝ սև սկլերոտիոնոզներով: Հնարավոր է հարակից պտուղների վարակ կամ վարակի տարածում, բերքի տեղափոխման ու պահպանման կետերում:

8. *Botrytis cinerea* - Մոխրագույն փտում, բոտրիտոզ: Նկարագրվող սնկի վարակը կարող է առաջանալ ինչպես տեր-բույսի վեգետացիայի փուլում, այնպես էլ բերքի հավաքման, տեղափոխման և պահպանման ժամանակամիջոցում: Այստեղից օջախները հարուցիչի թափանցման պահից սկսած արագ փափկում և ծածկվում են մոխրագույն փառով՝ սնկի սպորակրոյությամբ: Այստեղից օջախները հաճախ ճաքճքում է: Պտղի վարակը հիմնականում սկսվում է պտղի և կոթունի ամրացման հատվածից կամ մեխանիկական վնասվածք ստացած օջախից:

9. *Fusarium gibbosum* - Վարդագույն փտում, ֆուզարիոզ: Հիվանդությունն առաջանում է *Fusarium gibbosum* սնկի հարուցիչի ներթափանցումից: Փտող պտուղների վրա առաջանում է վարդագույն փառ խիտ վարդագույն բարձրիկներով: Կոնիդիումներն իլիկաձև են, անգույն, 3-5 միջնորմով: Պտուղների ախտահարված հյուսվածքները ջրալցվում են և պտուղը կորցնում է պիտանելիությունը:

10. *Trichotheium roseum* - Վարդագույն փտում, տրիխոտեցիոզ: Ախտահարված պտուղների վրա առաջանում են վարդագույն փոշիացող փառ, որը կազմված է հարուցիչի կոնիդիակիրներից և կոնիդիումներից: Կոնիդիումները տանձաձև են, թափանցիկ, անգույն, մեկ միջնորմով: Նկարագրվող սնկով հիմնականում ախտահարվում են թույլ կենսագործունեության պտուղները, որոնք կամ ցրտահարված են կամ մեխանիկական վնասվածքներ ունեն: Վարակը հիմնականում սկսվում է բերքի հավաքից հետո՝ տեղափոխման և պահպանման ժամանակ:

11. *Rizopus nigricans*-Մոխրագույն գլխիկավոր բորբոս՝ ռիզոպուս: Լայնորեն տարածված սունկ է: Այն զարգանում է գրեթե բոլոր փտող բանջարեղենների վրա: Ախտահարված պտուղների պտուղների վրա առաջանում է փափուկ թաց փտում: Վարակված պտուղներից առատ ջրազատում է կատարվում և ունենում է թթու հոտ: Պտղաթաղանթների վրա ձևավորվում է խիտ, սկզբում մոխրագույն, այնուհետև սև փառ, որը կազմված է սնկի միցելիումից և սպորակրությունից: Մնկամարմինն առանց միջնորմի է: Սպորանգիակիրները դարչնագույն են, ուղիղ, երկարավուն, զարգանում են խմբերով: Սպորանգիումները կիսագնդաձև են, հեշտությամբ պատռվում են: Սպորներն անկանոն կլորավուն են: Պտուղների ախտահարումը սկսվում է մեխանիկական վնասվածքներով կամ ճաքերով հարուցիչի ներթափանցումով: Գերհատուն պտուղների վրա բարձր ջերմաստիճանի /28-30/ և օդի խոնավության առկայության դեպքում փտումը զարգանում է շատ արագ և հեշտությամբ վարակում է հարակից պտուղները:

Տեր-բույս՝ *Capsicum mexicanum* haz. – քիթաք, տաքդեղ - մշակովի միամյա խոտաբույս է:

1. *Alternaria capsici-annui*: Առաջացնում է սև բորբոս սնկային հիվանդությունը: Ախտահարված բույսի պտուղների հյուսվածքները ջրալցվում են, առաջանում է սև բորբոսաման ծածկ, որի կենտրոնը բաց գունավորություն ունի: Սպորները շղթաներով են, բորբոսաման, երկարավուն կամ իլիկաձև, գորշավուն են՝ 3-6 լայնակի և 1-3 երկայնակի միջնորմներով:

2. *Botrytis cinerea*: Ախտահարված հյուսվածքներում առաջանում է մոխրագույն թափվեման փառ և փոքրիկ մանր սկլերոցիումներ: Սպորներն օվալաձև են, միաբջիջ և անգույն, տեղակայված են ճյուղավորված կոնիդիակիրների վրա: Երբեմն պտուղների մակերեսների կամ պտուղների ներսում առաջանում են մանր սև սկլերոցիումներ: Հիվանդությունը զարգանում է հիմնականում պտուղների երկար պահպանման դեպքում կամ եթե պտուղները ֆիզիոլոգիապես թույլ են:

3. *Sclerotinia Libertiana*: Ախտահարված հյուսվածքների վրա առաջանում է սպիտակ խիտ փառ՝ խոշոր, սև սկլերոցիումներով: Պտուղները ախտահարվում են դաշտում, իսկ հավաքից հետո հիվանդությունը շարունակում է նույն կերպ զարգանալ և վերավարակել:

4. *Colletotrichum nigrum*: Անտրակնոզ հիվանդություն է, զարգանում է նշված սնկով տեր- բույսի ախտահարման հետևանքով: Ախտահարված պտուղների վրա առաջանում է մուգ գունավորության, անկանոն տեսքի՝ թույլ կնճռոտված օջախներ: Վերջիններիս վրա ձևավորվում են բազմաթիվ սև կետիկներ, որոնք իրենցից ներկայացնում են կոնիդիալ սպորածածկ: Այս օջախներում սպորակրությունը արտահայտվում է մուգ գորշավուն փշիկներով: Կոնիդիումները միաբջիջ են, անգույն և գլանաձև: Պտուղները վարակվում են դեռևս դաշտում, իսկ տեղափոխման և պահպանման ժամանակ սունկը շարունակում է զարգանալ և վերավարակել:

Տեր- բույս՝ *Cytophospha* – Վոլանտոսիկ – մշակովի միամյա խոտաբույս է:

1. *Synchytrium endobioticum*: Սունկը ախտահարում է պալարները միայն դաշտում, բույսերի աճի ընթացքում: Արմատային համակարգում և պալարների վրա աչքերի շուրջը զարգանում է գոյացություններ անհամաչափ մակերեսով: Առաջացած նորագոյացություններն կարող են հասնել մինչև 10 սմ: Վարակի նախնական փուլում նորագոյացությունները սպիտակ են, աշնանը գորշանում են և սևանում: Սնկի զարգացմանը նպաստում է խոնավությունը, որի բացակայության դեպքում հիվանդությունն ունի արտաքին այլ դրսևորումներ: Երբեմն ախտահարված օջախները ստանում են ալիքաձև կնճռոտությունների տեսք, որոնք սեղմում են պալարները: Բաղցկեղածին գոյացություններն իրենցից ներկայացնում են հյուսվածքներ, որոնք կազմված են լորձնային զանգվածից՝ պլազմոդիումից: Այնուհետև առաջանում են հաստապատ, քնած սպորներ՝ ցիստեր: Վերջիններս ոսկեգույն դեղին են: Հակացուցված է նշված սնկով ախտահարված պալարների օգտագործումը սննդում: Պետք է բացառել նաև վարակակիր հողատարածքում կարտոֆիլի ցանքը:

2. *Phytophthora infestans*: Հիվանդ պալարների մակերեսներին դիտվում է մոխրագույն կամ գորշ, թեթև սեղմված ամուր, անկանոն տեսքի բծեր: Պալարի լայնակի կտրվածքից դիտվում է ժանգագորշագույն հյուսվածք, ավելի ուշ այն դառնում է դարչնագույն: Փտումը պալարների ներսում տեղակայվում է անհավասարաչափ: Նշված սնկին սովորաբար հաջորդում է չոր փտումի կամ բակտերիալ թաց փտումի զարգացումը: Պալարների ախտահարումը սկսվում է դաշտում, մինչև պալարների հասունացումը: Պալարները ախտահարվում են անձրևային, խոնավ պայմանների առկայությամբ: Ֆիտոֆտորոզային փտումը հատկապես ինտենսիվ է զարգանում պալարների պահպանման առաջին փուլում, երբ պահեստներում ջերմաստիճանը սովորաբար բարձր է լինում: Նշված սնկի կրկնակի վարակ պահեստներում սովորաբար չի դիտվում, քանի որ կրկնակի վարակի պարտադիր պայման է գերխոնավությունը:

3. *Macrosporium solani*: Ախտահարված օջախներում առաջացած բծերը սովորաբար խոշոր են, մուգ գորշավուն. կլորավուն կամ անկյունաձև, նրանց վրա առկա է խիտ կուտակումներով շրջաններ, փառը շատ թույլ է արտահայտված, ախտահարվում են նաև ցողունները: Սպորները խոշոր են բորբոսաման, մոխրագույն գունավորության:

4. *Alternaria solani*: Բավականին տարածված հիվանդություն է և ուժեղ վարակի դեպքում մեծ վնաս է հասցնում: Հիվանդությունը նկատվում է բույսերի կոկոնակալման փուլի սկզբում: Հիվանդության զարգացման համար օպտիմալ պայմաններ են 170C-ից բարձր ջերմությունը, կարճատև անձրևները, առատ ցողը, 80% - ից բարձր հարաբերական խոնավությունը: Վարակվում են տերևները, ցողունները, պալարները: Տերևների վրա հայտնվում են անկյունավոր կլոր մուգդարչնագույն բծեր՝ լավ նկատելի կոնցենտրիկ օղակներով: Վարակված հյուսվածքները չոր են լինում: Հիվանդության զարգացման հետևանքով բծերը սկսում են սրանալ, որի հետևանքով տերևները չորանում են և թափվում:

Առաջնային վարակի աղբյուր են հողում ձմեռող վարակված բույսերի մնացորդները, հիվանդ պալարները և հողը, որի մեջ սունկը ապրում է մի քանի տարի:

5. Կարտոֆիլի ալյազոդ - *Erysiphe cichoracearum*: Ախտահարվում են տերևները: Տերևների վրա առաջանում է սպիտակ ալյազոդի փառ: Սպորները անգույն են, օվալաձև, միաբջիջ: Սպորները շղթաներով են: Պայուսակավոր ստադիա չի դիտվում:

6. Կարտոֆիլի թաց փտում - *Pseudomonas xanthochlora*: Ախտահարված հյուսվածքները վեր են ածվում լորձնային զանգվածի բաց գունավորությամբ: Ախտահարված պալարներից անդուր հոտ է արձակվում:

7. *Botrytis cinerea Pers.* - Փտումը թաց է, ախտահարված հյուսվածքը ծածկվում է մոխրագույն թավշե փառով, որն իրենից ներկայացնում է սնկի հարուցիչի կոնիդիալ սպորակրություն: Սպորները միաբջիջ են, անգույն և օվալաձև, երբեմն ձևավորվում են սև սկլերոցիումներ: Սնկի զարգացմանը նպաստում է մեխանիկական վնասվածքները և թույլ կենսագործունեություն ունեցող պտուղները: Տաք և սառը ջերմաստիճանների անկանոն հերթափոխը համարվում է սնկի զարգացման հիմնական պատճառը:

8. Կարտոֆիլի չոր փտում - *Fusarium solani*: Կարտոֆիլի ախտահարված պալարների մակերեսը կնճռոտվում է, հաճախ ձևավորվում է պինդ զանգված, որը վերծանվում է փոշենման մասսայի: Ախտահարված կարտոֆիլի միջուկը դատարկվում է: Սպորները իլիկաձև են, 1-5 միջնորումով կամ փոքր միկրոկոնիդիումներով՝ առանց միջնորումների:

9. *Fusarium oxysporum*: Սունկը զարգանում է բույսի վեգետացիայի ժամանակ: Բույսերի ախտահարումը միշտ սկսվում է դաշտում և շարունակվում է: Հիվանդության նախնական փուլում ախտահարված օջախում դիտվում է դարչնագույն ճառագայթային տարածվող գծեր, որոնք իրենցից ներկայացնում են մահացած բջիջներ և հյուսվածքներ: Այնուհետև ախտահարված օջախում աստիճանաբար մեծանում են հյուսվածքները, կնճռոտվում են պալարների կճեպները: Ախտահարված օջախներում ձևավորվում են մանր սպիտակ բարձիկներ, որոնք կազմված են սնկի միցելիումից և սպորակրությունից: Նկարագրվող սունկը հիմնականում ախտահարում է կարտոֆիլը, որի արդյունքում խախտվում է կարտոֆիլի ֆիզիոլոգիական պրոցեսները:

10. *Spongopora subterianae - Fusarium solani*: Վարակի նախնական փուլում պալարների վրա ձևավորվում են ոչ մեծ բաց գունավորությամբ բեղիկներ, որոնք ժամանակի ընթացքում չորանում են, հարակից կեղևները աստղաձև պատռվում են և ձևավորվում է բաց խոռչներ՝ լցված սև փոշիանման զանգվածներ, որն իրենից ներկայացնում է անկանոն խմբերով իրար կպած սնկի սպորներ: Ախտահարումը սկսվում է դաշտում: Վարակը պահպանվում է հողում և պալարներում: Նկարագրվող սունկը ինտենսիվորեն զարգանում է գերխոնավ պայմաններում կամ անձրևային պայմաններում: Պալարների պահպանման ժամանակ կրկնակի վարակ չի դիտվում:

Տեր-բույս՝ Բադրիջան, սևբուլ - *Solanum melongena L.* - մշակովի միամյա խոտաբույս է:

1. Մոխրագույն փտում - *Botrytis cinerea*: Փտումը թաց է, ախտահարված հյուսվածքը ծածկվում է մոխրագույն թավշե փառով, որն իրենից ներկայացնում է սնկի հարուցիչի կոնիդիալ սպորակրություն: Կոնիդիալիքները ծառի նման ճյուղավորված են: Սպորները միաբջիջ են, անգույն և օվալաձև, երբեմն ձևավորվում են սև սկլերոցիումներ: Սնկի զարգացմանը նպաստում է մեխանիկական վնասվածքները և թույլ կենսագործունեություն ունեցող պտուղները: Տաք և սառը ջերմաստիճանների անկանոն հերթափոխը համարվում է սնկի զարգացման հիմնական պատճառը:

2. Չոր փտում - *Phomopsis vexans*: Ախտահարված պտուղների հյուսվածքներում ձևավորվում են բաց գորշագույն կետեր՝ բազմաթիվ մուգ գունավորության պիկնիդներով: Այդ բծերը ավելի բաց են, քան շրջապատող հյուսվածքը: Աստիճանաբար ախտահարված օջախները մեծանում են և ստանում մուգ դարչնագույն գունավորում ու չորանում: Օջախների մակերեսին զարգանում են բազմաթիվ սև պիկնիդներ, որոնք դասավորված են համակենտրոն շրջաններով: Սպորները պիկնիդներում միաբջիջ են: Նշված տեր-բույսի ախտահարումը սկսվում է դաշտում՝ բույսի վեգետացիայի ընթացքում: Պտուղների հավաքից հետո սունկը շարունակվում է զարգանալ: Հիվանդությունը [ԼՂՏ-ում տարածված է: Այս նշված 2 հիվանդություններն արտահայտվում են սկզբից կանաչ զանգվածի վրա, այնուհետև փոխանցվում պտուղներին և հետագայում նաև արմատներին: Մեր կողմից հայտնաբերվել են ախտահարված պտուղները:

3. *Penicillium expansum* - Ախտահարված պտուղների հյուսվածքները փափկում են և ջրալցվում: Պտուղների մակերեսին առաջանում է թևակապույտ բորբոսանման փառ, որն իրենից ներկայացնում է սնկի միցելիում և սպորակրություն: Կոնիդիալիքները վրձնանման են: Սպորներն էլիպտոիդալ են՝ գրեթե կլոր, փոքր են և կանաչավուն գունավորության: Պտուղների մեխանիկական վնասվածքները բնականաբար ընկալունակ են դարձնում նշված սնկի նկատմամբ, որի արդյունքում տեղի է ունենում պտուղների ֆիզիոլոգիական պրոցեսների խանգարում: Հիվանդության դեմ պայքարի կարևոր մեթոդ է պտուղների ճիշտ պահպանումը: Անհրաժեշտ է դասավորել պտուղները մաքուր տարաններում և խուսափել պտուղների գերտաքացումից: Երբեմն կարող է սունկը զարգանալ պահեստներում՝ նախապես այլ հիվանդ պտուղների առկայության դեպքում:

4. *Alternaria solani*: Ախտահարվում են պտուղները: Սկզբում առաջանում է դարչնագույն բծեր՝ տարբեր մեծության, որոնք ծածկվում են սև թավշե փառով: Վերջիս իրենից ներկայացնում է հարուցիչ կոնիդիալիքների և կոնիդիումների կուտակումներ: Սնկի սպորները քորոցանման են, գորշ, ունեն 1-2 երկարավուն միջնորում: Պտուղների ախտահարումը սկսվում է դաշտում: Այնուհետև պտուղների տեղափոխման և պահպանման ժամանակ սունկը ագրեսիվ կերպով զարգանում է: Պտուղների ոչ ճիշտ հավաքի և պահպանման հետևանքով կարող է տեղի ունենալ վերավարակում: Նկարագրված սնկային հիվանդությունների լայն տարածման հետևանքով խախտվում է տեր բույսերի կենսագործունեության պրոցեսները, նվազում է մշակովի մորմազգիների բերքատվությունն ու բերքի որակական հատկությունները:

Ներկայումս գյուղատնտեսության զարգացման արդիական և հրատապ հիմնախնդիրներից է համարվում հիվանդությունների դեմ պայքարն ու առաջարկվում են ագրոտեխնիկական տարբեր մեթոդներ, թերապևտիկ բուժական միջոցառումներ: Թերապևտիկ միջոցառումներից են պայքարի քիմիական և կենսաբանական մեթոդները [1]:



1



2



3



4

Նկ. 1. 1 – Տնր-բույս՝ Լոլիկ սովորական, սունկ՝ *Sklerotinia sclerotiorum*, 2 - Տնր-բույս՝ Լոլիկ սովորական, սունկ՝ *Rizopus nigricans*, 3 – Տնր-բույս՝ բադրիջան, սունկ՝ *Botrytis cinerea*, 4 - Տնր-բույս՝ կարտոֆիլի պալար, սունկ՝ *Rizoctonium*, շիզոկոսմոս:

Պայքարի միջոցառումները

- Ֆիտոֆտորոզով ուժեղ վարակված դաշտերում բերքահավաքից 4 - 6 օր առաջ հնձել կարտոֆիլի փրերը, որը նպաստում է պալարի կեղևի հաստնացմանը: Այս դեպքում տերևի վարակը չի անցնում պալարներին:
- պարարտացում հանքային պարարտանյութերի համալիրով, կալիումի բարձր չափաբաժիններով: Կալիումական պարարտանյութերը բարձրացնում են բույսերի դիմադրողականությունը որոշ անկային հիվանդությունների նկատմամբ, ցրտադիմացկունությունը և երաշտադիմացկունությունը:
- կոկոնակալման փուլի սկզբում սրակել բորոդյան հեղուկի 1% - ոց լուծույթով, անհրաժեշտության դեպքում կրկնել 10 -12 օր ընդմիջումներով:

- տնկել միայն կարտոֆիլի առողջ պալարներ
- պարարտացնել հանքային և օրգանական պարարտանյութերով
- բուկլիցը կատարել ժամանակին և խնամքով
- կանխման և բուժման նպատակով օգտագործել 1 % - ոց բորոդյան հեղուկ: Ֆուգարիդային թառամման, անտրակնոզի դեմ սրակել պղնձի քլորոքսիդ՝ 2.4 կգ/հա կամ Ռ-ապիդ Գ-ոլդ՝ 2.5 կգ/հա, սև սոխկի դեմ՝ ծծումբ՝ 50 կգ/հա նորմաներով [3]:

Գրականություն

1. Աբրահամյան Ջ.Ն., Նանագյուլյան Ս.Գ., Ամիրջյան Ա.Ա. – Ֆիտոպաթոլոգիա, Երևան, 2004, 58 էջ:
2. Մարգարյան Գ. Գ. – Բույսերի հիվանդություններ, 2013, 83 էջ:
3. Նիկոյան Ա. – Հայաստանի Հանրապետությունում օգտագործման համար թույլատրված բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների տեղեկատու, Երևան, 2015, 469 էջ:
4. Горленко В. М. - Болезни растений и внешняя среда / Очерки биологии и экологии паразитов растений /, фитопатология, микология, 2012, 124 с.
5. Дементьева М. И., Выгонский М. И. - Болезни плодов, овощей и картофеля при хранении, 1988, 231 с.

ԵՐԻԿԱՄԱՅԻՆ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆ**ք. ՄՏԵՓԱՆԱԿԵՐՏԻՄ**

Աշխատանքում ներկայացված են տար և քրոնիկ երիկամային անբավարարությունը ախտորոշող՝ արյան և մեզի մեջ հիմնական կենսաքիմիական ցուցանիշների (կծիկային զտման արագություն, կրեատինին, կրեատին, կրեատինինի քլիրենս, կարբոնատներ, կալիում, ֆոսֆոր, միզանյութ) փոփոխությունները: Երիկամի գործառնությունը և կրեատինի քլիրենսը կամ կծիկային ֆիլտրման՝ զտման արագությունն իջնում է՝ տարիքից կախված: Նորման կազմում է 120մլ/րոպե: ԼՂՀ-ում նկատվում է երիկամային անբավարարությամբ հիվանդների աճ՝ կախված ոչ ինֆեկցիոն հիվանդությունների (շաքարախտ, սիրտ-անոթային հիվանդություններ) տարածվածությունից:

Բանալի բառեր՝ երիկամ, կրեատինին, կծիկային ֆիլտրման արագություն, կրեատինինի քլիրենս, նեֆրոն, կալիում, դիալիզ

A. L. Grigoryan

РАСПРОСТРАНЕННОСТЬ ПОЧЕЧНОЙ НЕДОСТАТОЧНОСТИ В г. СТЕПАНАКЕРТЕ

В работе представлены изменения основных биохимических показателей крови и мочи, используемых при диагностике острой и хронической почечной недостаточности (скорость клубочковой фильтрации, клиренс креатинина, креатинин, креатин, карбонаты, калий, фосфор, мочевины). Установлено снижение функции почки с возрастом, клиренса креатинина и скорости клубочковой фильтрации. Норма последней составляет 120 мл/мин. В НКР наблюдается увеличение числа больных с почечной недостаточностью, связанное с высокой распространенностью не инфекционных заболеваний (сахарный диабет, сердечно-сосудистые заболевания).

Ключевые слова; почки, креатинин, скорость клубочковой фильтрации, клиренс креатинина, нефрон, калий, диализ

A.L. Grigoryan

PREVALENCE OF KIDNEY FAILURE IN STEPANAKERT

This work presents the changes of biochemical parameters of blood and urine tests, which are used in the diagnosis of acute and chronic kidney failure (the rate of glomerular filtration, creatinine clearance, creatinine, creatin, carbonates, potassium, phosphorus, urea). We found a decrease in kidney function, in creatinine clearance and glomerular filtration rate is due to the age. The norm of the latter one is 120ml/min. We observed an increase in the number of patients with kidney failure, which is attributed to a high prevalence of non-infectious diseases (diabetes, cardiovascular disease).

Key words: kidney, creatinine, glomerular filtration rate, creatinine clearance, nephron, potassium, dialysis

Մարդու և բարձրակարգ կենդանիների արտաթորության օրգաններն են՝ երիկամները, թոքերը, մաշկը, քրտնազնկները, աղիքները և այլն, որոնց գործունեությամբ ապահովվում է օրգանիզմի ներքին միջավայրի կայունությունը (հոմեոստազ):

Մակայն արտաթորության հիմնական օրգանները հանդիսանում են երիկամները:

Արտաթորության օրգանների ֆունկցիայի խանգարումը կարող է պատճառ դառնալ մի շարք հիվանդությունների, երբեմն՝ մահվան:

Յուրաքանչյուր անձ ունի երկու երիկամ (լատ. rens), որոնք գտնվում են ողնաշարի աջ և ձախ կողմերում՝ որովայնի խոռչի հետին պատի որովայնամզի տակ: Երիկամները որովայնի մաս չեն կազմում: Աջ երիկամը միջին հաշվով ձախից ցածր է 1-1,5 սմ՝ լյարդի ճնշման պատճառով: Երիկամները սրճագույն լոբանման օրգաններ են: Յուրաքանչյուր երիկամ ունի 10-12սմ երկարություն, 5սմ լայնություն, 3սմ խորություն և 120գ կշիռ: Արտաթորության գործող միավորներն են նեֆրոնները, որոնք կազմված են կծիկներից (լատ. glomeruli): Նեֆրոնների քանակը հասնում է 1,5-2մլն: Օրական մոտ 200լ արյան գոտում տեղի է ունենում նեֆրոնների կծիկներում, արդյունքում առաջանում է 2լ մեզ: Երիկամների նորմալ գործունեությունը կախված է կծիկային և խողովակային բջիջների ամբողջականությունից, արյան նորմալ մատակարարումից, երիկամային գործունեության վրա ազդող հորմոնների փոխանակումից և արտազատումից: Երիկամները ապահովում են նյութափոխանակության արգասիքների՝ ջրի, միզանյութի, միզաթթվի, տարբեր աղերի՝ հիմնականում NaCl, օտարածին նյութերի, թույների, թունավոր արգասիքների, մանրէների թույների, լյարդի կողմից թունազրկված նյութերի արտահանումը արյունից մեզի մեջ, պահպանում են արյան կազմի հոմեոստազը, օսմոսային և օսկոտիկային ճնշումները, թթվահիմնային հավասարակշռությունը (7.36-7.4), ինչպես նաև արտադրում են կենսաբանական ակտիվ նյութեր՝ ռենին, պրոստագլանդին, վիտամին D-ի ակտիվ ձև:

Երիկամները հանդիսանում են օրգանիզմի հայելին, որի միջոցով կարելի է գաղափար կազմել օրգանիզմում ընթացող գործընթացների մասին: Երիկամի ֆունկցիայի խանգարումը կարող է պատճառ դառնալ մի շարք հիվանդությունների՝ օր. նեֆրոպաթիայի, երբեմն՝ մահվան: Նեֆրոպաթիաների տեսակներն են՝

Նեֆրիտ՝ երիկամաբորբ

- Երիկամային անբավարարություն՝ Սուր Բրոնխի՝ Պիելոնեֆրիտ Գլոմերուլոնեֆրիտ
- Ուրեմիա
- Երիկամների պոլիկիստոզ
- Նեֆրոտիկ համախտանիշ
- Հիպերտոնիկ նեֆրոպաթիա

Երիկամային անբավարարությունը երիկամային հոմեոստատիկ ֆունկցիաների խանգարումն է՝ ազոտաըլյուրոնության, թթվահիմնային վիճակի փոփոխության և ջրաէլեկտրոլիտային հավասարակշռության խանգարման գարգացումով: Տարբերում են սուր և քրոնիկ երիկամային անբավարարություն:

Երիկամային սուր անբավարարություն (ԵՍԱ) զարգանում է երիկամների ֆունկցիայի հանկարծակի դադարից: Երեխաների մոտ ԵՍԱ մասին վկայում է օլիգոանուրիան՝ մեզր 300 մլ (մ2/օրը)–ից քիչ է և միզանյութն ավելի է 16,5 մմոլ/լ–ից (100 մգ/100 մլ) (Lieberman E., 1976):

ԵՍԱ-ն զարգացման պատճառագիտական գործոնները կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝

- նախաներիկամային (պրեռենալ),
- երիկամային (ռենալ),
- հետերիկամային (պոստռենալ):


Նախաներիկամային գործոններից են արյան ճնշման խիստ իջեցումը, հեմոլիզը և միոլիզը, անհամատեղելի արյան փոխներարկումը, սուր հեմոլիտիկ սակավարյունությունը, տարածուն այրվածքները, էլեկտրոլիտների մեծ կորուստը և ջրազրկումը՝ ծանր փսխումների դեպքում, կրկնվող փսխումները, էնդոզեն թունավորումները՝ կապված աղիքային անանցանելիության, պերիտոնիտի, պանկրեատիտի հետ:

Երիկամային գործոններից են երիկամների ախտահարումը՝ Էկզոգեն նեֆրոտոքսիկների ազդեցությունից (սնկային, սնդիկային, քլորոֆորմային թունավորումներ և այլն), տոքսիկո-ալերգիկ ախտահարումները՝ կապված որոշ դեղանյութերի գերդոզավորումից կամ նրանց նկատմամբ եղած բարձր զգայնությունից (հակաբիոտիկներ, սուլֆանիլամիդներ և այլն), վարակները, երիկամային տարածուն հիվանդության բարդությունները:

Հետերիկամային գործոններն են միզատար ուղիների անցանելիության խանգարումները (երկկողմանի միզաբարություն):

Առաջարկված է նաև առանձնացնել ԵՍԱ **աներիկամային ձևը՝ առենալ՝** կապված երիկամի (երիկամների) վնասվածքների կամ վիրահատական հետզգման հետ:

Սուր պիելոնեֆրիտը (լատ. Acute pyelonephritis՝ երիկամի ավազանի բորբոքում) համարվում է կյանքին սպառնացող հիվանդություն և կարիք ունի շտապ ախտորոշման և բուժման:



Սուր պիելոնեֆրիտ

Պատճառները հիմնականում կապված են վերելք ճանապարհով երիկամի պարենխիմա ինֆեկցիայի ներթափանցման հետ: Աղիքային ցուպիկը համարվում է սուր պիելոնեֆրիտի ամենատարածված հարուցիչը (մոտ 80%): Այլ հարուցիչներից են՝ Proteus, Enterobacter, Pseudomans, gram-positive bacteria, Streptococcus faecalis, S. aureus...:

Երիկամային քրոնիկական անբավարարության (ԵԶԱ) ձևաբանական հիմնանյութը գործող նեֆրոնների քանակության հարաճուն նվազումն է, որը բերում է երիկամային գործընթացների ընկճմանը, իսկ հետագայում՝ երիկամային ֆունկցիաների խանգարմանը՝ գլոմերուլոնեֆրիտի:

Ուռնմիան երիկամային հոմեոստատային ֆունկցիաների անվերադարձելի խանգարումն է՝ կապված երիկամների ծանր, հարաճող ախտահարման հետ: Ներկայումս ուռնմիա (միզարյունություն) տերմինը նույնացվում է ԵԶԱ հետ: ԵԶԱ անվանման տակ հասկանում են հոմեոստատիկ այն վիճակը, երբ երիկամների ֆիլտրող ունակությունը տարիքային նորմայից իջած է 25%-ի չափով, իսկ արյան մեջ կրեատինինը բարձր է 0,176 մմոլ/լ–ից: ԵԶԱ զարգանում է քրոնիկական գլոմերուլոնեֆրիտի, քրոնիկական պիելոնեֆրիտի, ժառանգական նեֆրոպաթիաների, երիկամային հիպոպլազիայի կամ դիսպլազիայի, ամիոիդոզի և համակարգային հիվանդությունների հետևանքով:


Մեր աշխատանքում ԵՍԱ և ԵԶԱ ախտորոշելու նպատակով հաշվի են առնվել արտաքին ախտանշանները՝

.Ստորին միզուղիների ախտանշանները՝ դիզուրիա, հաճախամիզություն, անզուսպ միզարձակություն, վերցայլքային ցավեր, արյունամզություն)

- .Գոտկային ցավեր
- .Ջերմություն (39՝ և բարձր)
- .Դող և սարսուռ
- .Սրտխառնոց և փսխում

Այսինքն՝ մանրամասն անամնեզ է հավաքվել հիվանդության պատմության մասին, կատարվել է օբյեկտիվ, լաբորտոր (արյան և մեզի ընդհանուր քննություն և գործիքային՝ սոնոգրաֆիա, ռենտգենոգրաֆիա, կոմպյուտերային տոմոգրաֆիա...) քննություններ: Ժամանակին չախտորոշելու և չբուժելու դեպքում կառաջանան բարդություններ:

Սուր երիկամային անբավարարության զարգացումը բացահայտելու ամենահարմար և ստույգ թեսթը համարվում է արյան և մեզի մեջ կրեատինինի որոշումը, ինչպես նաև կծիկային ֆիլտրման արագության և կրեատինինի կլիրենսի որոշումը:



Կրեատինինը ազոտային մետաբոլիտ է, որը հանդիսանում է մկանային և մյուս հյուսվածքների էներգետիկ փոխանակությանը մասնակցող կրեատինֆոսֆատի փոխանակության վերջնական արդյունք: Կրեատինինի (Creatinine, CREA) սինթեզն ընթանում է գլխավորապես մկանային հյուսվածքներում: Մկանային կծկումն ընթանում է կրեատինֆոսֆատի քայքայման արդյունքում առաջացող էներգիայի շնորհիվ, որի ընթացքում առաջանում է նաև կրեատինին:

ԿՖԱ-ն որոշելու համար բժշկությունում օգտագործում են ինուլին ամլաջրատը, կամ էլ ուրիշ իզոտոպներ:

Նետագրովել է Ստեփանակերտ քաղաքի տարբեր սեռի և 2 տարբեր տարիքային խմբեր՝ դեռահաս (առաջին հասունացման շրջան և 46-60 և ավելի տարեկան տղամարդկանց և կանանց)՝ 40-ական մարդ:

Աղյուսակ 1


Սեռ	Տարիք	մկմո/լ
	Դեռահաս՝ 10-18տ	44-88
Տղամարդիկ	Մինչև 60տ	80-115
	60-90տ	71-115
Կանայք	Մինչև 60տ	53-97
	60-90տ	53-106

Աղյուսակ 1 տվյալներից երևում է, որ դամարոկլանց մոտ կրեատինինի մակարդակը քիչ ավելի բարձր է, քան կանանց մոտ, այն բացատրվում է կմախքային մկանուքի ավելի զարգացած լինելով: Տարիքից կախված՝ կրեատինինի քանակությունը շատանում է :Արյան շիճուկում կրեատինինի մակարդակը հարաբերականորեն կայուն է և կախված է սինթեզի և հեռացման հավասարակշռությունից: Հիմք ընդունել արյան մեջ կրեատինինի քանակությունը այնքան էլ ճիշտ չէ. Դրա համար էլ ավտոբ է որոշել կծիկային ֆիլտրման արագությունը՝ ըստ կրեատինինի (մ/րոպե)

Աղյուսակ 2

Տարիք	Տղամարդիկ (մ/րոպե)	Կանայք (մ/րոպե)
< 3տ	65-100	65-100
1-30տ	88-146	81-134
30-40տ	82-140	75-128
40-50տ	61-120	58-110
50-60տ	82-140	75-128
60-70տ	82-140	75-128
70-ից բարձր	55-113	52-105

Երիկամային ֆիլտրման արագություն՝ մ/ր



Գրաֆիկ 1 1 կրնատինինի քան.մգ/դլ

Կորը պարաբոլ է:

Երիկամային անբավարարությունը ախտորոշելու համար հիմք ընդունել արյան մեջ կրնատինինի քանակը այնքան էլ ճիշտ չի լինի, քանի որ նրա քանակությունը կախված է նաև մարմնի զանգվածից և սննդակարգից:

Երիկամային անբավարարությունը ախտորոշելու համար պետք է որոշել կրնատինինի կլիրենսը: Կլիրենսը Լրոպեում մարդու երիկամով անցած այս կամ այն նյութերից մաքրված արյան քանակությունն է (մլ): Կլիրենսի որոշման համար անհրաժեշտ է իմանալ 3 արժեք՝ մեզում և արյան մեջ նյութի խտությունը, միաժամանակ դիտորենի թուլակալան արժեքը:

Կրնատինինի կլիրենս (մլ/րոպե) =

$$\frac{\text{Մեզում կրնատինինի խտությունը (մգ \%) x մեզի ծավալը (մլ) / Պլազմաի կրնատինինի խտությունը (մգ \%) x հավաք.ժամ.(րոպե)}}{\text{Պլազմաի}}$$

Տարբեր հիվանդություններից և սննդամթերքից կախված կրնատինինի քանակի փոփոխություններ

Աղյուսակ 3

Նորմայում կրնատինինի պարունակությունը արյան մեջ մկմոլ/լ		Հիվանդություններ	Արյան մեջ կրնատինինի		Մեզի մեջ	
			Բարձրացում	Իջեցում	Բարձրացում	Իջեցում
Արական	Իգական	Երիկ. գործ. խանգարում	↑			
71-115	53-97	Ակրումեզայիա	↑			
Մեզում՝ մմ/լ		Հիպերթիրեոզ	↑			
Ար.	Իգ.	Մեծաքանակ մսամթերքի ընդունում	↑			
7,1-17,7	5,3-15,9	Նեֆրոթունավոր պրոպրատների, ասկորբինաթթվի, ազետոնի, լիդոկայինի, գլյուկոզայի, ֆրուկտոզայի, իբուպրոֆենի ընդունում	↑			
Մեզում մգ/24ժ		Մկանային զանգվածի պակասման ժակ		↓		
500-2000		Հոլիոլային առաջին եռամսյակում		↓		
		Անեմիա				↓
		Մկանային ատրոֆիա				↓
		Ինսուլտ				↓
		Սուր դերմատոմիոզիտ				↓
		Վահանաձև գեղձի անբավարարություն			↑	
		Հիպոֆիզի աշխատանքի խանգարում			↑	
		Ինֆեկցիոն հիվանդ. սուր շրջան			↑	
		Վիտամին E անբավարարություն				↑
		Շաքարախտ			↑	
		Ցնցումների ժամանակ			↑	

Արյան մեջ ցուցանիշների նորման և երիկամային անբավարարության դեպքում հիմնական փոփոխությունները

Աղյուսակ 4

Անվանում	Չափման միավորները	Նորմա	Երիկամային անբավարարություն	
			Բարձրացում	Իջեցում
Միզանյութ	Մմոլ/լ	2,0-8,0	↑	
Կրեատինին	Մկմոլ/լ	70-97	↑	
Անօրգանական ֆոսֆոր	Մմոլ/լ	0,7-1,8	↑	
Կալցիում	Մմոլ/լ	2,0-2,7	↑	
Մանգան	Մմոլ/լ	0,72-1,2	↑	
Եռզվիցերիդներ	Մմոլ/լ	0,38-1,1		
Ազատ կալցիում				↓
Ազոտ			↑	↓
Կալիում			↑	↓
Արյան բիկարբոնատ (ացիտոզ)				↓
Թրոմբոցիտներ				↓

Մեզի հիմնական բիոքիմիական ցուցանիշները

Աղյուսակ 5

Բաղադրություն	Պարունակություն (մեկ օրվա մեզի քանակի հաշվով)	
	գ/օր	մմոլ/օր
Նատրիում	3 – 6	130 – 260
Կալիում	1,5 – 3,2	38 – 82
Մանգան	0,1 – 0,2	4,2 – 8,4
Ընդհանուր կալցիում	0,1 – 0,25	2,5 – 6,2
Ամոնիակի ազոտ	0,5 – 1,0	36 – 71
Քլորիդ (Cl ⁻)	3,6 – 9,0	100 – 250
Անօրգանական ֆոսֆոր	0,9 – 1,3	29 – 45
Միզաթթու	0,2 – 1,2	1,2 – 7,1
Միզանյութ	20 – 35	333 – 583
Կրեատինին		
տղամարդկանց	1,0 – 2,0	8,8 – 17,7
կանանց	0,8 – 1,8	7,1 – 15,9
Ինդիկան	0,01 – 0,012	0,047 – 0,056
Կրեատին	Հետք 380մկմոլ/օր	

Մեզում հիմնական բիոբիոհիմնական ցուցանիշների փոփոխությունները


Միզանյութի բարձրացում

- մեծ քանակությամբ սպիտակուց ընդունելուց
- հղիության ժամանակ
- շաքարախտ
- հիպերթիրոզ
- ֆոսֆորով թունավորում
- մկանների վնասում
- միզանյութի համակարգի օրգանների բորբոքում
- հնպատիաներ
- E, B1 վիտամինների անբավարարություն
- սելենի պակաս
- հետվիրահատական շրջան
- հորմոնային դիսբալանս

Իջնում

- բուսական սննդակարգ
- երիկամային անբավարարություն
 - գլոմերուլոնեֆրիտ
 - պիելոնեֆրիտ
- լյարդի գիռոզ
- երեխանների ակտիվ աճի շրջան
-


Գրաֆիկ 2



Վիճակագրական տվյալներից երևում է, որ 2007թ. մինչև 2011թ ԼՂՀ նկատվում է միզասեռական համակարգի հիվանդության դեպքերի թվի կայուն աճ: Իսկ 2012-2015թթ. դեպքերի թվերը տատանվում են: 0-17 տարեկան երեխանների, ինչպես նաև մեծահասակների մոտ սիրտ-անոթային հիվանդությունների դեպքերի առավելագույն թիվը գրանցվել է 2011թ.: Տարեցների մոտ նշված հիվանդության հաճախականությունը նկատելիորեն արտահայտված է, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ միզասեռական համակարգի հիվանդությունը կապված է շաքարախտի, սիրտ-անոթային համակարգի, հիպերտենզիայի թվաքանակի աճի հետ:

Միգասեռական հիվանդությամբ հաշմանդամներն՝ ըստ խմբերի

Գրաֆիկ 3



Մանրագրագ

Անհրաժեշտ է սահմանափակել ջրի ընդունումը, քանի որ ընդունած գրեթե ողջ հեղուկը մնում է օրգանիզմում, եթե առկա է օլիգոստործումը: Անհրաժեշտ է սահմանափակել կալիում պարունակող սննդամթերքի օգտագործումը, կերակրի աղի օգտագործումը, քայց այդուհանդերձ չպետք է մոռանալ, որ, օրինակ, դիալիզային բուժում ստացող հիվանդի սնունդը պետք է բարձր կալորիականություն ունենա և պարունակի բավարար քանակով սպիտակուցներ:

Ստեփանակերտ քաղաքում մոտ 40 քրոնիկ երիկամային անբավարարությամբ հիվանդներ դիալիզային բուժում են ստանում ԼՂՀ կենտրոնական հիվանդանոցում:

Գրականության ցուցակ

- 1.Ռ.Գ.Քամայան Լլինիկական կենսաքիմիայի հիմունքներ, Երևան, 2008, էջ.97-122
- 2.Ն.Լ.Ասլանյան Լլինիկական կենսաքիմիա ք. Երևան, 1996, էջ56-62
- 3.Գ. Նավասարդյան, Ա. Պապյան Ախտաֆիզիոլոգիա ք.Երևան,2001, էջ.135-139
- 4.Т.Т.Березов,Б.Ф. Коровкин Биологическая химия, Москва, 1990, с. 473-480
- 5.Е.М.Шилов Хроническая болезнь почек, 2014, с.25-30
- 6.Н.А. Мухина Хефрология, Москва, 2010, 4-8, с. 148

**Գրիգորյան Անահիտ Վլադիմիրի,
աշխ. գիտ. թեկ., դոցենտ, ԱրՂՀ
Թովմասյան Ռուբինա Ստեփանի, ԱրՂՀ
E-mail: srbuhi.tovmassian@mail.ru**

ԷՎՈԼՈՑԻՈՆՆԵՐՈՆ ԱՏՏԱՀՂԱՅՈՒՄՆԵՐ ԼՂՀ ՌԵԿՐԵԱՑԻՈՆ ՌԵՍՐՍՈՒՐՄՆԵՐԻ ԵՎ ՌԵՍՐՍՈՒՐՍՕՂՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Հոդվածում ներկայացված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ռեկրեացիոն ռեսուրսների և դրանց ռացիոնալ օգտագործման շնորհիվ ԼՂՀ-ում ինտենսիվ եղանակով ռեկրեացիոն տնտեսության զարգացման մասին հեռանկարային գաղափարներ: Դիտարկումների և ուսումնասիրությունների արդյունքում վերծանվել է էքստենսիվ փուլի թերացումները, բացահայտվել է ԼՂՀ ռեկրեացիոն պահանջարկը: Այս հիմնախնդրի լուծումը կնպաստի ոչ միայն զբոսաշրջության, այլև ԼՂՀ մյուս տնտեսական համակարգերի զարգացմանը, ինչը նաև ռազմավարական նշանակություն կունենա հանրապետության համար:

При использовании российского опыта исключалось его механическое перенесение или копирование, учитывались масштабы, потенциал Республики и ее специфика. В частности, концентрация в одном университете подготовки кадров по многим направлениям, для которых в России были созданы самостоятельные профильные ВУЗы: технические, аграрные, гуманитарные, медицинские, естественно-научные, а также создание в структуре университета Научно-инновационного объединения (НИО) с встроеными научно-исследовательскими институтами, лабораториями и центрами, предотвратило бесконтрольное возникновение в нашей Республике, как в малом государственном образовании, десятков нежизнеспособных ВУЗов без собственных научных и педагогических кадров; необходимой для нормальной деятельности материально-технической базы и полноценного научно-методического обеспечения. Именно такой подход дал возможность Приднестровью избежать превращения сферы высшего образования в негосударственную, ее коммерциализации; профанации подготовки научно-педагогических кадров и имитации научно-исследовательской работы. В реальных условиях еще не окрепшего молодого государства только крупный многопрофильный университет был способен решать в комплексе сложные задачи подготовки конкурентоспособных кадров ВПО для всех отраслей народного хозяйства и обеспечить условия развития собственной системы профессионального образования.

В процессе реализации государственной политики были разработаны принципы и найдены оптимальные пути использования научного потенциала университета не только в сфере образования, но и в других отраслях народного хозяйства. Итогом этой деятельности стало создание высшего управленческого органа науки, главной функцией которого была разработка стратегии и приоритетных направлений развития научной сферы в Приднестровье. Этим органом стал Высший Консультативный Совет по науке и технике (ВКСНТ), который возглавил Президент Республики (в настоящее время его возглавляет Председатель Правительства), что предопределило роль науки в государстве как важного ресурса его развития, а не только как удовлетворения творческих потребностей ученых.

Важнейшей задачей университета стала поддержка успешного функционирования и развития системы образования, поэтому значительные научные и кадровые ресурсы были сконцентрированы на этом направлении, а подготовка научно-педагогических кадров для системы образования и для самого университета являлась и остается важнейшим приоритетом в деятельности университета.

Университет внес определяющий вклад в переход системы образования Приднестровья на российские государственные образовательные стандарты (ГОСы), создал условия для легитимации приднестровской системы образования в России и других странах СНГ, и обеспечил возможность горизонтального взаимодействия с образовательными системами других государств. Использование российской нормативной базы дало возможность университету войти в российскую систему аттестации своих научно-педагогических кадров, построения собственной, адекватной российской, системы подготовки научных кадров и жесткое соблюдение квалификационных требований к ним, т.е. в университете, как в государственных ВУЗах России признавались только те ученые степени и звания, которые были получены сотрудниками в государственных ВУЗах и академиях наук России, Украины, Молдовы и других государств СНГ.

Следующими шагами стали признание дипломов ПГУ эквивалентными дипломам аттестованных и аккредитованных государственных российских ВУЗов и аттестация ПГУ Федеральной службой по надзору в сфере науки и образования Министерства образования России, подтвердившая его статус как классического университета.

Органичное встраивание ведущего центра высшего образования Приднестровья в российскую научно-образовательную систему происходило через включение в соответствующие УМО и Научные советы России в качестве полноправных членов этих авторитетных организаций, руководителей научных и учебных структур ПГУ.

Особую роль в интеграции Приднестровского госуниверситета в систему высшего профессионального образования России, его становления в качестве российского научно-образовательного центра на постсоветском пространстве сыграл МГУ им. М.В.Ломоносова и его выдающийся ректор академик В.А.Садовничий, рекомендовавший наш университет в одну из наиболее авторитетных межгосударственных ассоциаций университетов стран СНГ, аккредитованную при Межпарламентской Ассамблее государств СНГ – Евразийскую Ассоциацию университетов.

Важными этапами признания научной состоятельности ПГУ явились подписания соглашений о сотрудничестве с крупнейшими государственными научными организациями: Российской Академией наук, Российской Академией образования, Российской Академией сельскохозяйственных наук; открытием в ПГУ ВАКом России первых российских Диссертационных Советов в 2001г. Получила развитие система взаимодействия университета с органами управления науки и образования России: МОН РФ, Рособрнадзором, Россотрудничеством, Комитетами ГД РФ по образованию, по Науке и наукоемким технологиям, по делам СНГ и др.

В подписанных между Россией и Приднестровьем на межгосударственном уровне Протоколах «Жуков-Смирнов» и «Рогозин-Шевчук» содержатся конкретные меры по оказанию помощи Республике в развитии сферы науки и образования. На их основе в 2009г. в ПГУ был реализован проект Центра российского образования и науки. В настоящее время на базе Протокола «Рогозин-Шевчук» университетом и МОН РФ реализуется проект Российско-Приднестровского Консорциума ВУЗов. В рамках этих проектов решаются следующие задачи:

1. наиболее способные студенты получают второе высшее образование;
2. молодые преподаватели университета проводят свои кандидатские и докторские диссертационные исследования в крупнейших государственных ВУЗах и научных центрах России;
3. обеспечивается академическая мобильность с ведущими университетами России;
4. развивается активное сотрудничество Научно-инновационного объединения ПГУ со Сколково.

Опыт двадцатипятилетнего независимого развития доказывает то, что Приднестровье в условиях непризнанности, самоотверженной борьбы за свое международное признание смогло не только сохранить сферу образования и науки, как часть российской, обеспечить их поступательное и динамичное развитие, но и сделать необратимым процесс их интеграции в российскую научно-образовательную сферу.

В деятельности системы образования Приднестровья принципиально важным является то обстоятельство, что в настоящее время заблокировать работу нашей научно-образовательной системы и ее ведущего ВУЗа – Приднестровского государственного университета в российском научно-образовательном пространстве, или подчинить их некоторому центру за пределами Приднестровья сегодня уже невозможно.

Приднестровский университет активно сотрудничает не только с ВУЗами и научными центрами России, он также открыт для диалога и сотрудничества с вузами и научными центрами Молдовы, сотрудники которых работают в ПГУ как преподаватели и исследователи. Проблемы науки и образования Приднестровья обсуждались на европейских форумах по науке и образованию. Несомненно, научно-образовательные системы Приднестровья и Молдовы могут успешно сотрудничать как две равноправные системы, подобно сотрудничеству с образовательными системами России и других государств СНГ.

Затянувшееся решение, связанное с признанием Приднестровья, не должно отражаться на полноте реализации прав приднестровцев на образование, на развитие своей научной сферы и доступе к достижениям современной науки.

За годы становления Республики как независимого государства в университете произошла глубокая интеграция науки и образования. Университет фактически обрел функции Академии наук Приднестровья, оставаясь при этом крупнейшим центром образования, средоточием передовых образовательных технологий, транслирующим достижения науки и образования России и других государств на сферу науки и образования Приднестровья, являясь привлекательным центром притяжения для молодежи нашего края и сопредельных государств, продолжателем великих российских просветительских, духовных и культурных традиций.

Աննա Չարչյան
Խաչատուր Արուսյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի հատուկ կրթության ֆակուլտետի
լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի դասախոս, լոգոպեդ

ՀՈԱԶԳԱՑԱԿԱՆ ԱՊՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՑԻ ԵՐԵՄԱՆԵՐԻ ԽՈՍՔԻ ԵՎ ՀՈԳԵԿԱՆ ՄՅՈՒՍ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ

Հոդվածը ներկայացնում է Արցախյան պատերազմում կոնֆլիկտային գոտում ապրող երեխաների և նրանց ընտանիքների ֆիզիկական, հոգեբանական և էմոցիոնալ առողջական խնդիրները: Մասնավորապես անդրադարձ է կատարվել խոսքի և այլ հոգեկան խանգարումներ ունեցող երեխաների բացահայտման և ախտորոշման հարցերին:

Առանցքային բառեր՝ ուշադրության, հիշողության, ընկալման, մտածողության, երևակայության զարգացման խանգարումներ, շտկողազարգացնող աշխատանքներ, լոգոպեդական աշխատանք, խնդրի վաղ հայտնաբերում, կանխում:

Anna Charchyan
Lecturer ASPU after Khachatur Abovyan, Department of Special Education,
the Chair of Rehabilitation and Speech Therapy,
Chess Educational Research Centre, researcher

IMPACT OF EMOTIONAL EXPERIENCES ON SPEECH AND MENTAL PROCESSES OF CHILDREN FROM ARTSAKH

The article presents physical, mental and emotional health problems of those children and their families living in the conflict zone during Artsakh war. In particular, reference was made to identify children with speech disorders and other mental disorders, to their correct diagnosis and the organization of their rehabilitation.

Key words: attention, memory, perception, thought, developmental disorders of imagination, correcting developmental works, speech therapy job, early detection of the problem, prevention

Анна Чарчян
преподаватель факультета Специального Образования
Кафедры логопедии и восстановительной терапии,
научный сотрудник образовательно-исследовательского центра Шахмат
Армянского Государственного Педагогического Университета им. Х. Абовяна

ЭМОЦИОНАЛЬНЫЕ ПЕРЕЖИВАНИЯ НА РАЗВИТИЕ РЕЧЕВОГО И ДРУГИХ ПСИХИЧЕСКИХ ПРОЦЕССОВ У ДЕТЕЙ АРЦАХА

В статье представлены физические, психические и эмоциональные проблемы у детей и их семей живущих во время войны в зонах конфликта Арцаха. В частности, были затронуты вопросы выявления и диагностики проблем у детей с нарушениями речи и других психических процессов.

Ключевые слова: речь как более высокий психический процесс и другие психические процессы, внимание, память, восприятие, мышление, расстройства развития воображения коррекционно развивающие работы, логопедическая работа, выявление и предотвращение проблемы на ранней стадии, воздействия.

Արցախյան պատերազմի հոգեբանական և սոցիալ-տնտեսական հետևանքները լուրջ հետք են թողել ոչ միայն զոհեր ու վիրավորներ տալով, այլև հետպատերազմյան շրջանում ապրել շարունակող ժողովրդի՝ մասնավորապես երեխաների կյանքում: Ամբողջ աշխարհում քիչ թիվ չեն կազմում որք ու անտուն, քաղցած ու բռնությունների ենթարկվող, կյանքի տարբեր իրավիճակներով պայմանավորված միայնակ, խնամքից ու կրթվելու իրավունքից զրկված երեխաները:

Արցախյան պատերազմից հետո Արցախում և Հայաստանում մեծ էր որբացած և միակողմանի ծնողազուրկ, հոգեկան և ֆիզիկական հաշմանդամություն ձեռք բերած, ընտանիքի անդամներ ու մտերիմներ կորցած, կյանքի նորմալ պայմաններում բնակվելու, սովորելու և զարգանալու տարրական հնարավորություններից օգտվելու իրավունքներ ունեցող, սակայն այդ հնարավորություններից չօգտվող երեխաների թիվը:

1988-1995թթ. ժամանակահատվածի համար խոցելի համարվող խմբեր են կազմել սահմանամերձ տարածքների, հակամարտությունների գոտու, գերեվարված, բռնությունների ենթարկված բնակիչներն ու նրանց երեխաները, բժշկական միջամտության կարիք ունեցող ու ժամանակին այն ստանալու հնարավորությունը չունեցող հղի կանայք

ու երեխաները, նախադպրոցական հաստատություններ և դպրոցներ հաճախելու հնարավորությունից զրկված, վախի ու սարսափի մթնոլորտում գտնվող ընտանիքների երեխաները:

Արցախում, նման երեխաների թվի մեծացումը նույնիսկ պատերազմից հետո կարող է պայմանավորված լինել.

- տարբեր տեսակի զենքերի ու ռումբերի օգտագործումից աղտոտված օդը,
- բնակչության սոցիալ-տնտեսական վատթար վիճակը,
- կենցաղային անբավարար և միջավայրային անբարենպաստ պայմանները,
- բնակչության վայրի տեղից տեղ փոփոխությունները
- կրթությունն ապահովելու համար անբավարար պայմանները
- հղի կանանց ու երեխաների ոչ ժամանակին ստացած բժշկական միջամտությունները
- զարգացման խանգարումներով ծնված կամ պատերազմի ընթացքում տարբեր պատճառներով խնդիրներ ձեռքբերած երեխաներին ժամանակին հայտնաբերելու և ճիշտ ախտորոշելու, նպատակաուղղված շտկողագարգացնող աշխատանքներն իրականացնելու հնարավորություններից զրկված լինելը:

Պատերազմական և հակամարտությունների գոտիներում ապրող երեխաներին և նրանց ընտանիքներին ավելի շատ բնորոշ են.

- անձնային, հոգեբանական խնդիրներ՝ ցածր ինքնագնահատական, վստահության պակաս սեփական ուժերի նկատմամբ,
- վարքային խնդիրներ՝ ակտիվ, ագրեսիվ, պասիվ և այլն,
- իմացական գործընթացների խանգարումներ՝ ուշադրության, հիշողության, ընկալման, մտածողության, երևակայության,
- խոսքի խանգարումներ՝ շփման ու հաղորդակցման սահմանափակում:

Վերը նկարագրվածը, իհարկե, չի սահմանափակվում թվարկված խնդիրների դրսևորումներով: Դրանք արմատավորվելով իրենց հետևից կարող են բերել երկրորդային, երրորդային մի շարք այլ խնդիրներ:

Ամերիկյան հետազոտողները նշում են, որ հոգեկան տրավմաները կարող են առաջ բերել ֆիզիկական, մտավոր և հուզազգայական առողջության խնդիրներ: Դեռևս 1980 թվականին Ամերիկյան հոգեբույժների միությունը ներկայացրել է հետպատերազմյան նոր հիվանդությունների՝ հոգեկան խանգարումների ախտորոշման և դասակարգման երրորդ հարատակությունը՝ (DSM-III), որում ներկայացվել է հետտրավմատիկ սթրեսային խանգարումները (Posttraumatic stress disorder - PTSD) [1, 2]: Մանկության տարիներին սթրեսային ապրումները, հոգեկան տրավմաներն ազդում են երեխայի հոգեկանի և խոսքի զարգացման ընթացքի, վարքի կարգավորման վրա: Նման խնդիրները, կախված երեխայի տարիքային և անհատական առանձնահատկություններից, կարող են խոսքի և հաղորդակցման խանգարումների՝ կակազության, մուտիզմի, հոգեկան գործընթացների խանգարումների՝ ուսման մեջ դժվարությունների, գրելու և կարդալու գործընթացների խանգարումների առաջացման պատճառներ հանդիսանալ: Քանի որ մեզինց յուրաքանչյուրը տարբեր կերպ է արձագանքում սթրեսին, ուստի խնդրի առաջացման և արտահայտման ձևերն էլ իրենց բնույթով տարբեր են:

Վիետնամի և Երկրորդ համաշխարհային պատերազմներից հետո եվրոպական երկրներում կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ «տրավմատիկ, սթրեսածին գործոնների ազդեցությամբ պայմանավորված՝ երեխաների գլխուղեղում գորշ և սպիտակ նյութի ծավալի որոշակի փոփոխություններ են տեղի ունենում, նրանց խոսքի և իմացական (հոգեկան) գործընթացների զարգացման ընթացքն է փոխվում», նշում է Բոստոնի մանկական հիվանդանոցի աշխատակից Մարգարետ Շերիդան (Margaret Sheridan ze Szpitala Dziecięcego w Bostonie (stan Massachusetts)) [1, 3]: Մակայն միջավայրային պայմանների բարելավումը կարող է դրական ազդեցություն ունենալ երեխաների գլխուղեղի գորշ և սպիտակ նյութերի ծավալի փոփոխությունների վրա: Մանկատներում բնակվող, անտուն, անբարենպաստ միջավայրում գտնվող երեխաների և նման խնդիրներ չունեցող իրենց հասակակիցների գլխուղեղի գորշ և սպիտակ նյութերի բաշխվածությունը տարբեր է: Սպիտակ նյութը մարդու տարիքի հետ զարգանում, փոփոխության է ենթարկվում և ապահովում է տեղեկատվության արագ փոխանցումը գլխուղեղի բաժինների միջև, մարդուն դարձնում է ավելի ընկալունակ: Այն դրական և կարևոր նշանակություն ունի մարդու դաստիարակության հարցում:

Մակայն յուրաքանչյուր բախում, լինի դա ընտանիքում, պետության ներսում, թե պետությունների միջև, իր բացասական հետքն է թողնում և մշտապես ուղեկցում է բնակչությանը սոցիալ-տնտեսական, հասարակական, հանրակրթության և մշակութային կյանքում: Մինչև օրս էլ Արցախի սահմանամերձ տարածքներում շարունակվող կրակոցները, մարդկային զոհերը, վախի ու սարսափի զգացումը, սերնդե սերունդ փոխանցվող պատմությունները, հիշողություններն ու կորուստները դեռ երկար ժամանակ բացասական հետևանքներ են ունենալու երեխաների խոսքի և մյուս հոգեկան գործընթացների (հիշողության, ուշադրության, ընկալման, մտածողության, երևակայության), դեռահասների միջանձնային հարաբերություններում ու հասուն մարդկանց հասարակական կյանքում:

Այս խնդիրներն առավել բարդ ձևով կարող են արտահայտվել երեխաների խոսքի և հոգեկան մյուս գործընթացների զարգացման ճգնաժամային տարբեր շրջաններում (1-3 տարեկանը, 3-6 տարեկանը), անձնային որակների ձևավորման տարբեր փուլերում, ինչպես նախադպրոցական, այնպես էլ դպրոցական տարիքում:

Իրագել ծնողների և կրթական հաստատություններում մասնագիտական թիմի կողմից տարվող աշխատանքները կարող են կանխել, բարելավել և զարգացնել երեխաների՝ հապաղումներով ընթացող խոսքի և մյուս հոգեկան գործընթացների զարգացումը: Ջարգացման խանգարումներով, հոգետրավմատիկ վիճակում գտնվող երեխան, հաճախելով դպրոց, ունենում է ուսումնական դժվարություններ՝ խոսելու, հաղորդակցվելու, կարդալու, գրելու դժվարություններ՝ պայմանավորված հոգեկան գործընթացների զարգացման խանգարումներով:

Այս համատեքստում կարևորվում է.

- ընտանիքի դիրքորոշումը և արձագանքը երեխայի խնդրի վերաբերյալ,
- երեխաների խոսքի և հոգեկան մյուս գործընթացների զարգացման ուղղությամբ ծնողների իրագել և բազմակողմանի մոտեցումը,
- մասնագիտական թիմի՝ լոգոպեդի, հոգեբանի, հատուկ հոգեբանի, հատուկ մանկավարժի, ֆիզիոթերապևտի, երգոթերապևտի և ծնողի համաձայնեցված աշխատանքը,
- երեխայի նախապատրաստումը դպրոցին,
- երեխայի հարմարումը միջավայրում,
- երեխայի՝ ճիշտ խոսքային միջավայրում գտնվելը:

Նշված խնդիրների հաղթահարումը զուգահեռ պետք է ընթանա, որպեսզի շտկողազարգացնող աշխատանքները լինեն արդյունավետ:

Մեր այս աշխատանքում մասնավորապես կարևորում ենք.

- Արցախի Հանրապետությունում զարգացման խնդիրներով՝ խոսքի խանգարումներով, մտավոր զարգացման խանգարումներով, խոսքի զարգացման և հոգեկան զարգացման հապաղումներով երեխաների հայտնաբերումը,
- երեխայի ունեցած խնդրի ճիշտ ակտորոշումը, շտկողազարգացնող աշխատանքների նպատակային կազմակերպումը,
- երեխաների հետ տարվող աշխատանքները պետք է ուղղված լինեն նրանց խոսքի և հոգեկան մյուս գործընթացների զարգացման: Նրանց՝ դպրոցին նախապատրաստելուն, ինչպես նաև դպրոցական ուսուցման ընթացքում իրենց զարգացմամբ հասակակիցներից հետ չմնալուն.
- բազմամասնագիտական թիմի վերապատրաստումը, մասնագիտական գիտելիքների թարմացումը և մասնագիտական կարողությունների զարգացումը,
- նշված խնդիրների վեր հանման, բացահայտման ուղղությամբ նպատակաուղղված աշխատանքների կազմակերպումը՝ հանդիպումներ բնակչության տարբեր խմբերի հետ, քանի որ ինչքան ավելի շուտ հայտնաբերվեն երեխաների զարգացման խնդիրները, այնքան ավելի մեծ է հավանականությունը կանխելու խնդրի զարգացումը,
- զարգացման խանգարումներ ունեցող և այդ խնդիրները չունեցող ընտանիքների, ծնողների ներգրավումը, քանի որ նրանք երկուստեք կարող են փոխադարձ օգտակար լինել իրենց երեխաներին, նախադպրոցական և կրթական այլ հաստատություններում իրենց երեխաների ներառմանը նպաստող աշխատանքներ իրականացնել,
- հասարակության իրագելմանն ուղղված աշխատանքների կազմակերպումը՝ համայնքների, հասարակական կազմակերպությունների մասնակցությունը, քանի որ նրանք կարող են լուրջ օղակներ հանդիսանալ նմանատիպ խնդիրների լուծմանն օժանդակելու, բնակչության իրագելմանն աջակցելու առումով:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերը թվարկված խնդիրները, այդ խնդիրների հրատապությունը, բացասական գործոնների ազդեցությունը, խնդրի լուծման հնարավոր տարբերակները, կարող ենք ասել, որ այժմ համապատասխան մասնագետների ակայությունը, զարգացման խանգարումներ ունեցող անձանց նկատմամբ մեր ազգաբնակչության վերաբերմունքի և մոտեցման փոփոխությունները լուրջ ցուցանիշներ են շտկողազարգացնող աշխատանքներն ավելի լայնամաշտաբ անցկացնելու առումով:

Առկա են հոգետրավմատիկ, հուզազգայական խնդիրներ, սթրեսածին գործոնների ազդեցությամբ, խոցելի խմբերում զարգացման տարբեր խանգարումներով, հոգեբանական խնդիրներով արցախցի երեխաները, ովքեր ունեն բազմամասնագիտական թիմի նպատակաուղղված, շտկողազարգացնող աշխատանքի կարիք, իրենց հասակակիցներից հետ չմնալու, չտարբերվելու, շփվելու և հաղորդակցվելու, դպրոցական ուսուցումից հետ չմնալու կարիք:

Գրականություն

1. Nauka w Polsce, Życie w sierocińcu negatywnie wpływa na rozwój mózgu dzieci, 2012
2. Amen D.G.: Zadbaj o mózg. Rebis, Poznań 2010. 3. Bauer J.: Empatia. PWN, Warszawa 2008. 4. Beisert M.: Kaziroduktwo. Scholar, Warszawa 2004. 5. Bradshaw J.: Powrót do swego wewnętrznego.
3. Dudek B.: Zaburzenie po stresie traumatycznym. GWP, Gdańsk 2003.

ՀՏԴ 371(479.243)

Մանկավարժություն

**ՎՊՀ հայոց լեզվի ամբիոնի դոցենտ,
մ.գ.թ., Վանաձորի Բաֆֆու անվան թիվ 19 դպրոցի տնօրեն Անուշ Երոյան,
դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհիներ՝
Նարինե Հարությունյան,
Վարդուհի Գևորգյան,
դասվարներ՝ Արմահրա Ղազարյան,
Օրսանա Մովսիսյան, Գոհար Լորտիկյան, Արմինե Ճոկլիկյան,
պատմության ուսուցչուհի՝ Նազիկ Գիշյան**

ԱՇԱԿԵՐՏԻ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՅԱՆՅԱՆ ԱԶԱՏԱՄԱՐՏԻ ԹԵՄԱՆԵՐՈՎ

Այսպիսով, դպրոցում Արցախյան ազատամարտի թեմայով սովորողների հայրենասիրական դաստիարակությունը ավելի նպատակահարմար է իրականացնել դասարանական և արտադասարանական պարապմունքների միջոցով: Կրթության արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է օգտագործել ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաներ, որոնց մեջ են մտնում ԻՀՏ տրված հնարավորությունները, ժամանակակից ինտերակտիվ մեթոդները և միջառարկայական կապերը:

Բանալի բառեր՝ ուսուցման ժամանակակից մեթոդներ, դասարանական և արտադասարանական աշխատանքներ, հայրենասիրական դաստիարակություն, Արցախ, արցախյան ազատամարտ, ազատություն, անկախություն, պետական խորհրդանիշներ, ազգային հերոսներ, համազգային շարժում, հոշակազիր, ազատամարտիկ, հայրենասիրություն:

**Доцент кафедры армянского языка,
кандидат математических наук, директор вандзорской н. 19 школы им. Раффи Ануш Егоян,
учительницы армянского языка и литературы Нарине Арутюнян, Вардуи Геворгян,
учителя Армаида Газарян, Оксання Мовсисян, Гоар Лортикян,
Армине Чеклинян, учительница истории Назик Гишян**

**ПАТРИОТИЧЕСКОЕ ВОСПИТАНИЕ СТУДЕНТОВ ПО ТЕМАТИКЕ КАРАБАХСКОЙ ОСВОБОДИТЕЛЬНОЙ
БОРЬБЫ**

Таким образом, в общеобразовательной школе патриотическое воспитание учащихся по тематике Арцахской освободительной борьбы целесообразно осуществлять при помощи классных и внеклассных занятий. Для повышения результативности обучения необходимо применять современные педагогические технологии, включая в них предоставленные возможности ИКТ (информационных компьютерных технологий), современных интерактивных методов и межпредметных связей.

Ключевые слова-современные методы обучения, классная и внеклассная работа, патриотическое воспитание, родина, Арцах, арцахская освободительная борьба, свобода, независимость, символы государства, национальные герои, всенародное движение, провозглашение, боец-освободитель, патриотизм.

**Associate professor of Armenian language faculty of VSU,
Candidate of Mathematical Sciences, the director of Vandzor's number 19 school Anush Egoyan
The teachers of Armenian language and literature Narine Harutyunyan,
Varduhi Gevorgyan, teachers Armaida Ghazaryan, Oqsanna Movsisyan, Gohar Lortikyan,
Armine Choklinyan, the teacher of history Nazik Gishyan**

PATRIOTIC EDUCATION OF STUDENTS ON KARABAKH WAR TOPIC

Thus, in secondary schools, learners' education on the subject of Artsakh liberation struggle is appropriate to organize through curricular and extracurricular activities. To achieve higher effectiveness in teaching, it is necessary to use modern pedagogical technologies including the potential of ICT sphere, modern interactive methods and interdisciplinary connections.

Key words - modern teaching methods, curricular and extracurricular activities, patriotic education, motherland, Artsakh, Artsakh liberation struggle, freedom.

*Հայրենիքներն ապրում են հայրենասիրությամբ, կործանվում դրա պակասի պատճառով:
Հայրենապաշտական դաստիարակություն. ահա՛ մեր փրկության խարխիսը:*

Գարեգին Նժդեհ

Սովորողի հայրենասիրական դաստիարակությունը միշտ էլ գտնվել և գտնվում է դպրոցի ուշադրության կենտրոնում, քանի որ դպրոցական ուսումնառության գործընթացը նպաստավոր պայմաններ է ստեղծում աշակերտի մոտ հայրենիքի հանդեպ պատկերացումներ և սեր արմատավորելու, ազգային ինքնագիտակցություն ձևավորելու, հայրենիքի պաշտպան դաստիարակելու գործում:

Հանրակրթության պետական կրթական չափորոշիչով պայմանավորված՝ հստակ պահանջներ են ներկայացված սովորողի արժեքային համակարգի ձևավորման համար, որի բաղկացուցիչ մասն են կազմում աշակերտների ռազմահայրենասիրական դաստիարակության, ազգային հոգևոր արժեքների գնահատման սկզբունքները¹:

Բոլոր ժամանակների և մանավանդ այսօրվա դպրոցի առջև դրված է կյանքի կողմից պարտադրված կարևորագույն խնդիր. այն է՝ դաստիարակել հայրենասեր սերունդ: Արցախի գոյապայքարի այսօրվա մարտահրավերները ավելի են կարևորում այսպիսի սերունդ ունենալու անհրաժեշտությունը: Այս հարցն ավելի սուր է ներկայանում մեր օրերում, քանզի այսօրվա աշխարհաքաղաքական զարգացումների կիզակետում հայտնված մեր պատմական հայրենիքի՝ Արցախի ապագան վտանգված է, իսկ վաղվա օրվա հայրենյաց սահմանի պաշտպանն այսօրվա դպրոցականն է ու նրա մեջ հայրենասիրություն սերմանող ուսուցիչը, ով իր անխոնջ աշխատանքով մատաղ սերնդի հոգում դնում է հայրենասիրության ծլարձակող սերմեր, վկան՝ Արցախի քառօրյա պատերազմը:

<<Հայրենասիրությունը ծագում է լատիներեն <<պատրիոտ>> բառից, նշանակում է հայրենիքը սիրող: Հայրենասիրությունը բարոյական բարձր որակ է: Այն սոցիալական դիրքորոշում է, որի հիմնական բաղադրիչը սերն է: Մարդու հայրենասիրությունը հանդես է գալիս և մարմնավորվում տվյալ մարդու (դպրոցականի)՝ դեպի իր հայրենիքը ունեցած սիրո մեջ: Մերը ոչ միայն հայրենիքի նկատմամբ է, այլ նաև հայրենիքում ապրող ժողովրդի նկատմամբ: Երբ ասում ենք հայրենիք, ապա առաջին հերթին հասկանում ենք հայրենիքում ապրող ժողովուրդը>>:

Գիտամանկավարժական գրականության մեջ ընդունված է այն տեսակետը, որ աշակերտի հայրենասիրական դաստիարակությունը իրականացվում է երեք փուլով՝

- ա) կրտսեր դպրոցում (I-IV դասարաններ) հայրենասիրական պատկերացման հիմքեր են ձևավորվում,
- բ) հիմնական դպրոցում (V-IX դասարաններ) ձևավորվում է աշակերտի հայրենասիրական մտածողությունը,
- գ) ավագ դպրոցում (X-XII դասարաններ) աշխատանքներ են տարվում սովորողի հայրենասիրական գիտակցության ձևավորման ուղղությամբ:

Սույն հետազոտության նպատակը հանրակրթության մեջ աշակերտի բարոյական դաստիարակության, մասնավորապես հայրենիքի նվիրյալի և պաշտպանի ձևավորման գործընթացում վերը նշված երեք փուլերով իրականացվող ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետությունը ապահովող մեթոդների և հնարների մշակումն ու համակարգումն է:

- Առաջադիր նպատակին հասնելու համար մեր կողմից առաջ են քաշվել մի շարք խնդիրներ, ինչպիսիք են՝
- ա) մատնանշել կրտսեր և միջին դասարաններում հայրենասիրական դաստիարակությանն ուղղված աշխատանքները պայմանավորված աշակերտների տարիքային և հոգեբանական առանձնահատկություններով,
- բ) ներկայացնել արցախյան ազատամարտի թեմաներով սովորողի հայրենասիրությանը միտված աշխատանքի գիտականորեն հիմնավորված ուղիները,

գ) համակարգել և ընդհանրացված նկարագրել կրտսեր և միջին դպրոցում դասարանական և արտադասարանական աշխատանքների համամասնության ճիշտ պահպանմամբ աշակերտի արժեքային համակարգի ձևավորմանը նպաստող և արդեն փորձով արդարացված լուծումները:

Կրտսեր դպրոցականների տարիքային և հոգեբանական առանձնահատկություններով պայմանավորված՝ մայրենի լեզվի տարրական դասարանների ծրագրում աշակերտների հայրենասիրական դաստիարակությանն ուղղված թեմաների ուսուցմանը հատկացված է ընդամենը 8-9 ժամ, ինչը դաս-դասարանային աշխատանքի իրացման ընթացքում լիարժեք հնարավորություն չի ապահովում սովորողի ռազմահայրենասիրական դաստիարակության համար: Ուստի ուսումնադաստիարակչական խնդիրների լուծումը մենք իրականացնում ենք դասարանական աշխատանքի շարունակությունը համարվող արտադասարանական պարապմունքներով, որոնք անմիջականորեն կապված են դասարանում կատարվող աշխատանքների հետ:

Մեծ մանկավարժ Վ. Սուխոմլինսկին մանկավարժական երկարատև տարիների իր գործունեության մասին խոսելիս նշել է. <<Երեխաների դպրոց հաճախելու հենց առաջին օրերից էս նրանց հետ միասին սկսում եմ

¹ Տե՛ս Հայոց լեզու և գրականություն, Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր, Երևան, 2006:

² Յու.Ա. Ամիրջանյան, Ա. Ս. Մահակյան, Մանկավարժություն, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2005., էջ 348:

ճանապարհորդություններ կատարել դեպի մեր հայրենիքի վեհության, պատվի, փառքի, անկախության համար կատարված սխրանքների աշխարհը»¹: Հետևելով մեծ մանկավարժի պատգամներին՝ կրտսեր դպրոցում աշակերտի հայրենասիրական դաստիարակությունը իրականացնում ենք դաստիարակության կենսագործման դասարանական և արտադասարանական աշխատանքների զանազան ուղիներով՝ դրական օրինակով, հայրենիքի մասին գրույցներով, գրական ստեղծագործությունների վերլուծություններով, միջառարկայական և ներառարկայական կապեր ստեղծելով և այլն: Կիրառում ենք նաև արտադասարանական տարբեր միջոցառումներ.

- արցախյան պատերազմի հերոսների, ռազմական մարտերի մասին ականատեսների վկայություն-հիշողություններ. սովորողները ճանաչում են արցախյան պատերազմի հերոսներին, ծանոթանում են ռազմական մարտերի մասնակիցների վերապրած հիշողություններին,

- էքսկուրսիաների, արշավների իրականացում. երեխաները ճանաչում են հայրենի բնաշխարհը, սիրում հայրենի հողը,

- մասնակցություն ազգային տոներին. սովորողները ճանաչում են ազգային տոները, անձամբ մասնակցում տոնակատարություններին,

- գրույց, դասախոսություն, բանավեճ. աշակերտները փոխանակում են հայրենասիրական գաղափարներ, հարստացնում են հայրենիքի մասին ունեցած գիտելիքները, բանավեճի արդյունքում կատարում եզրահանգումներ,

- արցախյան թեմաներով կինոդիտում. փաստավավերագրական ֆիլմերի օգնությամբ աշակերտները ծանոթանում են պատմական փաստերին,

- հայրենասիրական թեմաներով ցերեկույթներ, վիկտորինաներ. սովորողներն անձամբ մասնակցում են միջոցառումների կազմակերպմանն ու ներկայացմանը. ապահովվում է առողջ մրցակցություն:

Սովորողի հայրենասիրական դաստիարակության առաջին փուլում կարևորվում է աշակերտների՝ հայրենիքի մասին ունեցած պատկերացումների ձևավորումն ու ամբողջացումը: Փոքրածավալ նյութերի ընթերցման ճանապարհով խնդիր է դրվում սովորողների մեջ ձևավորել հայեցի դաստիարակություն, ազգային հոգեկերտվածք՝ նպաստելով երեխայի ինքնաձանաչմանն ու ինքնադրսևորմանը, և ամենևին էլ պատահական չէ, որ կրտսեր դպրոցում աշակերտի հայրենասիրական պատկերացումների ստեղծումը խարսխվում է հայրենիքի նվաճումների հանդեպ աշակերտի հպարտության գիտակցման վրա, որը դառնում է հայրենասիրության հիմքը:

Հանրակրթության 2-րդ աստիճանում հիմնական դպրոցի սովորողների հայրենասիրական մտածողության զարգացման համար ի նպաստ են դրվում ուսումնական տարբեր բնագավառների ընձեռած հնարավորությունները: Գրականությունը և պատմությունը կյանքի դասեր են ուսուցանում սովորողներին, զարգացնում նրանց ստեղծագործական, վերլուծական ակտիվությունը և դաստիարակում ինքնատիպ անհատականություններ: Իսկ մյուս ուսումնական առարկաները («ՆՁՊ և անվտանգ կենսագործունեություն», «Աշխարհագրություն», ՏՀՏ և այլն) ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման համատեքստում հարուստ նյութ են տալիս ինտեգրված դասեր անցկացնելու համար:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման 25-րդ տարեդարձի նշանավորման միջոցառումների շարքում Վանաձորի Բաֆֆու անվան թիվ 19 դպրոցի 9-րդ դասարանում ներդրվել է նմանատիպ փորձ «Արցախյան շարժումը և Հայաստանի անկախացման գործընթացը» թեմայի ամփոփման դասով²:

Դասի նպատակը՝

ա) արցախյան ազատամարտի թեմաներով աշակերտների ձեռք բերած գիտելիքների համակարգում,

բ) թեմայի ընձեռած հնարավորությունների սահմանում աշակերտի տրամաբանական, վերլուծական, հետազոտական, համագործակցային և ստեղծագործական կարողությունների ու հմտությունների զարգացում,

գ) արցախյան ազատամարտին վերաբերող թեմայի ուսուցում՝ ի նպաստ աշակերտի ռազմահայրենասիրական դաստիարակության:

Մեթոդներ՝ պրիզմա, կարճ դասախոսություն, ժամանակագրական աղյուսակ, քառաբաժան:


Կահավորում՝ ՀՀ վարչական քարտեզ, ՀՀ և Արցախի պետական խորհրդանիշներ, բաշխիչ նյութեր, համացանց, դասագիրք, գունավոր մարկերներ, պաստառներ:

Դասի ընթացքը՝

Քննադատական մտածողության զարգացմանն ուղղված ԽԻԿ համակարգի ներդրմամբ դասի խթանման փուլում աշակերտներին առաջարկում ենք պրիզմայի օգնությամբ ներկայացնել «հայրենասիրություն» սկզբնաբառը:

¹ Վ. Ա. Սուխումլինսկի, Ինչպես դաստիարակել իսկական մարդ, Երևան, 1980, էջ 33:

² Է. Գևորգյան, Կ. Խաչատրյան, Ա. Վիրաբյան, Հայոց պատմություն, դասագիրք հանրակրթական դպրոցի 9-րդ դասարանի, Երևան, 2014թ., էջ. 113:



Այնուհետև աշակերտներին հանձնարարում ենք կազմել նախադասություններ պրիզմայի սկզբնաբառով և վերջնաբառով: Սա տրամաբանական կապ է ապահովում երկու հանգուցային բառերի միջև և գործի է դնում աշակերտի քննադատական-ստեղծագործական մտածողությունը:

Դասի *խնամտի ընկալման* փուլում գործադրում ենք «Կարճ դասախոսություն» մեթոդական հնարը: Աշակերտներից մեկը, ում նախապես հանձնարարվել էր տեղեկություններ հավաքել Արցախի պատմության, համազգային պայքարի և ազգային զարթոնքի մասին, հանդես է գալիս իր ամփոփ խոսքով:

Դասը շարունակում ենք համագործակցային եղանակով: Դասարանը բաժանվում է չորսհոգանոց հինգ խմբերի, որոնցից յուրաքանչյուրին տրվում են հետևյալ առաջադրանքները՝

I խումբ՝ օգտվելով բաշխիչ նյութից՝ կազմել արցախյան տարեգրության ժամանակագրական աղյուսակը.

Տարեթիվ	Իրադարձություն	Մեկնաբանություն
---------	----------------	-----------------

II խումբ՝ օգտվելով համացանցից՝ կազմել Արցախի վարչական միավորների քարտեզը՝ կարմիր գույնով ներկելով վտանգված շրջանները:

III խումբ՝ բաշխիչ նյութով աշակերտներին տրամադրված ապրիլյան քառօրյա պատերազմում ընկած հերոս տղաների և ազգային այլ հերոսների նկարները խմբավորելով՝ բնութագրել նրանց համացանցից դուրս գրված թևավոր արտահայտություններով:

IV խումբ՝ կազմել Արցախի պատկերագրող այցեքարտը՝ նշելով պաշտոնական անվանումը, մայրաքաղաքը, տարածքը, բնակչության թիվը, պետական լեզուն, կրոնը, արժույթը, պետական կառուցվածքը:

V խումբ՝ օգտվելով պատմության դասագրքից¹ ներկայացնել ԼՂՀ-ի անկախության հռչակագրի մի քանի դրույթ և ազատության ու անկախության գաղափարը ներբողել գեղարվեստական մասով (հայրենասիրական երգ, պար, ասմունք):

Դասի *կշռադասման* փուլում առաջարկում ենք լրացնել քառաբաժանը:

Ի՞նչ գիտեի:	Ի՞նչ իմացա:
-------------	-------------

¹ Է. Գևորգյան, Կ. Խաչատրյան, Ա. Վիրաբյան, Հայոց պատմություն, դասագիրք հանրակրթական դպրոցի 9-րդ դասարանի, Երևան, 2014, էջ. 124:

Ի՞նչ զգացի:	Իմ անկախ Արցախը:
-------------	------------------

Հետադարձ կապի ապահովման նպատակով դասի ավարտին անդրադառնում ենք պրիզմայի նախնական գրառմանը՝ պարզելու՝ ինչքանով էին հայրենասիրության մասին աշակերտների սկզբնական պատկերացումները համապատասխանում ուսուցման վերջնարդյունքներին: Ուսուցիչն աշակերտների օգնությամբ ամփոփում է դասը՝ ասելով, որ հայրենիքը միայն հող ու ջուր չէ, որ արժանի է և ենթակա է պաշտպանության իր զավակների կողմից: Հայրենիքը մի մեծ տուն է, ընտանիք, որի համար մարդը պետք է աշխատի և որը պետք է ծաղկեցնի, դեկավարի և դարձնի բարեկեցիկ և արժանավայել ապրելու տեղ: Հայրենիքը պիտի լինի այն վայրը, որտեղ ապրելը յուրաքանչյուր հայի համար պատիվ պիտի լինի:

Դասի վերջում հանձնարարվում է տնային աշխատանք՝ գրել բաց նամակ՝ ուղղված աշխարհի խաղաղասեր մարդկանց:

Այսպիսով, հանրակրթական դպրոցում արցախյան ազատամարտի թեմաներով սովորողների հայրենասիրական դաստիարակության ուսուցումը նպատակահարմար է իրականացնել դասարանական և արտադասարանական պարապմունքների միջոցով: Ուսուցման արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է կիրառել ուսուցման ժամանակակից մանակավարժական տեխնոլոգիաներ՝ դրանցում ընդգրկելով ՏՀՏ-ների ժամանակակից ինտերակտիվ մեթոդների և միջառարկայական կապերի ընձեռած հնարավորությունները:

Գրականություն

1. Ամիրջանյան Յու.Ա., Մահակյան Ա.Ս., Մանկավարժություն, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2005:
2. Գևորգյան Է., Խաչատրյան Գ., Վիրաբյան Ա., Հայոց պատմություն, դասագիրք հանրակրթական դպրոցի 9-րդ դասարանի, Երևան, 2014:
3. Հայոց լեզու և գրականություն, Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր, Երևան, 2006:
4. Սուխումլինսկի Վ.Ա., Ինչպես դաստիարակել իսկական մարդ, Երևան, 1980:

ՀՏԴ 371.31:74

Մարինե Գասպարյան
ԱրՊՀ կերպարվեստի ամբիոնի դասախոս

ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԲՆՈՒՅԹԸ ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ՊԱՐԱՊՍՈՒՆՔՆԵՐԻՆ

Հոդվածում լուսարանվում է դպրոցականների ստեղծագործական կարողությունների ու հմտությունների զարգացման մի քանի առանձնահատկություններ կերպարվեստի ու գրականության զուգակցված ուսուցման պայմաններում: Անդրադարձ է կատարվում թեմատիկ նկարչությանն ու գրական երկերի նկարազարդումներին:

Марине Гаспарян
кафедра изобразительного искусства АрГУ

СУТЬ ФОРМИРОВАНИЯ У ШКОЛЬНИКОВ ТВОРЧЕСКИХ СПОСОБНОСТЕЙ И НАВЫКОВ НА УРОКАХ ИЗОБРАЗИТЕЛЬНОГО ИСКУССТВА

В статье анализируются основные особенности развития творческих навыков и способностей в условиях использования возможностей межпредметных связей изобразительного искусства и литературы. Особое внимание уделяется тематическому рисованию и иллюстрированию литературных произведений.

Marine Gasparyan
Chair of Fine Arts , ASU

THE ESSENCE OF THE FORMATION OF CREATIVE ABILITIES AND SKILLS OF PUPILS AT THE FINE ARTS LESSONS

The article highlights development of creative abilities and skills training combined with features of the fine arts and literature. Special attention is paid to thematic drawing and the illustrations of the literary works.

Ժամանակակից դպրոցը կրթական ու դաստիարակչական բարդ ու դժվարին գործունեությամբ իրագործում է չափազանց կարևոր գործառույթ՝ դպրոցականների ստեղծագործական կարողությունների ու հմտությունների զարգացման դերակատարություն: Եվ դա միանգամայն հասկանալի է, քանի որ դպրոցականների առաջատար գործունեությունը ուսումն է, և հատկապես ուսումնական գործընթացում են զարգանում սովորողների մտածողությունը, հիշողությունը, երևակայությունն ու ստեղծագործական ձիրքերն ու իմացական հետաքրքրությունները:

Այս առումով հանրակրթական դպրոցում դասավանդվող առարկաների համակարգում կարևոր դեր է կատարում նաև «կերպարվեստ» առարկան, որի պետական ծրագրերն առաջադրում են սովորողների մեջ ձևավորել բնօրինակից, հիշողությամբ, պատկերացմամբ ու երևակայությամբ նկարելու ունակություններն ու հմտություններ: Այն ենթադրում է սեր և հետաքրքրություն դաստիարակել արվեստի ու գեղեցիկի նկատմամբ, ստեղծագործական վերաբերմունք դրսևորել ցանկացած երևույթի հանդեպ և ամենակարևորը՝ զարգացնել սովորողների ստեղծագործելու ունակությունները:

Վերոհիշյալ խնդիրների լուծման համար, ինչպես նշում է մանկավարժագիտության դոկտոր, պրոֆեսոր Լ.Ս.Ներսիսյանը. „Կերպարվեստի դպրոցական ծրագրով նախատեսվում են հիմնականում չորս տիպի պարապմունքներ՝ բնօրինակից նկարչություն, թեմատիկ նկարչություն, դեկորատիվ նկարչություն, գրույցներ արվեստի մասին: Այդ պարապմունքներից յուրաքանչյուրը յուրովի է նպաստում դպրոցականների ստեղծագործական կարողությունների ու հմտությունների զարգացմանը, նայած նկարչության ընձեռած որ տիպերից է օգտվում դպրոցականը„:/3,65/:

Ըստ մեր դիտարկումների՝ բնության տեսարաններ, կենդանիներ, մարդիկ, իրեր կամ դրանց խմբեր / նատյուրմորտներ/ և այլ պարագաներ հիշողությամբ նկարելու հիմնական միտումը նմուշին՝ բնօրինակին, առավել մոտ պատկերների վերստեղծումն է, որի արդյունքում ավելի մեծ ակտիվությամբ զարգանում է սովորողի հիշողությունը: Ըստ պատկերացման նկարելու դեպքում դպրոցականն ավելի ազատ է տարածական և այլ պատկերացումների մեջ: Ստեղծվում են ազատ կոմպոզիցիաներ, երևույթները դրվում նոր համադրությունների մեջ շեշտելով օբյեկտների էական կողմերը:

Հետազոտությունները ցույց են տվել /հետզոտությունները կատարվել են Ստեփանակերտի համար 1,2,7 դպրոցներում/, որ երևակայությամբ նկարելիս հիմնական միտումը նոր մտապատկերների ստեղծումն է, որն էլ անկասկած տանում է սովորողների ստեղծագործական կարողությունների զարգացմանը: Այն ապագայում ավտոմատացման արդյունքում վեր ածվում է հմտությունների: Կերպարվեստի մեթոդիկայի լավագույն գիտակ Վ.Ս.Կուզինը իրավացիորեն մատնանշում է. „Պատկերացմամբ ու երևակայությամբ նկարելուն հատկացվող

կերպարվեստի պարապմունքները նպաստում են սովորողների ստեղծագործական ձիրքերի դրսևորմանը, նրանց մեջ մշակելով գնները, կյանքում գեղեցիկը նկատելու, առարկաների ու երևույթների մանրամասները երևակայության ուժով համակցելու և ստեղծագործական նոր մտահղացումներ ձևավորելու գործընթացին,; /2,117/:

Հիմնախնդրի վերաբերյալ գիտական գրականության ուսումնասիրություններն ու կերպարվեստի դասավանդման առաջավոր փորձը ցույց են տալիս, որ դպրոցականների ստեղծագործական կարողությունների ու հմտությունների զարգացմանը մեծապես նպաստում են առանձնապես ազատ թեմայով նկարչական պարապմունքները: Ուրախալի է, որ մեր դպրոցականներին հետաքրքրում են ոչ միայն հայրենի բնությունը, բուսական ու կենդանական աշխարհը, այլև մեր կյանքի գրեթե բոլոր բնագավառները՝ աշխատանքային, խաղային, իսկ առավել շատ՝ մեր Հայրենիքի պաշտպանության և անվտանգության թեմաները:

Մարդու հոգին լցվում է հպարտությամբ, երբ մեր դպրոցների սովորողների ստեղծագործական ցուցահանդեսներում տեսնում է թեմատիկ հարուստ բովանդակությամբ նկարներ, որոնցում արտացոլված են մեր բանակի առօրյան, դիրքում գտնվող զինվորականը կամ կյանքը հայրենիքին նվիրաբերող երիտասարդի հերոսական կերպարը:

Կերպարվեստի դպրոցական ծրագրով նախատեսվում են նաև հեքիաթների, առակների, գրական երկերի նկարագրողումներ: Մեր գիտափորձերի ու դիտարկումների ընթացքում նկատել ենք, որ կրտսեր և միջին դպրոցական տարիքի սովորողներից շատերը մեծ հաճույքով են նկարագրում հատկապես հեքիաթները, որը մեծապես նպաստում է նրանց ստեղծագործական երևակայության ու ֆանտազիայի զարգացմանը: Հատկանշական է հատկապես այն իրողությունը, որ հեքիաթներ ու գրական երկեր նկարագրողելիս դպրոցականները նկարելու համար ընտրում են հատկապես իրենց դուր եկած հերոսների գործողությունները պատկերող դրվագներ: Ըստ որում, նկարագրողելու համար նրանք մի քանի անգամ կարդում են այս կամ այն հեքիաթը կամ գրական երկը, որը և մեծ հնարավորություն է ընձեռում ուսուցչին՝ իրականացնելու և օգտագործելու կերպարվեստի ու գրականության միջառարկայական կապերը:

Այսպես օրինակ, Ստեփանակերտի համար 7 հիմնական դպրոցի աշակերտ Վարդան Ղալայանը Ղազարոս Աղայանի „Անահիտը“, հեքիաթը ձևավորելու համար երեք անգամ կարդացել է այն և ընտրել համապատասխան դրվագներ՝ Անահիտը աղբյուրի մոտ, Վաչագանի և Անահիտի հանդիպումը, Վաչագանը գերության մեջ, Վաչագանի գործած գորգը, Անահիտի գրոհը և այլն:

Ստեփանակերտի համար 1 հիմնական դպրոցի 5-րդ դասարանի աշակերտուհի Նարինե Բաբայանը Ա. Պուշկինի „Ոսկե ձկնիկը“, նկարագրողելու համար այն կարդացել է չորս անգամ և այն հարցին, թե ինչու է այդքան շատ կարդացել, զարմացավ. «Բա ոնց պատկերացնեմ՝ ինչ եմ նկարելու»: Եվ նա, նկարչի աչքով կարդալով հեքիաթը, ձկնիկը պատկերել էր ոսկեգույն թագով: Մեր հարցին, թե ինչու է այդպես նկարել, ոգևորված պատասխանեց. «Չեմ որ ոսկե ձկնիկը ծովերի թագուհին է, իսկ թագուհին կարո՞ղ է առանց թագի լինել»:

Նույն 7-րդ դպրոցի աշակերտ Վարդան Ղալայանը, որը հաճախում է նաև „Թումո“, կենտրոն և զբաղվում է ռեժիսորական, ստեղծագործական ակտիվ գործունեությամբ, որոշեց նկարահանել Ա. Պուշկինի նույն „Ոսկե ձկնիկը“, որն իր յուրատիպությամբ գերեց բոլորին: Ի դեպ նա որոշել էր ձկնորսի կնոջը ներկայացնել ոչ հանրահայտ աչքածակությամբ, այլ ավելի խելամիտ ու ձկնիկին ավելի լուջ պահանջներ ներկայացնող: Իսկ ամենահետաքրքրականն այն էր, որ ձկնորսի „մողեռն“, ու խելացի տիկինը ոսկե ձկնիկից պահանջում է ճանաչում ու անկախություն պարգևել Արցախին:

Ֆրանսիացի հայտնի մանկավարժ, հոգեբան Պիաժեն, քննության առնելով միջառարկայական կապերի հոգեբանական հիմնահարցերը, գրում է. «Մատնանշենք նաև, որ երեխաները հեքիաթներ ու գրական երկեր կարդալիս ու նկարագրողելիս իրենց դնում են երկի հերոսի տեղ, մտքում գործում նրա հետ միասին, իսկ դա ինքնին ստեղծագործական ու երևակայական ակտիվ աշխատանք է»:/5,25/:

Բերված օրինակների վերլուծությունը ցույց է տալիս, որ դպրոցականները ոչ միայն հնարավորություն են ստանում միջառարկայական կապերի օգտագործմամբ, տվյալ դեպքում օգտվելով գրականության ու կերպարվեստի ընձեռած հնարավորություններից, զարգացնելու իրենց ստեղծագործական կարողություններն ու հմտությունները, այլև ունենում են բարոյագեղագիտական ապրումներ, կշռադատում արտացոլվող հերոսների արարքներն ու գործողությունները, մտովի պատկերացնում, թե իրականում իրենք ինչպես կգործեին, եթե լինեին տվյալ հերոսի փոխարեն, որը չափազանց անհրաժեշտ ու արժեքավոր է աճող սերնդի բարոյական կերպարի ձևավորման համար:

Հողվածի շրջանակում հնարավոր չէ ընդգրկուն անդրադարձ անել ուսումնասիրվող օբյեկտի բոլոր անհրաժեշտ մանրամասներին, ուստի համառոտ շեշտվեցին դպրոցականների ստեղծագործական կարողությունների ու հմտությունների զարգացմանը նպաստող՝ կերպարվեստի ու գրականության ընձեռած հնարավորությունների միայն մի քանի առանձնահատկությունները: Մասնավորապես, նշվեց, որ դպրոցականների ստեղծագործական կարողությունների ու հմտությունների զարգացմանը մեծապես նպաստում են թեմատիկ նկարչությունը, կերպարվեստի ու գրականության զուգակցված ուսուցումը, հեքիաթների ու գրական այլ ստեղծագործությունների նկարագրողումները, ինչպես նաև ուսուցման ժամանակակից մեթոդների ու տեխնոլոգիաների կիրառումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղամիրյան Ժ. Մանկական նկարչական պատկերասրահ, Մ. 1979, 192 էջ:
2. Կուզին Վ.Ս. Կերպարվեստը և նրա դասավանդման մեթոդիկան, Մ. 1998, 265 էջ:
3. Ներսիսյան Լ.Ս., Ներսիսյան Ս.Ս., Գյուլմիսարյան Ե. Ձեռնարկ ուսուցչի համար, 1-4 դասարաններ, Ե. 2008, 68 էջ:
4. Ներսիսյան Լ.Ս, Գյուլմիսարյան Ե. Հանրակրթական դպրոցի ծրագիր կերպարվեստից, 1-7 դասարանների համար, Ե., 2000, 65 էջ:
5. Պիաժե, Միջառարկայական կապերի հոգեբանություն, 1966, 40 էջ:
6. Պետրոսյան Մ. Մեթոդական ցուցումներ, Կերպարվեստ, Ե., 2015:
7. Պետրոսյան Ա. Միջառարկայական կապեր, հասարակագիտություն, մաթեմատիկա, բնագիտություն, Մանկավարժական միտք, 2016, 1-2, 79-87 :

Ռոզալյա Հարությունյան
ԱրՊՀ «Մանկավարժության և հոգեբանության» ամբիոնի ասիստենտ և հայցորդ
Էլ. փոստ՝ avrozali@mail.ru

ՊԱՏԵՐԱԶՄԸ՝ ԿՈՂՄՏԻ ՈՒ ԶՈՂՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻ
(Արցախյան և քառօրյա պատերազմի օրինակով)

Արցախյան պատերազմը, քառօրյա պատերազմն առավել ևս այլևս փոխեցին պատմության ընթացքը, և իրավամբ, զոհի բարդություն մեկընդմիջտ հաղթահարվեց՝ դառնալով կորստի հաղթահարման պաշտպանական ճանապարհ, որտեղ պաշտպանական գործընթացները հոգեբանական պաշտպանությամբ չէ (ագրեսիա, սուբլիմացիա, պրոյեկցիա, ատրիբուցիա, ռացիոնալիզացիա), որ տեղի են ունենում, այլ հստակ նպատակադրմամբ, իրատեսական ու կառուցողական քայլերի կիրառմամբ: Սույն հոդվածի մեջ պատերազմը դիտարկվել է որպես հայ ժողովրդի կորստի ու զոհայնության հաղթահարման ուղի:

Բանալի բառեր՝ զոհողություն, հոգեկան առողջություն, հոգեբանական անվտանգություն, զոհի բարգույթ, պաշտպանական մեխանիզմներ, հայի բախտ, կորուստ, վիշտ

Розалия Арутюнян
Ассистент и соискатель кафедры психологии и педагогики АГУ

ВОЙНА, ПОТЕРИ И ПУТИ ПРЕОДОЛЕНИЯ ЖЕРТВЕННОСТИ
(на примере Арцахской и четырех-дневной войны)

Арцахская и четырехдневная война, изменили весь ход истории, и, в самом деле, "комплекс жертвы" раз и навсегда был преодолен, став оборонительной дорогой для преодоления потерь, в котором защитные процессы работают не с помощью психологической защиты (агрессия, сублимация, проекция, атрибуция, рационализация), а с помощью четких намерений, реалистичных и конструктивных шагов. В данной статье война рассматривается как путь преодоления потерь и жертвенности армянского народа.

Ключевые слова: жертвенность, психологическая безопасность, психическое здоровье, комплекс жертвы, защитные механизмы, армянская судьба, потери, горе

Rozaly Harutyunyan
Assistant and applicant of cathedra of Pedagogy and Psychology of ASU

War: THE WAY OF OVERCOMING LOSS AND VICTIMHOOD
(Example of the Artsakh and four-day war)

Artsakh war, the four day war, changed the course of history and indeed "the complexity of the victim" was overcome by turning the way of overcoming the loss in which protective processes don't occur with a psychological defense (aggression, sublimation, projection, attribution, rationalization) but with the clear intention, realistic and constructive steps of application. In this article the war was considered as the way of overcoming the loss and mortality of Armenian people.

Keywords: victimhood, psychological security, mental health, victim barguyn, defense mechanisms, Armenian fate, loss, grief

Հայերս ինքնատիպ ենք ինն ու յուրօրինակ մշակույթով, միևնույն ժամանակ շատ ծանր ճակատագրով: Ծանր ճակատագիրը սերտորեն առնչվում է մարդկային կորուստների հետ, որոնցից առավել ծանրը հայոց մեծ եղեռնն էր: Եղեռնից հետո «Հայի ճակատագիր», «Զոհ» արտահայտությունները շրջաստյթի ձևով սկսեցին շրջանառվել: «Հայի ճակատագիր» շրջաստյթը, որը հաճախ գուգորդվում է զոհի բարդության հետ, կապված է հենց եղեռն ապրած հայերի ճակատագրի հետ: Արցախյան պատերազմը, քառօրյա պատերազմն առավել ևս, ընդմիջտ փոխեցին պատմության ընթացքը, և իրավամբ, «զոհի բարդություն» մեկընդմիջտ հաղթահարվեց՝ դառնալով կորստի հաղթահարման պաշտպանական ճանապարհ, որտեղ պաշտպանական գործընթացները հոգեբանական պաշտպանությամբ չէ (ագրեսիա, սուբլիմացիա, պրոյեկցիա, ատրիբուցիա, ռացիոնալիզացիա), որ տեղի են ունենում, այլ հստակ նպատակադրմամբ, իրատեսական ու կառուցողական քայլերի կիրառմամբ:

Մտերիմ մարդու և առհասարակ կորստի զգացմանը առնչվում է մարդկանց մեծամասնությունը: Մտերիմ ու նշանակալի անձի կորուստը մարդու համար դառնում է ամենաողորմական ու ամենաճանաչ իրադարձությունը, որը առաջացնում է վշտի անեզր ապրում՝ խորը հետևանք թողնելով մարդու հոգեկան աշխարհի վրա: Մտերիմ անձի կորուստը և կորստի զգացումը աներկբա առաջատար տեղ են զբաղեցնում մարդու հոգեկանում, և ներգործում են ոչ միայն անձի հուզա-զգացմունքային ոլորտի, այլև աշխարհայացքի, կենսագործունեության, վարքի, միջանձնային հարաբերությունների, արժեքային համակարգի, ինքնագնահատականի, համոզմունքների և ստերիոտիպերի ձևավորման վրա:

Հայ իրականության մեջ զրկանքը և կորուստը բազմիցս հանդիպող երևույթներ են: «Հայի բախտ»-ը, կամ «Հայի ճակատագիր»-ը կոնտեքստում կարող ենք պարզաբանել այդ ստերիոտիպերի ձևավորման աղբյուրները. կորուստն ու զրկումը: Մտերիմի կորուստը ցնցում է անձի ողջ հոգեկանը և դրդում մարդուն դիմելու դրանից ազատվելու միջոցների: Կորստի զգացումից անմիջապես հետո մարդը սկսում է դիմել գիտակցական և անգիտակցական հոգեբանական պաշտպանական մեխանիզմների: Վշտի ապրման առավել բնորոշ ռեակցիաները հետևյալներն են. շոկ, ժխտում, զայրույթ, մեղավորության զգացում, տխրություն, հաշտվել: Որոշ մարդիկ վիշտն ապրում են հենց այս հաջորդականությամբ: Առավել հաճախ մարդիկ այս հույզերն ունենում են միաժամանակ տարբեր ուժգնությամբ:

Կորստին հետևող առաջին ռեակցիան շոկն է: Մարդը մի տեսակ ներքուստ քարանում, թմրում է կամ չի հավատում կատարվածին: Այս փուլին բնորոշ է խառնաշփոթը և ախորժակի կորուստը: Շոկի վիճակում մարդն ի վիճակի չի լինում նույնիսկ ամենահասարակ որոշումները կայացնել: Ազգականներն ու ընտանիքի անդամները պետք է պարզապես նստեն, լսեն նրան և օգնեն հոգալ ամենօրյա կարիքները: Շոկի վիճակը կարող է տևել մի քանի րոպեից մինչև մի քանի օր՝ շատ տրավմատիկ կորուստների դեպքում:

Շոկին անմիջապես հետևում է ժխտման փուլը: Մարդիկ կարող են գիտակցել, որ իրենց սիրելին մահացել է, բայց ներքուստ չեն կարողանում հաշտվել այդ իրողության հետ: Նրանց հաճախ թվում է, որ մահացածն ուր որ է ներս կմտնի դռնից, ասես ոչինչ էլ չի պատահել: Շատերը մահացածի սենյակում ոչինչ չեն փոխում և իրենց պլաններն այնպես են կազմում, ասես մահացածը պետք է մասնակցի դրանց իրագործմանը՝ ինչպես դա լինում էր անցյալում:

Երբ շոկն ու ժխտումը սպառում են իրենց, իրականությունը դանդաղորեն սկսում է գիտակցվել: Մարդիկ սկսում են գիտակցել, որ կորուստն իսկապես տեղի է ունեցել: Այդ իրավիճակում իրեն լքած զգալն ու զայրանալը միանգամայն նորմալ է: Մարդիկ այդ զայրույթը կարող են ուղղել Աստծո կամ կրոնի դեմ, բուժանձնակազմի, մահացածի, իրենց հարազատների կամ նույնիսկ իրենց դեմ:

Շատ քիչ մարդիկ կա, որոնք սզալու ընթացքում մեղավորության և ավստասանքի զգացումներ չեն ունենում: «Ես պետք է ավելին անեի», _ այս միտքը հետապնդում է շատերին: Ինքնամեղադրանքների համար պատճառներ գտնելու մեջ մարդիկ շատ հնարամիտ են լինում: «Այնքա՛ն բաներ կարելի էր այլ կերպ անել, եթե ես իմանայի»:

Տխրությունը վշտի ապրման պարտադիր մասն է կազմում: Միայնակության, լքվածության և վախի զգացումները միանգամայն նորմալ են: Երբ շոկն ու ժխտումն արդեն անցել են, իսկ զայրույթը սպառել է իրեն, դրանք իրենց տեղը զիջում են տխրությանն ու հուսահատությանը: Մարդու եռանդը կարող է չբավականացնել առօրյա նույնիսկ ամենավորոշիկ գործերը կատարելու համար: Լացի նուպաներն անվերջ են թվում:

Միայն ժամանակը վիշտը բուժել չի կարող: Կորստի գիտակցումը և ցավ ապրելը կարող են ազատել մշտապես անցյալին վերադառնալու գայթակղությունից: Միայն այն իրողության հետ հաշտվելը, որ այլևս հարկավոր է ապրել առանց սիրելի մարդու, կարող է ապագայի հետ կապված հեռանկարներ բացել: Հաշտվելը չի նշանակում մոռանալ, ավելի շուտ հուշերը ծառայում են առանց սիրելիի նոր կյանք ստեղծելուն: Հուսալը, որ ամեն ինչ հունի մեջ կընկնի, վերածվում է նոր հարաբերությունների ու գործունեությունների որոնմանը: Ոմանք իմաստ են գտնում իրենց կորստի մեջ և ընդգրկվում են այլ մարդկանց օգնելու գործերի մեջ: Նրանք կարող են ավելի զգայուն և նրբանկատ դառնալ ուրիշների նկատմամբ, որն ավելի խոր և հագեցած հարաբերությունների հորիզոններ է բացում նրանց առջև: Այլոք նոր ուժ և անկախություն են հայտնաբերում իրենց մեջ, որը մինչ այդ չէին էլ գիտակցում: Կորստից հետո նրանք զգացմունքների նոր ռեսուրսներ են հայտնաբերում, որից նախկինում չէին օգտվում:

Բլոկն, ուսումնասիրելով վշտի վիճակը սեմանտիկ դիֆֆերենցիալի սանդղակի օգնությամբ, բացահայտեց, որ վշտի ապրումը բնորոշվում է մեղքի հույզի ներառման վառ արտահայտված միտումով: Բլոկի հետազոտությունները նաև ցույց տվեցին, որ «վիշտ» հասկացությունը դրականորեն է կոռելացվում այնպիսի հասկացությունների հետ, ինչպիսիք են անհանգստություն և նախանձ և բացասականորեն՝ բավարարվածություն հասկացության հետ: Հետաքրքիր կապ է բացահայտվում նաև վշտի ու զայրույթի, վախի հույզերի միջև:

Վիշտն իրականացնում է կենսաբանական և սոցիալական ֆունկցիաներ՝ նպաստելով սոցիալական կապերի ու խմբային կապակցության ամրապնդմանը: Ինչպես ցանկացած հույզ կամ հուզական կոմպլեքս վիշտը վարակիչ է և այս հատկանիշի շնորհիվ է, որ վիշտը ծնում է էմպաթիա, ամրապնդում կապերը այն մարդկանց միջև, ովքեր տարել են ծանր կորուստ: Այս էֆեկտը տարածվում է առավել լայն մասսաների վրա, քանի որ սուգի արարողակարգերը, որպես կանոն, իրականացվում են հասարակայնորեն: Վշտի վերոնշյալ ֆունկցիան հանդիսանում է թե՛ սոցիալական, թե՛ կենսաբանական, սակայն վիշտն ունի նաև հոգեբանական հարմարման կամ ադապտացիայի ենթատեքստ: Վշտի ապրումը իրենից միշտ սթրես է ենթադրում և այն դրդում է մարդուն անձնային ավտոնոմիայի վերականգնման: Բոուլբիի համաձայն, վշտի ադապտատիվ նշանակությունը նրանում է, որ այն մարդուն մոտիվացնում լրացնել

տարած կորուստը: Բացի այդ վշտի որոշ արտաքին դրսևորումներ կարող են իրականացնել կոմունիկատիվ ֆունկցիա, մարդկանց մեջ ծնելով աջակցել ու ցանկություն և ապրումակցում /Էմպաթիա/ լինել վերջապես, ապրելով և արտահայտելով սեփական վիշտը, անհատը մարդկանց հայտնում է այն մասին, որ ինքը սիրող և հոգատար է:

Բոուլբին (Bowly 1969, 1973) իր մոնումենտալ երկհատորանոց աշխատությունում ներկայացրեց կապվածության և բաժանման տեսությունները և տվեց հոգեբանական այն խնդիրների վերլուծությունը, որոնք կապված են այս երևույթների հետ: Բոուլբին մոտենում է վշտի վերլուծությանը մոր և նորածնի միջև եղած կապի ու դրա քայքայման կոնտեքստում, ռեակտիվ սեպարացիոն համախտանիշի կոնտեքստում: Նա պնդում է, որ այն երեխան, ով ուներ սոցիալական զարգացման համար անհրաժեշտ բոլոր հնարավորությունները և կապված էր մոր հետ, ենթարկվում է սթրեսի, երբ նրան բաժանում են մորից: Բաժանումից հետո նորածնի կամ փոքր երեխայի վարքն անցնում է տիպիկ փուլերի շարք՝

ա) Բողոքի փուլ- բնորոշվում է մորը կամ խնամակալին (մարդ, ով մոր պես հոգ է տանում իր մասին) հետ բերելու ենթադիկ փորձերով:

բ) Հուսահատության փուլ- բնորոշվում է նրանով, որ երեխան անընդհատ լացում է:

գ) Օտարման փուլ- երեխայի մոտ ձևավորվում են տարատեսակ պաշտպանական մեխանիզմներ, որոնք օգնում են նրան կոմպենսացնել կորուստը:

Բաժանման նկատմամբ ցուցաբերվող ռեակցիան որոշակիորեն էլ տարիքային ֆունկցիա է:

Ըստ Բոուլբիի ռեակտիվ սեպարացիոն համախտանիշի բողոքի փուլը բնորոշվում է վախի հույզի գերակայմամբ: Բաժանում նշանակում է մենակություն, և Բոուլբին բերում է ծանրակշիռ փաստարկումներ, որ հաստատում են նրա պոստուլատն այն մասին, որ հանդիսանում է հասունացած վտանգի բնական ազդանշաններից մեկը, ահա թե ինչու է այն վախ հարուցում:

Ռեակտիվ սեպարացիոն համախտանիշի հուսահատության փուլը բնորոշվում է նրանով, որ երեխան ցուցաբերում է վշտին ու սգին բնորոշ հատկանիշներ: Վշտի մասին Բոուլբիի համակարգում վշտի մեջ ներառված այլ հույզերը դիտարկվում են առանձին, տվյալ համախտանիշի այլ փուլերի շրջանակներում:

Օտարման փուլում երեխայի մոտ ձևավորվում են զանազան պաշտպանական մեխանիզմներ: Նորածնի և փոքր երեխայի մոտ մորից բաժանման արդյունքում առաջացած հոգեկան տրավմայի բուժման հիմնական միջոցն այլ մարդու հետ առողջ, կապվածության ձևավորումն է: Ավելի մեծ տարիքի երեխաները, դեռահասները, մեծահասակները կարող են կիրառել ցանկացած պաշտպանական մեխանիզմ, որոնցից ամենահաճախը թերևս ռեգրեսիան կամ ճնշման մեխանիզմը: Մարդը կարող է ճնշել բոլոր հիշողություններն ու պատկերացումները, որ կապված են իրեն ցավ պատճառող, տխուր ապրումների հետ: Ինչպես նշում է Պերեցը (Peretz, 1970), անհատը կարող է կիրառել նաև այնպիսի պաշտպանական մեխանիզմներ, ինչպիսիք են աֆֆեկտի մեկուսացումը, արտամղումը, տեղափոխումը և ժխտումը:

Մեռած է արդյոք վիշտը զոհայնության վիճակ:

Չոհաբանական հետազոտություններն անմիջականորեն առնչվում են անձի հոգեկան առողջության ու անվտանգության ուսումնասիրման խնդիրներին, ինչի համատեքստում կարիք կա հատկապես ընդգծելու անհատական ու խմբային անվտանգության անհրաժեշտությունը: Այստեղ հարկ է նշել, այն գործոնների մասին, որոնք ապահովում են անվտանգությունը. տեղեկատվական, հոգեբանական, հոգեֆիզիոլոգիական, բարոյական, կարգավիճակային, նյութական և այլն: Նշենք նաև «զոհայնությունն հասկացության մասին, որը սահմանվում է երկու իմաստով՝ որպես որոշ մարդկանց զոհ դառնալու նախատրամադրվածություն և որպես հասարակության և պետության անկարողություն՝ պաշտպանելու իր ազգաբնակչությանը: Գիտական գրականության մեջ շրջանառվում է նաև «Չոհային վարքն հասկացությունը»:

Մ. Օդինցովայի բնորոշմամբ «զոհը զոհային առանձնահատուկ ներքին ակտիվությամբ աչքի ընկնող անձն է /կախվածության և անօգնականության զգացում, չբնադատելու հակում/, որն ուղղված է այնպիսի գործողությունների ու արարքների վրա, որոնք նրան դարձնում են զոհի խաղացող /զոհի խաղացող դերը/ կամ սոցիալական տիպը /զոհի սոցիալական դերը/:

Չոհի խաղացող դերը դա միջանձնային փոխազդեցության անդամների փոխառաջակցում, սեփական ցանկությամբ և հնչողությամբ ընդունված դերային հարաբերություններն են, որոնք փայտահամաձայնե-ցված են զոհային անհատի ներքին հոգեբանական առանձնահատկությունների հետ /ցուցադրականություն, մանկա-մտություն, մանկապոլյատիվություն և այլն/ և իրենց հիմքում ունեն թաքնված մոտիվացիա, որը ներդաշնակորեն վերագրվում է խաղացվող իրադրությանը:

Չոհի սոցիալական դերը դա վերագրված հարաբերությունների վերլուծության միավոր է, որը համաձայնեցված է զոհային անհատի այնպիսի առանձնահատկությունների հետ, ինչպիսիք են աուտոագրեսիան, անօգնականությունը, կախվածությունը և այլն, որոնք նպաստում են նրա ստիգմատիզացիային, սոցիալական հարաբերություններում մեկուսացմանը, ինչը ձևակերպում է նրա մոտակա և հեռավոր կենսազործունեությունը ծավալելու հեռանկարում նախադրությունը:

Դժվար ժամանակները, որ ապրում ենք մենք, իրականում զոհածին/վիկտիմոզեն/ են կարող է նպաստել ժամանակակից մարդու անձի զոհայնացմանը /լատ. Victim, զոհ/: Ա. Վ. Մուրդիկի սահմանմամբ զոհայնացումը սոցիալականացման անբարենպաստ պայմանների ազդեցությամբ մարդկանց ու մարդկանց խմբերի զոհ դառնալն է :Չոհի դերում գտնվելով՝ մարդիկ հիմնականում սկսում են կյանքից դժգոհել: Իրենց կարծիքով, իրենք ասենալով թախտ մարդիկ են, ամեն ինչում իրենց բավարար չի բերում, նրանց ուներին է դրված բոլոր խնդիրները:

Արցախյան պատերազմից հետո որոշ մարդիկ իսկապես հնազանդի, ստրուկի հոգեբանություն ձեռք բերեցին և իրենց սկսեցին պահել մանկամտությամբ (ինֆանտիլ մանկամիտ): Նրանց բնորոշ դարձավ հատկապես եասսիրությունը: Բայց նրանց թիվը մեծ չէր: Կորուստ ունեցողները պատվով կրեցին «զոհված ունենալու» անունը: Պետական կառույցները ևս նպաստեցին կորուստ ունեցողների զոհային վիճակի հաղթահարմանը: Գործեցին և առ այսօր գործում են բազում ծրագրեր ու նախաձեռնություններ, որոնք մեծ նշանակություն ունեն զոհայնության հաղթահարման գործում: Զոհված ազատամարտիկները մեծարվում են ոչ միայն սոցիալական արտոնությունների ծրագրերում, որտեղ լուծվում են կենցաղային բարեկեցությանն առնչվող բազում հարցեր, այլև գեղարվեստական, հայրենասիրական, մշակութային ու կրթական ոլորտներին առնչվող միջոցառումներում: Զոհված ազատամարտիկների նկատմամբ այսպիսի մոտեցումը ինստիտուցիոնալացված է, ինչը էական ներգործություն ունի զոհային վիճակի հաղթահարման գործում:

Արցախյան պատերազմից ի վեր պատերազմական գործողություններից մինչև զինադադար, իսկ վերջերս նաև քառօրյա պատերազմի հետևանքները հաղթահարվեցին ռացիոնալ պատկերացումների և իմաստավորումների վերջնարդյունքով: Կորուստ ունեցողներն անգամ ցույց տվեցին զոհային վիճակի մերժման վարքագիծ: Դա են կորուստ ունեցող մայրերի ու հայր ծնողների ելույթները, որոնց մեջ առկա է հպարտությունը, իմաստությունը, առաքինությունն ու բարձր արժեքայնությունը:

Բոլոր պաշտպանական մեխանիզմների արդյունավետությունն էլ ժամանակավոր է, եթե այն չափազանց մեծ է ապրված սթրեսի կամ վշտի մեծությունից:

Օգտագործված գրականություն

- 1.Мудрик А.В. Человек – объект, субъект и жертва социализации // Известия РАО. 2008. № 8. С. 48.
- 2.Налчаджян А. А., Этнопсихологическая самозащита и агрессия, Е., 2000, 406 с.
- 3.Налчаджян К. А., Этническое самосознание и его подструктуры на примере армянского этноса // Вопросы психологии, 2006, N5, стр. 84-90
- 4.Одинцова М. А., Ролевая виктимность в поведении подростков из социально незащищенных семей Электронный журнал «Психологическая наука и образование» www.psyedu.ru /ISSN: 2074-5885/ E-mail: psyedu@mgppu.ru 2012, №3. С. 2.
- 5.Стефаненко Т. Г., Социальные стереотипы и межнациональные отношения // Общение и оптимизация совместной деятельности. М.: 1987, 348 с.
- 6.Стефаненко Т. Г., Этнопсихология, М.: 2007, 364 с.
- 7.Черных Н. С., Виктимологическая практика и культура общества //Преступность и культура. М., 1999.
- 8.Черных Н. С., Виктимологическая практика и культура общества //Преступность и культура. М., 1999.

ՀՏԴ 159.9 (479.243)

Լուսինե Ղարախանյան
ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության
մասնագիտական կրթության և գիտության
բաժնի պետ, հ.գ.թ., դոցենտ

ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԱՌԱՋԱՂԻՄՈՒԹՅԱՆ ՍՈՑԻՈՄՇՄԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ
ԵՎ ԱՂԲԵՋԱՆԱԿԱՆ ԷՍԿԱԼԱՅԻՆՈՒԹՅԱՆ

Քաղաքակրթական առաջադիմության սոցիոմշակութային արժեքը անմիջապես առնչություն ունի Ադրբեջանի ապրիլյան էսկալաժիայի հետ: Սույն հոդվածում ներկայացվել է սոցիալականության՝ որպես քաղաքակրթ հասարակության բնութագիրը, որն ադրբեջանական հանրություն կրում է աղավաղված նկարագիր: Եթե վայրենությունը չի հաղթահարվում տվյալ հանրության գործընթացում, ապա սոցիոմշակութային արժեքը չի ձևավորվում:

Բանալի բառեր՝ քաղաքակրթական առաջադիմություն, սոցիոմշակութային արժեք, սոցիոլականություն, վայրենություն, ավանդական ու սովորության կենսակերպ, խավային աստիճանականություն, մանիպուլյացիա:

Лусине Гараханян
заведующая отделом профессионального образования и науки
министерства образования, науки и спорта НКР, кандидат психологических наук, доцент

СОЦИАЛЬНО-КУЛЬТУРНОЕ ЗНАЧЕНИЕ ПРОГРЕССА ЦИВИЛИЗАЦИИ И ЭСКАЛАЦИЯ АЗЕРБАЙДЖАНА

Социально-культурное значение прогресса цивилизации имеет непосредственную связь с апрельской эскалацией со стороны Азербайджана. В данной статье дано определение социальности как характеристики цивилизованности, которое в азербайджанском обществе несет искаженный характер. Формированию социально-культурных ценностей способствует преодоление варварских принципов развития общества.

Ключевые слова: прогресс цивилизации, социально-культурная ценность, социальность, варварство, традиционный и привычный уклад жизни, секционность общества, манипуляция.

Lusine Garakhanyan
Head of the section of professional education and science
of NKR's Ministry of education,
science and sport, candidate of psychological sciences, associate professor

THE SOCIOCULTURAL VALUE OF CIVIL PROGRESS AND AZERBAIJANI ESCALATION

The sociocultural value of civil progress is directly connected with Azerbaijani April escalation. In this article we represent the socialism as the characteristics of civil society which has a disfigured description. If the brutality is not overcome in the process of the development of the present society, the sociocultural value is not formed.

Key words: civil progress, sociocultural value, sociology, escalation, brutality, traditional and customary lifestyle, caste level, manipulation.

Ի՞նչ էր Ադրբեջանի սանձազերծած ապրիլյան պատերազմը, և որքանով է այն առնչվում այդ երկրի քաղաքակրթական սոցիոմշակութային արժեքների հետ: Ադրբեջանի սոցիալական իրականության ժամանակակից խճապատկերը ծայրահեղորեն բարդ է, ինչը նաև էթնոգենեզի լիակատար գործընթացի բացակայության արդյունք է: Դեռևս հայ սպայի Գուրգեն Մարգարյանին կացնահարած Ռամիլ Սաֆարովին պետական առանձնաշնորհումներ տալը արդեն ուրվագծեց ադրբեջանական հանրության սոցիալական մահվան՝ որպես առաջադիմության քաղաքակրթական հատուցման ընթացքի և ժամանակակից հասարակության մեջ տեղի ունեցող անորոշ ու անկանխատեսելի փոխակերպումների պատկերը: Սոցիալական պատասխանատվության էրոզիան ձևավորվեց Ռամիլ Սաֆարովին հերոս հռչակելու հայտնի դեպքից հետո: Այդ երևույթը նպաստեց երիտասարդ սերնդի անձնական պատասխանատվության շրջանցման երևույթի և երեսպաշտության ձևավորմանը: Ապրիլյան դեպքերի ժամանակ համացանցում տեղադրված Քյարամ Մլոյանի գլխի մոտ հավաքված թուրք զինվորականներից Աբդուլմաջիդ Ախունդովը մատների ժեստերով ցույց է տալիս թուրք աջ ծայրահեղական «Գորշ գայլեր»

կազմակերպության հայտնի (Bozkurd) ժեստը: Սա, ըստ էության նաև Թուրքիայի՝ հայերի նկատմամբ արտահայտված բացասական կարծրատիպերի դրսևորումն էր: Պատահական չէ, որ Մլոյանին գլխատած դիվերսանտը, որոշ աղբյուրների համաձայն, պարզևատրվել է նաև Թուրքիայի ղեկավարության կողմից:

Այսօր, 21-րդ դարի ամենագարգացած քաղաքակրթություններում տեխնիկական ու տնտեսական գործոնները սկսել են ճնշել մշակութաէթնիկական գործոնները: Թերևս սա է պատճառը, որ խնդիր է դրվում ինֆորմացիոն քաղաքակրթությունից անցում կատարել դեպի անտրոպոգեն քաղաքակրթություն, որի հիմնարար արժեքը մարդն է: Իսկ արդյոք մորթելն ու գլուխ կտրելը սոցիալական նորմ դիտող Ադրբեջանում կարո՞ղ է անցում կատարվել դեպի անտրոպոգեն քաղաքակրթություն:

Ի՞նչ են նկատի ունենեցել և ի՞նչ գործոններով է հիմնավորվել հասարակության քաղաքակրթական առաջընթացը: «16-18-րդ դարերի մտածողները / Վիկո, Վոլտեր, Ռուսո, Կոնդորսե/ հասարակական առաջընթացը բնութագրել են որպես մի վերընթաց զարգացում, որի բովանդակությունը մարդկային բանականության աճող կատարելագործումն է, գիտական և տեխնիկական առաջընթացը: Լուսավորական փիլիսոփայության մեջ առաջադիմության չափանիշներ են համարվել ազգերի միջև անհավասարության վերացումը, տարբեր դասակարգերի միջև հավասարության առաջադիմումը և, ամենագլխավորը, մարդու իրական կատարելության մակարդակը»¹: Որտե՞ղ պետք է փնտրել նորաթուխ Ադրբեջանի քաղաքակրթության սոցիոմշակութային արժեքը, եթե ոչ ծագումնաբանական որակների ու ազգային հիշողության ու էթնիկ նույնականության բացակայության, ազգային ինքնության վակուումային տարածքի մեջ: Եվ վերջապես ո՞րն է Ադրբեջանի քաղաքակրթության սոցիոմշակութային արժեքը: Այս հոետորաբանական հարցի պատասխանը ևս հոետորաբանական է. այնտեղ, որտեղ գլուխ կտրելը դարձել է սուրբ գիրք և սուրբ հուշարձան համարվող «Դեղե Քյորքյուք» էպոսից սնվող ստատիկ արժեք:

Խոսելով ժողովրդի ոգու, նրա պատմության, կրոնի, քաղաքական ազատության աստիճանի մասին՝ շեզելը գրում է. «Եվ եթե առանձին մարդու բարոյականությունը ձևավորելը մասնավոր կրոնի, ծնողների, սեփական ջանքերի ու հանգամանքների գործն է, ապա ժողովրդի ոգին ձևավորելը մասամբ ժողովրդական կրոնի, մասամբ էլ քաղաքական պայմանների գործն է»²: Կրոնը որպես էթնիկական ցուցիչ, ևս մեծ ազդեցություն ունի հարևան Ադրբեջանի քաղաքակրթական առաջադիմության սոցիոմշակութային արժեքի վրա, սակայն ազդեցիկ ու անդառնալի է նաև քաղաքական պայմանների դերը:

«Ժողովուրդը և հատկապես ազգը ցեղերից տարբերվում է նաև իր սոցիալական կառուցվածքով: Այսպիսի էթնիկական բարձր կարգի հանրություններում մարդկանց միմյանց են կապում ոչ այնքան ազգակցական, (արյունակցական) և ամուսնական, որքան սոցիալական այլ բնույթի դերերը՝ քաղաքական (իշխանություն-ենթակայություն) հարաբերություններն ու հիմնարկները, պետական կարգն ընդհանրապես»³: Ինչպես տեսնում ենք, սոցիալական հարաբերությունները հարևան Ադրբեջանում կառուցվում են բացառապես ավանդական ու սովորութային կենսակերպով: Սրանից է բխում նաև Ադրբեջանի իշխանությունների խավային աստիճանակարգությունը, որտեղ չկա և չի կարող լինել դինամիկ զարգացում, քանի որ մարդկանց մտածողության մեջ կարծրատիպացված են շատ ու շատ պաթոլոգիկ ինքնապաշտպանության հասնող ավանդույթներ: Ավանդական հասարակության փուլում գտնվող Ադրբեջանում տրամաբանական են անձնական կախվածության վրա հիմնված ղեկավարման գործընթացն ու խիստ անձնավորված կապերը:

«Այդպիսի հասարակության մեջ մարդը երբեք լիակատար անկախ չէ և ոչ էլ լիակատար ստրկացված: Յուրաքանչյուրի շուրջ նախախնամությունը նշագրում է նրա ճակատագրի շրջանը, որից դուրս գալն անհնար է, սակայն նրա սահմաններում մարդն օժտված է իշխանությամբ և ազատությամբ»⁴: Մինչդեռ սոցիալականությունը մի որակ է, որով քաղաքակրթության հասնելու համար անհրաժեշտ է հաղթահարել հոգեկան զարգացման մեջ վայրենության աստիճանը, ինչը շարունակում է չհաղթահարված մնալ նորաթուխ ադրբեջանական պետության մեջ:

«Սոցիալականությունն ընկալվում է որպես այդ հասարակությունում ապրելու, իր նմանների հետ համագործակցելու և մեր աշխարհը գոյություն ունեցողներից լավագույնը համարելու ընդունակություն: Լինել սոցիալական, նշանակում է խաղաղություն և բարիք կամենալ շրջապատողներին և շրջապատողներից ևս նման վերաբերմունք ակնկալել: Նկատենք, որ ուրիշներին բարի կամենալն ամեննին անշահախնդիր չէ, այն ձևավորվում է շնորհիվ այն բանի, որ մենք ակնկալում ենք համանման վերաբերմունք նաև մյուսների կողմից»⁵:

¹ Հակոբյան Ս. Մ., Փիլիսոփայության տեսություն և պատմություն. Ուսումնական ձեռնարկ բուհերի ուսանողների համար, - Եր., Հեղինակային հրատ., 2009, էջ 462-463:

² Гегель Г. Ф., Работы разных лет.-М., 1970, с. 78:

³ Նալչաջյան Ա., Էթնիկական հոգեբանություն: բուհական դասագիրք: Երևան, «Զանգակ-97», «Հոգեբան» 2001 թ., էջ 454:

⁴ Токвиль А. Демократия в Америке. М., 1992, էջ 160-161:

⁵ Կոբրեյան Ա., Յեղասպանությունը որպես էթնիկական անհանդուրժողականության ծայրահեղ դրսևորում, «Յեղասպանության ախտահոգեբանական և սոցիալ-հոգեբանական հետևանքները»: Գիտաժողովի

Ագրեսիան, որը դրսևորվեց ապրիլյան պատերազմի ահաբեկչության ակտով, ունի սոցիալ-հոգեբանական կոնկրետ նախադրյալներ: Ինքնության խնդիրներ ունեցող հանրային մոտ, որտեղ սոցիալականության երևույթը շարունակում է մնալ մշտուտ, ագրեսիան, որպես կանոն ստանում է հոտային բնագրային վարքագծի ավելի վաղ ձև: Մրանից ածանցվում է նաև սոցիալ-հոգեբանական մի կարևոր երևույթ՝ սոցիալական ամենեզիան: Սոցիալական ամենեզիան ադրբեջանական հանրությանը բնորոշ կդառնա նաև հետայսու, քանի որ ինքնության հետ կապված լուրջ հարցերը մնում են չլուծված: Ամենեզիան միայն մոռացում չէ, սուկական մոռացման դեպքում մարդը սովորաբար հիշում է այն, ինչ մի ժամանակ իմացել է, իսկ հետո մոռացել է: Ամենեզիայի ախտանիշը կրողին անծանոթ է խորթ է հիշողության, հետևաբար և՛ գերակա նշանակություն ունեցող որևէ արժեհամակարգի գաղափարի մասին պատկերացումը: Չկա և դեռևս չի կարող ձևավորվել անցյալի հետ անհրաժեշտ այն հուզական կապը, որով սերունդը դաստիարակվում և հոգեփոխվում է: Թերևս սա է նաև այն առանցքային պատճառներից մեկը, որով ադրբեջանական հանրային ներկայացուցիչներից շատերն ապրում են ապամարդկայնացված /դեհումանիզացված/ ներկա:

Սոցիոքաղաքակրթական արժեքայնության այսպիսի մակարդակը, իսկ Սաֆարովի և քառօրյա պատերազմի ժամանակ գլխատման ու դիակների խոշտանգման երևույթները մասնավորապես, չեն կարող նպաստել ադրբեջանական հանրային անգիտակցականի բովանդակային դրական ընդլայնումներին և ընդհակառակը՝ «պարկուճապատվելով» շարունակում են նպաստել անձի նաև տվյալ հանրային, տվյալ պարագայում Ադրբեջանի ինքնագիտակցության ու վարքի բացասական նմուշների ձևավորմանը: Սոցիոքաղաքակրթական այսպիսի մակարդակն անմիջապես առնչվում է Ադրբեջանի վարած քաղաքականության հետ: Քյարամ Սլոյանին գլխատողին արված առանձնաշնորհումները կրկին վկայում են այս նորաթուխ պետության՝ սոցիոքաղաքակրթական տեսանկյունից միանգամայն անընդունելի մոդելների ինստիտուցիոնալացման մասին: Ավանդույթներից ծնված կարծրատիպային մտածողությունն ու վարքային սխեմաները բացառում են այլընտրանքի իրողությունը: Վկան՝ բանակցային գործընթացի անհաջող փորձերն ու քառօրյա պատերազմի՝ որպես ահաբեկչական ակտի հղացումը: Պատահական չէ, որ Քյարամ Սլոյանին գլխատող սպան լուկալ հանրության ծնունդ է՝ գյուղի բնակիչ: Գյուղն իր ավանդույթներով ու կրոնական կողմնորոշումներով, անշուշտ, սպայի համար սեփական կենսաշխարհի անփոխարինելի կենտրոն է:

Սոցիալականացման գործընթաց ապրող ադրբեջանցի մատաղ սերնդի համար այսպիսի երևույթները դառնում են աշխարհի «յուրացման» ծայրահեղ բացասական ու դետերմինակտիվ սխեմա, կանոն ու պաշտպանական ռազմավարություն: Ըստ էության, խմբային վարքի ամրապնդման համար սկսվում են գեներացվել այնպիսի համոզմունքներ, որոնք խորը հոգեբանական դետերմինանտներ ունեն արդեն խոսքային նկարագիր ստացած այնպիսի կարծրատիպերի հետ, որպիսին է «Էրմանի սան, օլմալի սան» (հայ էս, պիտի մեռնես), «Էրմանի շեյթան յոյլունդա» (հայը գնում է սատանայի ճանապարհով) ադրբեջանական ասույթը: Բազմաթիվ ադրբեջանական ասույթներ կան, որնք, ըստ էության պատմականորեն հայերի նկատմամբ մշակված ատելության և թշնամական դիրքորոշման խոսքային դրսևորում են ստացել, որոնք արդեն կարծրացել են նրանց գիտակցության և ենթագիտակցության շերտերում: Սա ադրբեջանցիների միստիկ և ռեգրեսիվ մտածողության ապամարդկայնացնող ու կործանիչ ագրեսիայի դրսևորում է, որն ունի մշակութային տրանսմիսիայի գործառույթ: Հայերիս նկատմամբ ատելություն և արհամարհանք է արտահայտվում նաև ադրբեջանական հետևյալ ասույթում. «Հայի հացը չեն ուտի» /Էրմանի չորագի յեմազլար/ կամ Էրմանի սան վերմալիսան /հայ էս, պիտի վճարես, նկատի է առնվում հայի հարկատու լինելը/: Էրմանի սան մունդառ սան /հայը մուրտառա/ ասույթում հային ամբարիշտություն և բացասականություն է վերագրվում:

Ագրեսիվ ինքնապաշտպանության գերապահովագրում ենթադրող քայլերը, օրինակ, քառօրյա պատերազմի ահաբեկչական ակտը իր բոլոր դրսևորումներով հանդերձ, նախ և առաջ սնվում են տվյալ երկրի սոցիոմշակութային քաղաքակրթվածության մակարդակից՝ ցավոք ամրապնդելով և կայունացնելով և ծայրահեղորեն վարկաբեկելով բացասական կարծրատիպերը հայերի՝ որպես թշնամու կերպարի նկատմամբ՝ անհնար դարձնելով բանակցային գործընթացում որևէ շոշափելի առաջընթացի արձանագրումը:

Սոցիալականը դեռևս չունի իր այն արժեքն ու նշանակությունը: Ավելի, այն շնորհիվ Ալիևյան կլանի վարած քաղաքականության նպաստում է մի երևույթի դրսևորմանը, որը ֆրանսիացի փիլիսոփա Ժ. Դըլյոզնի բնորոշմամբ, ախտորոշվում է որպես «սոցիալական մտազարություն» (շիզոֆրենիա)¹: Դեռևս 80-ականներից Ադրբեջանում դեգերող այս հիվանդությունը հնարավորություն չի ստեղծում աճող սերնդի մեջ ձևավորելու քաղաքակրթ աշխարհի միասնական պատկերը: Ցավոք, սոցիալական մտազարությունը, որը կարելի է որակել որպես քաղաքակրթական առաջադիմության նշաձող, կշարունակվի որպես հոգևոր հիվանդություն մնալ հարևան ադրբեջանական հանրային:

նյութեր: ԵՊՀ: Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ, Սոցիալական հոգեբանության ամբիոն, Երևան, ԵՊՀ հրատ., 2015, էջ 56:

¹ *Մորմոնյան Գ.*, Մշակութաբանական փոխակերպումների սոցիալական դինամիկան, Բանբեր Երևանի պետական համալսարանի, 2016 № 2 (20), էջ 17:

Հակամարտության լուծման և խաղաղության հաստատման գործընթացը բարդանում է նրանով, որ մարդասիրության վերականգնման գործընթացը կապված է թշնամու կերպարի վերափոխման համար անհրաժեշտ հստակ մշակված ռազմավարության հետ: Ցայսօր այդ ռազմավարությունը մշակված չէ, հետևաբար դժվար է խոսել գիտակցության մեջ թշնամու կերպարի տրանսֆորմացիայի մասին¹:

Ապրիլյան էսկալացիան նախ և առաջ սոցիալական խանգարման երևույթ է, ինչը համոզում է, որ ագրեսիան շարունակվում է հարևան Ադրբեջանում դիտվել որպես կոնֆլիկտի լուծման մեխանիզմ:

Ապրիլյան էսկալացիան և քառօրյա պատերազմի առանձին դրվագները ոչ միայն խոչընդոտ են թշնամու կերպարի տրանսֆորմացիայի համար, այլև էսկալացիայի պերմանենտ լարվածության հիմք են: Այստեղ կա բնագրի երևույթը, ինչն անհնար է դարձնում քաղաքական իրականության հեռանկարը դարաբաղա ադրբեջանական կոնֆլիկտի լուծման պարագայում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հակոբյան Ս. Մ., Փիլիսոփայության տեսություն և պատմություն: Ուսումնական ձեռնարկ բուհերի ուսանողների համար,- Եր., Հեղինակային հրատ., 2009, էջ 462-463:
2. Նալչաջյան Ա., Էթնիկական հոգեբանություն: բուհական դասագիրք: Երևան, «Զանգակ-97», «Հոգեբան» 2001 թ., 544 էջ:
3. Սողոմոնյան Գ., Մշակութաբանական փոխակերպումների սոցիալական դինամիկան, Բանբեր Երևանի պետական համալսարանի, 2016 № 2 (20), էջ 3-20:
4. «Ցեղասպանության ախտահոգեբանական և սոցիալ-հոգեբանական հետևանքները»: Գիտաժողովի նյութեր: ԵՊՀ: Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ, Սոցիալական հոգեբանության ամբիոն, Երևան, ԵՊՀ հրատ., 2015, 188 էջ:
5. Токвиль А. Демократия в Америке. М., 1992, էջ 160-161:
6. Степин В. С., Философская антропология и философия науки. М., 2015, էջ 32-47:
7. Hunter S., The Transcaucasus in Transition, Nation-Building and Conflict, Washington, The Centre for Strategic and International Studies, 1994

¹ **Hunter S.**, The Transcaucasus in Transition, Nation-Building and Conflict, Washington, The Centre for Strategic and International Studies, 1994

Եվգենյա Սարգսյան
Արցախի պետական համալսարանի մանկավարժության և հոգեբանության
ամբիոնի դոցենտի պաշտոնակատար
Javadyan@mail.ru

**ԱՐԻԿՏԻՎ ՎԱՐՔԸ ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
 ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՐԴՑՈՒՄՔ**

Սույն հոդվածի արդիականությունը կայանում է նրանում, որ այսօր սոցիալ վտանգավոր երևույթ է հանդիսանում ադիկտիվ վարքը: Ժամանակակից հասարակությունում գոյություն ունեն պայմաններ, որոնք նպաստում են ադիկտիվ վարքի տարածմանը: Հուզական կայունության հիմնախնդիրը անմիջական փոխկապակցված է ադիկտիվ վարքի հետ:

Ցայսօր շարունակվում են բնավորության մեջ լայն տարածում ունենալ առողջության համար այնպիսի անբարենպաստ հոգեկան վիճակներ, ինչպիսիք են տագնապալիությունը, կյանքից անբավարարվածության զգացումը, անվստահություն, վաղվա օրվա համար, վախը երեխայի ապագայի մասին, գրգռվածությունը, ագրեսիվությունը, դեպրեսիան:

Հոդվածում մատնանշվել են ադիկտիվ վարքի ձևավորման և դրանից խուսափելու հիմնական ուղիները:

Բանալի բառեր. ադիկտիվություն, հուզական կայունություն, դեստրուկտիվ վարք, սուրբագաստ, պատերն, դեֆիցիտի համախտանիշ, անհարմարականություն, բնավորության շեշտվածություն, թերաբժեքության բարդույթ, հանդուրժողականություն:

Евгения Саркисян
Исполняющая обязанности доцента
кафедры педагогики и психологии
Арцахского государственного университета

АДДИКТИВНОЕ ПОВЕДЕНИЕ-РЕЗУЛЬТАТ СОЦИАЛЬНО НЕБЛАГОПРИЯТНОЙ СРЕДЫ

Актуальность данной статьи заключается в том, что в настоящее время аддиктивное поведение является социально опасным явлением. В современном обществе существуют условия, которые способствуют распространению аддиктивного поведения. Конфликт эмоциональной устойчивости непосредственно связан с аддиктивным поведением. До сих пор широкое распространение в характере продолжают иметь такие неблагоприятные для здоровья душевные состояния, как тревожность, чувство неудовлетворенности жизнью, неуверенность в завтрашнем дне, страх за будущее ребенка, возбудимость, депрессия.

В статье были намечены основные пути формирования и избежания аддиктивного поведения.

Ключевые слова: аддиктивность, эмоциональная устойчивость, деструктивное поведение, суррогат, паттерн, синдром дефицита, дискомфорт, акцентуация характера, комплекс неполноценности, толерантность.

Evgenya Sargsyan
Office executor reader of the Chair of pedagogics and psychology
Artsakh State University

ADDICTIVE BEHAVIOR-THE RESULT OF AN UNFAVORABLE SOCIAL ENVIRONMENT

The relevance of this article lies in the fact that the addictive behavior is socially dangerous phenomenon nowadays. The conditions that facilitate the spread of addictive behavior exist in today's society. Conflict of emotional stability is directly related to addictive behavior.

Until now such adverse mental health conditions such as anxiety, frustration of life, insecurity, fear for the future of the child, anxiety, depression are widely inherent in character.

The paper outlines the main ways of forming and avoiding addictive behavior.

Keywords: addiction, emotional stability, destructive behavior, surrogate ,pattern, deficit disorder, discomfort, accentuation of character, inferiority complex, tolerance.

Աշխարհաքաղաքական զարգացումների մեր օրերում բարենպաստ պայմաններ են ստեղծվում մարդկանց մոտ ադիկտիվ վարքի ձևավորման համար: Հոդվածի թեմայի արդիականությունը այն է, որ ադիկտիվ վարքը վտանգավոր է ոչ միայն հասարակության, այլև երիտասարդ սերնդի հոգեկան ու անձնային զարգացման առումով: Ժամանակակից

հասարակության սոցիալապես անբարենպաստ միջավայրի արդյունքում պայմաններ են ստեղծվում աղիկտիվ վարքի դրսևորման համար: Այստեղ է, որ հաճույք ստանալու հնարավորությունը դառնում է կենսական ոճ: Այսպիսի ոճն ավելի դյուրին է դարձնում համակարգչային խաղերով, թմրանյութերով ու ակոհոլով տարվելու հնարավորությունը: Մա նաև կապված է այն հանգամանքի հետ, որ այսպիսի հեղուկախտակա մոդուսներն իրականում չեն պահանջում բարձր ինտելեկտուալ լարվածություն:

Աղիկտիվ վարքի ձևավորմանը նպաստում է նաև բնակչության կենսամակարդակի անկումը, ինչը փոխադարձ ազդեցության կապի մեջ է հանցագործությունների դինամիկ աճի և մասսայական արժեզրկումների գործընթացի հետ: Աղիկտիվ վարք ունեցող երեխաները դժվար են հարմարվում կյանքի այն բարդ իրադարձություններին, որոնք ծնվում են սոցիալ-տնտեսական բարդ պայմաններից, նորընտանեկան կոնֆլիկտներից, մտքերի կորստից ու սոցիալական ստերեոտիպերի կտրուկ փոփոխություններից: Եվ միշտ չէ, որ հասարակության այսօրվա անդամը կարողանում է հասնել հոգեբանական ու ֆիզիկական հարմարավետության:

Ոչ աղիկտիվ անձինք բնորոշվում են մի շարք այնպիսի հատկանիշներով, ինչպիսիք են ոչ արտահայտված ինտելեկտուալ ու հոգևոր հետաքրքրությունները, բարոյական բարդ նորմերը, հուզական կայունությունը, ամաչկոտության զգացումը, որը զուգակցված է անպատասխանատվության հետ, որոշումներ կայացնելուց խուսափելու հակումը և այլն:

Հուզական կայունության խնդիրն անմիջականորեն առնչվում է աղիկտիվ վարքի հետ: Ոչ բոլոր մարդկանց է, որ հաջողվում է կարգավորել իրենց հուզական վարքը: Մթերեսները, որոնք հաճախակի են ու երկարատև բացասաբար են ազդում ոչ միայն մարդկանց հոգեբանական վիճակի, այլև ֆիզիոլոգիական առողջության վրա:

Միլլերի կարծիքով աղիկտիվ վարքը տարբեր նյութերի չարաշահումն է, որոնք փոխում են անձի հոգեվիճակը՝ կախվածություն առաջացնելով այնպիսի վնասակար նյութերից, ինչպիսիք են թմրանյութը, ակոհոլը, մուլեգին խաղերը և այլն¹: Իսկ ահա Ա. Ե. Լիչիկոն և Պ. Կորոլենկոն աղիկտիվ վարքը դիտում են դեստրուկտիվ վարքի մի ձև, որը ենթադրում է հեռացում իրական կյանքից, հոգեբանական օտարում, հոգեբանական վիճակի փոփոխություն, որոնք ուղեկցվում են հույզերի զարգացմամբ²: Փորձը ցույց է տալիս, որ աղիկտիվ վարքի ձևավորման ժամանակ միջանձնային հարաբերություններին փոխարինելու են գալիս սուրագատ /թերմացք/ առարկաներն ու երևույթները: Իսկ ահա Ա. Ե. Այվազովայի, Ս. Ն. Չայցևայի, Ա. Ծ. Եգորովայի կարծիքով աղիկտիվ վարք ունեցողները իրենց ձգտումներն իրականություն են դարձնում ինտիմության արհեստական պատկերների կերպով՝ գիտակցական մակարդակում օգտագործելով ինքնապաշտպանության այն մեխանիզմները, որոնք անվանում են «մտածողության ցանկություններ»³: Այսպիսի ինքնապաշտպանության էությունը այն է, որ մարդը, հակառակ պատճառառեստանալիս կապերի տրամաբանության, թույլ է տալիս իր ապրումներին այն, ինչը ոչ թե իրականությանն է համապատասխանում, այլ իր ցանկություններին:

Վ. Դ. Մոսկոլենկոյի կարծիքով աղիկտիվ վարքը այն կրկնվող սովորությունն է, որը բարձրացնում է հիվանդության ռիսկը կամ կապված է անձնային կամ սոցիալական հիմնախնդիրների հետ⁴:

Ա. Վ. Խուդյակովն ընդգծում է աղեկտիվ վարքի չորս տիպեր՝ սոցիալական, հոգեբանական, ֆիզիոլոգիական և կլինիկական: Սոցիալական աղիկտիվ վարքին նա վերագրում է հոգեակտիվ նյութերի խմբային օգտագործման երևույթը: Հոգեբանական կողմն ըստ հեղինակի մոտիվների, դրդապատճառային համակարգի թուլացման երևույթն է, հոգեակտիվ նյութերի խմբային օգտագործման ձևավորումը: Ֆիզիոլոգիական տիպը բնորոշվում է խմբային ձևով օգտագործվող նյութերի ամրապնդման չարաշահման նկատմամբ դրսևորվող հանդուրժողականությամբ: Թուլեանտության հակվածությամբ:

Աղիկտիվ վարքի կլինիկական տիպին բնորոշ են բնավորության շեշտվածությունը, հուզական վարքային խանգարումները⁵:

Անդրադառնանք աղիկցիայի հիմնական նշաններին.

- չվերահսկվող վարքի պատկեր,
- չնայած գիտակցվում են ասոցիալ արարքի հետևանքները, այնուամենայնիվ ընդունակ չէ վերջ տալ այդ վարքին,

ինքնաքայքայվող վարքի կայուն շարունակականություն
 - վարքի հետ կապված տրամադրության լուրջ փոփոխություններ,
 - Այդպիսի վարքին հատկացվող անսահմանափակ ժամանակահատվածը և դրանից ազատվելու անհնարինությունը,

¹ Տե՛ս՝ Старшенбаум Г. В., Аутиктология: Психология и психотерапия зависимости. М.: Копито-центр, 2006.- с. 27.

² Տե՛ս՝ Ильин Е. П., Эмоции и чувства.- СПб. Питер, 2008, с. 8.

³ Старшенбаум Г. В., Аутиктология: Психология и психотерапия зависимости. М., Копито-центр, 2006, стр. 27.

⁴ Москаленко В. Д., Зависимость: семейная болезнь. М., 2008, с. 27

⁵ Տե՛ս՝ Худяков А. В., Клинико-социальный анализ формирования и профилактика зависимости от психотивных веществ у несовершеннолетних, М.: 2003, с. 102

- Այդպիսի վարքի հետևանքով սոցիալական կամ մասնագիտական գործունեության ընդհատումը:

Ուսումնասիրելով աղիկտիվ վարքի մասին տարբեր հեղինակների մոտեցումները, մասնավորապես Բրոդսկու կողմից մշակված տեսությունը, գալիս ենք այն համոզման, որ բոլոր աղիկցիայի տեսակների գենեզիսում ֆիզիոլոգիան չնչին դերակատարություն ունի:

Աղիկցիան ստեղծվում է ոչ թե հոգեակտիվ նյութերով կամ օբյեկտներով, այլ խոսքով. մարդը կարող է իրեն պահել առողջ և անառողջ կերպով:

Աղիկցիայի յուրաքանչյուր դրսևորում /քիմիական և ոչ քիմիական/ էությամբ նման էն: Աղիկցիան իր մեջ ներառում է ինչպես քիմիական, այնպես էլ հուզական կախվածություն: Քիմիական կախվածությունը հոգեակտիվ նյութերից առաջացած այն սոմատիկ վիճակն է, որը թմրեցնող ազդեցություն է ունենում օրգանիզմի վրա: Դրանց թվին են պատկանում ոչ միայն թմրանյութերը, այլև հոլիստիկ, այլ կոֆեինը, դեղային ու կենցաղային քիմիան և այլ միջոցներ:

Բերյոզինի ուսումնասիրություններով բացահայտվել է հետևյալ օրինաչափությունը. Պաթոլոգիական հուզական պահանջմունքների բավարարումը աղիկտիվ վարքը կրողի մոտ առաջացնում է հաճույքի և թեթևության զգացում:

Հոգեբաններն այսօր հստակորեն տարբերակում են աղիկտիվ վարքի զարգացման հետևյալ հինգ փուլերը.

1. **Բացահայտում**- միջոց, որի օգնությամբ հնարավոր է հեշտությամբ փոխել հոգեկան վիճակը,
2. Այդ միջոցը սովորաբար օգտագործում է դժվար պահի,
3. Աղիկտիվ վարքը դառնում է նրա անձի մի մասը և քննադատության չի ենթարկվում,
4. Անձի աղիկտիվ վարքի մասը սկսում է որոշել աղիկտի հետագա քայլերն ու կյանքը,
5. Օրգանիզմում քայքայվում են հոգեբանական ու կենսաբանական գործընթացները:

Հաշվի առնելով այս հինգ փուլերի գոյության փաստը, պետք է ուշադրություն դարձնել աղիկտիվ վարք ունեցողի վրա: Նրան սկսում են բնորոշ դառնալ, ինչպես արդեն նշվել է վերը՝ ինտելեկտուալ և հոգևոր հետաքրքրությունների նվազ արտահայտվածությունը, անկայունությունը, բարոյական նորմերի բացակայությունը, ագահության ու անպատասխանատվության զգացումը: Աղիկտիվ վարք ունեցողը չափազանց ծանր է տանում կյանքի դժվարությունները, քան ճգնաժամային իրադրությունները: Շատ հաճախ նա ձգտում է հեռու մնալ որոշումներ կայացնելու իրողությունից, ճիշտ խոսելուց, հատկապես հակված է դառնում մեղադրել ուրիշներին: Նրան բնորոշ են դառնում նաև տագնապայնությունն ու կախվածությունը, տրամադրության հաճախակի փոփոխություններն ու վարքի կրկնությունը:

Ե. Վ. Ջմանովսկայան նշում է¹, որ աղիկտները տառապում են հաճույքի դիֆիցիտի համախտանիշով, ինչը դրսևորվում է մշտական ձանձրույթի և ապաթիայի ձևով:

Այսպես, կարելի է եզրակացնել, որ աղիկտիվ վարքն իրենից ներկայացնում է դեստրուկտիվ /ապակառուցողական/ վարքի մի ձև, որն արտահայտվում է իրականությունից հեռանալու մղումով: Նա որոշ նյութեր օգտագործելով ուղղակի փոխում է իր հոգեվիճակը և սկսում տառապել ներքին աններդաշնակ ապրումներից:

Որպես կանոն, երկակի /ամբիվալենտ/ կենսակերպ վարելով, աղիկտը սկսում է թաքցնել իր անձը շրջապատողներից: Նա պատրաստ է համաձայնության նշաններ ցույց տալ նույնիսկ այն պարագայում, երբ համոզված է, որ արտահայտվող տեսակետը հեռու է իրականությունից կամ սեփական համոզմունքներից: Այսպիսի վարք ունեցողները չունեն և չեն կարող ունենալ բավարար ինքնուրույնության զգացում և պատրաստ են կատարել ցանկացած աշխատանք՝ շրջապատողների աջակցությանն ու սիրուն արժանանալու համար: Անօգնականության զգացումը պարուրում է նրանց, եթե մտերիմ մարդկանց հետ խզվում են կապերը: Մերժված լինելը նրան սարսափ է պատճառում: Նա խոցելի է և եթե նրան քննադատում են, ապա խորապես վիրավորվում է:

Վոստրոնկոտտովի դիպուկ սահմանմամբ <<Թերաթեքության բարդույթը>> թաքնված է աղիկտիվ վարք ունեցողների մոտ, ինչի արդյունքում գեներացվում են գերկուպենսատորային հակազդումները, և նա, չկարողանալով ապրել ընդունված նորմերին համապատասխան, ստախտությունը դարձնում է վարքային ստրատեգիա:

Վերը նշված բոլոր հատկանիշները ի մի բերելով կարող ենք ասել, որ աղիկտիվ վարքը բացասական է բառի ամենաընդգրկուն իմաստներով, և այսպիսի վարքի ձևավորման ռիսկի գործոնը պետք է փնտրել ծնողական և մանկավարժական անուշադրության, ասոցիալ վարք ունեցող հասակակիցների հետ շփման ու դեպրեսիվ խանգարումների մեջ: Ավելին, կախվածության ձևավորման հիմնական դերը պատկանում է մանկության տրավմային: Ընտանիքը և դաստիարակող ինստանցիաները պետք է լուրջ ուշադրություն դարձնեն հուզական վարքային դրսևորումներին: Պետք է հիշել, որ երեխաները բեկում են իրենց միջով ծնողների ու մեծահասակների դրսևորված հույզերն ու ապրումները: Կախվածության վարքը կարող է ձևավորվել յուրաքանչյուր ընտանիքում: Ըստ որում դրանց ձևավորման վրա կարող են ազդել սոցիալական նկարագիր ունեցող գործոններ: Աղիկտիվ վարքը ժառանգական չէ: Պարզապես պետք է հիշել, որ գոյություն ունի աղիկտիվ վարքի ձևավորման ընտանեկան միջավայրի նախատրամադրվածություն, որից ամեն կերպ պետք է խուսափեն ծնողները:

¹ Стів Змановская Е. В., Девиантология: (Психология отклоняющегося поведения). М., «Академия», 2004.- с. 120

Պետք է խստորեն պահվեն բոլոր այն նորմերը, որոնք երեխայի մտածողության մեջ ձևավորում են արժեք հասկացությունը, բարոյականությունն ու դրական մոտիվը:

Չպետք է մոռանալ, որ նույն ադիկտիվ վարքագիծը հուզական վարակի էֆեկտով, հատկապես դեռահասության և պատանեկության շրջանում կարող է վառ ընդօրինակման օրինաչափ երևույթ դառնալ: Իսկ սա հանրային և սոցիալական նկարագիր ունեցող վտանգ է, սպառնալիք աճող սերնդի ապագայի դրական տեսլականի համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Березин С. В., Психология наркотической зависимости и созависимости. М., МПА, 2011. - 254 с.
2. Змановская Е. В., Девиантология: (Психология отклоняющегося поведения). М., «Академия», 2004. - 288 с.
3. Ильин Е. П., Эмоции и чувства.- СПб. Питер, 2008, 783 с.
4. Москаленко В. Д., Зависимость: семейная болезнь. М., 2008, 352 с.
5. Руководство по аддиктологии. Под ред. В. Д. Менделеева.- СПб.: Речь, 2007. 768 с.
6. Старшенбаун Г. В., Аудипатология: Психология и психотерапия зависимости. М., Копито-центр, 2006., 367 стр.:
7. Худяков А. В., Клинико-социальный анализ формирования и профилактика зависимости от психотивных веществ у несовершеннолетних, М.: 2003, с. 102.

ՀՏԴ 159.97:616.89

Հոգեբանություն
Սոսե Խաչիբաբյան,
Խ. Աբովյանի անվան
Հայաստանի պետական մանկավարժական համալսարան

ԱՎԱԶԱԹԵՐԱՊԻԱՅԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀՈԳԵՏՐԱՎՄԱ ՏԱՐԱԾ ԵՐԵՆԱՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ. ԴԵՊՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մոլորակում ապրող և ոչ մի մարդ ապահովագրված չէ սթրեսների և հոգետրավմայի ազդեցությունից: Պատերազմները, հարազատի կորուստը, առողջության կտրուկ վատթարացումը կամ անվտանգությանը սպառնացող այլ երևույթներ կարող են դառնալ հոգետրավմայի պատճառ: Ասվածը վերաբերում է ինչպես մեծահասակներին, այնպես էլ երեխաներին: Սակայն ժամանակակից հոգեբանական գիտությունը թույլ է տալիս փաստել, որ ժամանակին և տեղին մատուցված մասնագիտական օգնությունը կարող է կանխարգելիչ գործոն հանդիսանալ տրավմային հաջորդող անցանկալի երևույթների առաջացման համար: Հոգետրավմա տարած երեխաների հետ աշխատանքի լավագույն մեթոդներից է ավազաթերապիան, որը թույլ է տալիս հնարավորինս անցավ ճանապարհով խորությամբ շոշափել ճավալի թեմաները՝ մնալով փոխաբերության մակարդակում:

Առանցքային բառեր՝ Ավազաթերապիա, հոգետրավմա, սթրեսային իրադրություններ, երեխա, հոգեթերապիա, առաջին հոգեբանական օգնություն, արտթերապիա, հետտրավմատիկ սթրեսային խանգարում, պատերազմ, կակազություն:

Sose Khachibabyan
Armenian State Pedagogical University after Kh. Abovyan

APPLICATION OF SAND THERAPY WHILE WORKING WITH CHILDREN HAVING INCURRED PSYCHOLOGICAL TRAUMA. CASE DESCRIPTION

Not a single person living on the planet is insured against the impact of stress and psychological trauma. Wars, loss of beloved person, drastic deterioration of health or other phenomena threatening safety may cause a psychological trauma. The above said refers to both grown-ups and children. However, modern psychological science allows to state that professional help rendered timely and duly may become a preventive factor for occurrence of adverse effects following the trauma. One of the best methods for working with children having incurred a psychological trauma is sand therapy which allows in the most possible harmless way to touch painful topics staying in metaphoric level.

Keywords: sand therapy, mental trauma, stressful situations, child, psychotherapy, first psychological help, art therapy, post-traumatic stress disorder, war

Сосе Хачибекян
Армянский государственный педагогический университет им. Х. Абовяна

ПРИМЕНЕНИЕ ТЕРАПИИ ПЕСКОМ В РАБОТЕ С ДЕТЬМИ, ПЕРЕНЕСШИМИ ПСИХОЛОГИЧЕСКИЕ ТРАВМЫ. ОПИСАНИЕ СЛУЧАЯ

Ни один человек в мире не застрахован от стрессов и психологических травм. Войны, потеря близких, резкое ухудшение здоровья или явления, представляющие угрозу безопасности, могут стать причиной психологической травмы. Вышеказанное относится как к взрослым, так и к детям. Однако современная психология (психологическая наука?) позволяет утверждать, что своевременная соответствующая помощь может стать профилактическим (превентивным) фактором для предотвращения нежелательных последствий после перенесенной травмы. Терапия песком является одним из лучших методов работы с детьми, перенесшими психологические травмы, поскольку позволяет безболезненно затрагивать глубокие эмоциональные переживания, при этом оставаясь на уровне метафоры.

Ключевые слова: песочная терапия, психическая травма, стрессовые ситуации, ребенок, психотерапия, первая психологическая помощь, арт-терапия, посттравматическое стрессовое расстройство, война

Տրավման պատյան է, որը պատում է մեր հոգին ու մարմինը սառցե արցունքներով: Հակասական է հնչում, բայց տրավման նաև այն դուռն է, որը կարող է մեզ տանել դեպի գիտակցում, ազատություն և զարթոնք:
Փիթեր Լեյին

Ներկայիս ժամանակաշրջանը, աշխարհաքաղաքական իրավիճակը, գլոբալ և արագընթաց փոփոխությունները, ինֆորմացիոն հոսքը ժամանակակից մարդուց պահանջում են ֆիզիկական ու հոգեկան մեծ լարում և ռեսուրսներ: Օբյեկտիվ իրադրությունը և դրա հետևանքները կարող են հանգեցնել ինչպես զարգացման, առաջընթացի, այնպես էլ ճգնաժամերի և լարվածության: Հաճախ, երբ օրգանիզմին հասցված ազդեցությունը առավել անսպասելի է, կտրուկ կամ տևական, օրգանիզմի պատասխանը կարող է դրսևորվել սթրեսի կամ հոգետրավմայի տեսքով: Ուստի արդիական ենք համարում սույն հոդվածի շրջանակներում անդրադարձ կատարել սթրեսի և հոգետրավմայի երկայնքը՝ հատկապես շոշափելով մանկական տարիքում հոգետրավմայի ապրման առանձնահատկությունները, ինչպես նաև ներկայացնել հոգետրավմա տարած երեխայի հետ ավագաթերապիա մեթոդով իրականացրած մի դեպքի պատմություն:

2. Սեյլեն բնորոշում է սթրեսը որպես հոգեֆիզիոլոգիական ռեակցիա, հատուկ վիճակ՝ գոյության նոր պայմաններին հարմարվելու ճանապարհին: Այն օրգանիզմի յուրահատուկ պատասխանն է իր առջև դրված պահանջներին (1, էջ 8):

Ի տարբերություն սթրեսների՝ որոնք կարող են լինել թե՛ դրական, թե՛ բացասական, հոգետրավման միշտ բացասական է և գլխավորապես առաջ է գալիս հանկարծակի՝ խիստ բացասական երևույթների հետևանքով: Հոգետրավման մարդու հոգեկան առողջությանը հասցված վնասակար ազդեցություն է, որը տեղի է ունենում նրա հոգեկանի վրա միջավայրի անբարենպաստ գործոնների կամ սուր հուզական, սթրեսային ազդեցությունների հետևանքով [5]:

Հայտնի է, որ հոգետրավմանները կարող են խաթարել օրգանիզմի բնականոն կենսագործունեությունը և հասցնել սահմանային վիճակի, թեև բուն հակազդման բնույթը տարբեր մարդկանց մոտ կարող է լինել խիստ տարբեր՝ կախված տարիքից, տրավմայի տեսակից, տրավմատիկ իրադրությունը դիմակայելու կայունության աստիճանից, նախկին փորձառությունից, տրավմատիկ իրողության պահին մարդու գտնված միջավայրից: Հոգետրավմային տրված պատասխանը իր հերթին նույնպես խիստ տարբեր է տարբեր մարդկանց մոտ՝ բնականոն, նորմալ հակազդումից մինչև պաթոլոգիկ հակազդում: Հետտրավմատիկ սթրեսային խանգարումը (ՀՏՄ) հոգետրավմային հաջորդող հնարավոր հակազդման ձև է, որը սովորաբար առաջանում է մարդու կյանքին վտանգ սպառնացող իրադրությունների հետևանքով, ավելի հաճախ՝ պատերազմների, տեղահանությունների, բռնությունների ակնատես ու մասնակից մարդկանց մոտ:

Միայն չափահասները չէ, որ կարող են ենթարկվել հոգետրավմայի: Երեխաները և դեռահասները նույնպես պաշտպանված չեն տրավմատիկ իրողությունների ազդեցությունից, ընդ որում երեխաները հաճախ առավել խոցելուց են այս ազդեցությունների նկատմամբ: Ինչպես մեծահասակների, այնպես էլ երեխաների մոտ հոգետրավմային հաջորդող երևույթները կարող են տարբեր դրսևորումներ ունենալ: Երեխաները կարող են դառնալ լռակյաց, խուսափել խոսել տրավմատիկ դեպքից, կամ դառնալ դյուրագրգիռ, գերակտիվ, շարժուն, կարող են կրկնել դեպքի հետ կապված տեսարանները և այլն[1]: Վերոնշյալին կարել է ավելացնել նաև երեխաների վարքի ընդհանուր փոփոխությունը, քնի և սննդի ընդունման խանգարումները, հուզական տարբեր դրսևորումները, հոգեամատիկ ռեակցիաները:

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ հոգետրավման միշտ չէ, որ կործանարար ազդեցություն է ունենում երեխայի համար: Շատ դեպքերում այնպիսի կարևոր հանգամանքներ, ինչպիսիք են ծնողների կամ հարազատների հոգատարությունը, հասկացումն ու աջակցությունը, ինչպես նաև ժամանակին և տեղին իրականացված հոգեբանական միջամտությունը, կարող են կանխել խնդրի խորացումը:

Հոգետրավմայի հետ աշխատանքի բազմաթիվ մեթոդներն ու հնարքները նպատակ ունեն օգնելու երեխային արտահայտելու հույզերն ու զգացմունքները, ինչպես նաև ապրումագրկելու տրավմատիկ հիշողությունները:

Պետք է նշել, սակայն, որ տրավմատիկ իրողության հետ բախված երեխան միշտ չէ, որ պատրաստ է լինում խոսելու իր հետ կատարվածից. հաճախ ապրածը, տեսածը և զգացածը այնքան սարսափելի են նրա համար, որ նա դժվարանում է բառերով նկարագրել դա կամ խուսափում է վերհիշել: Այս դեպքերում հոգեբանին օգնության են գալիս ոչ վերբալ մեթոդները, հաճախ՝ արտթերապիայի կամ խաղաթերապիայի մեթոդները, որոնք հնարավորություն են տալիս, առանց խոսքային մեծ ակտիվության և ամենակարևորը՝ անմիջականորեն չշոշափելով տրավմատիկ թեման, հասնել հաջողության: Այսպիսի մեթոդներից է ավագաթերապիան:

Ավագաթերապիան հոգեթերապիայի մեթոդներից է, որի հիմնական նպատակը ստեղծագործական ինքնաբուխ ինքնարտահայտման միջոցով այցելուի ինքնամոքումն է, անհատական անգիտակցականի ճնշված, արտամղված փորձը գիտակցված դարձնելը: Իր պարզության, մատչելիության և խորության շնորհիվ այն համարվում է հոգեթերապիայի ամենարդյունավետ մեթոդներից մեկը [2]:

Ընդունված է համարել, որ ավագաթերապիան ցուցված է հատկապես այն դեպքերում, երբ այցելուն հոգեբանական տրավմա է ապրել, անկարող է բառերով նկարագրել իր հետ կատարվածը, իր մտքերն ու զգացմունքները, ունի ներքին կոնֆլիկտներ և չգիտակցված վախեր, հուզական ոլորտի տարբեր խնդիրներ: Հոգետրավմայի դեպքում ավագաթերապիայի մեթոդով աշխատելու առավելություններից մեկն այն է, որ այն թույլ է տալիս այցելուին մնալ մետաֆորայի՝ փոխաբերության մակարդակում և խոսել սեփական ապրումներից, խնդրից առավել «աննկատ», մեղմ և անցավ ճանապարհով, այլ կերպ ասած՝ սիմվոլների լեզվով:

Ավագաթերապիայի սենյակում առկա է լինում ստանդարտ չափերի ավազան, որը լցված է ավազով, ինչպես նաև բազմաթիվ մանր ֆիգուրներ, խաղալիքներ, որոնց միջոցով այցելուն ինքնարտահայտվում է, «խոսում» իր խնդիրներից: Դասական ավագաթերապիայի սեանսի ժամանակ թերապևտը այցելուին խնդրում է ավազանի վրա կառուցել աշխարհ՝ օգտվելով սենյակում առկա նյութերից: Այցելուի կառուցած աշխարհը միաժամանակ և հոգեախտորոշիչ դեր է կատարում՝ պատմելով թերապևտին այցելուի խնդրի մասին և թերապևտիկ մեծ նշանակություն ունի, քանի որ նպաստում է այցելուի ինքնահասկացմանը, ելք է տալիս բացասական հույզերին, տանում է նրան ներդաշնակության: Ավագաթերապիայի հանդիպումների քանակն անհատական է և կախված է խնդրի բնույթից, այցելուի ռեսուրսների ակտիվացման համար պահանջվող ժամանակից:

Ստորև կներկայացվի ապրիլյան քառօրյա պատերազմի հետևանքով տուժած երեխայի տրավմատիկ ապրումների, հիշողությունների հետ ավագաթերապիայի մեթոդով աշխատանքի մի դեպք:

Ապրիլյան պատերազմի օրերին Հայաստանի պետական մանկավարժական համալսարանը, մասնավորապես՝ հատուկ կրթության ֆակուլտետը, լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի մասնագետները, պատրաստակամություն էին հայտնել մասնագիտական աջակցություն ցուցաբերելու պատերազմական գործողություններից տուժած մեծահասակներին և երեխաներին:

12-ամյա Լիլիթը (զաղտնապահության սկզբունքից ելնելով՝ անունը փոխված է (հեղ.)) մեկն էր այն բազմաթիվ երեխաներից, ովքեր ակամայից հայտնվել էին ռազմական գործողությունների կիզակետերից մեկում՝ բնակվելով ԼՂՀ Մարտակերտի շրջանի Թալիշ գյուղում: Ապրիլի մեկի լույս երկուսի գիշերը մայրիկի և քրոջ հետ միասին հարկադրված լքել էր հայրենի գյուղը՝ հետագայում ապաստան գտնելով Երևանում: Գիշերը երեխաները արթնացել էին աղմուկից, պայթյուններից և խուճապահար մարդկանց աղաղակներից: Մինչ լիարժեք հասկանալը, թե ինչ է կատարվում, տուն ընկած բեկորները հասցրել էին թեթևակի վնասել նրանց: Փախուստի ճանապարհին երեխաները տեսել էին վիրավոր մարդկանց, լսել նրանց ձայները, ռումբերից պատսպարվել պատերի տակ: Ընդ որում, մայրը, ինչպես հետո ինքն էր պատմում, համարելով, որ Լիլիթը արդեն բավականին մեծ է, առավել կենտրոնացրել էր ուշադրությունը կրտսեր դստեր վրա, գրկել էր նրան, ծածկել իր մարմնով, ինչը հետագայում պետք է ապացուցեր, որ տրավմատիկ իրողության ժամանակ խիստ կարևոր է այն միջավայրը, հանգամանքները, որում գտնվում է երեխան, քանի որ մոր հովանավորությունը վայելած աղջիկը անհամեմատ պակաս էր տուժել իրավիճակից, քան ավագ դուստրը՝ Լիլիթը, ում վրա դրվել էր «մեծ լինելու և չվախենալու» պատասխանատվությունը:

Երևանում Լիլիթի մայրը նկատել էր, որ երեխան դարձել է լռակյաց, իրեն ուղղված հարցերին չի պատասխանում: Այս երևույթը, որը մասնագիտական գրականության մեջ հանդիպում է «մուտիզմ» անվանմամբ, երեխայի մոտ պահպանվել էր շուրջ երեք օր, իսկ երբ վերսկսել էր խոսել, մայրը նկատել էր, որ նա կակազում է: Անհանգստանալով այս երևույթից՝ մայրը դիմել էր լոգոպեդի օգնությանը: Նախնական հանդիպումից հետո լոգոպեդ Ս. Կարապետյանը խորհուրդ էր տվել դիմել հոգեբանի օգնությանը, քանի որ կակազության առաջացման հիմքում առավելապես հուզական ոլորտի խնդիրներ էր տեսել:

Կակազությունից բացի երեխայի մոտ նկատվել էր տագնապային հոգեվիճակի առաջացում, քնի խանգարումներ՝ անքնություն, գիշերային մղձավանջներ, տրավմայի հետ կապված տեսարանների կրկնություն, փոփոխություններ հուզական ոլորտում (դարձել էր դյուրագրգիռ, գեղզգայուն, աննշան առիթով կարող էր լաց լինել), հարաբերություններում խնդիրներ, ագրեսիայի դրսևորումներ և այլն: Նկարագրվածը, իհարկե, խոսում էր հոգետրավմայի առկայության և ՀՏՄ-ի հնարավոր սկզբի մասին:

Լիլիթի հետ աշխատեցինք արտ-թերապևտիկ մեթոդներով, մասնավորապես՝ ավագաթերապիայի մեթոդով, ինչը պայմանավորված էր նաև երեխայի հետ նախնական խորհրդատվություն անցկացրած լոգոպեդի եզրակացությամբ, ըստ որի, կակազության առկայության հանգամանքից ելնելով, առավել նպաստավոր կլինեն այնպիսի մեթոդները, որոնք չեն պահանջում խոսքային մեծ ակտիվություն: Աշխատանքը տևեց ութ հանդիպում, որոնցից առաջին երկուսի ժամանակ նա մեծ դիմադրություն էր ցուցաբերում, հրաժարվում էր սենյակում որևէ բանով զբաղվելուց, գրեթե չէր խոսում: Երրորդ հանդիպման ժամանակ անվստահությամբ մոտեցավ ավազանին՝ միաժամանակ նշելով, որ ավազով խաղալ չի սիրում: Առաջարկեցի ավազի վրա աշխարհ կառուցել: Երկար ժամանակ անց՝ մոտեցավ դարակներում շարված ֆիգուրներին և սկսեց կառուցել:

Իր «Պատերազմը և երեխաները» գրքում Ա. Ֆրոյդը խոսում է Լոնդոնի ռմբակոծությունների ժամանակ երեխաների և մեծահասակների ռեակցիայի տարբերության մասին. ի տարբերություն մեծահասակների, ովքեր անդադար խոսում էին իրենց ապրած սարսափի մասին, երեխաները իրենց ապրումները դրսևում էին խաղի միջոցով. խորանարդիկներից տուն էին կառուցում և «ռումբեր» նետում [3]:

Հատված երրորդ հանդիպումից.

Թերապևտ – կպատմե՞ս այս աշխարհի մասին:

Լիլիթ – այստեղ ապրում է մի աղջիկ... նա աղոթում է, որպեսզի Միսն ու Մասիսը մերը լինեն, (կարճատև դադարից հետո, ցածրաձայն) խաղաղություն լինի...

Թ. – երևի դա նրա համար շատ կարևոր է:

Լ. – (շատ ցածր ձայնով) այո:

Հավանաբար հասկանալի է դառնում, որ խոսելով «մի աղջկա» մասին, Լիլիթը խոսում է իր և իր համար ցավալի իրողության մասին: Ավագաթերապիայում այսպիսի փոխանցումները հաճախ են հանդիպում և թույլ են տալիս այցելուին առավել դյուրին կերպով խոսել ծանր թեմաներից:

Հաստված չորրորդ հանդիպումից.

Սենյակ մտնելուն պես մոտեցավ ավագին և սկսեց կառուցել աշխարհ: Այն բաղկացած էր երկու մասից, որոնք իրարից սահմանազատված էին հաստ գծով:

Լիլիթ – սա սահմանն է: Ձինվորը կանգնել է սահմանի մոտ ու կրակում է... «այն կողմ»... դե Թուրքիա էլի.. այստեղ կռիվ է.. Բայց զինվորն ուժեղ է, քաջ, կրակում է անվրեպ ու պաշտպանում է մեզ:

Ավագաթերապիայի պրոցեսում մրցակցության, կովի թեմաները ավագամանի մեջ հայտնվելը խոսում են թերապիայում առաջընթացի՝ «կոնֆլիկտի փուլ» թևակոխելու մասին, որի ժամանակ երեխան արտահայտում է բացասական ապրումները, ներքին կոնֆլիկտները: Լիլիթի պարագայում այս անցումն առավել արագ կատարվեց, քան սովորաբար լինում է: Հավանաբար նաև այն պատճառով, որ այս պարագայում կոնֆլիկտը, կռիվը գերակայող թեմա էր:

Չորրորդ հանդիպման ընթացքում Լիլիթը ավագամանի մեջ ավելացրեց ռեսուրսների ակտիվացման մասին վկայող խաղալիքներ՝ բուսականություն, թռչուններ, բնական քարեր: Հանդիպման ավարտին Լիլիթի մայրը ևս նշեց, որ երեխայի վարքում նկատել է դրական փոփոխություններ. աղջիկը սկսել էր շատ հաճախ խոսել ապագայի լուսավոր հեռանկարներից, առավել հեշտությամբ էր շփվում ընտանիքի անդամների հետ, քնում էր հիմնականում հանգիստ: Այս ամենից բացի՝ Լիլիթը սկսել էր առավել հազվադեպ կակազել:

Հաստված հինգերորդ հանդիպումից:

Լ. – աղջիկն այսօր երջանկության թռչունին է երկինք թռցնելու: Նա շատ է ուրախացել:

Թ. – աղջիկն իրեն երջանիկ է զգում այդ կապակցությամբ:

Լ. – թռչունը պետք է թռչի, ամեն տեղ գնա, երջանկություն տարածի ամենուր..

Թ. – այնտեղ, որտեղ հայտնվի թռչունը, երջանկություն կլինի..

Լ. – այո... (թռչունին կանգնեցնելով ավագամանի կենտրոնում)

Ինչպես տեսնում ենք, հանդիպում առ հանդիպում երեխայի մոտ նկատվում են հոգեբանական ապաքինման միտումներ, լավատեսություն, ռեսուրսների բացահայտում, սեփական ուժերի նկատմամբ հավատ: Հինգերորդ հանդիպումից սկսած՝ ավագն աշխարհի թեմաներում արդեն բացակայում էր պատերազմը. երեխան վերապրել էր հոգետրավմատիկ իրողությունը, արտահայտել իր ապրումները և բաց թողել դրանք: Թեմաներում այլևս գերակշռում էին ընտանիքի, ընկերության, համագործակցության թեմաները, ինչը ավագաթերապիայիում կարող է խոսել ներդաշնակության, ներքին խաղաղության մասին:/

Պահպանվող դրական միտումները հնարավորություն տվեցին մտածել թերապիայի ավարտի մասին: Անհրաժեշտ էր խոսել Լիլիթի հետ այս մասին:

Հաստված վեցերորդ հանդիպումից.

Թ. – Լիլիթ, ես նկատում եմ, որ դու սկսել ես քեզ ավելի լավ զգալ, մայրիկը նույնպես նշեց այդ մասին: Ինչ կասես:

Լ. – (Գարծես չլսելով) Այսօր ավագի աշխարհում այս աղջկա ծնունդն են նշելու (ավագամանի մեջ խաղալիք տորթ է դնում, որի շուրջ հավաքվում են ֆիգուրները):

Թ. – Ահա թե ինչ: Եվ բոլորը հավաքվել են՝ միասին նշելու աղջկա տարեդարձը:

Լ. – (Գլխով դրական շարժում է անում):

Թ. – (կարճ դադարից հետո) Դու գիտես, որ մեր հանդիպումները այն նպատակով էին, որպեսզի դու քեզ ավելի լավ զգաս, ավելի ինքնավստահ լինես, հանգիստ քնես և չվախենաս միայնակ մնալ սենյակում, ավելի հեշտությամբ շփվես ընտանիքիդ հետ: Այս բոլորը կարծես արդեն նկատվում է քեզ մոտ: Ինչ կարծիքի ես, եթե երկու հանդիպում հետո ավարտենք թերապիան:

Լ. – Հիմա նոր հյուրեր կգան ավագի աշխարհ (քայլում է դեպի դարակները):

Ուշագրավ է այն երևույթը, որ վերջին նախադասությունն ասելիս Լիլիթի մոտ նորից կակազություն դրսևորվեց՝ չնայած, որ կակազության սիմպտոմները արդեն չէին դրսևորվում մոտ երկու շաբաթ շարունակ: Այս երևույթը մասնագետներին քաջ հայտնի դիմադրությունն է հոգեթերապիայի ավարտի նկատմամբ, երբ սիմպտոմների կրկնությամբ կարծես երեխան ձգտում է երկարացնել իր համար կարևոր դարձած հանդիպումները: Թերապևտը, ճանաչելով այս երևույթը, պարզապես պետք է ընդունի երեխայի զգացմունքները, բայց չխուսափի հաստատակամորեն շարժվել առաջ:

Թ. – տեսնում եմ՝ փորձում ես շրջանցել թեման: Գիտեմ, որ քեզ համար դժվար է: Գիտեմ, որ շատ սիրում ես այստեղ գալ: Բայց մեր հանդիպումները անվերջ լինել չեն կարող: Իհարկե, մենք դեռ երկու հանդիպում ևս կունենանք և դու հնարավորություն կունենաս այստեղ գալու, աշխարհ կառուցելու և գրուցելու:

Լ. – (ցածրաձայն) ես շատ եմ սիրում այս սենյակը.. ու շատ կկարոտեմ... Ձեզ..

Թ. – ես միշտ կհիշեմ քեզ, բայց չեմ տխրի, քանի որ վստահ եմ, որ դու արդեն ինքնուրույն, առանց իմ օգնության կարող ես հաղթահարել դժվարություններդ:

Լ. – (ժպտալով) Ես էլ չեմ տխրի (շարունակեց խաղալ ավագով):

Վերոնշյալ խոսակցությունից հետո կակազության դրսևորումները կրկնություն չունեցան՝ հաստատելով վերոնշյալ վարկածը:

Վերջին հանդիպման ժամանակ Լիլիթը կառուցեց «Ներդաշնակություն» անունով աշխարհ, որի անվանումը խիստ հատկանշական էր: Հրաժեշտ տալիս ասաց, որ ուրախ է, որ մենք հանդիպել ենք, և որ առաջին անգամ այս սենյակ գալը իր կյանքի ամենալավ օրերից էր:

Երկու ամիս անց՝ հեռախոսագրույցով Լիլիթի մայրը նշեց, որ երեխան, իհարկե, երբեմն հիշում է պատերազմի հետ կապված իրադարձությունները, բայց և պահպանվում են բոլոր դրական տեղաշարժերը թե՛ հուզական ոլորտում, թե՛ հարաբերությունների և թե՛ ինքնազգացողության:

Գրականության ցանկ

1. Ս. Գյումիշյան, Թ. Հարությունյան, Ս. Պետրոսյան: «Ինչպես օգնել երեխաներին՝ հաղթահարելու սթրեսային իրավիճակները»: ՀՀ ԿԳՆ, UNICEF: Երևան, 1999, 216 էջ
2. Ս. Խաչիբաբյան, «Ավազաթերապիայի զարգացման միտումները Հայաստանում»: Կանթեղ: գիտական հոդվածներ Եր.: Ասողիկ, էջ 163-169
3. Лэндрет Г.Л. Игровая терапия: искусство отношений: Пер. с англ./Предисл. А. Я. Варга. — М.: Международная педагогическая академия, 1994. — 368 с.
4. С. Хачибабян, «Особенности и роль рисования песком в развитии детского творчества»./ Современные проблемы социально-гуманитарных наук. Научно-теоретический журнал; НОЦ «Знание», 2016 стр 68-72
5. Begoyan, Arman. *An Anatomy of Psycho-trauma: Pain, Illness and Recovery* // International Journal of Psychotherapy. — 2014. — Т. 18, № 3. — С. 41-51.

Վիտյա Յարամիշյան
 Կ. Գ. թ., դոցենտ, ԱրՊՀ
 էլ. հասցե՝ vityayaramishyan@mail.ru

ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՐՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԵԿԵՐՏՎԱԾՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՂՀ-ՈՒՄ

Հոդվածում քննարկվում է 1991թ. անկախության հռչակումից հետո ԼՂՀ-ում ծնված և <<անկախության սերունդ>> պատվանունը կրող անձանց մոտ ազգային հոգեկերտվածքի ձևավորման մի քանի հոգեբանական առանձնահատկություններ: Փորձարարական հետազոտությունների արդյունքների հիման վրա առանձնացվում են սոցիալական ծագում ունեցող այն գործոնները, որոնք, հեղինակի կարծիքով, իրենց արտակարգ բնույթով շոշափելի ազդեցություն են թողնում նրանց մոտ ազգային բնավորության, ազգային գիտակցության և մտածողության ձևավորման բնականոն գործընթացի վրա:

Բանալի բառեր – ազգային հոգեկերտվածք, մենթալիտետ, հոգեկերտվածքի բաղադրիչներ, ազգային բնավորություն, խորհրդային սերունդ, անկախության սերունդ, հարցման մեթոդ, արժեքային կողմնորոշիչներ, անձի սոցիալ-հոգեբանական նկարագիր, հոգեբանական դիմագիծ (պրոֆիլ), ճգնաժամային իրադրություն:

Витя Ярамисян
 Доцент, кандидат психологических наук, АГУ

ОСОБЕННОСТИ ФОРМИРОВАНИЯ НАЦИОНАЛЬНОГО УМОНАСТРОЕНИЯ ПОКОЛЕНИЯ НЕЗАВИСИМОСТИ В НКР

В статье рассматриваются некоторые психологические особенности формирования национального психологического склада у <<поколения независимости>> - лиц, родившихся после провозглашения в 1991 году независимости НКР. На основе результатов экспериментальных исследований выделены некоторые социальные факторы, которые, по мнению автора, ввиду их чрезвычайности оказывают значительное влияние на естественный процесс формирования национального характера, национального самосознания и мышления у представителей поколения независимости.

Ключевые слова – национальный психологический склад, менталитет, компоненты психологического склада личности, национальный характер, советское поколение, поколение независимости, метод опроса, ценностные ориентиры, социально-психологический облик, психологический портрет личности, кризисная ситуация.

Vitya Yaramishyan
 PhD in Psychology, Associate Professor, ASU

FEATURES OF FORMATION OF THE NATIONAL MENTALITY IN GENERATIONS OF NK R INDEPENDENCE

The article discusses several psychological features of psychological structure of the "independence generation" - generation born in NK after declaration of independence in 1991. Experimental results point to social factors that had key impact on the natural course of the development of national character, national consciousness and national mentality.

Keywords – national psychological disposition, components of the of psychological structure, Soviet generation, national character, Independence Generation, survey method, values socio-psychological aspect, social- psychological description of a person, crisis situation.

Ապրիլյան քառօրյա պատերազմի ժամանակ Արցախի վրա կրկին դամոկլյան սրի նման կախվեց լինել-չլինելու հարցը, և աշխարհն իր հայացքը հառեց հայ զինվորին՝ տեսնելու համար, թե պատրաստ է արդյոք, նորանկախ հանրապետության նորանկախ սերունդը՝ տեղ կանգնելու ավագների նվաճումներին, կամ գուցե այլասերվել է այն աստիճան, որքան այդ մասին չարախնդում են ժամանակակից հոռետեսները, իր հոգեկերտվածքով փոխվել է, արդյոք, անկախության սերունդն այնքան, որքան փոխվել է իր արտաքին տեսքով ու հագուկապով, իր վարքային դրսևորումներով:

Անձը կամ հանրույթն իր զարգացման ընթացքում ձեռք է բերում հոգեկան հատկությունների մի համակարգ, որին անվանում են հոգեկերտվածք (6): Երբեմն այն փոխարինվում են մենթալիտետ հասկացությամբ, որով հասկանում են անհատի, սոցիալական խմբերի և ազգի դիրքորոշումների համակարգը: Ազգի հոգեկերտվածքն ազգային բնավորություն է, ազգային գիտակցություն, առանձնահատկություն, որով տվյալ էթնիկ խումբը տարբերվում է մյուսից, օրինակ՝ կովկասյան ազգը տարբերվում է սլավոնական ազգից:

Հոգեկերտվածքի կառուցվածքը բարդ է: Նրանում առաջնային նշանակություն ունեն ազգային բնավորությունը, դիրքորոշումները, ազգային ոգին և էթնոցենտրիզմը (ազգակենտրոնություն): Այն իր մեջ ներառում է գաղափարներ, հոգևոր, բարոյական և կրոնական արժեքներ, հետաքրքրություններ, մոտիվներ, ձգտումներ, սոցիալ-հոգեբանական պաշտպանական մեխանիզմներ (7): Նրա ակունքներում ընկած են մարդկային օրգանիզմի հոգեֆիզիոլոգիական

առանձնահատկությունները՝ կենտրոնական նյարդային համակարգի ռեակտիվությունը, հակազդումների արագությունը, որոնք, իրենց հերթին, կապված են բնակության միջավայրի պայմանների հետ և առաջ են բերում՝

- ազգային խառնվածք, օրինակ՝ բուռն կամ հանգիստ,
- հույզեր լավատեսություն կամ հոռետեսություն,
- զգացմունքներ՝ ազգային հպարտություն կամ ազգային ապաթիա,
- նախապաշարմունքներ՝ ազգի առաքելությունը, դերակատարությունը:

Հոգեկերտվածքի ձևավորումը պատմահոգեբանական գործընթաց է: Տարբեր բնակլիմայական պայմաններում ապրող մարդիկ աստիճանաբար ձեռք են բերում ընկալման և հակազդումների որոշակի ձևեր, որոնք ունեն հարմարվողական բնույթ: Դրանք էլ ամրապնդվում են անհատական և կոլեկտիվ վարքի որոշակի նորմերի, սոցիալապես հաստատված և ամրապնդված ձևերում:

Այս առումով թեմայի վերնագիրը կարող է որոշակի տարակուսանք հարուցել, քանի որ անկախության սերնդի քառորդարյա տարիքն ընդամենն ակնթարթ է՝ ազգային հոգեկերտվածքի լիարժեք ձևավորման համար: Մակայն այստեղ չի խոսվելու հոգեկերտվածքի ամբողջական ձևավորման մասին, այլ անդրադարձ է կատարվելու այն գործոններին, որոնք արտակարգ իրավիճակներում և իրադարձությունների հերթափոխման արագացված պայմաններում կարող են որոշակի շեշտադրում հաղորդել անձնային հոգեկերտվածքի ձևավորմանը:

Արցախի Հանրապետության հոշակումը ժամանակագրական առումով համընկավ խորհրդային կայսրության փլուզման և համայնավարական գաղափարախոսության անկման հետ¹: Հայ գիտական միտքը տարբեր առումներով անդրադարձել է այդ դեպքերի վերլուծությանը, բայց երևույթի սոցիալ-հոգեբանական կողմը համեմատաբար քիչ է ուսումնասիրվել: Օրինակ՝ անկախության սերունդն իր նախնիների ժառանգորդն է, թե՞ ունի նորահայտ գծեր, յուրացրել և ստանձնել է, արդյոք, ավագ սերնդից փոխանցված արժեքային համակարգը, թե՞ մշակել է միանգամայն նոր կողմնորոշիչներ:

Մասնագետներից ոմանք, մնալով երևույթի «մակերեսին», երբեմն պնդում են, թե անկախության հոշակումն ու հաղթական պատերազմը լիարժեք հիմք են «հաղթանակած սերնդի» «հաղթողի հոգեբանության» ձևավորման համար: Այստեղ, իհարկե, ճշմարտության մասնաբաժին կա, քանի որ խորհրդային սերնդի համար «շղթաների» հաղթահարման եզակի հնարավորությունը, իսկապես, կարող էր նպաստել ինքնավստահության և ինքնագնահատականի աճին, իսկ նոր սերնդի մոտ՝ դրանց գերակայությունը: Մակայն, մեր կարծիքով, երևույթն ունի երկու կողմ: Օրինակ, իսկ ի՞նչ հոգեվիճակներ կամ ինչպիսի՞ հույզեր ու զգացմունքներ կունենա անկախության սերնդի ներկայացուցիչը՝ անխուսափելիորեն հարաբերվելով, քաղաքարթական ժամանակակից ընկալմամբ, զարգացման ավելի բարձր աստիճան ունեցող արտերկրի իր հասակակցի հետ: Նրա մոտ, արդյոք, չէ՞ն առաջանա թերարժեքության բարդույթներ: Իսկ ինչպիսի՞ խմբային տրամադրություններ կառաջանան նոր սերնդի մոտ այն դեպքում, երբ երկրում առկա սոցիալական շերտավորումն ավելի խորանա, միջազգային ճանաչման հետ կապված սպասելիքները չարդարանան, չլուծվեն անվտանգության, սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրները և չնվազեն հարևան ռազմատենչ երկրների սպառնալիքները, ինչպես այդ եղավ ապրիլին: Այս խնդրի լուծման համար նախ փորձենք հստակեցնել, թե «հոգեկերտվածք» եզրույթը այսուհետ ինչպիսի՞ ընկալմամբ կօգտագործվի մեր դատողությունների շղթայում:

Հոգեկերտվածքի ձևավորող բաղադրիչներից մեկը *տվյալ միջավայրի մարդկանց բնորոշ համամարդկային ու սոցիալական գծերն* են, իսկ մյուսը՝ *անձնավորության անհատական հատկանիշների հավաքակազմը*: Այս հասկացությունները վերաբերում են կոնկրետ անձանց, սակայն չեն վերաբերում նշված հատկանիշների ընդհանրական բնորոշմանը, ինչն արդեն ոչ թե հոգեբանական, այլ հասարակագիտական խնդիր է: Խոսքը վերաբերում է այնպիսի երևույթներին, ինչպիսիք են ազգային ավանդույթները, նորաձևությունները, ազատությունները, տիրապետող գաղափարները, դրանց ուղղվածությունը, սոցիալ-կենցաղային բազամաթիվ հարցեր, ուստի դժվար է միանշանակ բացահայտելը, թե կոնկրետ որ երևույթներն են վճռական նշանակություն ունենում հոգեկերտվածքի ձևավորման գործում:

Հիմնախնդիրն էլ ավելի է խճճվում այն պատճառով, որ հոգեբանության մեջ շրջանառվում է նաև անձնավորության սոցիալ-հոգեբանական *նկարագիր հասկացությունը*: Այդպես է կոչվում մարդու այն ընդհանրական բնութագիրը, որը սոցիալական դիրքորոշումներից բացի, ներառում է հոգեկան հատկանիշների «ըստավորվածությունը», ինչպես նաև հնարավոր վարքը՝ սոցիալական նշանակալի պայմաններում⁽²⁾: Բացի այդ, հոգեբանական պրակտիկայում կիրառվում է նաև *անձնավորության դիմագիծ կամ պրոֆիլ հասկացությունը*, որը դիմանկարից տարբերվում է նրանով, որ քանակական, այլ ոչ թե որակական բնութագիր է: Եթե պրոֆիլը սանդղակ կամ աղյուսակ է, ապա դիմանկարը այդ սանդղակի բովանդակային մեկնաբանությունն է: Պրոֆիլի բացահայտումն ու մեկնաբանությունը կարող է մեծ նշանակություն ունենալ դիմանկարի և հոգեկերտվածքի պարզորոշման համար, որովհետև պրոֆիլը բացահայտում է անձնային հատկանիշներն ու արժեքային կողմնորոշումները, մտածելու, գործելու անհատական ոճը, ապրումները, աշխարհայացքը, համոզմունքները, նպատակները, դրդապատճառները և այլն:

Այժմ վերհիշենք, թե որո՞նք են եղել այն ձևավորող բաղադրիչները, որոնք հատուկ էին նախորդ սերունդներին. 1700 տարվա առումով՝ քրիստոնեական արժեհամակարգին, իսկ 100 տարվա կտրվածքով՝ «կոմունիզմ կառուցողի» բարոյական նկարագրին՝ ընդունելով, որ դրանք այս կամ այն չափով ամրապնդված են եղել արցախահայության կոլեկտիվ հոգեկանում: Երկու արժեհամակարգերն էլ գրեթե հավասարապես ներառել են

¹ այստեղ խոսվում է կոմունիստական գաղափարախոսության իրավական-քաղաքական անկման մասին, քանի որ ակնհայտ է, որ երբեմնի իշխող գաղափարներն արագ «չեն մահանում», այլ ընդամենը կորցնում են իրենց գերիշխող դիրքերը, իրենք մնալով կենսունակ

նվիրվածություն, բարխդություն, աշխատասիրություն, սրտացավություն, հոգատարություն, ընկերականություն, մարդասիրություն, հարգանք, ազնվություն, համեստություն, արդարամտություն, բարոյական մաքրություն, պարզություն, համերաշխություն ու սկզբունքայնություն:

Այս հատկանիշների շնորհիվ <<կոմունիզմի շինարարը>> ձեռք էր բերում միջինացված մի կերպար, ում համար անձնական շահն ու հաջողությունը ստորադաս են հանրային շահին ու բարեկեցությանը: Մի կողմ թողնելով իրականության մեջ այս գաղափարների յուրացված կամ չյուրացված լինելու վիճելի հարցը, նկատենք, որ պատերազմում տարած հաղթանակի պատճառների վերլուծության դաշտում կարծիքներ են շրջանառվում այն մասին, որ հատկապես խորհրդային սերնդի շնորհիվ է մեր ժողովուրդը հաղթանակի հասնել այն պատերազմում, որում հակառակորդը բազմաթիվ անգամ գերազանցել է սպառազինությամբ և ռեսուրսներով: Մեր տեսակետն այն է, որ այս վարկածը որոշ իմաստով կարող է ճիշտ լինել, եթե ընդունենք, որ հայությանն ավելի, քան նրա պատերազմական թշնամուն, պատմականորեն բնորոշ է օրհասական պահին ազգային գաղափարի շուրջ համախմբվելու բացառիկ ունակությունը: Սակայն խնդիրը բարդանում է նրանով, որ խորհրդային սերունդը վճռական պահին երկատվեց: Շատերը, չկարողանալով հարմարվել բարդ իրավիճակին, այլևս չպայքարեցին իրենց գաղափարների տարածման համար ու տեղի տվեցին նոր սերնդին վերապահելով անորոշության մեջ կողմնորոշվելու բեռը, ասելով. <<Եթե մեր գաղափարները մերժում եք, ուրեմն արեք այն, ինչ ուզում եք>>: <<Հայրերի սերնդի>> ինքնամեկուսացման ֆոնի վրա անկախության սերնդին պատուհասած փորձությունը հանգեցրեց նաև արժեքային-կողմնորոշիչ համակարգի անկայունությանը:

Այնուամենայնիվ, կարելի է պնդել, որ անկախության կերտման ուղին արցախահայությունը թևակոխել է այնպիսի ընդհանրացված բարոյահոգեբանական որակներով, որոնց հենասյուները երկուսն են.

1. **ավանդապահությունը**, հայրենքի ու ազգի գաղափարներով տոգորված լինելը,
2. **օրինապահությունը**, տվյալ ժամանակահատվածի գերիշխող գաղափարներով դաստիարակված լինելը:

Կարծում ենք, որ ճիշտ կլինի նոր սերնդի արժեքային համակարգը նույնպես տեսնել այս երկու հենասյուների վրա, որովհետև անկախության ակունքներում դաստիարակվել է նույն խորհրդային սերնդի կողմից: Հայ ազգին բնորոշ ավանդապաշտությունն ու օրինապահությունն այսօր էլ կասկած չեն հարուցում: Արցախում՝ հայապահպանության այս կղզյակում, այժմ էլ պահպանվել են պատիվ, խիղճ, ավանդույթ հասկացությունները: Արցախցին ամուր կառչել է իր բաժին հողակտորին: Արցախահայ պատանին այնքան չի <<եվրոպականացել>>, որքան, այլ տարածաշրջանի իր հասակակիցը: Երևույթի ամրապնդմանը նպաստել են նաև Արցախի կտրվածությունը քաղաքակրթական կենտրոններից, մոնոթեոսիկ բնույթը (այստեղ հայերի քանակը գրեթե 100 տոկոս է), հեռու լինելը՝ տարատեսակ ազդեցություններից, ապազգային <<ժողովրդավարության խրախուսման, մարդասիրական, իրավապաշտպան, ազատության աջակցության>> և նմանատիպ ծրագրերի ներդրման նվազ ծավալները:

Անկախության սերնդին վերաբերող այս թեզի առաջադրմանը նպաստել են նաև նախկինում՝ 2004-2005 և 2008 թ.թ.-ին մեր կողմից ՊԲ զորամասերում անց կացված հարցումները ⁽³⁾: Բանակում կենտրոնացված է մեծ թվով երիտասարդություն: Նրանց առաջադրված հարցերը պրոյեկտիվ ձևով պետք է բացահայտեին նրանց իսկ արժեքային կողմնորոշումները, մասնավորապես՝ վերաբերմունքը անկախության ու պետականության նկատմամբ: Օրինակ, <<Առաջին հերթին ի՞նչն է հարկավոր գենքով պաշտպանել>> կամ <<Ըստ կարևորության դասավորեք հետևյալ հասկացությունները՝ Հայրենիք, Անկախություն, Պետություն, Հավատ, Պատիվ, Ծնողներ /ընտանիք/, Ընկերներ>>:

աղյուսակ 1

2004-2005 թ.թ. 18-20 տարեկան տղաների հարցման արդյունքները

Հարցադրում	Պատասխանի տարբերակ	2004/1	2004/2	2005/1	2005/2
		հարցվածների քանակը	1294	3492	3318
Բառերը համարակալեք ըստ կարևորության	հավատ	11.1	9,9	14.4	10.3
	պատիվ	14.8	12,1	6.0	4.8
	հայրենիք	18.3	11,1	19.2	22.0
	անկախություն	9.7	9,2	1.6	4.4
	ծնողներ, ընտանիք	34.5	14,3	33.2	51.6
	ընկերներ, շրջապատ	5	11,8	-	-
	պետություն	5.3	11,5	20.4	22.5

աղյուսակ 2

2004-2005 թ.թ. 18-20 տարեկան տղաների հարցման արդյունքները

Ի՞նչն է խանգարում հայրենասիրությանը	ընտանիքի դաստ-նը	1251	9,5	1074	10.3	177	6,6
	ընկերական շրջապատը	343	2,6	286	2.7	57	2,1
	երկրի սոցիալական վիճակը	10135	77,1	8055	77.1	2080	78
	բանակում տիրող վիճակը	1197	9,1	962	9.2	235	8,7

Արդյունքներից երևում է, որ զինվոր-պատանիների կեսից ավելին առաջնությունը տալիս է <<ծնողներին, ընտանիքին>>: <<Հայրենիքն>> ու <<Պետությունը>> երկրորդ և երրորդ տեղում են՝ մոտ 22%: Եթե <<Հավատը>>

ընտրել էր յուրաքանչյուր տասներորդը, և այդ ցուցանիշը տարիներով չի փոխվել, ապա «Պատիվ» և «Անկախություն» հասկացությունները անկում են ապրել՝ չորս տարիների ընթացքում 15%-ից իջնելով մինչև 5%: Կարծում ենք, որ այս հաշվարկները կարող են օգնել՝ անկախության սերնդի արժեհամակարգը ճիշտ հասկանալու առումով: Օրինակ, կարելի է եզրակացնել, որ անկախությունը շատ ավելի «քաղցր է եղել» նրա ձեռքբերման նախնական փուլերում՝ անցած դարի 90-ական թվականների վերջին և 2000-ական թվականների սկզբին, քանի որ այդ ժամանակ մեծ էին ոգևորությունը և լավագույն ապագայի սպասելիքները: Տարեցտարի, սակայն, բախվելով տարաբնույթ դժվարությունների և իրենց լուծմանը սպասող սոցիալական խնդիրների, այդ ոգևորությունը նվազել է, առաջ են եկել հիասթափության, չարդարացված հույսերի ու սպասումների հոգեվիճակներ (աղյուսակ 1):

Կարելի է նաև եզրակացնել՝ անկախության սերնդին հայրենասիրության պակասի մեջ մեղադրելը զուրկ է որևէ հիմքից, քանի որ երիտասարդությունն ավելի ու ավելի ըմբռնումով է վերաբերվում պետականության ու հայրենիքի գաղափարներին (աղյուսակ 2): Կարող ենք նաև պնդել, որ շուկայական հարաբերությունները, սոցիալական բևեռացումները, արժեհամակարգային վերադասավորումները հանգեցրել են անկախության սերնդի հոգեկերտվածքի ձևավորման վրա ազդող գործոնների վերադասավորմանը:

Սակայն, չնոռանանք ամենակարևորը՝ ազգի և նրա առանձին ներկայացուցչի բնավորության իրական գծերը, շատ դեպքերում լինելով թաքուն կամ արտամղված, պրոբլեմային իրադրություններում սկսում են ինքնաբերաբար բացահայտվել և վարքային դրսևորում ունենալ: Միշտ չէ, որ մարդ գիտակցում է իր վարքագծի իրական դրդապատճառները: Դրանք հաճախ կարող են լատենտ բնույթ կրել, ենթագիտակցական մակարդակում լինել: Դա հատկապես արտահայտվում է կոնֆլիկտային և ճգնաժամային իրադրություններում: Այս առումով ավելի տիպական օրինակ, քան ապրիլյան պատերազմն է, դժվար է գտնել: Այդ օրհասական պահին Արցախի երիտասարդ սերունդը հանկարծակի հայտնվեց անորոշության դեմ պայքարի հորձանուտում: Բնական է ենթադրել, որ կշռադատված որոշումներ կայացնելու համար ժամանակ չկար և մարդիկ առաջնորդվել են այն ներքին մղումներով ու կայուն դիրքորոշումներով, որոնք ընկած են հոգեկերտվածքի հիմքում: Պետք է արձանագրենք. ամենալավատեսական սպասումներն անգամ բազմակի գերազանցվել են: Անկախության սերունդն անվարան նետվեց ռազմաճակատ: Արցախի պետական համալսարանում տղա ուսանող գրեթե չմնաց՝ բոլորը մեկնեցին: Նրանք կոչվում էին քաջաբար, նրանցից երեքը համալրեցին նահատակված ուսանող-ազատամարտիկների ցուցակը, տասնյակներն արժանացան պետական ու կառավարական պարգևների: Տղաներից բնավ հետ չմնացին աղջիկները, ովքեր զանգվածաբար ներգրավվեցին ռազմաճակատի աջակցության ու ապահովման կամավորական շարժման մեջ: 30-40 հոգանոց խմբերը տասնօրյակներ շարունակ աշխատանքներ էին կատարում պարենային և իրային պահեստներում՝ բաշխելով մթերքը, հագուստը, հանգանակված իրերը: Այսպիսի վարքագիծը վկայում է, որ անկախության սերունդն իր հոգեկերտվածքով մնացել է ազգային բնավորության, ազգային մտածողության ու ավանդույթների արժանի կրողն ու շարունակողը:

Այսպիսով, ազգային հոգեկերտվածքի ձևավորման ու դրսևորման վրա զգալի ազդեցություն են գործում տվյալ ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական կյանքի արտակարգ և ճգնաժամային իրավիճակները: Անկախության սերունդն իր վարքագծով վերահաստատում է ավանդապաշտության, օրինապահության, հայրենասիրության ու օրհասական ժամին միասնական գաղափարի շուրջ համախմբվելու մեր ազգի բացառիկ ունակությունը: Սոցիալ-տնտեսական ու սոցիալ-քաղաքական բարդ գործոնների ազդեցությամբ հանդերձ, անկախության սերունդն իր հավաքական հոգեկանում կրում է ազգային բնավորության ու մտածողության այն կարևորագույն գծերը, որոնք պատմականորեն առանձնացել են որպես հային բնորոշ էթնոհոգեբանական առանձնահատկություններ:

Գրականություն

1. Արզումանյան Ա, Սկրտչյան Ս, Սարգսյան Վ., Կիրառական հոգեբանության պրակտիկում: Եր., Զանգակ, 2002թ., 392 էջ
2. Ա.Նալչաջյան, Հոգեբանական բառարան, Երևան, Լույս, 1984թ., էջ 134
3. Վ.Բ.Յարամիջյան, «Զինվորական ծառայությանը նորակոչիկների սոցիալ-հոգեբանական հարմարման դժվարությունները և դրանց հաղթահարման ուղիները», հ.գ.թ. հայցման ատենախոսություն, 2009թ., ՀՊՄՀ գրադարան,
4. Антипин Н. А. Философия морали и парадоксы современного российского общества / Под ред. проф. В. В. Варавы, доц. И. О. Надточий, доц. Н. А. Панова, 2-е изд., М.: 480 с.
5. Н.И. КОНЮХОВ Прикладные аспекты современной психологии: термины, законы, концепции, методы, Москва - 1992 г.
6. https://hy.wikipedia.org/wiki/Ազգային_բնավորություն
7. https://ru.wikipedia.org/wiki/Национальный_характер
8. https://ru.wikipedia.org/wiki/Психологический_портрет_личности

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՓԱԿՎԵԼՈՒՑ ՄԻՆՁԻ ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԻՄՆՈՒՄ

Հողվածը հիմնականում ունի փաստագրական բնույթ, որտեղ տրված է, թե ինչպես Ադրբեջանը, խախտելով միջազգային և նախկին Խորհրդային Միության գործող կրթական իրավաբանական նորմերը, Ղարաբաղի ժողովրդի և ամբողջ հայության կամքին հակառակ, իրականացրեց իր խայտառակ սև գործը՝ ժամանակավորապես փակելով Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը՝ ղարաբաղցիներին զրկելով տեղում բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունից:

Այդ բուհի ուսանողները համապատասխան մարմինների որոշմամբ և համաձայնությամբ տեղափոխվում են Կիրովական և ուսումը շարունակում Հովհաննես Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում այժմ՝ Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան պետական համալսարան: Նորմալ ուսումնական գործընթացը ընդհատվեց Սպիտակի աղետալի երկրաշարժի հետևանքով:

Դիվանագիտական յուրահատուկ հնարքների, ծանր աշխատանքի շնորհիվ և օգտվելով Ն. Ռիժկովի միջամտությունից՝ հնարավոր է լինում կոտրել Ն. Վոլսկու ամուր կամքը և Ստեփանակերտում բացել բաժանմունք, որի ղեկավար է ընտրվում Ա. Բադասարյանը: Նա ղեկավարում է 1988-1992թթ: 1992թ-ի հոկտեմբերին ՎՊՄԻ-ի և ՀՊՀՀ-ի մասնաձյուղերի հիման վրա ստեղծվում է Արցախի համալսարանը, որը շարունակում է իր կայուն գործընթացը մինչև օրս: Անգնահատելի է ՎՊՄԻ-ի ղեկավարության և կոլեկտիվի բանիմաց ու ազգանվեր աշխատանքը Արցախում 1988-1992թթ. բարձրագույն կրթության վերաբացման և ամրապնդման ուղղությամբ, որը ժամանակին չգնահատվեց:

Առանցքային բառեր՝ Արցախ, բարձրագույն կրթություն, բաժանմունք, ուսանողություն, Վանաձորի մանկավարժական ինստիտուտ, փաստագրություն

Рафик Едоян МО и Н. ВГУ

ЗАДАЧИ ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ ПОСЛЕ ЗАКРЫТИЯ СТЕПАНАКЕРТСКОГО ПЕДАГОГИЧЕСКОГО ИНСТИТУТА ДО ОСНОВАНИЯ АРЦАХСКОГО УНИВЕРСИТЕТА

Статья в основном имеет документальный характер. В ней говорится о нарушениях Азербайджаном международных и постсоветских юридических норм образования против воли народа Карабаха и Армении. Это проявилось, когда временно был закрыт Степанакертский государственный педагогический институт, лишив молодежь получить высшее образование на месте. Решением соответствующих органов, студенты данного вуза продолжили обучение в Кироваканском государственном педагогическом институте / ныне – Ванадзорский государственный университет/.

Нормальный учебный процесс был прерван разрушительным спитакским землетрясением.

Используя посредничество Н.Рыжкова и дипломатические приемы, стало возможным сломить сопротивление Н. Вольского и открыть отделение в Степанакерте. Проректором Степанакертского филиала был избран А. Багдасарян, который возглавил его с 1988- 1992 гг. В октябре 1992 года на основе филиала КГПИ и АГАУ был основан Арцахский университет, который продолжает свою деятельность до сегодняшнего дня.

Бесценен патриотический труд руководства и коллектива ВГУ с 1988-1992 гг. в восстановлении и укреплении высшего образования в Арцахе, который вовремя не был по достоинству оценен.

Ключевые слова- Арцах, высшее образование, деление, студенчество, Ванадзорский педагогический институт, фактография.

Rafik Edoyan, VSU, MINISTRY OF SCIENCE AND EDUCATION

THE UNIVERSITY PROBLEMS FROM THE CLOSURE OF STEPANAKERT PEDAGOGICAL UNIVERSITY OF ARTCAKH UNIVERSITY ESTABLISHMENT

The present article is mainly documentary. It presents the situation reviewing how Azerbaijan realized its evil deed, i.e. temporarily closing the Pedagogical Institute of Stepanakert depriving the people of receiving university education in their home country. It was all by breaking international and the post-soviet educational legal norms quite opposing to the nation of Nagorni Karabakh and all Armenians' will.

According to the decision and agreement of corresponding governing bodies, the students of that institution had to move to Vanadzor and continue their education at Vanadzor State Pedagogical Institute after Hovhannes Toumanyanyan (at present – Vanadzor State University after Hovhannes Toumanyanyan).

The norman educational process was unfortunately disorganized because of the disasterous earthquake of Spitak.

With a help of special diplomatic means as well as making use of N. Rzhkov's support it was possible to break A. Volsky's stubbornness and open a university branch in Stepanakert. Overcoming some difficulty, the staff conducted a general meeting and A. Baghdasaryan was elected a vice rector of Stepanakert section which he directed from 1988 to 1992. In October, 1992 the University of Artcakh was established on the base of Vanadzor State Pedagogical Institute and Armenian State Engineering University which is continuing its steady teaching process till now. The VSPI governing body's and staff's competent and patriotic activity is really invaluable in reopening and strengthening of university education in 1988-1992 in Artcakh which wasn't appraised at its true worth its time.

Key words- Artsakh, higher education, departement, student life, Vanadzor Pedagogical Institute, Factography

Բոլորի հիշողության մեջ երկար կմնան Արցախի հերոսական շարժումը և նրա հետևանքները: Հայ ժողովուրդը դրսևորեց իր միասնությունը, կայուն կամքն ու համատեղությունը և արժանապատվությունը: Դրա արդյունքում ձեռք բերեցինք անկախություն, որի փառավոր 25 –ամյակը նշում ենք ոչ միայն մենք (Հայաստանը և Արցախը), այլ նաև աշխարհի հայությունը և առաջադեմ մարդկությունը (3):

Մինչև անկախության հռչակումը Ղարաբաղը ապրեց ծանր ժամանակներ: Այդ ընթացքում Արցախը հայտնվեց այնպիսի իրավիճակում, որը ավելի միավորեց հայ ժողովրդին՝ քաջ գիտակցելու Ղարաբաղի հարցի ճիշտ լուծման նշանակությունը: Այն կարևորվում է նաև այսօր:

Քաղաքական հորդորների հետ միասին անհրաժեշտ էր Արցախում զարգացնել կրթությունը, արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը, բարելավել ժողովրդի սոցիալական վիճակը՝ ստեղծելով ժողովրդավարական ինքնուրույն հանրապետություն:

Զգտնելով հարցերի լուծման իրեն ձեռնտու այլ տարբերակ, չտիրապետելով իրավիճակին՝ Ադրբեջանի կառավարությունը դիմեց հեռահար ու խորամանկ քայլերի. նա նախկին Խորհրդային Միությանը, գիտության և կրթության կոմիտեին ու կառավարությանը ներկայացրեց իր ստոր որոշումը՝ փակել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը՝ բարձրագույն կրթության միակ օջախը Ղարաբաղում: Այն պաշտպանեցին ծախված Ղարաբաղի որոշ պաշտոնյաներ՝ ստեղծված ծանր իրավիճակում իրենց պաշտոնը պահելու, նույնիսկ առաջ գնալու համար: Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի փակելը ամենաձանձուր հարվածն էր դարաբաղցիներին: Այդ անմարդկային քայլով Ադրբեջանը ձգտում էր վերացնել բարձրագույն կրթության գոյությունը և հետևաբար գիտական մտքի զարգացումը Ղարաբաղում՝ կատարելով ժամանակի ամենամեծ ոճրագործությունը:

Անգնահատելի էր Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի դերը դարաբաղյան շարժման գործընթացում (1, 2, 3), որտեղ ծնվում էին անվտանգության հարցերի լուծման նոր գաղափարներ, և դրանք ստանում էին տեսական ու գործնական ստեղծագործական զարգացում: Բնչպես ադրբեջանցիները, այնպես էլ աշխարհը գիտեր, որ դարաբաղցին առանց բարձրագույն կրթության գոյատևել չի կարող: Ցանկանում էմ մանրամասնել այս գործընթացը, որի բովանդակությունը և իրականացումը ունի փաստագրական նշանակություն, և կարևոր էմ համարում նրա տեղեկատվական խնդիրը, որովհետև շատերը տեղյակ չեն առանձին գործընթացներին և բարձրագույն կրթության վերականգնման մանրամասներին: Այդ առումով նպատակահարմար էմ համարում արցախցիներին ներկայացնել մարդկանց, ովքեր նպաստել են և օգնել բարձրագույն կրթության զարգացմանը Արցախում:

Բոլոր ժամանակներում և հատկապես այսօր մարդկանց գիտելիքները համարվել են որպես հասարակության և մարդկության բազմատարր զարգացումը ապահովող անփոխարինելի միջոց և սովյալ երկրի հզորացման կարևոր խթան: Այն կարող է իր քաղաքացիներին տրամադրել նաև անհաղթահարելի թվացող դժվարություններ հաղթահարելու պրակտիկ կարողություններ: Այսօր արդեն իրատեսական է, որ մենք ձևավորում ենք գիտելիքների և գիտության վրա հիմնված հասարակություն: Անժխտելի փաստ է, որ կրթությունը և գիտությունը ապահովում են նաև սովյալ երկրի տնտեսական ինտենսիվ զարգացումը, հատկապես էթե այն արժեքավորենք այսօրվա շուկայական հարաբերությունների կտրվածքով:

Կրթությունը և գիտությունը, հանդիսանալով տնտեսության զարգացման հիմք, հնարավորություն են ստեղծում արձագանքել շուկայի պահանջներին, երևույթներն ընկալել ավելի արագ և կողմնորոշվել անսխալ ու ճիշտ: Այս առումով Արցախում պետք է զարգացնել գիտության այնպիսի ճյուղեր, որոնցով հնարավոր լինի հնարավորինս արդյունավետ և ռացիոնալ օգտագործել մարդկային և բնական ռեսուրսները:

Կրթության հիմնական նպատակն է ունենալ կրթված հասարակություն, ինչը աշխարհի շատ երկրներում ձևավորվում է մարդկային ռեսուրսների ուսումնասիրությամբ, լավագույնների հայտնաբերմամբ և վերջիններիս արդյունավետ օգտագործմամբ: Դրանցից որևէ մեկի անհամաչափ զարգացումը ազդում է կրթության որակի և վերջնական արդյունքի վրա: Այս հարցում կարևորվում են տնտեսական, քաղաքական, բարոյական, ազգային ավանդական մի շարք նորմեր, որոնք ընդհանուր ձևով արժևորում են կրթության դրվածքը և նույնիսկ գիտության

գարգացման մակարդակը, իսկ դարաբաղցին, ինչպես նաև յուրաքանչյուր հայ մարդ, միշտ սեր է ունեցել կրթության և գիտության հանդեպ, որը պայմանավորված է հայ մարդու բնույթով և ինտելեկտով:

Կրթության և գիտության զարգացումը ավելի կարևոր դեր ունի կայուն, միատարր, ժողովրդավար երկրների համար, որոնք ձեռք են բերել անկախություն, ինչպիսին Արցախն է: Բնականաբար, այս բոլորի հիմքում ունենում ենք բարեկեցիկ ապրելակերպ, սոցիալ-տնտեսական բարոյաքաղաքական, հոգեբանական կայուն վիճակ:

Այս առումով կարևորվում է Արցախի ժողովրդի իրազեկումը բարձրագույն կրթության խնդիրներին և նրանց լուծմանը 1988-1992թթ. Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի փակվելուց մինչև Արցախի համալսարանի ստեղծումը:

Միաժամանակ նպատակահարմար եմ համարում փաստել, որ դարաբաղցին, աշխատելով Ադրբեջանի ճնշման տակ, միշտ փայլել է իր պայծառ մտքով, կողմնորոշվելու և պահը գնահատելու կարողությամբ, գիտության դերը ըմբռնելով, որի հաստատումն են դարաբաղցի գիտնականները. նրանց անունները նպատակահարմար չեմ գտնում թվարկել՝ համարելով այն առանձին հարց: Չկա գիտության մի բնագավառ, ուր առկա չլինի դարաբաղցի գիտնականների ծառայությունը. նրանք աշխատում են նաև այսօր և ստեղծագործում են աշխարհի տարբեր երկրներում (դրանցից շատերի հետ շփվել է տողերիս հեղինակը):

Նախկին Խորհրդային Միության տոտալիտար ռեժիմով աշխատող ադրբեջանցի շատ ղեկավարներ հաշվի չէին նստում այս փաստերի հետ և շարունակում էին Արցախում արմատավորել ադրբեջանամետ հոգեբանություն՝ միաժամանակ վարելով Ղարաբաղը հայաթափ անելու անմարդկային ծրագիրը:

Նշված իրավիճակում ծնված դարաբաղյան շարժման արմատները գալիս էին հնուց: Շարժման մեջ մեծ դեր խաղաց Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը իր ողջ կոլեկտիվով: Շարժմանը միացավ աշխարհի հայությունը: Այդ ընթացքում արցախցիները կենաց ու մահու գոտեմարտում մաքառում էին պահպանելու իրենց տեսակը, և ամեն կերպ նպաստում էին արցախահայերի մշակութալուսավորական խնդիրների լուծմանը, նրա ազգապահպանման սուրբ գործին: Ադրբեջանը, քաջ գիտակցելով Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի մեծ դերը, Ղարաբաղը գլխատելու համար սկսեց աշխատանք տանել այն փակելու ուղղությամբ: Տարբեր բնույթի ճնշումների, որոշ ղեկավարների անհեռատեսության և պաշտոնամոլության արդյունքում Ղարաբաղի մարզային կոմիտեն որոշում ընդունեց ժամանակավորապես փակել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը՝ հիմնավորելով, որ ստեղծված իրավիճակում նույն ուսումնական հաստատությունում, միևնույն հարկի տակ հայկական ու ադրբեջանական բաժինների գործունեությունը անհնար է, և այդ որոշումը ուղարկվեց Ադրբեջանի և Ռուսաստանի կառավարություններին:

Հաշվի չառնվեց նաև Ղարաբաղի ժողովրդի և աշխարհի հայության ցանկությունը և խնդրանքը, զայրույթն ու դժգոհությունը, նստացույցերը:

Մանկավարժական ինստիտուտը փակելու որոշում ընդունեց Ադրբեջանի կառավարությունը և այն ուղարկեց ԽՍՀՄ կառավարություն:

ԽՍՀՄ նախարարների խորհուրդը 1988թ. հոկտեմբերի 4-ին ընդունեց Ղարաբաղի բարձրագույն կրթության և ժողովրդի համար ճակատագրական նշանակություն ունեցող թ. 1218 անհարիր որոշումը (4). «Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի մարզային կուսկոմիտեի և գորշադիր մարմնի առաջարկությունը և Ադրբեջանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի, ԽՍՀՄ ժողկրթության պետական կոմիտեի համաձայնությունը՝ ժամանակավորապես փակել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը»:

Հանձնարարվեց Ադրբեջանի և Հայաստանի բարձրագույն կրթության նախարարներին և ԽՍՀՄ կրթության պետկոմին համագործակցել ինստիտուտի աշխատակիցներին աշխատանքի տեղավորման, ինչպես նաև ուսանողների ուսումնական շարունակելու հարցում :Այդ որոշումը իրականացնելու համար ԽՍՀՄ կրթության պետական կոմիտեն 1988թ հոկտեմբերի 18-ին ընդունեց թիվ 382 որոշումը (5), որով 2 հանրապետությունների կրթության նախարարներին պարտադրվում էր իրականացնել հանձնման և ընդունման ամբողջ գործընթացը, ընդ որում՝ 382 որոշման 2-1 կետով ինստիտուտի ուսանողությունը և դասախոսական կազմը պետք է տեղափոխվելին Կիրովաբադ, Երևան , Գյումրի և Կիրովական / Վանաձոր/:

Նման հրամանների և որոշումների դեմ ինստիտուտի կոլեկտիվի և ժողովրդի բողոքները, ընդվզումները, միտինգները և նստացույցերը ոչ մի դրական արդյունք չտվեցին: Փաստորեն Ադրբեջանը հասավ իր վերջնական ստորացուցիչ նպատակին: Կոլեկտիվի անդամներին աշխատանքի տեղավորելու և ուսանողների ուսուցման խնդիրը դարձավ հրատապ:

Ինստիտուտի կոլեկտիվը որոշեց պրոֆեսորադասախոսական անձնակազմը առկա և հեռակա ուսանողներով տեղափոխվել Կիրովական: Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի կոլեկտիվի այս որոշումը պատահական չէր: Վանաձորի և Ստեփանակերտի բուհերի միջև ստեղծվել էին սերտ բարեկամական հարաբերություններ, և Արցախի ժողովուրդը վստահում և հավատում էր վանաձորցիներին՝ մանկավարժականի կոլեկտիվին: Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտը մեծ հարգանք և հեղինակություն էր վայելում Ղարաբաղում, որտեղից մենք ունեինք բավականին թվով ուսանողներ:

Այդ ժամանակ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը ուսուցիչներ էր պատրաստում՝ հայոց լեզու և գրականություն, մաթեմատիկա և ֆիզիկա, պատմություն, տարրական կրթության, մանկավարժություն և մեթոդիկա,

ռուսաց լեզու, ընդհանուր տեխնիկական առարկաներ և աշխատանք մասնագիտությունների գծով: Բարձր կազմակերպվածությամբ, նախարարության, տեղական կուսակցական և գործադիր մարմինների աջակցությամբ՝ աղ ու հացով, երգ ու պարով դիմավորեցինք մեր գործընկերներին: Ամեն ինչ արվեց, որ պահպանվի ինստիտուտի բարձր վարկանիշը:

Կարիքավորներին տեղավորեցինք հանրակացարաններում, ձեռք բերեցինք հանրակացարանային գույք. ցանկանում եմ փաստել Կիրովականի կահույքի ֆաբրիկայի տնօրենի՝ Լ. Մելիքյանի անուրանալի աշխատանքը: Շատ կարճ ժամանակում նա պատրաստեց 400 ուսանողների հանրակացարանային գույքը:

Սկսեցինք ուսումնական գործընթացը: Ստեփանակերտի դասախոսների հիմնական մասը վերադարձավ Ստեփանակերտ, որտեղ զգացվում էր նրանց կարիքը: Այդ ընթացքում Կիրովականի ինստիտուտի դասախոսները աշխատեցին եռակի ծանրաբեռնվածությամբ: Ստեփանակերտի կոլեկտիվի բոլոր անդամների համար պահպանվեց նրանց աշխատավարձը: Առանձին դասախոսներ ընդհանրապես չէկան Վանաձոր, բայց ամբողջությամբ ստացան իրենց աշխատավարձը:

Ուշադրության է արժանի այն փաստը, որ այդ ընթացքում որոշ քաղաքական ուժեր փորձեցին մեղադրել տողերիս հեղինակին այն բանի համար, որ իբր ռեկտորի ղեկավարությամբ կոլեկտիվը դավաճան է, քանի որ ընդունելով Ստեփանակերտի մանկավարժականի կոլեկտիվին՝ դրանով դատարկում ենք Ղարաբաղը: Այդ մեղադրանքը հիմնավորում էին նրանով, որ Ադրբեջանը կհարձակվի Ստեփանակերտի վրա և կգրավի Ղարաբաղը, որովհետև նրանց դեմ կովողներ չեն ունենա: Այս թեմայով հանդիպեցի ՀՀ ղեկավարության հետ, սակայն չկարողացա փոխել նրանց կարծիքը: Մյուս տեղում (Վանաձորում) հակահարված տվեցին հենց Ղարաբաղի ուսանողները իրենց բողոքի ցույցով: Նրանք բարձր էին գնահատում ինստիտուտի ղեկավարության և կոլեկտիվի ջանքերը: Դա պայմանավորված էր նրանով, որ առկա ուսուցման 400 ուսանողների համար ամենակարճ ժամկետում լուծվեցին նրանց հուզող ուսումնական գույքի, գրականության, սննդի հարցերը՝ հաղթահարելով ֆինանսական, նյութական, կազմակերպչական, քաղաքական բնույթի դժվարությունները: Ուշագրավ էր Ռ. Եդոյանի հանդիպումը ՀՀ ղեկավարներից Աշոտ Մանուչարյանի հետ: Բոլոր հարցերը լուծվեցին հոգուտ Ստեփանակերտի ուսանողների, ամբողջովեց կայուն և արդյունավետ ուսումնական գործընթաց:

Սակայն ամեն ինչ փոխվեց Սպիտակի աղետալի երկրաշարժից հետո: Փլվեց ինստիտուտի հանրակացարանը, ուսումնական մասնաշենքերը վթարայնության հետտևանքով դարձան անօգտագործելի, ինստիտուտը հայտնվեց անելանելի իրավիճակում, առաջ եկան անհաղթահարելի դժվարություններ՝ կապված շենքային պայմանների հետ: Տեղում ուսումնական գործընթաց շարունակելը դարձավ անհնար: Ավելորդ էմ համարում անդրադառնալ աղետալի երկրաշարժի պատճառած ավերածություններին և աննկարագրելի ծանր հետևանքներին:

Բնականաբար Ղարաբաղի ուսանողությունը պետք է շարունակեր ուսումնառությունը Հայաստանի որևէ բուհում, սակայն ստեղծված ծանր իրավիճակում Հայաստանի որևէ բուհ չէր կարող ընդունել հեռակա և առկա ուսուցման շուրջ 1000 ուսանողներին:

Երկրաշարժի պայմաններում (որոնողական և փրկարարական աշխատանքներ, ժամանակավոր կացարանների ստեղծում և շատ հարցեր) հանրապետության և ինստիտուտի ղեկավարությունը չորս ամիս շարունակ ձեռնամուխ եղավ Ստեփանակերտում բարձրագույն կրթությունը վերսկսելուն: Այն պահանջեց ահռելի ջանքեր և ծանր աշխատանք: Հանրապետության և քաղաքի կուսակցական և գործադիր մարմինների ղեկավարությունը, հաշվի առնելով աղետալի երկրաշարժի հոգսերը, ստեղծված ծանր վիճակը, բազմաբնույթ անհապաղ լուծումներ պահանջող խնդիրները, տողերիս հեղինակին տվեց վերը նշված հարցի լուծումը տալու համապատասխան լիազորություններ:

Հանձնարարությունը կատարելու համար եղա Ստեփանակերտում և այցելեցի ժամանակավոր կառավարության ղեկավար Մ. Վոլսկուն: Նրան ներկայացրի խնդիրները և դրանց լուծման ուղիները: Նա սիրով լսեց, սակայն Ստեփանակերտում բաժանմունք ստեղծելը և ուսանողներին այնտեղ տեղափոխելը կտրականապես մերժեց: Ղարաբաղի ժամանակավոր կառավարության վրա բարոյական ճնշում գործադրելու համար Ստեփանակերտ այցելեցին նախարար Լ. Ղարաբեջանյանը և տեղակալ Է.Ղազարյանը: Ն. Վոլսկուն առաջարկեցինք Ստեփանակերտ տեղափոխել նաև մեր ինստիտուտի ուսանողությանը, որովհետև ուրիշ ելք չկար: Դա ևս մերժվեց: Ղարաբաղի ուսանողությունը Ստեփանակերտ տեղափոխվելու և ուսումնական գործընթացը վերսկսելու հանգամանքը մնաց անլուծելի: Հարցը չլուծելը, քաղաքական և սոցիալական տարբեր բնույթի պատճառներից բացի, Ն. Վոլսկին հիմնավորում էր նրանով, որ Ստեփանակերտում բարձրագույն կրթության բաժանմունք բացելու համար պետք է Ադրբեջանի և ԽՍՀՄ կառավարությունների համաձայնությունը և որոշումը, որը անհնար էր:

Ն. Վոլսկուն հերթական այցելության ժամանակ առաջարկեցի, որ Ստեփանակերտում բացենք ոչ թե բաժանմունք, այլ խորհրդատվական կենտրոն՝ հիմնավորելով, որ մենք նման կենտրոններ ունենք Վրաստանում՝ Ախալքալաք, Սուխումի, որտեղ կազմակերպում ենք կոնսուլտացիաներ, ուսանողներին տրամադրում գրականություն, օգնում ստուգողական աշխատանքները ժամանակին և որակով ներկայացնելու համար: Այդ խորհրդատվական կենտրոնի բացման համար կառավարության որոշում օրենքով չէր պահանջվում, բոլոր աշխատողներին վարձատրում էր մեր ինստիտուտը: Սա արժանացավ Ն. Վոլսկու հավանությանը, բայց նորից մերժեց:

Ստեղծված իրավիճակից դուրս գալու խնդիրը ավելի դժվարացավ: Այդ ընթացքում ինստիտուտ այցելեցին ԽՄՀՄ բարձրագույն կրթության նախարարի տեղակալ Վ.Տերեչչենկոն, ապա նախարար Գ. Յագուդինը, որոնք բավականին լավ էին տրամադրված: Նրանք ակնառես եղան ինստիտուտում ժամանակավոր տնակների կառուցմանը: Կոլեկտիվի անդամներից շատերը՝ Ռ. Հովակիմյանը, Ա. Սահակյանը, Կ. Թորոսյանը, Ռ. Սահակյանը, Հ. Շեկոյանը, Ս. Ժամհարյանը, Գ. Մինասյանը, Պ. Գևորգյանը բանվորի աշխատանք էին կատարում:

Այդ ընթացքում Վանաձոր էր այցելելու Ն. Ռիժկովը, և որոշեցի անպայման դիմել նրա օգնությանը: Երկաթուղային կայարանում Ն. Ռիժկովին դիմավորելուն մասնակցեցի նաև ես, և հենց կայարանում մեծ դժվարությամբ հաջողվեց ստանալ նրա համաձայնությունը՝ ինձ ընդունելու համար:

Նույն օրը Կիրովականի քաղկոմում Ն.Ռիժկովին մանրամասն զեկուցեցի իրավիճակի մասին՝ ներկայացնելով խնդիրների լուծման անհրաժեշտ քայլերը: Միրով լսեց ինձ և հանձնարարեց այցելել Ն.Վոլսկուն և իր անունից խնդրել անպայման լուծել խնդիրը: Ն.Ռիժկովի հետ հանդիպումը տևեց մեկ ժամից ավելին: Շնորհակալություն հայտնեցի նրան և ոգևորված մեկնեցի Ստեփանակերտ: Հերթական անգամ եղա Ն.Վոլսկու մոտ: Նրան իրազեկեցի Ն.Ռիժկովի հետ հանդիպման արդյունքները և հանձնարարականները: Ն.Վոլսկին, չթաքցնելով իր բացասական կարծիքը, նորից պնդեց, որ հայը և ադրբեջանցին այսօր միասին չեն կարող սովորել, բայց եթե ինստիտուտ բացենք պետք է ունենա ադրբեջանական բաժին: Ընտրելով ճիշտ տակտիկական քայլ՝ ես համաձայնեցի: Նա մի շարք ընկերների ներկայությամբ մեղադրեց ինձ, որ ես իրավիճակին չեմ տիրապետում, որ այդ պայմաններում իրոք անհնար է ուսումնական համատեղ գործընթաց կազմակերպել հայ և ադրբեջանցի ուսանողների համար: Ես շարունակեցի, որ ադրբեջանական բաժինը կբացենք հետագայում:

Նա իմ ներկայությամբ խոսեց Մ.Գորբաչովի օգնականի և Գ. Յագուդինի հետ, և ես հույսով վերադարձա Հայաստան: Հետագա գործընթացը տվեց դրական արդյունք: Իմ խնդրանքով Ստեփանակերտ այցելեց Վ. Տերեչչենկոն, միասին եղանք Ն. Վոլսկու մոտ և եկանք ընդհանուր համաձայնության: Ն.Վոլսկու հետ դարձանք բարեկամներ: Նա մեծ հարգանք ուներ իմ նկատմամբ: Վստահելով ինձ՝ հարցրեց, թե ինչու եմք ուզում ունենալ մեկ Հայաստան: Համաձայնեք՝ Ղարաբաղը դարձնենք Ռուսաստանի մի գավառ, հետո միջազգային նորմերով հարցը կլուծվի (ազգերի ինքնորոշում և հանրաքվե): Ես նրան խոստացա օգնել մեղմելու քաղաքական իրավիճակը, մարդկանց հեռու պահել քաղաքական ցնցումներից: Ն.Վոլսկու հետ բոլոր հանդիպումների ժամանակ բարձրացված հարցերը ներկայացնում էի հիմնավոր փաստերով: Նրա հետ հանդիպումից առաջ տեղեկանում էի իրավիճակին: Այս հարցում օգնում էին տեղի կուսակցական և գործադիր մարմինների ղեկավարները և ինստիտուտի շատ դասախոսներ (Օ.Եսայան, Մ.Դադայան, Ա. Մխիթարյան, Հ.Գրիգորյան, Ս.Խանյան, Ս. Թովմասյան և ուրիշներ): Ծանր, քրտնաջան և հիմնավոր աշխատանքը տվեց իր դրական արդյունքը, և Ն.Վոլսկին համաձայնվեց օգնել Լեռնային Ղարաբաղում բացված Վանաձորի Հովի. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի՝ Ստեփանակերտի խորհրդավարական կենտրոնին: Փաստորեն Ադրբեջանի և Ռուսաստանի համաձայնությունը շրջանցվեց: Չնայած հետագայում, օգտագործելով պահը, մեր կողմից խորհրդատավական կենտրոնը վերածվեց բաժանմունքի: Այս բոլոր գործընթացները համաձայնեցվում էին ՀՀ ժողովրդական կրթության ղեկավարության հետ և ՀՀ կրթության նախարարության՝ 1989թ. մարտի 13 կոլեգիայի որոշմամբ և նախարարի՝ մարտի 15-ի թիվ 94-6 հրամանով հաստատվեց Ստեփանակերտի բաժանմունքը, Արցախի կրթությունը ներգրավվեց ՀՀ կրթության համակարգում:

Պետք է ընտրվեր բաժանմունքի ղեկավար Ն.Վոլսկու համաձայնությամբ: Ն.Վոլսկին թույլատրեց անցկացնել կոլեկտիվի ընդհանուր ժողով, որը արգելված էր: Բաժանմունքի վարիչի ընտրության և ժողով անցկացնելու պատասխանատվությունը դրվեց ինձ վրա: Բաժանմունքի վարիչի պաշտոնի համար ես Ն.Վոլսկուն ներկայացրի Օ.Եսայանի, Մ.Դադայանի, Ա. Մխիթարյանի Հ.Գրիգորյանի թեկնածությունները: Նա լսեց, առաջարկեց Ա.Բաղդասարյանին՝ խնդրելով անպայման ընտրել նրան, որը երկար տարիների կուսակցական աշխատանքային փորձ ուներ:

Կոլեկտիվի ժողովից առաջ կազմակերպեցի ղեկավարության խորհրդակցություն: Խնդրեցի պահպանել հանգստություն, և ոչ մի այլ հարց չբարձրացնել: Ծանր ջանքերի շնորհիվ հաջողվեց ընտրել տնտեսագիտական գիտությունների թեկնածու Ա.Բաղդասարյանին: Ա.Բաղդասարյանը նշանակվեց Ստեփանակերտի բաժանմունքի պրոռեկտոր: Արդյունքների մասին զեկուցեցի Ն.Վոլսկուն, որը խիստ ոգևորվեց, հայտնեց իր շնորհակալությունը և ավելի անկեղծացավ: Նա ներկայացրեց շատ հետաքրքիր տվյալներ մեր հանրապետության ղեկավարության մասին, մեծարանքի խոսքեր ասաց Յ.Զարուբյանի և Ա.Միկոյանի մասին, բայց հայ ժողովրդին մեղադրում էր դիվանագիտության պակասի մեջ:

Այդ ժամանակահատվածում ես խորհրդակցել եմ և առաջնորդվել ՀՀ բուհերի ղեկավարների կարևոր խորհուրդներով, որոնցից կցանկանայի առանձնացնել Յու. Մարգարյանին, Ռ.Մարտիրոսյանին, Ա. Թարվերդյանին, Գ. Կիրակոսյանին:

Մեր ղեկավարությամբ և կոլեկտիվի օգնությամբ բաժանմունքի վարիչը և ողջ կոլեկտիվը պատերազմի և շրջափակման 4 տարիներին ստեղծված դժվարին պայմաններում ջանասիրությամբ լծվեցին ուսումնական գործընթացին: Պատերազմական, քաղաքական, տնտեսական և բարոյական ծանր պայմաններում ընթանում էր նորմալ ուսումնագիտական գործընթաց: Ընդունելությունը և պետական քննությունները կազմակերպվում էին մեր

կողմից արդար և թափանցիկ: Ստեփանակերտում ձևավորվեց հիանալի կոլեկտիվ, որը հաղթահարում էր իրավիճակային բոլոր դժվարությունները: Փաստորեն ամբողջությամբ վերականգնվեց բարձրագույն կրթությամբ մանկավարժական կադրեր արտադրելու գործընթացը: Բաժանմունքի շրջանավարտներից շատերը և կոլեկտիվի անդամները այսօր աշխատում են Արցախի գործադիր և օրենսդիր մարմիններում և ծառայում բանակում:

1990 թ. սեպտեմբերի 1-ից ՀՊՃՀ նախկին ռեկտոր Յուրի Մարգարյանի նախաձեռնությամբ և ղեկավարությամբ բացվեց այդ ինստիտուտի բաժանմունքը, որի աշխատանքները ղեկավարում էր Ա.Ավանեսյանը: Նա մեծ ջանք գործադրեց ինժեներական կրթության հիմնական և որակյալ կադրեր պատրաստելու գործում(1,2):

Նշված երկու բաժանմունքները գործեցին մինչև 1992թվականը: Արցախը սեփական բարձրագույն կրթությամբ կադրերով ապահովելու համար Հայաստանի կառավարությունը, հիմք ընդունելով Լ.Ղ. Պաշտպանության պետական կոմիտեի և անձամբ նրա նախագահ Ռ.Քոչարյանի միջնորդությունը, 1992 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 504 որոշմամբ հիմնադրեց անկախ Հայաստանի 13-րդ պետական բուհը՝ Արցախի պետական համալսարանը՝ 23 հիմնական և լրացուցիչ մասնագիտություններով: Ռեկտոր նշանակվեց Ա.Ավանեսյանը: Ա.Ավանեսյանը ռեկտորի պաշտոնում դրսևորեց կազմակերպչական և կամային յուրահատուկ որակներ, և Արցախի համալսարանը դարձավ կադրերի պատրաստման լավագույն դարբնոց, որը շարունակվում է մինչև օրս: Ղարաբաղում ստեղծվեց կրթության ամուր բազա: Ներկայումս այդ բուհը Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններից մեկն է: Այսօր Ստեփանակերտում և Շուշիում գործում են երևանյան առանձին բուհերի բաժանմունքներ:

Բոլոր խնդիրները ավելի սահուն լուծումներ ստացան Արցախի անկախությունից հետո, որի 25 –ամյակը մեծ շուքով նշում են Արցախը, Հայաստանը և աշխարհի հայությունը:

Եզրակացություն

Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի ղեկավարության և կոլեկտիվի քրտնաջան և դժվար աշխատանքի, իմաստուն դիվանագիտության ու համառության շնորհիվ Ստեփանակերտում բացվեց բաժանմունք, որը գործեց չորս տարի: Այդ մասին ժամանակին չիրագեկվեց հասարակությանը, այն չարժանացավ արժանի գնահատականի, վերսկսվեց բարձրագույն կրթության սեփական կադրերի պատրաստումը Արցախում: 1992թ. հիմնադրվեց Արցախի համալսարանը:

Գրականություն

1. Ա.Ավանեսյան „Համալսարանական կրթության գործընթացը Արցախում„Մ. Մաշտոց համալսարան„լրատու/1/,գիտական հոդվածների ժողովածու,ք. Ստեփանակերտ,2007,էջ 42-46
2. Ա.Ավանեսյան „ Արցախի գիտակրթական համակարգի կայացման ընթացքն ու զարգացման մեթոդները„ Մանկավարժության տեսություն և պատմություն մասնագիտությամբ գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր,Ե.2012,էջ38
3. Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիա,պատմության ինստիտուտ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն/1991թ օգոստոս-1992թ.հունվար/ փաստաթղթեր,կազմող պատմական գիտությունների դոկտոր ՀրանտԱբրահամյան, Ե. ՀՀ ԳԱԱ „Գիտություն „հրատարակչություն, 2014,էջ 95
4. ԽՍՀՄ նախարարների խորհրդի 1218 որոշումը/04.10.1988թ/
5. ԽՍՀՄ կրթության պետական կոմիտեի թիվ 382 որոշումը/1810,1988թթ
6. Հայաստանի ժողովրդական կրթության նախարարության կոլեգիայի որոշումը/13.03.1989թ./ և նախարարի թիվ 94 հրամանը/15.03.1989թ/:

Ժ. Ն. Պայլոզյան, Ա.Ռ. Մանուկյան

ԳԼԽՈՒՂԵՂԻ ԾԱՆՐ ՎՆԱՍՎԱԾՔ ՍՏԱՅԱԾ ԶԻՆՎՈՐՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԼՈՂՊԵԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՂՁԻՑ

Հոդվածը վերաբերում է գլխուղեղի ծանր վնասվածքի արդյունքում աֆազիա ունեցող զինվորների հետ տարվող լոգոպեդիական աշխատանքի բովանդակությանը: Կոնկրետ դեպքերի վերլուծության հիման վրա ներկայացված են լոգոպեդիական աշխատանքի հիմնական ուղղությունները և նշված է այդ աշխատանքի կարևորությունը զինվորների լիարժեք վերականգնման գործընթացում: Արդիական է վերականգնողական կենտրոնների ստեղծումը՝ համապատասխան մասնագիտական հաստիքների և սարքավորումների զինմամբ, ինչը կնպաստի վերականգնողական, այդ թվում՝ նաև լոգոպեդիական աշխատանքի արդյունավետ և լիարժեք իրականացմանը:

Առանցքային բառեր. աֆազիա, գլխուղեղի վնասվածք, ինքնաբերական վերականգնում, լոգոպեդիական աշխատանք, լոգոպեդիական հետազոտություն, խոսքի ասպարզեցում, խոսքի վերականգնում, վերականգնողական կենտրոն, ուղղորդված վերականգնում:

Ж.А. Пайлозян, А.Р. Манукян

ИЗ ОПЫТА ЛОГОПЕДИЧЕСКОЙ РАБОТЫ С БОЙЦАМИ, ИМЕЮЩИМИ ТЯЖЕЛЫЕ ПОВРЕЖДЕНИЯ ГОЛОВНОГО МОЗГА

В статье представлено основное содержание логопедической работы, проводимой с бойцами с афазией травматического генеза. На конкретных примерах представлены основные направления логопедической работы при афазии, а также ее важность и актуальность. Отмечается необходимость увеличения количества реабилитационных центров для успешного восстановления пациентов с органическими поражениями головного мозга, в том числе и с нарушениями речи.

Ключевые слова- афазия, черепно-мозговая травма, самовосстановление, логопедическая работа, логопедическое обследование, торможение речи, восстановление речи, реабилитационный центр, направленное восстановление

Zh. Paylozyan, A. Manukyan

ON THE EXPERIENCE OF SPEECH THERAPY CARRIED OUT WITH SOLDIERS WITH SEVERE BRAIN SURGERY

The article touches upon the content of speech therapy carried out with soldiers with aphasia as a result of severe brain surgery. Based on the analyses of specific cases, the main directions of work are mentioned, as well as the importance of this work for the complete recovery process of soldiers. The establishment of rehabilitation centers is urgent, which will promote the effective accomplishment of rehabilitation, as well as speech therapy work.

Key words – Aphasia, craniocerebral trauma, self-healing, logopedic work, logopedic survey, Inhibition of speech, restoration of speech, rehabilitation center, directed recovery

Ղարաբաղյան հակամարտության տարածքում 2016 թվականի ապրիլին տեղի ունեցած իրադարձությունները գտնվում էին Հայաստանի և բազմամիլիոնանոց սփյուռքի ուշադրության կենտրոնում: Այդ օրերին շատերն իրենց լուսման ներդրեցին քաջարի զինվորներին և սահմանափակ բնակչությանը աջակցություն ցուցաբերելով:

Նման նախաձեռնություն կազմակերպվեց նաև Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կողմից: Հաշվի առնելով, որ ՀՀ ՊՆ կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ (ԿԿԶՀ) տեղափոխված զինվորների մեջ կային գլխուղեղի ծանր վնասվածքի արդյունքում խոսքի խանգարում ունեցողներ, լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի կողմից անհրաժեշտություն առաջացավ կազմակերպելու լոգոպեդիական միջամտություն: Այդ պատասխանատվությունը ստանձնեց ամբիոնի վարիչ, լոգոպեդ, մ.գ.թ., դոցենտ Ժ.Պայլոզյանը, որին կամավորական նախաձեռնությամբ միացավ լոգոպեդ Ա.Մանուկյանը: Արդյունքում հոսպիտալում արդեն իսկ ստեղծված կամավորական խումբը, որում ընդգրկված էին կինեզիստներ, մերստոներ, հոգեբան, համալրվեց նաև լոգոպեդներով, որոնց բոլորի համախմբվածության նպատակը զինվորների խաթարված առողջության վերականգնումն էր:

Լոգոպեդիական հետազոտության արդյունքում բացահայտվեց, որ գլխուղեղի վնասվածքի հետևանքով զինվորներից մի քանիսի մոտ առաջացել է աֆազիա՝ խոսքի մասնակի կամ ամբողջական կորուստ: Աֆազիան առաջ է բերում ուրիշի խոսքն ըմբռնելու, ինքնուրույն խոսելու, ինչպես նաև գրելու, ընթերցելու և հաշվողական գործողություններ կատարելու խանգարում, որն էլ հանգեցնում է այլ բարձրագույն հոգեկան գործընթացների և խոսքային հաղորդակցման խանգարմանը:

Աֆազիա ունեցող անձանց հետ աշխատող լոգոպեդների երկար տարիների աշխատանքային փորձը ցույց է տվել, որ աֆազիայի ժամանակ միայն սակավ դեպքերում է տեղի ունենում խոսքի արագ և ինքնաբերական վերականգնում: Դա ինչու է

1-2 շաբաթվա ընթացքում, որպես կանոն, այդ հիվանդները չեն զգում լոգոպեդի կարիք: Սակայն գլխուղեղի վնասվածքների 80% դեպքերում բարձրագույն հոգեկան ֆունկցիաները, այդ թվում նաև խոսքը, վերականգնվում են 2 շաբաթից մինչև 1-2 ամիս կախված խանգարման օջախի տեղակայումից [1,3,4,5]: Նման դեպքերում ուղղորդված վերականգնումը դառնում է խիստ անհրաժեշտ:

- Խոսքի վերականգնմանն ուղղված լոգոպեդական աշխատանքն իրականացվել է համաձայն հետևյալ սկզբունքների. [1]
- խոսքային թերապիայի վաղ սկիզբը (հիվանդությունից 2-3 շաբաթ անց),
- պարապմունքների պարբերական ու երկարատև ընթացքը,
- բանավոր և գրավոր խոսքի, հաշվողական գործընթացների գույափոխ վերականգնումը:

Լոգոպեդական աշխատանքի ընթացքում մեր կողմից կարևորվել է ոչ միայն լոգոպեդական մեթոդների ճիշտ ընտրությունը, այլ նաև վերականգնողական գործընթացին հիվանդի գիտակցված մասնակցությունը: Կարևորել ենք նրանց մոտ տվյալ բարդ խնդրի հաղթահարման հանդեպ հավատ և վստահություն ձևավորելը:

Աֆազիա ունեցող զինվորների հետ շաբաթական անց է կացվել 3-5 լոգոպեդական պարապմունք, հիվանդության վաղ փուլում յուրաքանչյուր պարապմունքի միջին տևողությունը՝ կազմել է 10-15 րոպե, աստիճանաբար այն հասել է 50-60 րոպեի՝ կախված նրանց ինքնազգացողությունից: Ստորև ներկայացրել ենք մեր կողմից իրականացված խոսքի վերականգնմանն ուղղված լոգոպեդական աշխատանքի համառոտ բովանդակությունը:

Դեպք 1.

Թալիշում հակառակորդի կողմից 2016թ.մայիսի 13-ին ծանր վիրավորում ստացած 1995թ. ծնված զինծառայող Հ.Պ.-ի մոտ (բժշկական ակտորոշումը՝ գլխուղեղի բաց թափանցող ծանր հրազենային վիրավորում, գլխուղեղի ձախ կիսագնդի ջնջխում, գանգոսկրի ձախ կեսի ներիքված բազմաբևեկորային կոտրվածք՝ գանգոսկրի դեֆեկտով, աջակողմյան հեմիպարեզ՝ վերջույթների թուլություն), լոգոպեդական հետազոտման արդյունքների հիման վրա ակտորոշվեց էֆերենտային մոտորային աֆազիա, դինամիկական աֆազիայի տարրեր:

Խոսքի վերականգնումը իրականացվել է հետևյալ ուղղություններով. [1]

- խոսքի ապարգելակում. ավտոմատացված խոսքային շարքերի (1-10-ը ուղիղ հաշիվ, 10-100-ը հաշիվ տասնյակներով, շաբաթվա օրերի և ամիսների, ծանոթ երգերի, բանաստեղծությունների, ասացվածքների) և «խիստ» ենթատեքստ ունեցող (այսինքն՝ միայն մեկ որոշակի բառով ավարտվող) բառակապակցությունների, նախադասությունների գույակցված, արտացոլված և ինքնուրույն վերարտադրում:

- խոսքի պարզ ձևերի խթանում. հարցեր, որոնց հիվանդը կարող է պատասխանել մեկ-երկու բառով, պարզ իրավիճակային երկխոսության խթանում:

- գլոբալ ընթերցանության և գրելու հմտությունների խթանում. առարկայական նկարների տակ համապատասխան նկարների տեղադրում, առանձին բառերի արտագրություն, բառերի և նախադասությունների գույակցված և ինքնուրույն ընթերցանություն և մի շարք այլ առաջադրանքներ:

- ֆրազային խոսքի վերականգնում. ազրամատիզմների կանխում և հաղթահարում՝ կազմելով նախադասություններ պոեմատային նկարների հիման վրա, տարբեր տեսակի նախադասությունների կիրառման խթանում և այլն:

- ընթերցանության եւ գրելու հմտությունների վերականգնում. բառի հնչյունատառային կազմի ճշգրտում, բառերում բաց թողնված տառերի եւ վանկերի լրացում, թելադրություն, ինքնուրույն գիր:

Ներկայումս Հ.Պ.-ի մոտ նկատվում է խոսքի զգալի բարելավում: Վերականգնման գործընթացի առաջին իսկ օրվանից ներգրավված է եղել Հ.Պ.-ի ընտանիքը, ովքեր առաջնորդվել են լոգոպեդական խորհուրդներով՝ վաղ փուլից սկսած նկատելով դրական փոփոխություններ [2]: Ներկայումս լոգոպեդական աշխատանքը Հ.Պ.-ի հետ շարունակվում է տնային պայմաններում:

Դեպք 2.

1996թ. ծնված, Հաղրոթի գորամասում զինծառայող Ա.Դ.-ը կլԿԶ էր տեղափոխվել 2016թ. հունիսի 27-ին՝ գլխուղեղի բաց թափանցող հրազենային վիրավորումով, ծոծրակային բլթի և ձախ քունքային բլթի ջնջխումով, բազմաբևեկորային կոտրվածք ուսկրային բեկորների մխրճումով ուղեղանյութ՝ գանգոսկրի դեֆեկտով, հետիւրազենային մենինգիտով, տեսողության խանգարումով առավելապես ձախ աչքում, աջ վերջույթներում զգացողության խանգարումով: Լոգոպեդական հետազոտման արդյունքների հիման վրա ակտորոշվեց ակուստիկամենտոսիկական աֆազիա:

Ա.Դ.-ի մոտ պահանջվեց հաղթահարել հոգեբանական մի խնդիր. ունենալով հիշողության կորուստ և գիտակցելով իր խոսքի խնդիրը՝ նա փորձում էր թաքցնել այն: Այսպես, օրինակ, նա խուսափում էր պատասխանել հարցերին՝ ասելով լոգոպեդին, որ գիտի դրանց պատասխանները: Ա.Դ.-ն ցուցաբերում էր անհանգստություն, կաշկանդվածություն, ինչը սկզբնական փուլում խոչընդոտում էր խոսքի վերականգնման գործընթացին, որն աստիճանաբար հաղթահարվեց: Նման վարքագիծը, որպես կանոն, բնորոշ է ակուստիկամենտոսիկական աֆազիային: Լոգոպեդական աշխատանքի ընթացքին խոչընդոտում էր նաև զինվորի մոտ առկա տեսողության խնդիրը:

Հաշիվ առնելով այն փաստը, որ ակուստիկամենտոսիկական աֆազիայի հիմնական ակտանիշն է խոսքալսողական հիշողության ծավալի խանգարումը, խոսքի վերականգնումն Ա.Դ.-ի մոտ իրականացվել է հետևյալ ուղղություններով [1].

- խոսքալսողական հիշողության ծավալի վերականգնում՝ 2 կամ 3 առարկաների (նկարների) ցուցադրում՝ հրահանգին համապատասխան, աստիճանաբար ընդլայնվող բառերի շարքի, նախադասությունների կրկնում, տարբեր հնչյունավանկային կառուցվածք ունեցող բառերի հեզում:

- ծավալումն խոսքի վերականգնում. հանձնարարված բառերով նախադասությունների կազմում, ըստ նկարի պատմվածքի կազմում, գրույցներ տարբեր թեմաներով:

- անվանելու կարողության դժվարությունների հաղթահարում. բառերի դասակարգում՝ ասել ընդհանրացնող բառը, մի կարգի պատկանող բառերի շարքում գտնել «ավերորդ» բառը, ասել նախադասության մեջ բաց թողնված բառը և այլ առաջադրանքներ:

Լոգոպեդական աշխատանքը շարունակվում է տան պայմաններում՝ համապատասխան վերականգնողական կենտրոնների բացակայության պատճառով: Ա.Գ.-ն խոսում է ավելի վստահ, ցուցաբերում է պատրաստակամություն, մեծ ոգևորություն՝ նշելով, որ պարավանդների արդյունքում բարելավվում է խոսքը, վերականգնվում բառապաշարը:

Ունենալով մասնակցություն գլխուղեղային ծանր վնասվածք ստացած զինվորների վերականգնման գործընթացին, առնչվելով աֆազիայի բարդությանը՝ ևս մեկ անգամ համոզվում ենք, թե որքան բարդ և կարևոր է վերականգնողական լոգոպեդական աշխատանքի կազմակերպումը և իրականացումը:

Աֆազիայի ժամանակ խոսքի վերականգնման աշխատանքները կազմակերպելիս պարտադիր է աշխատել խոսքի բոլոր բաղադրիչների վրա՝ առաջնությունը տալով աֆազիայի տվյալ տեսակին բնորոշ խոսքային ավստանիշների հաղթահարմանը [5]:

Հոսպիտալում ստեղծված կամավորական խումբն այժմ ձեռնամուխ է եղել զբաղվելու ոչ միայն 2016թ. ապրիլյան դեպքերի, այլ նաև ժամկետային ծառայություն անցած, տարիներ առաջ տարբեր վնասվածքներ ստացած վիրավոր զինվորների վերականգնողական աշխատանքներով: Տասնյակից ավելի զինվորների ինչպես շարժողական ոլորտի, այնպես էլ խոսքի վերականգնմանն ուղղված աշխատանքներն իրականացվում են ոչ միայն կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալում, այլ նաև «Իզմիրյան» բժշկական կենտրոնում:

Չնայած որ հողվածում ներկայացրել ենք լոգոպեդական աշխատանքի ընդամենը 2 դեպք, այնուամենայնիվ գլխուղեղային վնասվածքի արդյունքում, առաջացած խոսքի խանգարումներ (աֆազիա, դիզարտրիա, կակազություն) ունեցող զինվորների թիվը բավականին մեծ է: Ելնելով առկա իրավիճակից՝ մենք կարևորում ենք հիվանդանոցներին կից վերականգնողական կենտրոնների ստեղծումը՝ համապատասխան մասնագիտական հաստիքների և սարքավորումների զինմամբ՝ լիարժեք և արդյունավետ վերականգնման համար:

Գրականության ցանկ

1. Պայլոզյան Ժ.Ն. Աֆազիայով հիվանդների խոսքի վերականգնման ուղեցույց - Եր., 2010.
2. Վիրավորվելուց 2 ամիս անց ... - /news.am/arm/news/336472.html/
3. Бейн Э.С., Бурлакова М.К., Визель Т.Г. - Восстановление речи у больных афазией. - М., 1982.
4. Бурлакова М.К. Коррекционно-педагогическая работа при афазии. - М., 1991.
5. Визель Т.Г. Как вернуть речь. - М., 1998.

Նարինե Հովհաննիսյան,
բ.գ.թ., դոցենտ, ԱրՊՀ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆԵՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՐԾԱՆՄԱՆ ՀԻՄՆԱՊԱՏԱՆՆԵՐԸ ԵՂԻՇԵՉԱՐԵՆՑԻ
«ԵՐԿԻՐ ՆԱԻՐԻ» ՊԱՏՄԱՎԵՊՈՒՄ**

Հորվածը նվիրված է Հայաստանի առաջին հանրապետության կործանման հիմնապատճառների քննությանը՝ ըստ Ե. Չարենցի «Երկիր Նաիրի» պատմաքաղաքական վեպի: «Երկիր Նաիրի» -ն սովորական վեպ չէ. գերարվեստով գաղտնագրված վավերագրություն է, երգիծական երկ չէ. մեծ հայրենասերի նորագույն ողբն է՝ գրված պատմական հայրենիքի կորուստի առթիվ: «Երկիր Նաիրի»-ն խաբված և ստրկության դատապարտված ժողովրդի պատմության ողբերգ է, ինչպես և Աբովյանի «Լիրք Հայաստանի»: Խորհրդային տիրապետությանը չի վերջանում Չարենցի ողբը, ինչպես չէր վերջանում Աբովյանի ողբը թուսական տիրապետությանը:

Բանալի բառեր՝ ողբերգավերգիծական, պատմաքաղաքական, բոլշևիկյան հեղափոխություն, ավատներկություն, դատախազություն, նահանգ, կոտորած, պատմական հայրենիքի կորուստ:

Наринэ Аванесян,
к. ф. н, доцент, Арцахский государственный университет

**ПЕРВОПРИЧИНЫ РАЗВАЛА ПЕРВОЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИИ В ИСТОРИЧЕСКОМ РОМАНЕ
Е. ЧАРЕНЦА “СТРАНА НАИРИ”**

Статья посвящена исследованию первопричин развала первой республики Армении согласно историческому роману Е. Чаренца “Страна Наири”. Роман “Страна Наири” не обычный исторический роман, это художественное произведение, это не сатирическое произведение, это новая скорбь патриота, написанная о потери исторической родины. “Страна Наири” это скорбь обманутого и обреченного на рабство народа, как и произведение Х.Абовяна “Раны Армении”. Как не заканчивается скорбь Чаренца советским периодом, так скорбь Абовяна не заканчивается периодом правления Российской империи.

Ключевые слова: сатирический, исторический и политический, большевистская революция, ложная информация, дезертирство, изъятие, уничтожение, потеря родины.

Narine Hovhannisyann,
Candidate of Philological Sciences, Associate Professor,
Artsakh State University

**THE ROOT CAUSES OF THE COLLAPSE OF THE FIRST REPUBLIC OF ARMENIA IN CHARENTS’
HISTORICAL NOVEL “LAND OF NAIRI”**

The article investigates the root causes of the collapse of the First Republic of Armenia in accordance with Charents’ historical novel “Land of Nairi”. The novel “Land of Nairi” is not an ordinary historical novel, it is a work of art, it is not a satirical work, but patriot’s new grief, written about the loss of his historical homeland. “Land of Nairi” is the grief of the deceived and doomed to slavery people, like the work of Abovyan “Wounds of Armenia”. Just as the sorrow of Charents’ does not end during the Soviet period, neither Abovyan’s sorrow ends during the reign of the Russian Empire.

Keywords: satirical, historical and political, the Bolshevik Revolution, false information, desertion, withdrawal, destruction, loss of homeland.

Հայ հանճարի բացառիկ անհատականություններից մեկի՝ Ե. Չարենցի ստեղծագործական ճանապարհը չարենցագիտության մեջ նույնքան տարակարծությունների, հակասական մեկնաբանությունների, բուռն բանավեճերի տեղիք է տվել, որքան երկիր Նաիրիի կործանման հիմնապատճառները՝ պատմագիտության մեջ: Չարենց լինելը բախտ էր. ժամանակը դարձրեց ճակատագիր, բայց Չարենցը բարձրացավ և՛ ժամանակից, և՛ ճակատագրից: Երկիր Նաիրիի Չարենցի համար սուկ դավանանք չէր, նրա արյան, մտքի և հույզի զարկերակն էր, երբ մաքառում էր կամավորական ջոկատներում, հեղափոխական խանդավառ շարքերում, երբ գաղափարապես շնորհված էր ի՛ր ճանապարհից, երբ մահվան տնսիլով Գողգոթայի խաչն էր կրում: «Կապուտաչյա հայրենիք» պոեմում՝ գրված կարսում 1915թ., Չարենցը նույնանալով ծննդավայրին, երազում էր իր «սիրտուհուն»՝ իր երկրորդ կնիքին՝ Արևմտահայաստանին՝ հավատով խոստանալով.«Կապուտաչյա սիրտիս, ամուսնանանք պիտի մենք...»: Այդ ամուսնությունը այսինքն՝ երկատված, երկփեղկված հայրենիքի միավորումն այդպես էլ չկայացավ: Դա մեր ազգային ողբերգությունն է, որ նաև Չարենցի անձնական ողբերգությունն էր: «Էլի ես որք ու արնավառ՝ իմ Հայաստան յարն եմ սիրում», - սա արդեն Չարենցի երդում-հավաստիացումն է՝ գրված 1920թ.՝ Հայաստանի Խորհրդայնացման նախօրեին:

«Երկիր Նաիրի»։ այսինքն՝ անկախ և միացյալ հայրենիք. այս գաղափարապաշտության ցմահ ուխտավորն են Եղիշե Չարենցը՝ որպես ազգային հավաքական հանճար, և Հայ հեղափոխական դաշնակցությունը՝ որպես ազգային հավաքական ուժ: Ուստի դեպի Նաիրի տանող ճանապարհին նրանք կամա-ակամա պիտի խաչվեին այն կետում, որ տաճարն էր իրենց հավատամքի: Ապագույցը՝ «Երկիր Նաիրին»՝ գրված 1921-1924 թթ.՝ Չարենցի «ձախ որոնումների» ամենաբուռն շրջանում: Ողբերգական, անեղ, մահացու ճշմարտությունը թողին հանձնելու համար Չարենցը գիտակցաբար պիտի գնար օրվա ճանապարհով: Ժամանակի գովքն անող անմուսա երկերի հանգույցում ոգու կանչով և պարսոքով հառնում է արմնանման վիթխարի ասքը՝ «Երկիր Նաիրի» -ն. «Լալարո՛ց,

վաղուց մտորում է իմ մեջ մի անհուն ցանկություն: Վաղուց ելք է փնտրում կուտակված մի կարոտ: Գորշ, ամենօրյա, առօրյա մեր կյանքում, կենցաղում մորմոռում է նա մուլթ, աներևույթ, կանչում է, ո՞ր: Ինչո՞ւ է խնդրում ինձ, ինչո՞ւ է կարոտը խնդրում: Ինչո՞ւ է կանչում - մտերիմ, կանչում անվերջ: Եվ ես ինչո՞ւ եմ ուզում, ինչո՞ւ եմ կամենում փնտրել, գտնել նրան...»:

«Երկիր Նաիրի»-ն սովորական վեպ չէ. գեղարվեստով գաղտնագրված վավերագրություն է: Երգիծական երկ չէ. մեծ հայրենասերի նորագույն ողբն է՝ գրված պատմական հայրենիքի կորուստի առթիվ: Վեպի երգիծական-սատիրական ըմբռնման՝ արդեն ավանդական դարձած միօրինակությունը չարենցագիտության մեջ ճեղքեց Դ. Գասաբյանը՝ վիճարկելով գրականագիտական առկա դիտարկումները. «Իր բնույթով այն ըստ ամենայնի դրամատիկական է ու ողբերգական, իսկ երգիծանքը թեթև շղարշ է, հնչերանգ, պատումի ոճ, բայց ոչ միանշանակ ծաղր ու ծանակ»¹:

Վեպի հարցադրումը Չարենցը տալիս է առաջաբանում. «Ո՞վ ենք մենք, վերջապես - նաիրցիներ: Ի՞նչ ենք մենք և ո՞ր ենք գնում: Ի՞նչ ենք եղել երեկ և ի՞նչ պիտի լինենք վաղը»: Վեպն ամբողջությամբ այս հարցադրման պատասխանն է, միաժամանակ բացարկյալ ուղեղամորմոք այն կասկածի, թե «գուցե ճիշտ որ միբաժ է Նաիրին, ֆիկցիա, միֆ. ուղեղային մորմոք. սրտի հիվանդություն... Իսկ նրա փոխարեն - կա այսօր մի երկիր, որ կոչվում է Հայաստան, և այդ հին երկրում ապրել են երեկ և ապրում են այսօր շատ սովորական մարդիկ՝ սովորական մարդու չարենցագիտություններով: Եվ ուրիշ - ոչինչ: Ոչ մի «Երկիր Նաիրի» - այլ միայն - մարդիկ, որ ապրում են այսօր աշխարհի այն անկյունում, որ կոչվում է Հայաստան, որը հիմա դարձել է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն, իսկ 1917-ից առաջ ոչ այլ ինչ էր, եթե ոչ Ռուսական Իմպերիայի մի հետամնաց ծայրամասը - և ուրիշ ոչինչ... Ուրիշ ոչինչ»:

Այսպես արմատավիժ էր արվում Նաիրիի պատմությունը, ժողովրդի դարավոր հիշողությունը: Այդ ջնջվող ժամանակատարածականը վերականգնելու մղումով է գրվել «Երկիր Նաիրի»-ն, գրվել է որպես մարտահրավեր, որ «Չի կարելի ուղեղային մորմոք ու սրտի հիվանդությունը հանել մարդկանց միջից արցանների ու լանցնտների օգնությամբ»:

Վեպը բաղկացած է երեք մասից՝ «Քաղաքը և բնակիչները», «Ինչի՞ Նաիրի», «Երկիրը Նաիրի», առաջաբանից ու վերջաբանից:

Առաջին մասում պատկերանում է հինավուրց Կարսը՝ որպես Նաիրի երկրի խորհրդանիշ, իր բնակիչներով, նիստ ու կացով, պատմաճարտարապետական հուշարձաններով, որոնք իրենց գոյությունից վերածվում են ոգեղենի՝ դառնալով նաիրյան ոգու խորհրդանիշեր, մանավանդ Կարսի անխորտակելի բերդը՝ որպես ազգային ներքին անպարտելի ուժի քարակարկառ կոթող: Մի կողմից անառիկ բերդ-ամրոց և նույնքան անառիկ ազգային ոգի, մյուս կողմից՝ ամոթալի, ծանր պարտություններ և պատմական ծննդավայրի անչափելի կորուստ:

Խիզախելով վարչակարգի պարտադրած ուղեփակոցների դեմ՝ Չարենցը բացում է պատմական դառը ճշմարտությունը. ինչո՞ւ ընկավ Նաիրին, երբեմն ուղղակիորեն, երբեմն այլակերպ, բայց ոչ երբեք երգիծանքով, վատա, որ «հասկացողը կհասկանա». «Անառիկ է այդ բերդը - ամենքն այդ գիտեն, - և դավաճանությունն է, նենգ, ստոր, նաիրյան դավաճանությունն է այդ բերդը հանձնել եկվոր արկաններին: «<<> Օրը կզատ, - և նրանք կզանա: Եվ նորից բերդի անառիկ ամրություններից որպես երկաթյա անեղ մի սպառնալիք - կենն, կհառն անաստո նաիրյան ոգին, կորովը, ուժը հազարամյա - նաիրյան աշխարհի: Ու կվառվի նորից անմար խնդրությամբ, կծպտա խնդագին երկիրը հազարամյա - երկիրը Նաիրի...»: Չարենցը դառնում է պատմության ուղեկից, ինքնաբացահայտում գաղափարապես և զգայապես, ընթերցողին հասու դարձնում ազգային ոգու պատմությունը: Վեպի գործողությունների առանցքը «նաիրյան գործերի կենտրոնն է», այսինքն՝ Հայ հեղափոխական դաշնակցությունը, որի ներկայացուցիչները պատմական անձնավորություններ են: Ահա նրանք. «Լույս» նախարարության անդամները, Վարենցը հավելած չէր հերոս Ասովաճատրյանը կամ նաիրյան գործերի Արամազը, ընկ. Վառչյանը և Մերգե կապաբիչը: Չարենցը հավելած չէր հերոս փնտրելու, բայց դեպի ճշմարտություն տանող ճանապարհին ինքնըստինքյան վեպի հերոս է դառնում Մազուրի Համոն՝ «ղժբախտ ու հերոսական»: «Եվ չէի՛ն, չէի՛ն կարող, այո՛, այդ դժբախտ օրերը չձնել անձնավորություններ՝ դժբախտ ու հերոսական: Չէր կարող, օ՛, ո՛չ, այդ դժբախտ օրերի, տարիների հրից չելնել հերոսական, չհառնել պայծառ ու սրբացած Նաիրյան ոգին»: Այս տողերին հաջորդում է գրողի անդրադարձը հայրենիքի համար կախաղան բարձրացած Մազուրի Համոյին: Հիշենք, որ 1920 թ. գրված «Մահվան տեսիլ»-ում բանաստեղծն ինքն էր ուզում դառնալ կախաղանից օրորվող եղերական վերջին գոհը, միայն թե փրկվի գերագույնը՝ Նաիրին:

Կոմունիստական գաղափարախոսությունը իր կնիքն է դրել խորհրդային մտքի ու մտածողության վրա՝ ձևավորելով մի ամբողջ դարոց: Չարենցը չէր կարող երգիծել-ծաղրել, ինչպես գտնում են որոշ քննադատներ, ազգային հավաքական այն ուժին, որ մտքի, խոհի և կամքի խորհրդանիշ բռունցքով բոլորանվեր լծվել էր հայրենիքի ազատագրման գործին՝ գիտակցորեն պատրաստ ինքնագոհաբերման: «Նեղիները սուր, անողոր մտրակող է դառնում», գրում է Ս. Աղաբաբյանը - երբ անցնում է գավառական քաղաքի պատվելիներին՝ Մազուրի Համոյի շրթանքի կողքից: Մազուրի - համոյական «ազգային իդեալի» չարենցյան պակասակերտումը հնչում է որպես մեղադրական թողոթ ու մահվան դատավճիռ»²:

Ամբողջ վեպում զգացվում է Չարենցի ներքին ակնածանքը Դաշնակցության հանդեպ: Բանաստեղծի բնորոշումով Դաշնակցությունը տիեզերական կառույց է, մտքերի, սրտերի և կամքերի հավաքականություն, ազգային ոգու գասումի և վրեժի արդար բռունցք: Իր գլխավոր հերոսին տալով Ասովաճատրյան ազգանունը՝ բանաստեղծն ասես ակնարկում է, որ նա ի վերուստ կոչված նոր փրկիչ էր, որ պիտի փրկեր երկիր Նաիրին, եթե չլինեին «հույս» բոլշևիկները: Պատահական չէ, որ վեպի վերջում իր հերոսի խաչելությունը Չարենցն ուղղակիորեն համեմատում է Քրիստոսի խաչելության հետ՝ հավասարության նշան դնելով մարդկության փրկության ճանապարհին խաչված Քրիստոսի և հայրենիքի փրկության ճանապարհին խաչված Համոյի միջև: Արամազդից Քրիստոս փոխակերպում - անցումը ազգային հզոր ոգու և ուժի խաչելությունն է՝ հարության խորհուրդով ու ներքին հավատով:

Մեկ անգամ չէ, որ Մազուրի Համոյի կերպարում Չարենցը գտնում է ինքն իրեն: Այդ առումով չափազանց ուշագրավ և կարևոր է նաև Վ. Տերյանի «Մի՛ խառնեք մեզ ձեր վայրի, արջի գեղերին...» տողով սկսվող հայտնի բանաստեղծության երկտողի հիշատակումը՝ ազգային կորուստների խոր գիտակցումով և բոլոր արհավիրքների միջից վերստին հառնելու մեծ հավատով: Չարենցը նույն գուգահեռի վրա է դնում ազգային գաղափարական գործչին՝ Մազուրի Համոյին, և ազգային մեծ պոետին՝ Վահան Տերյանին՝ «Երկիր Նաիրի»-ի տառապյալ երգչին:

Դաշնակցական հերոսն ամենուր է՝ բանավտություններ վարելիս, կամավորներ հավաքագրելիս, կռվող կամավորների համար հանգանակություն կազմակերպելիս: Անտարբեր դավին, որ հետո զնցի նման պիտի կրծեր, ջլատեր նաիրյան շարքերի կոռ միասնությունը, Համոն ինքնամոռաց ճառեր է ասում՝ ոգիներ խանդավառելով հայրենիքի ազատագրման համար: Ազգային մեծ

¹ Դ. Գասաբյան, Եղիշն Չարենց: Հայոց բանաստեղծության մայրաքաղաքը, Ե., 1996, էջ 208:
² Ս. Աղաբաբյան, Եղիշն Չարենց, Ե., 1973, էջ 408-409:

նպատակի շուրջ համախմբվում են բոլորը՝ դաշնակցական թե՛ հնչյակ, ժողովուրդը և եկեղեցի: Կամավորական խանդավառ խմբեր են գալիս հեռավոր Նյու Յորքից, Բուրյարիայից, Վանից, Բիթլիսից, գալիս են նախորդական բոլոր կողմերից: Դա, ինչպես Չարենցն է պատկերում, ազգային աննկարագրելի խանդավառ շարժում էր, որ ճեղք տվեց, սակայն, բոլշևիկների ապագային ձեռքով: Ահա հուսիկ քահանայի կողք, որ շատ բան է ասում ինչպես այդ օրերի, այնպես էլ Չարենցի քաղաքական վերաբերմունքի մասին. «Սուրբանակ, հանճարեղ են եղել նախորդի արքաները. նրանք իմացել են կապել հոգևորն ու մարմնավորը, սուրը և խաչը կրոնն ու ռազմական կորովը: Ստոր, նենգ, նաական դավաճանությունն է եղել մեզ կործանողը, անձնատու վասակներն են եղել մեր տունը քանդողը: Լավ է մարդ պատկով ընկնի պատերազմի դաշտում իր սրբազան կրոնի ու հայրենիքի համար, քան քարշ տա անասնական զերթություն, ինչպիսին քարշ ենք տալիս մենք հինգ դարից ավելի: Բայց ահա հասել է նորից վայրկյանը վերածնության, և դեպի նոր Ավարայր, նոր վարդանանց պատերազմ է կանչում իր բոլոր ազնիվ գավակներին մեր տառապյալ հայրենիքը...»:

Ակնհայտ է, թե՛ «վասակներ» անվանումով ում նկատի ուներ Չարենցը՝ ընթերցողին հասալ դարձնելով իր արգահատանը վեպի բոլշևիկ հերոսների՝ Դաշնակցության անակզբույթ հակառակորդների հանդեպ: Չարենցը հիշատակում է նաև ժողովրդի գիտակցության մեջ սրբազան ճանաչումը՝ Անդրանիկ, Դրո, Բենի. բոլորն էլ շարկապված են «նախորդան գրասենյակին»:

Վեպի երկրորդ գլուխը Չարենցն ավարտում է անասելի բուռն ոգևորությամբ: Անբողջ կարսը՝ ծեր թե՛ մանուկ, կին թե՛ տղամարդ, խմբվել է կայարանում՝ դիմավորելու Նախրի մենկող կամավորական ջոկատներին: Դա նոր Ավարայր էր, երբ ամբողջ ժողովուրդն էր եղել սրբազնագույն նպատակի համար: Այդ բուռն ոգևորությունը, նվիրումի կամքն ու ռազմի կորովը հետո պիտի փոխվեին ճիշտ հակառակի՝ հաղթության արժանապատիվ երթից շրջադարձ կատարելով դեպի նահանջի կորստաբեր ուղին: Այդպես հանձնվեց և խարդավանքներով վերագրավվեց գրեթե ազատագրված երկիր Նախրին:

Վեպի վերջին գլուխը Չարենցը սկսում է նույն դառը հարցումով. ո՞րն է, վերջապես, երկիրը Նախրի: Եթե առաջաբանում Չարենցն այս հարցումին պատասխանում էր նույնչափ սրտմտող հարցումով՝ «գո՞րցն մշուշ է նա, ուղեղային մորմոք, սրտի հիվանդություն», ապա վեպի վերջում կասկածանքին հաջորդում է անվարան բացարկը: Պատմական իրական կարսը ներկայացնելով որպես երկիր Նախրի՝ Չարենցը հանգում է իր գլխավոր ասելիքին. «Մի՞թե կարող էր «ուղեղային մորմոքը» կերպավորվել և իրականություն դառնալ. մի՞թե կարող էր, սիրելի՛ ընթերցող, միս և մարմին ստանալ «սրտի հիվանդությունը» և քայլել քաղաքում, ո՛չ թե ուղեղում կամ սրտում, այլ իրական քաղաքում: Ձառանգանք չէր այդ քաղաքը, և ոչ էլ նրանում ապրողներն էին գառանգանք»: Այո՛, կար և մնում է իրական Նախրին՝ բոլոր նախորդների բնիկ հայրենիքը, բայց որպես այդպիսին չկա ոչ մի աշխարհագրական քարտեզի վրա: Ուստի այն և՛ կա, և՛ չկա: Այդ լինել- չլինելու հանգամանքի մեջ Չարենցը դնում է իր և յուրաքանչյուր նախորդ արժանապատիվության հարցը: Չկա քարտեզի վրա երկիր Նախրին, բայց կա իրական և կա նաև արդեն խաչված Մագութի համոյի «ուղեղում», այսինքն՝ Դաշնակցության գաղափարի մեջ: Ուրեմն, Չարենցի համոզմամբ, «Նրան, այո՛, Մագութի համոյի ուղեղին մենք պիտի դիմենք, <...> եթե ուզում ենք իսկական ակունքից խմել կենսարար հեղուկը մեր հավաքական կամ իր՝ Մագութի համոյի տերմինոլոգիայով ասած՝ «ազգային գոյություն»: Սա էր նաև այն հավաքական ուժը, որի մեջ Չարենցը 1930-ական թթ. պիտի տեսներ մեր ժողովրդի փրկությունը և գրեթե իր խորախորհուրդը՝ «Պատգամը»՝ «Ո՞վ է հայ ժողովուրդը, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է»:

Հայրենիքը գոյատևում է նախ և առաջ ազգային գաղափարաբանությամբ, իսկ ազգային գաղափարախոսությունը կրող հավաքական ուժը Չարենցի վեպում Դաշնակցությունն է: Ազգային գաղափարախոսության՝ դեռ հայկից սերված «Մահ կամ ազատություն» նշանաբանով է, որ դարձրեց փոխանցվել է երկիր Նախրին. «Որովհետև նա՛ էր (ուղեղը և ոչ թե Մագութի համոն), որ տարիներ շարունակ բոլոր համանման ուղեղների կատարյալ կատարելատիպը լինելով՝ որպես առասպելական այն ցուլը, կրում էր իր ուղեղն եղջյուրների վրա... երկիրը Նախրի: <...> Տարիներ, դարեր շարունակ, հնամենի հնուց կրում էր իր եղջյուրների վրա մի ամբողջ երկիր, և այն էլ այնպիսի մի տիեզերական երկիր, ինչպիսին էր երկիրը Նախրի»: Բայց և Չարենցը սուր տագնապներ, ջղաճգումներ է ունենում, իր խաբերով՝ քարից քար խփվում, որովհետև գնդել, առասպել են դարձել և՛ իրական ծննդավայրը, և՛ պատմությունը, և՛ ազգային գաղափարաբանությունը: Ստացվում է, որ գուր խաբկանք է եղել ամեն ինչ. «ուղեղային մշուշ», «սրտի հիվանդություն»: Բայց հոգեկան ուժգին մակրոթագույթանք երբ հաջորդում է սթափ տեղատվությունը, Չարենցը հակասում է նորից ինքն իրեն՝ գրելով. «Նրան, միայն նրան, այսինքն ոչ թե Մագութի համոյին, այլ նրա հանճարեղագույն ուղեղին էր, այո՛, պարտական նախորդայն այդ քաղաքը իր երկրային գոյությամբ, և առանց նրա, այսինքն ոչ թե Մագութի համոյի, այլ նրա ուղեղի, չէր կարող գոյություն ունենալ, անգամ մի երկվայրկյան ասքել ոչ միայն նախորդայն այդ քաղաքը, այլև ամբողջապես հենց ինքը՝ երկիրը Նախրի»: Չե՛ս հավատում: Նայի՛ր շուրջդ ապա. ո՞ր է մեր նկարագրած քաղաքը, ո՞ր են նրա բնակիչները: Չկան, ծուխ են դարձել, գնդել են մշուշում. դարձել են մուժ ու հիշատակ: Ինչո՞ւ: Որովհետև չկա, այլևս գնդել է մշուշում Մագութի համոյի ուղեղը, չկա. մուժ է դարձել. դարձել է մշուշ ու հիշատակ»:

Վեպի երրորդ մասում Չարենցը գաղտնագերծում է մեր ազգային ողբերգության բուն ակունքները, ասելիքը հրապարակում ո՛չ ենթաշեղծաբան, այլ ուղղակիորեն: Այստեղ է, որ Չարենցն, ի վերջո, տալիս է քաղաքական պատասխանը ուղեղամորմոք այն հարցի, թե՛ ինչո՞ւ՝ ընկավ երկիր Նախրին: Հշմարտությունն այդ տարիներին հրապարակավ ասելու և իր քաղաքական վերաբերմունքն ի յուր ամենքի ճշտելու համար առնվազն պետք էր սխրանքի գնալ: Պատմական հավաստիությամբ Չարենցը ներկայացնում է հայրենիքի կորուստի քաղաքական պատճառները՝ ուղղակի ազգային դավաճանություն համարելով այդ օրերին հայ բոլշևիկների գործունեությունը՝ ի դեմս վեպի բոլշևիկ հերոսների՝ օր. Սաթյոյի, Կարո Դարայանի և Մարտին Դրաստամատյանի: Վեպի այս մասում է նաև, որ Չարենցը բացահայտում է իր գլխավոր հերոսի՝ Մագութի համոյի ողբերգական կերպարը: Ազգային նպատակի իրագործման ճանապարհին Չարենցի հերոսը հանուն Նախրի արտասովոր ինքնագոհողության է դիմում. համոն սեփական աչքերով տեսնում է քաղաքի ռուս պարենիսի իր կնոջ հետ իր իսկ ննջանքները: Երեկվում է վատաստությունը, սեփական պատվախնդրությունը մոռացած՝ համոն տագնապում է Նախրի համար. նա, ում հետ պիտի ազատագրի երկիր հայրենին, բռնաբարում է իր ընտանեկան սրբությունը, և դա՛՝ ճակատագրական այն պահին, երբ, ինչպես Չարենցն է գրում, «ուղեղայինն արդեն երկրայինի պիտի փոխվեր. ուղեղայինը պիտի իրականանար»: Հիշտ այդպես բռնաբարվում է նաև Մագութի համոյի ազգային սրբությունը: «Քաղաքական իրադրությունն ինքնին դառնում է գավիշտական,- նկատում է Դ. Գասպարյանը,- և մահաշունչ ծաղրը տարածվում է ամեն ինչի վրա: Ուղեղային եղջյուրներից մինչև ամուսնադավության պղծեր մի քայլ է միայն ոչ միայն համոյի համար, այլև՝ ամբողջ երկիրը»¹: Ռուսական գործերը, ըստ Չարենցի, 1914 թ. առաջ շարժվելով և նահանջելով Արևմտահայաստանից, մեծ կորուստներ պատճառեցին՝ արևմտահայությանը թողնելով դարավոր ոտնի յաթաղանի ներքո: «Ձիերը, քարագած նիթերների նման,

¹ Դ. Գասպարյան, Եղիշեն Չարենց: Հայոց բանաստեղծության մայրաքաղաքը, Ե., 1996, էջ 231:

տնկերում մնացին»։ Չարենցի ակնարկած Նիոբեն Մագույթի Համոն է, հունական առասպելի՝ գավակներին կորցրած մայրը, որ կերպարանավորվում է արցունք թափող քարի։

Վեպում Չարենցի խոհերը շատ դեպքում արտահայտում է Մագույթի Համոն։ Ահա նորից շրջվում են քաղաքական խաղաղթերը, ցարական գործերը վերագրվում են «ներազյալ վայրերը»՝ հասնելով մինչև Էրզրում. կատարվում է Մագույթի Համոյի՝ դեմ պատերազմի նախաօրնի կանխատեսումը, բայց բավականին ուշ, մեծ կորուստներից հետո. «Ինչո՞ւ հնարավոր չէր Էրզրումի գրավումը «ցոթ» օրից. ո՞վ էր խանգարողը։ Ո՞վ կար դեմը կեցած, ի՞նչ գորավոր ուժ. ռազմի ի՞նչ կարողություն... Ո՞վ, ո՞վ վերցրեց վաճառել տե՞ղ ոչ՝ Նաիրյան բանակը. ո՞վ վերցրեց նույն Էրզրումը... «Արիկանե՛ր, լրբե՛ր, դավաճանանե՛ր»- փրփուրը բերանին որոտում էր հաճախ, ձեռքը սնդանին խփելով, Տեղական կոմիտեի նիստերին Մագույթի Համոն»։ Առաջին համաշխարհային պատերազմի ավարտը, ըստ Չարենցի վեպի, մեծ հեռանկարներ է նախագծում Նաիրիի կյանքում։ Դարավոր ռոմանտիկ էր եղել, թվում էր՝ հասնել է հայ ժողովրդի արյան հատուցման պահը, մարմնավորվում, իրականություն էր դառնում նրազյալ Նաիրին։ Բայց վրա է հասնում 1917 թ. ռուսական հեղափոխությունը՝ խորտակելով ազգային վերջին հեռանկարները։ Ռուսական հեղափոխությունից հենց Չարենցը սկսում է երկիր Նաիրիի կորուստի պատմությունը։ Յարական գործերը հետ են կանչվում Արևմտահայաստանից՝ հայ կամավորներին թողնելով միայնակ։ Բայց ռազմաճակատը քայքայող ամանամեծ չարիքը, ինչպես Չարենցն է փաստում, «դեզերտիկությունն» է։ Չարենցը մերկացնում է հայ բոլշևիկների ազգությամբ գործունեությունը, ինչի արդյունքում ջլատվում են նաիրյան բանակի շարքերը, և սկսվում է դասալիքություն, նահանջի և ազգային կորուստների ծանր ճանապարհը։ Չարենցն մտքի միջոցներով, գրաբարություններով, ստահող խոստումներով Չարենցի բոլշևիկ հերոսները «դեզերտիկություն» են քարոզում կոկող կամավորների և ժողովրդի շարքերում՝ առաջխաղացում ասպետներով դարավոր ռոմանտիկ համար։ Եվ ի՞նչ էին տարածում նրանք հայրենիքի ազատագրման նվիրյալների՝ Մագույթի Համոյի և նրա գաղափարակիցների մասին. իբր Մագույթի Համոն իր «Լույս» նավթարդյունաբերությունից արժանանալով նավթ է վաճառել դարավոր ռոմանտիկ, սակիներ դիզել իր ժողովրդի արյան հաշվին, իբր բժիշկ Սերգեյ Կասպարիչը սպանել է իր հիվանդ երիտասարդ կնոջը, որպեսզի ազատվի նրանից, և որ նա նաիրյան զեղեկություններ էր մատակարարել գաղտնի բաժանմունքի վարիչին։ Չարենցը բազմիցս հերքում է նման տեղեկությունների իրավագիտությունը, մատնանշում այդ խայտառակ, նենգ գրաբարությունների հեղինակներին. «Այսպիսի ահա չվաճառված ամբաստանություններ կային իրա- Համո Համբարձումովիչի և բժիշկ Սերգեյ Կասպարիչի հասցեին այդ միջակայքում, և մենք չենք կասկածում, որ այդ միջակայքում նամակը կարող էր այլ աղբյուր ունենալ, քան օր. Մաթոյի փչացած ուղեղը, որ, ի բնի փչացած լինելուց բացի, տարիներ շարունակ կրել էր իր վրա մի ավելի ևս փչացած, ավելի քան շնական ուղեղի - պ. Մարութի ուղեղի - ազդեցությունը»։

Ահա պատմական ամբողջ դառը ճշմարտությունը՝ Չարենցի անկաշառ մեկնաբանությամբ. «Ամեն ինչ փոխվել էր և ընդունել միանգամայն նաիրյան կերպարանք։ Նաիրին էր, հին, նրազյալ, հավիտենական Նաիրին, որ տարիների մոտից, մշուշից ելած՝ առել էր իրական կերպարանք։ Եվ ամեն ինչ լավ էր գնում, նույնիսկ կարելի էր ասել, որ կատարյալ հանգիստ ու խաղաղություն կտիրեր նաիրյան այդ քաղաքում և շրջանում, եթե չլինեին մի շարք ստոր, անպատկառ, նաիրադավաճան մարդիկ, որոնք խանգարում էին նորաստեղծ նաիրապետության հանգիստը։ Եվ ո՞վ գիտե՞ր կատարվելի՞ս արդյոք հեռագրա դժբախտ ու ահավոր դեպքերը, եթե չլինեին այդ ստոր, անպատկառ, նաիրադավաճան մարդիկ։ Երևակայում ե՞ք՝ դրանք, այդ ստոր, դավաճան, անպատկառ մարդիկ, դեմ էին «գրավված վայրերի» պաշտպանության. ինչ-որ խաղաղություն էին պահանջում այդ ստոր, դավաճան, ազգությամբ մարդիկ, երբ դեմ չէր գեներալադուստր ռոմանտիկ, ավելին, երբ իր վերջին հորդաները հավաքած՝ թափափուկ բանակներով պատրաստվում էր «գրավված վայրերի» խուժել, վերստին հրի ու սրի մատնել այնքան դժվարություններով վերջապես ազատագրված երկիրը Նաիրի... Օ, ոչ մի անուն չէր կարելի դնել այդ նաիրաբաց տխրությունները, քան այն անունը, որ դրել էր Տեղական կոմիտեն, ո՞չ, «Ընկերությունն» ինքը, և այդ անունն էր, ինչպես քանիցս կրկնել ենք ի միջի այլոց, «Ազգային դավաճանությունը»։ Եվ ովքե՞ր էին դրանք, և ո՞վ էր դրանց ղեկավարը. <...> արյունարբու մի սկյուռ, ռազմած մի մոնոլո, մի գերմանական լրտես, որ պլոմբած վագոնով հայրենիք վերադարձած՝ չին գործերու և անվարտիք ավարաներու օգնությամբ ներսերում լսել էր արդեն իշխանությունն ու հանձնել այն գերմանացիներին՝ այսպիսով գլուխ բերելով իր այն խոստումը, որ տվել էր արյունարբու Վիլհելմ կայսեր...»։

Չարենցը բացում է իր օրերի պատմության մտքի փակագծերը, հայեցում և վերստին հայեցում նրանց, որ գեներալադուստր մեր դարերի վատասակը՝ ազգային պետականությունը՝ 1918 թ. Հայաստանի անկախ հանրապետությունը։ Խորհրդահայ չարենցագիտությունը շրջանցել է այս ամենը, բոլշևիկների վիպական կերպարված պատմական նախախիթերը։ «Ըստ երևույթին, - գրում է գրականագետ Հ. Թամրազյանը,- իսկական բոլշևիկների գործն ու պայքարը չէր հարմարվում երգիծական վեպի մտահղացմանը։ <<> Պ. Մարութեն, ըստ էության, որ ընկերակիցների հետ միասին, մնում է որպես դաշնակցության անպրիցիպալ հակառակորդ։ Բայց նրանց միջոցով Չարենցը կատարում է որոշ մերկացումներ, բացում դաշնակցության գործունեության մտքի կետերը»¹։

Յուրայինների մատնությամբ գերեզմանավորվում է արդեն ազատագրված Նաիրին, ռոմանտիկ թափափուկ հորդաները հասնում են մինչև կարս։ Մագույթի Համոն գերմարդկային ճիգեր է գործադրում, հրատապ միջոցներ ձեռնարկում դեմ հնարավոր փրկության համար, բայց կործանումն անդարձ էր. «Հավիտենական Տիվանդի հորդաներից սարսած, Մահամերձի թափափուկ բանակներից սարսափահար՝ նախիրների նման արևի տվին նաիրյան բանակները»։ Կարսի բերդում առանց գործի մնացած Մագույթի Համոն ռդբում է՝ կեղերվելով իրեն. «Ո՞ր է, ո՞ր է ուժը, ո՞ր է կորովը հնամյա նաիրյան ցեղի. ո՞ր է երկաթե բռնցքը... Ո՞ր է, - հարցնում էր՝ դառնացած Եհովայի նման մազերը պոկելով, Մագույթի Համոն. բայց պատասխան չկար. բերդի հազարամյա, մուսլի պարիսպներն էին միայն լուռ նայում Մագույթի Համոյին, վերջին այդ արքայակերպ նաիրցուն»։ Ուտիլը մտնում է արդեն վատկող քաղաքի դարպասներից ներս, սրի քաշում բերդաքաղաքում մնացած բնակչությանը։ Մինչև վերջին վայրկյանը իրենց դիրքերի վրա, երազուն դրոշին հավատարիմ, մնում են Մագույթի Համոն, ընկ.Վառդայանը, Սերգեյ Կասպարիչը։ Բերդի աշտարակի ամենաբարձր կետում՝ երազունի կողքին, նրանք գերեզմանավորվում են և, գարիտների գանահարանքի եկթարկվելով, խաչելության հանվում այն հեռագրասյունների վրա, որոնք մի քանի օր առաջ կանգնեցրել էին հայրենիքի դասալիքների համար։ Չարենցն իր պատմությունն ավարտում է խորհրդանշական պատկերով. Մագույթի Համոյի գլխավորում ռոմանտիկ մի տախտակ է փակցնում՝ վրան նաիրյան տառերով գրված՝ Մ.Հ.Ա.Ն., որ նշանակում է՝ «Մագույթի Համո՝ Արքա Նաիրի»։ Ճիշտ այդպես խաչելության էր հանվել յուրայինների կողմից մատնված մարդկության փրկիչը՝ Քրիստոսը, և խաչված Հիսուսի գլխավորում ևս գրված էր՝ Հ.Ն.Ա.Հ., այսինքն՝ Հիսուս Նագովրդի՝ Արքա Հրեից։ Ի դեպ, դաշնակցության և Քրիստոսի խորհրդանշական պատկեր-անդրադարձն առկա է ոչ միայն Չարենցի վեպում, այլև դարասկզբի հայ մտքի պատմության մեջ. «Ինչպես Նագովրդու մեծությունը նրա մեջ չէ, որ պատմության

¹ Հ. Թամրազյան, Եղիշե Չարենց, Ե. 1981, էջ 269:

մեջ մի քանի փաստեր թողնեց, այլ որ զգայապաշտ մարդկության նոր իղնախներ տվավ և մի այլ աշխարհի կարտոտվ հոգիները վառեց, այնպես էլ մեր նորագույն պատմության այս հերոսներն ու առաքյալները արժեք դարձան ոչ թե իրենց հաջող կամ անհաջող կրթիվներով, այլ նրանով, որ առաքինությունների մի նոր տալիստակ դրին իրենց ժողովրդի առջև»¹:

Չարենցի քաղաքական վերաբերմունքի տեսանկյունից կարևոր է նաև վեպի վերջաբանը: Սոսքի մի առիթով «համբավ» անվանելով իրեն՝ Չարենցը Նաիրիի մասին խոսքը վերջացնում է ողբերգա-երգիծական երանգով. «Նաիրունագրութիսանոյական գարի, որ տեսնել էր մի անգամ երկարականջ քեռին իր այն նշանավոր երագուն»:² Այսինքն՝ Նաիրին որպես նվիրական երագանք հարակայում է ոչ միայն Դաշնակցության գաղափարաբանության, այլև իր՝ Չարենցի էության մեջ:

«Երկիր Նաիրի»-ն գրականագիտության մեջ շատ է համեմատվել Աբովյանի «Վերք Հայաստանի»-ի հետ: Այդ առթիվ Ս. Աղաբաբյանը գրում է. «Չարենցը նույնպես գործ ուներ բացված վերքերի հետ, բայց նա տեսավ նաև ազգային վերածնության սկիզբը, ուստի և պետք է դիմեր գրնգուն, ցնծագին ուրախության ոճին»²: Չլիսելով անվանի գրականագետի այս դիտարկումը և մի կողմ թողնելով գրական բոլոր առնչությունները՝ նշենք միայն, որ «Վերք Հայաստանի»-ն և «Երկիր Նաիրի»-ն խաբված և ստրկության դատապարտված ժողովրդի պատմության ողբերգելի են, ազգային վերքի խոր հառաչանքներ: Ստրկության տիրապետությանը չի վերջանում Չարենցի ողբը, ինչպես չէր վերջանում «Վայրենասերի ողբը ռուսական տիրապետությանը: Ինքը՝ Չարենցը, վեպում ընդգծված տառատեսակով գրել է. «Մտաչատուր Աբովյանը»՝ Վերք Հայաստանի, որը հայրենասերի « իր հայտնի վեպում պատմում է, թե ինչպես Լիդիագլոց կրնեսո թագավորի համր լեզուն բացվում է մայրենի լեզվի հրաշալի հրաշքով: Իմաստն այն է, որ հայրենագործ մարդու գոյությունը մի վերք է, մի յարա, իսկ մայրենի լեզուն՝ հրաշարաբ բազմակ: Կա կորույսյալ հայրենիքը, կա նաև կորույսյալ հայրենիքի լեզուն՝ որպես կորուստի հիշողություն, ինքնության ակունք, հոգևոր հիմք ու սկիզբ վերագտնում: Չնոռանանք, որ «Երկիր Նաիրի»-ն հիմնաքար եղավ կորույսյալ հայրենիքի գրականության ստեղծման ճանապարհին:

Ի՞նչը մղեց, սակայն, նաիրապաշտ պոետին «Երկիր Նաիրի»-ից հինգ տարի անց՝ 1929 թ., նաիրադավան կուսակցությանը հղելու «Դաշնակցականներին» բանաստեղծությունը: Առաջին հայացքից կարող է թվալ, թե Չարենցը տուրք է տվել ժամանակի հակադաշնակցական քաղաքականությանը, մանավանդ որ իր դեմ նագիծնալիստական մեղադրանքներ էին ուղղում: Մեր համոզմամբ, բանաստեղծության ենթախորքում Չարենցը դրել է իշխող վարչակարգի գաղափարախոսությունը և այդ գաղափարախոսությանը հյու համակերպված սերունդի հոգեբանությունը.

-Մեզ ապի նրանք, որ կյանք մի վսեմ
Կերտելու համար հարկավոր է նախ
Ձեր դեմ մահացու պայքար սկսել,
Ձեզանից լինել հեռու և անկախ...

Պարզ է դառնում, թե իշխող կուսակցությունն ինչպես էր «ժողովրդի թշնամի» հռչակում ազգային կուսակցությանը՝ պաշտոնական քարոզչությանը գործելով նրա գաղափարաբանությունը խեղաթյուրելու և ոչնչացնելու ուղղությամբ: Բանաստեղծության վերջում Չարենցը գրում է, թե «Երգում է քնարն իմ պոնձաձույլ»:³ Շատ չանցած՝ Չարենցը հրաժարվեց այդ քնարից և կրկին կանգնեց մեծ մայրուղու վրա: Այդպես էլ վերնագրեց հաջորդ գիրքը՝ «Գիրք ճանապարհի», որ նաև իր անցած ճանապարհի խոհերի գիրքն էր:

1933 թ., կրկին անդադարադադարով «Դաշնակցականներին» բանաստեղծությանը, Չարենցը գրում է «Մոնետ»-ը՝ բնաբան ընտրելով առաջինի «Օ, դուր ողբալի՝ անակալեզներ» տողը: Նշենք, որ «Գիրք ճանապարհի»-ի «Արվեստ քերթության» շարքն սկսող այս բանաստեղծությունը նախորդում է «NOSTALGIA» երկմասանոց բանաստեղծությանը, nostalgia կամ կարտոտախտ՝ հեռվում մնացած հայրենիքի հանդեպ: Հայրենական ցավով հիվանդ պոետը մի ձեռքով հոգով երգում էր այն, ինչի ուխտավորն էր Դաշնակցությունը, մյուս ձեռքով քննադատում Դաշնակցությանը: Դա լավագույնս հիշեցնում է հավատաբնուող միջնադարի՝ եկեղեցական քարացած դոգմաների ու ավանդական շարքնի ժամանակահատվածը, երբ բանաստեղծները կյանքի կարտոտը երգելու համար Աստուծո ներքող պիտի ասեին:

Այն խոհերն ու ապրումները, որ արտահայտում է դեռ 1925-ին գրված «Հանգուցյալ պարոնը կամ պարոն հանգուցյալը» պատմվածքի դաշնակցական հերոսը, նաև Չարենցին են: Հռոմում Չարենցը, որին հավատացրել էին, թե Դաշնակցությունը մեռած է ու գերեզմանված, վերագտած բախտի ու հավատի նման հանդիպում է «հարություն առած» դաշնակցական հերոսին՝ վերստին նույնացնելով նրան՝ Քրիստոսի կերպարին, նրա միջոցով բացելով իր մտածումները: Ամբողջ պատմվածքը որոշված է Չարենցի զուգված համակրանքով ու ներքին սիրով: Ասելիքը դնելով խորքում՝ Չարենցը խոսքը վերջացնում է անհարկի քննադատությամբ՝ իր քաղաքական վերաբերմունքը չբացահայտելու համար:

1933 թ. գրած «Մահվան տնսի» պոեմում, Չարենցը, ուրվագծելով հայ ազգային-ազատագրական շարժման նվիրյալների ողբերգական ու վսեմ կերպարները՝ Բաբի, Խրիսյան Հայրիկ, Քրիստափոր Միքայելյան, Սիմոն Զավարյան, Ռոստոմ Չորյան, Միսանյան, Վարուժան, Ահարոնյան, Խաժակ և ուրիշներ, և նրանց հետ որպես հավաքական ուժ՝ Դաշնակցությանը, շեղանկով ինքն իրեն և պատմական ճշմարտությանը՝ Դաշնակցության հիմնադիր-խորհրդանիշներից մեկի՝ Քրիստափոր Միքայելյանի մասին գրում է.

Ես սրտի փոխարեն ունեի իմ կրծքում պողպատ գապանակ,
Անձամոթ էր կյանքում ինձ համար ամենայն վարանում ու մահ,
Մեր երկրի արի այրերից կազմեցի ես մեծ մի բանակ,
Եվ մեր սև դրոշի վրա գրեցի «Հայրենիք կամ մահ»:

Գնացին նոքա, այդ արի գինվորները, Երկիրն Ավետյաց,
Տիրում էր այնտեղ բռնություն, և՛ ոճիր, և՛ կյանք անազատ.
Գնացին նոքա՝ սրբելու մեր դեմքից նախատիներ ու լաց,
Բայց երկիրն այրյալք որդեղեց տագնապած Արքան այն գազան:

Այս խոր ընթացումն ու պատկառանքը Չարենցն ուներ Դաշնակցության հանդեպ, ինչքան էլ բացարձակ չխոստովաներ: Չարենցի ճանապարհը ևս նրան տանելու էր ինքնագոհաբերության, և Գողգոթայի նոր խաչափայտին գամվելուց առաջ բանաստեղծի միտքը պիտի շաղափեր այս տանջալի խոհը.

¹ Գ. Նժդեհ, Հատրնտիր, Ե., 2001, էջ 146-147:
² Ս. Աղաբաբյան, Եղիշե Չարենց, Ե., 1973, էջ 438:

-Ի բրև հիտ՞ու եւ արդոք յառ բարձրանում,-
Թե՞ ավագակ եւ լոկ դու մահապարտ...
Պիղատո՞ւ է արդոք այսօր ամեն մի մարդ,
Որ քո հանդեպ ձեռքերն է լվանում...
...Ունե՞ս արդոք, հոգի՛ս, անագորոյն նժար,
Որ նժարես այս խոհն անկշռելի
Չարչարանքիդ այս սև կնագիշերին...

Հիշենք, որ Չարենցի հոգևոր աշխարհում խաչին գամված առաջին հերոսը դաշնակցական Մագույթի համոն է: Մի դեպքում խաչելություն թուրք հորդանների, մյուս դեպքում՝ բոլշևիկյան իշխանության կողմից: Երկու դեպքում էլ խաչելություն Նաիրիի ճանապարհին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղաբաբյան Սուրեն, Եղիշե Չարենց, Ե., 1973:
2. Գասպարյան Դավիթ, Եղիշե Չարենց: Հայոց բանաստեղծության մայրաքաղաքը, Ե., 1996:
3. Գարեգին Նժդեհ, Հատընտիր, Ե., 2001:
4. Եղիշե Չարենց, «Երկիր Նաիրի», Ե., :
5. Թամրազյան հրանտ , Եղիշե Չարենց, Ե. 1981:

Հ Տ Դ 941 (479. 243)
Գ Մ Դ 63. 3 (25) 43
Ա - Բ 706

Գրականագիտություն

Զինաիդա Բալայան
դոցենտ, բ. գ. թ., ԱրՊՀ, գրականության եւ լրագրության ամբիոն
E-mail: zinaida_araqelyan@mail.ru

**XIX ԴԱՐԻ ՎԻՊԱԿԱՆ ԱՐՅԱՆԸ.
ՐԱՅՆՈՒ «ՆԱՄՄԱՅԻ ՄԵԼԻԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԳԻՐՔԸ**

Աշխատության պատմական ժամանակաշրջանն ընդգրկում է XVIII-XIX դդ. Սասնայի մելիքություններում քաղաքական կյանքի, տարածաշրջանում՝ պատմաաշխարհագրական լանդշաֆտում, քաղաքական իրավիճակին տիրապետել գանկագող հարեւան երկրների երկդիմի խաղերի, արտաքին եւ ներքին հարաբերությունների, ինքնիշխանության կորստի սուր պատկերը, ապա ռուսական կայսրության ենթակայության տակ հայտնված արցախահայության ազատագրական պայքարը պարսից տիրապետության դեմ, քաղաքական դիրքորոշումները, հուսախաբություններն ու կորուստները, լուսավորչական-կրթական շարժումը, Անդրկովկասում Շուշիի՝ «արվեստների օազիսի» լուսավորության կենտրոն հանդիսանալը՝ ներկայացնելով Արցախում ծավալված ազատասիրական կյանքի հարուստ նկարագիրը:

Բանալի բառեր. Արցախ, գրականություն Արցախի մասին, Սասնայի մելիքությունները, ազգային, Րաֆֆի, XVIII-XIX դարեր, քաղաքական դիրքորոշումները, հուսախաբություններն ու կորուստները:

Зинаида Балаян,
к.ф.н., АрГУ, доц. каф. литературы и журналистики,
E-mail: zinaida_araqelyan@mail.ru

“ЭПИЧЕСКИЙ АРЦАХ 19-ГО ВЕКА: КНИГА РАФФИ “МЕЛИКСТВА ХАМСЫ”

Работа охватывает историческую эпоху, которая включает в себя политическую жизнь Меликств Хамсы 18-19 веков, двойные игры соседних стран, которые хотят завладеть политической ситуацией региона, внешние и внутренние взаимоотношения острую картину самоуправления, а так же освободительное движение арцахства, находящегося под русским правлением, против персидского ига, политические ориентации, потери и надежды, культурно-просветительское движение, Шуши как “оазиса искусств” в Закавказье, представляя картину культуры, литературной богатой жизни Арцаха.

Ключевые слова: Арцах, литература об Арцахе, Меликств Хамсы, национальный, Раффи, 18-19 вв, политические ориентации, потери и надежды.

Zinaida Balayan,
ASU, PhD in Philology, Associate Professor
E-mail: zinaida_araqelyan@mail.ru

EPIC ARTSAKH OF 19TH CENTURY: «KHAMSA MELIKDOMS» BY RAFFI

The study covers the political life of Khamsa Melikdoms, the relations of Artsakh with neighboring states, its internal situation, loss of self-government, struggle against Persians and unification with Russia, political stance, educational movement, cultural and literary activity in the 18-19th centuries.

The study was carried out by the application of comparative, synthetic, hermeneutic, axiological and structural methods. The analysis focused on typological method that helped to disclose the characteristics of literature, education, history and culture.

Key words: Artsakh, Artsakh literature, Khamsa Melikdoms, national, Raffi, political orientation, educational movement, 18-19th centuries.

Րաֆֆու «Սասնայի մելիքություններում» կատարված բնութագրումները բնորոշում են մարդկային հատկանիշները, հուշում, թե որտեղից է գալիս մելիքությունների պատմության էթնիկական տրվածքը՝ անմիաբանությունը, դրա հետեւանքով ծիլ տված արյունալի բախումները:

«Սասնայի մելիքությունների» շարադրանքում այս երեւույթը առկա է դառնում թե՛ Մելիք Շահնազար II-ի, թե՛ Ռուստամի ու այլ անմիաբանների տիպական գծերում:

Մելիք Միրզա խանը եւ նրա ժառանգները (մելիք Ալլահվերդին (շփոթելի Հասան Ջալալյան մելիք Ալլահվերդու հետ), եւ Մելիք Ղահրամանը պատմական կերպարներ են: Րաֆֆին, բնութագրելով հերոսներին, նրանց ներկայացնում է նաեւ վիպական շղարշներով՝ հետեւելով ավանդություններին: Անշուշտ, Ժողովուրդը նրանց մասին հետաքրքիր պատմություններ է ստեղծել՝ յուրաքանչյուրին որակելով ըստ արժանիքների: Օրինակ՝ անմիաբան Մելիք Ղահրամանը, մատնությունաբեկ խաչնի Հասան Ջալալյան իշխանին՝ քաջ ու անպարտելի մելիք Ալլահվերդուն իբր խորհրդի իր տուն՝ Լուսինատան կանչելով կալանավորեց եւ ուղարկեց Փանահ խանին: Վերջինս դահիճներին հրամայեց գլխատել իշխանին, կոտորել նրա ընտանիքը, իսկ արդյունքում Շահնազարը իր եղբայրասպան արյունոտ ձեռքերը թաթախեց եղբոր որդու՝ Սայի բեկի արյան մեջ՝ վախենալով, որ վերջինս կլուծի հոր՝ մելիք Հովսեփի արյան վրեժը: Փանահը, իր տված խոստումի համաձայն, մատնիչ

Այլահվերդուն հանձնեց Խաչենի մելիքությունը. այս կերպ Փանահի դաշնակիցներ դարձան Վարանդայի եւ Խաչենի մելիքները:

Անշուշտ, Ռաֆֆուն այս հարցերի շարադրմանը օգնել է նաեւ Պլ. Չուբովի «Ղարաբաղի աստղագետի» վիպական պատմմաների հետաքրքիր շարքը, հերոսների վարքը, մելիքների առջեւ ծառացած ոչ միայն կենսական, այլեւ քաղաքական, իրավական ու այլ կարգի բարդ խնդիրները, որոնք փորձել են հաղթահարել: Ռաֆֆին դրանք պատմագրական ուղղվածությամբ ու հիմնարար քննությամբ է ներկայացրել «Խամսայի մելիքություններում»:

Նույնատիպ երանգների գեղարվեստական մարմնացումներով է կերպարված պետական հանցագործ հռչակված ցառչի Փանահի կերպարը՝ տրված տիպական հանգուցալուծումներով՝ րաֆֆիական արվեստի վարպետությամբ:

Փափուկ դիվանագիտության, խորամանկության մարմնացում, պարսկական բարքերը ընդօրինակված, պարսկական կառավարությունից փախած Փանահը, իր կայացման սկզբնական շրջանում փորձելով բերդեր (Բայաթ, Ասկերան) կառուցել՝ պատժվելով հայ մելիքներից, փոխեց գործելու տակտիկան եւ ստրատեգիան՝ սպասելով գործել հարմար ու ձեռնտու պահի, որը շատ չուշացավ:

Խաչենիությամբ մելիք Ծահնագարից վերգնելով Շուշին, անառիկ բերդ «հիմնելով» փորձեց նաեւ անմիաբանության, խարդախության գործնով Խամսայի մելիքներին իրար դեմ լարել, նրանց ջլատել, մելիքների միաբանությունը քանդելու «առաքելությամբ»՝ Մելիք Ծահնագարի հետ դարձավ Ղարաբաղի գերեզմանափորը: Ինչպես տեսանք, նաեւ դեպքերի բերումով, իր կողմը գրավելով Վարանդայի եւ Խաչենի մելիքներին, ամրապնդեց իր դիրքերը:

Որքան էլ Փանահը իր դաշնակիցների հետ փորձում էր Ղարաբաղում դրության տեր դառնալ, նրան չէր հաջողվում, պատժվում էր Գյուլիստանի մելիք Յուսուբի, Ջրաբերդի մելիք Աթամի, Դիզակի մելիք Եսայու գորքերից: Փանահի անկարողությունը ցույց տալու համար Ռաֆֆին ներկայացնում է ժողովրդի մեջ պատմվող մի **առակ**, որը լույս է սփռում Ղարաբաղի կյանքի սովորոտ կողմերի վրա. «Մինչև այսօր **առակ** է դարձել Ղարաբաղի ժողովրդի մեջ,- գրում է Ռաֆֆին,- թե Թյուրի-Արզումանը, դալի Մահրասան և Չալաղան-Յուզբաշին ամբողջ յոթն տարի յուր չտվեցին, որ մի թուրք անց կենար Մագե-կամուրջից (Մագե-կամուրջ կոչվում է Գարգար գետի վրա գտնվող կամուրջը Շուշի բերդի մոտ) դեպի Ջրաբերդի և Գյուլիստանի կողմերը»¹ :

Ռաֆֆին վիպական հյուսվածքում գործող ժողովրդական վրիժառու Դալի Մահրասայի (դալի-գիծ.- Ավագ վարդապետ) մականվան մասին նշում է, թե ժողովուրդը չի մոռացել իր հերոսներին, եւ որ արևելքի XV դարի հերոսը՝ Քոր-օղլին եւ նրա խմբի քաջերը կոչվում էին դալիներ (գժեր): Նույն հատկանիշը ժողովուրդը իր սիրած հերոսին՝ Ավագ վարդապետին էր տվել:

Այսպիսով, Դալի-Մահրասան Ղարաբաղի հայոց վիպական գծերով օժտված, անհավանական երևուցող Քոր-օղլին դարձավ:

«Ժողովուրդը գուցե մինչև հավիտյան կիլիշե այն բոլոր հրաշքները,- գրում է Ռաֆֆին,- որ կատարել է նա իր կռիվների մեջ: Երբ նստում էր իր նշանավոր մոխրագույն (բոգ) նժույգի վրա և կայծակի նման նետվում էր դեպի պատերազմի դաշտը, նրա ահարկու, որոտալից ձայնը բավական էր թշնամուն սարսափեցնելու համար»² :

Վիպասանի գրչի տակ բացահայտվում են արցալիցի հերոսի կերպարային անհատականացված գծերը, որոնք ներկայացնում են արցախահայության բնավորության լավագույն տիպական հատկանիշները, թշնամիների դեմ գիտակցված, անողոր պայքարը, սրբազան հայրենիքի պահպանումը:

Եկեղեցու մոլեռանդ մասսան չնեղեց գիծ աբեղային իր կատարած արյունահեղությունների համար: Սիմոն կաթողիկոսի աթոռակալության ժամանակ աբեղային տարան Էջմիածին ու բանտարկեցին սառցատան մեջ, որ ապաշխարին:

Ռաֆֆին նշում է, թե մի օր գիծ աբեղան իր բանտի մեջ լսեց, որ վանքում ինչ-որ աղմուկ եւ իրարանցում է տիրում: Նրա հարցին պատասխանեցին, թե Չալալի քրդերը թալանեցին վանքի անասունները, գուցե նաեւ կկողոպտեն վանքը:

Դալի Մահրասան խնդրեց, որ իրեն մի ձի եւ մի քանի զենքեր տան: Նրա խնդիրը բավարարեցին: Ապաշխարհողը, հեծնելով ձի, նետվեց ավազակների հետևից: Մի որոշ ժամանակից հետո աբեղան վերադարձավ՝ իր հետ բերելով Չալալի քրդերի կողոպտուրը: Վանահայրը ազատ արձակեց աբեղային՝ երդում առնելով, որ այլևս մարդասպանությամբ չի զբաղվի: Պարզ է, որ աբեղան չպահեց խոստումը, քանի որ մեղք չէր համարում իր հայրենիքի թշնամիներին կոտորելը ու շարունակում էր մասնակցել մելիքների մղած բոլոր պատերազմներին: Դրանցից մեկի ժամանակ Գանձակի մոտ՝ լեզգիների հետ պատերազմելու ժամանակ, ահագին կոտորած անելով, գիշերվա մի ժամի փորձեց մի քիչ հանգստանալ՝ նստելով մի քարի: Չորս կողմը սփռված դիակներ էին՝ ընկած աբեղայի հարվածներից: Դեռևս կենդանի լեզգիներից մեկը, գլուխը բարձրացնելով կրակեց եւ սպանեց աբեղային:

Մեծ սուգով քաջի մարմինը ամփոփեցին Գանձակի մայր եկեղեցու գավթում:

Դալի Մահրասայի տոհմից էր մի այլ ժողովրդական վրիժառու-հերոս, մելիք Ռուստամի նիզակակից Տեր Հարությունը:

Ժողովրդական մյուս վրիժառուն՝ Թյուրի Արզումանն էր: Թյուրի թուրքերենում նշանակում է ավազակ: Վերջինս անչափ աներկյուղ էր, աննկարագրելի քաջություն, հրաշքներ գործող: Քարավաններ ու գյուղեր, քաղաքներ էր կողոպտուի ենթարկում՝ օրը գերելով: Արզումանը մելիք Աթամի հոր՝ մելիք Իսրայելի հովվի որդին էր, մանկական հասակում ոչխարներ էր արածացնում: Երիտասարդության տարիներին դարձավ մելիք Աթամի ընտիր ու հավատարիմ գորավարներից մեկը:

Ժողովուրդը վիպելով իր սիրելի հերոսի մասին, նրան զարմանահարաշ, հերոսական հատկանիշներ է վերագրում:

Ճիմական թշնամիներից մեկը պարսիկների համար դարձել էր Փանահ խանը: Վերջինս ամեն տեսանկյունից պատուհասվել էր Թյուրի Արզումանից: Իրեն հատուկ խորամանկ հնարքով Փանահ խանը Արզումանի հորը՝ Սարգսին, բռնել տվեց եւ իբրեւ պատանդ փակել տվեց Շուշի բերդում: Մի օր Սարգսին հարցաքննելով Փանահը ասում է. «Նրատիր քո որդուն, որ դադարե չարագործությունից. նա Ղարաբաղի երկիրը ավերակ դարձրեց. Մագե-կամուրջը թողեց կարոտ մարդիկների անցուղիներից: Ես Արզուման անունով որդի չունեմ, պատասխանեց ժերուհի հայրը սառնասրտությամբ: Ինչպե՞ս չունես, հարցրեց խանը բարկանալով: Մի՞թե այն արյունաբեր Արզումանը, որ իմ երկրները կողոպտում է, որ իմ շինականների տները հրդեհում է, որը ինձ ամեն օր հանգստություն չէ տալիս, մի՞թե այդ ավազակը քո որդին չէ: Այո՛, իմ

¹ Ռաֆֆի, Խամսայի մելիքությունները, Եժ, տարբ. հատորով, տասներորդ հատոր, Երևան, Հայպետհրատ, 1959 (այսուհետև՝ Ռաֆֆի, Խամսայի մելիքությունները), էջ 211 :
² Նույն տեղում, էջ 212 :

որդին չէ, պատասխանում է դառնացած ծերունին,- եթե նա իմ որդին լիներ, քեզ մինչև այսօր կենդանի չի պիտի թողներ և քո բերդի ավերակները քո գերեզմանը պիտի դարձներ... »¹:

Կատաղած խանը հրամայում է գլխատել դառնացած հանդուգն Սարգսին:

Բաֆֆին Իբրահիմին համեմատելով հոր՝ Փանասի հետ, որդուն մահմեդական մոլեռանդության տիպար էր անվանում. «Նա ոչ միայն հալածում էր քրիստոնեությունը, այլ բռնությամբ ստիպում էր շատերին ընդունել մահմեդականություն...»²:

Իբրահիմի այդ վարմունքը խիստ կերպով վիրավորում է Արցախի մեկիքների, արցախցիների կրոնական զգացմունքները: Այդ էր պատճառը, որ վերջիններս, այլ հնար չգտնելով, Իբրահիմի ոճրագործության առաջն առնելու, պատահած ժամանակ սպանում էին Քրիստոսի հավատը ուրացողներին:

Դալի Մահրասան երգվել էր, թե չարագործ Իբրահիմը որքան հայ կրոնափոխի, այնքան թուրք է սպանելու: Այլ էր Թյուլի Արզումանի վարմունքն այս հարցում՝ կատարելով միսիոնների դեր, իր ձեռքն ընկած մահմեդականներին ստիպում էր անպայմանորեն խոստովանել քրիստոնեական կրոնի ճշմարտությունը եւ մահմեդականության ստույթները, այդ ամենը կատարելով՝ սրի օգնությամբ: «Մի դեպք,- գրում է Բաֆֆին,- որ Ղարաբաղի հայերի բերանում **առանկի** ձև է ստացել, արտահայտում է այդ մարդու (Թյուլի Արզումանի- Ջ. Բ.) կրոնական նախանձախնդրության հատկանիշները: Մի անգամ Արզումանը պատահում է մի բարձրաստիճան թուրք մոլլայի, որը իր ծառաների հետ գնում էր Շուշի բերդը: Բռնում է մոլլային, և իր սուրը նրա պարանոցի վրա դնելով, ասում է. «Եթե կխոստովանվես, որ Քրիստոսն աստված է, ես քեզ չեմ սպանի»: Մոլլան խոստովանվում է: Արզումանը այդ խոստովանությունը երեք անգամ կրկնել է տալիս և ապա բաց է թողնում մոլլային... Խանը... բարկությամբ հարցնում է. «Մի՞թե դու խոստովանվեցար, որ Քրիստոսն աստված է: Այո՞, խոստովանվեցա, պատասխանում է մոլլան:- Իսկ եթե դուք, վեհափառ խան, Արզումանի ձեռքը ընկնեիք, կասեիք, ոչ թե միայն Քրիստոսը աստված է, այլ և դու ինքդ, Արզուման, աստվածների աստվածն ես...»³:

Այս առակում երևում է Արցախի, արցախահայության ճակատագրի վտանգված դիմագիծը, հասարակական կյանքի ոչ կայուն՝ որոգայթներով լի քաղաքական նկարագիրը, եւ միաժամանակ արցախցու արիական, աներեր կամքն ու անխորտակելի ուժը, դյուցազնական կերպարը դիտարկելով, ոճրագործ Իբրահիմի ու նրա որդեգրած քաղաքականության, ընդհանրության մեջ՝ բոլոր կարգի թշնամիների հանդեպ:

Թյուլի Արզումանի, Դալի Մահրասայի արիական գործերի մասին պատմվող վիպական կտորները շարունակվում են գրքի շարադրանքի տարբեր էջերում՝ տիպական դառնալով արցախցի հերոսների, մեկիքների՝ հայրենիքի պատիվն ու հարգը, շահերը պաշտպանող հերոսների կատարած քաջագործություններում: Ժողովրդի սիրելի հերոս Թյուլի Արզումանը սպանվում է Գանձակի պաշտպանության ժամանակ:

Խորիմաստ միտք պարունակող «**Տափշտակող կամ ասպատակող հայրուրապետ**» մականուն ունի վիպական բացառիկ հատկանիշներով բնութագրված ժողովրդական մյուս վրիժառուն՝ Չալաղան Յուզբաշին, ով առավելությամբ ավագակապետ էր, ոչ թե գորապետ: Ժողովուրդը չէր հիշում նրա իսկական անունը ու թե ինչպիսի վախճան ունեցավ իր սիրելի հերոսը: Նրան իր արհեստի անունով էին հիշում ժամանակակիցները: Բաֆֆին գրում է, թե Չալաղան Յուզբաշին հանդիսանում էր այն 32 պատգամավորներից մեկը, որոնք անդադար դիմում էին ռուսաց արքունիքին եւ իրենց հայրենիքի փրկության համար օգնություն խնդրում: Քաջարի արցախցին տեսնելով, որ սպարդյուն է քաղաքականությամբ հայրենիքի համար որևէ օգտակար գործ կատարել, սկսում է գործել սրով: Հասկանում է, որ օտարները միմիայն իրենց շահերն ունեն եւ գործում են այդ շահերից ելնելով, անտես անելով հայոց բոլոր կարգի ծառայությունները, նվիրվածությունները, որ օտարների, նույնիսկ հավատակից պետությունների վրա հույս դնելը անիմաստ է ու խաբկանք, քաղաքական միամտություն: Այստեղ շոշափելի է արցախցու քաղաքականապես հասունացումը, ազգային ճակատագրի հարցում ճիշտ կողմնորոշման հասնելը, սթափ որոշում կայացնելը, թեկուզ այդ ամենին հասնելու ճանապարհները խորդուբորդ են, որոգայթներով լի, ամենօրյա դաժան պայքար՝ հագար ու մի ճակատումների դեմ՝ ստեղծված խառնակ ու անբարո ժամանակներում: Ուստի պետք է գործել՝ ելնելով ազգային շահերից, ազգային գաղափարակարգից:

Չալաղան յուզբաշու՝ այդ մեծ հայրենասերի ապրած ամբողջ ավերակները կարծես ներկաներին այսօր էլ հուշում են իրենց մեջ թաղած հուշիկների, ճակատագրական ժամանակների, հերոսական արցախցիների մաքառումների, պայքարի ողիսականը, երեւոյթների խորը առասպելականությունը: Ամբողջ գտնվում է Ջրաբերդ գավառում, Երիցմանկաց վանքի հանդեպ, մի նեղ ձորի մեջ՝ շրջապատված խիտ անտառներով՝ Թրդդի գետի ափերի մոտ:

Վիպապատմական կերպավորումներ են Գանձակի խաները՝ Ուղուրյու խանի որդի Շահվերդի խանը, որդին՝ Ջավատ խանը: Նրանք բարեկամաբար էին տրամադրված դեպի Արցախի մեկիքները, ժողովուրդը: Այդ կարևոր գիծը երևում է «Լամանայի մեկիքությունների» համարյա ամբողջ շարադրանքում:

Հայերի, Արցախի մեկիքների կողմից պահպանվող այդ ամուր բարեկամության առաջատար գծում կանգնած էին Ջրաբերդի մեկիք Աթառը, որդին՝ մեկիք Մեջլումը, Գյուլխատանի մեկիք Յուսուֆը, մայրը՝ քրիստոնեություն ընդունած իմաստուն Ղամար Սուլթանը՝ Գանձակի Շահվերդի խանի եղբոր աղջիկը: Բաֆֆին լավագույնս է ներկայացնում այդ կարևոր օղակը, ի տարբերություն մեկիքներին հաճախակի դավաճանող, բանասարկող վրաց իշխանավորների:

«Շահվերդի-խանը,- գրում է Բաֆֆին,- բարեսիրտ մարդ էր, որպես առհասարակ եղել են Գանձակի խաները: Նա ծագումով թուրք չէր, այլ պարսիկ էր. պարսիկները համեմատաբար ավելի բարի են եղել դեպի քրիստոնյաները, քան թե վայրենի, մանգոլական թուրքերը: Իր սահմանակից և հեռավոր խաների մեջ (որպես էին Շաքիի, Շիրվանի, Շուշիի, Դերբենդի, Բաքվի և այլ խաները) Շահվերդի-խանը ավելի բարձր դիրք ուներ և ձայն. նա պարսից կառավարությունից ճանաչված էր որպես բեզլեր-բեզի, այսինքն՝ իշխանների իշխան»⁴:

Խորամանկության, անհավատարմության, մատուռության, գոռոգության, ազգային հեղինակող տիպական գծերով են կերպավորված վրացի բարձր դասը, արքաները՝ Թեյմուրազը, Հերակը:

¹ Նույն տեղում, էջ 214 :
² Նույն տեղում, էջ 253 :
³ Նույն տեղում, էջ 253 :
⁴ Նույն տեղում, էջ 21 8-219 :

Ինչպես ժամանակին ուխտադրուծ Ֆայթալի խանը, նույնպես ընչաքաղց Թեյմուրազը դրժում է Արցախի մելիքների, մելիք Յուսուֆի հետ կնքած պայմանը՝ հաղթված Փանահին, Մելիք Ծահնագարին, մելիք Միրզա խանին տալ իրենց ձեռքը, եւ իր տիպական կերպարային գծերի համաձայն՝ Փանահից եւ անմիաբան մելիքներից փրկագին շորթելով բաց է թողնում:

Այդպիսով, հայոց մելիքների ամենագլխավոր ցանկությունը՝ համառ կռիվների ընթացքում գերել ու պատժել Փանահին եւ դավաճան մելիքներին, դժբախտաբար մնում է անկատար: Ժողովուրդը հոգնել էր 20 (քսան) տարի անընդմեջ ընթացող կռիվներից:

Ծահվերդի խանի միջնորդությամբ քանանայա պատերազմներից հետո հաշտություն կայացավ մելիք Աթամի, մելիք Յուսուֆի եւ Փանահի միջև: Վերջինիս պարտավորեցրին չխառնվել մելիքների գործերին:

Փանահը իր խոստումը պահպանեց մինչև վերջ: Որդին, որի բնավորության գծերը, ռիսկալիության զգվելի շերտերը կգերազանցեին նույնիսկ անչափ վտանգավոր հրեշներին, սատանային, մի առ ժամանակից հետո խորամուխ եղավ մելիքների կյանքի ցանկացած հարցերի մեջ, ըստ **առածի**¹ չարության մեջ գերազանցելով բոլոր մահկանացուներին, ռիսկալիության մեջ՝ ներքին եսր ցուցադրելով այլանդակի, բազմադեմ քաղաքական ոճրագործի տիպական գծերում:

Հնրոսական գծերով օժտված կերպավորում է Դիզակի մելիք Եսային: Ըստ Բաֆֆու՝ նա կարդացած մարդ էր. բավական հմտություններ ուներ տարբեր բնագավառներում, մանավանդ իմաստնացած էր հայոց, պարսից ու արաբական դպրությունների մեջ: Անչափ հայրենասեր է, քաջարի, հայրենական սրբություններն ու ավանդությունները պահպանող: Նրա ներաշխարհը ներքին մարդու զարգացման հզոր արքայակցիա է արձանագրում, դառնում էթիկայի ու հայրենասիրության բարոմետր:

Մելիք Եսայու Մոնա անունով դուստրը Մելիք Ծահնագարի կինն էր: Մելիք Ծահնագարից եւ Մոնայից ծնված գեղեցիկ Հուրիգադին հայրը կնության է տալիս Իբրահիմ խանին՝ կատարելով եւս մի ամոթալի գործ, փորձելով իր բարեկամությունը Փանահի որդու՝ Իբրահիմի հետ շարունակական տեսնել:

Այդ քստմունքի արարքը երկար ժամանակ նոր արյունալի կռիվների պատճառ հանդիսացավ մելիք Եսայու եւ Մելիք Ծահնագարի ու նրա դաշնակիցների միջև: Դեպի Տող կատարված հարձակումներից մեկի ժամանակ մելիք Եսային գերեց դավաճան ու անմիաբան մելիք Միրզա խանին: Հին ավանդության համաձայն, մելիք Եսային սուրը բռնելով ողորմելի դավաճանի գլխին ասաց. «Դե՛մ, Միրզա-խան, շատ նման ես այն դավաճանին, որին կոչում էին Մեհրուժան: Նա ուրացավ մեր կրոնը, նա պարսից ձեռքում գործիք եղավ և սկսեց մեր հայրենիքը ավերակ դարձնել: Նրան, որպես վարձատրություն իր կատարած չարագործությունների համար, խոստացել էին Հայաստանի թագու... Հայոց գորավարներից Սմբատ Բագրատունին, կրակի մեջ շիկացած շամփուրին պսակի ձեւ տվեց, և դնելով նրա գագաթի վրա, ասաց. «Դու ցանկանում էիր հայոց թագավոր լինել, ահա՛ ես, իբրև սապետ և թագակիր, պատկում եմ քեզ...»: Բայց դու,- շարունակում է իր ցատումնալից խոսքը մելիք Եսային,- գոնե Մեհրուժանի չափ փառասիրություն չունեիր. դու միայն մի ցած դավաճան էիր, որ ատորյա չնչին փառքի համար թուրք խանի և Մելիք Ծահնագար չարագործի արբանյակը դարձար: Բեզ հետ պետք է վարվել ինչպես մի կատաղած շան հետ, որին սպանում են, որպեսզի մյուս արարածները նրա կծոտելուց չվարակվեն... »¹:

Մելիք Եսային գայրույթով ի սուրը իջեցրեց Միրզա խանի գլխին (1735 թ.): Ինչպես տեսանք, գեղեցիկ Հուրիգադն էր մելիքների միջև ծագած արյունալի կռիվների պատճառը:

Իբրահիմ խանը խաչենի նոր կառավարիչ է նշանակում սպանված Միրզա խանի որդուն՝ մելիք Ալլահվերդուն: Երեք դաշնակիցները՝ Իբրահիմը, մելիք Ալլահվերդին եւ Մելիք Ծահնագարը, պատերազմի են ելնում Դիզակի մելիք Եսայու դեմ՝ պաշարելով Տող բերդը (1781 թ.):

Մելիք Եսային արդեն զրկված էր իր հզոր դաշնակիցներից. Գյուլիստանի Մելիք Բեգլարյան մելիք Յուսուֆը վախճանվել է 1775 թ., իսկ Ֆրաբերդի մելիք Իսրայելյան մելիք Աթամը՝ Իբրահիմի սարսափը՝ 1780 թ.: Տողի պաշարումը երկար է տևում:

Մելիք Եսային քաջությամբ պաշտպանվում է հակառակորդներից: Բաֆֆին այդ բոլոր վիպապատումները ներկայացնում է հետաքրքիր շարադրանքով: Այդ հետաքրքիր անդրադարձների նյութը Բաֆֆին քաղել է մի գրչագիր վիպապատումից:

Իբրահիմը մելիք Ծահնագարի խորհրդով մելիք Եսայու մոտ է ուղարկում մի քահանա եւ մի հայ մարդ՝ երդումով, խաչով, Ավետարանով, որ Մելիքը ցած իջնի պաշարված բերդից՝ հաշտվելու համար:

Ինչպես Սմբատ Բագրատունի արքան (նենգ Յուսուֆ ոստիկանը խաբեությանը Սմբատ արքային հանց բերդից՝ խոստանալով դադարեցնել բերդի պաշարումը եւ ժողովրդի նախճիրը, ապահովելով անձի ապահովությունը՝ հրավիրեց բանակցելու: Հանուն իր ժողովրդի փրկության՝ Հայոց արքան դուրս եկավ բերդից, սակայն Յուսուֆ ոստիկանը դրժելով երդումը՝ 913 թ. նրան տանջամահ արեց), նույնպես քաջարի մելիք Եսային դուրս եկավ Տող բերդից՝ հաշտվելու համար իր թշնամիների հետ: Իբրահիմ խանը, ըստ գրչագիր վիպաշարադրանքի, տմարդորեն դրժելով երդումը, մելիք Եսայուն Շուշիի բանտի մեջ խնդրել տվեց, բարբարոսաբար նրա ամբողջ ունեցվածքը յուրացրեց, ամբողջ ավերակ դարձրեց:

Մելիք Եսային ոչ միայն դարասեր էր, այլև մեծ հայրենասեր, քաջարի զինվորական, ազգային ավանդների շարունակող: Տողի բերդի եկեղեցու գավթում ամփոփված նրա գերեզմանի տապանագիրը հետևյալ արձանագրությունն ունի. «Այս է տապան քաջ իշխանին, Սայի անուն մեծ մելիքին. կարգեալ իշխան Նադիր-շահին. երեսուն երեք ամ տիրեաց Տիգակ երկրին. գրաջութին և զհաղթութին՝ արար բագում ձեռնաբ նորին: Ընդ անօրինաց էր հակառակ. ի սուր մաշեր զթշնամին: Ինքն պարզ և գորավոր, քան զառաջինսն էր ահավոր: Մինչ վաթսուն և վեց ամաց եղեալ, ի յաշխարհե վերափոխեալ:

Վախճանվեցավ թիվին ՌՄԼ (1781) »²:

Բաֆֆին շարադրելով «ժամանայի մելիքությունները»՝ պատմական նյութին զուգահեռ ներկայացնում է նաև գեղարվեստական անդրադարձներ, վիպական հյուսվածքներ, որովհետև Արցախի մելիքների պատմությունն իր վրա կրել է ժամանակի նկարագիրը՝ իր բոլոր շերտերով: Արցախահայության ճակատագիրը մելիքների պատմության շղթայված մի պարույրն է ու անբակտելի էջը: Գիրքը ներկայացնում է ինքն մելիքների թե՛ աշխարհագրագետության, թե՛ քաղաքական, իրավական, ազատասիրական մտքի ուղղվածությունը, թե՛ բարոյական ու էթնիկ հասկացությունների՝ ներքին մարդու կայացման հոգեբանական բարդ շերտերը, հայրենասերի բարձր որակների վարվեցողության պատկերը, թե՛ դպրասիրության

¹ Նույն տեղում, էջ 221-222 :

² Նույն տեղում, էջ 223 :

ու նրա դրսևորումների շարժը, մեկիքությունների ներքին և արտաքին դիմումը, թե՛ հասարակական, քաղաքական կյանքն ուղղորդելու ճիշտ ընկալումը, հարաբերությունները կարգավորելու ճանապարհը:

Գրողն այդ օղակը ներկայացնում է մեկիքների հարաբերությունների բազմաշերտ դրսևորումներում, իշխանական հաստատուն կարգերում: Բաֆթու այս միտվածության մեջ ընդգծված ենք տեսնում գրողի՝ շարադրվելիք նյութի հանդեպ որոշակի մշակված կարգ-օրագիր՝ մեկիքությունների երկդարյա ինքիշխանությունը ներկայացնելի փաստի ու գեղարվեստի միաձուլյ կառույցում, որպես մի անբաժանելի մարմին իր դրսևորումներով՝ ֆիզիկական, հոգևոր, գեղագիտական, փյուռփայական-բարոյական, էթնիկ, հոգեբանական ներստգումներով, ինչը կայացած ենք տեսնում «Խառնաձայի մեկիքություններում»: Այդ գծի վրա արժանահիշատակ շատ փաստեր կարելի է թվարկել:

Մի փոքր անդրադարձ կատարենք վիպական ուրույն գծերով ներկայացված, եռանդոտ ու մեծ հայրենասեր Գյուլիստանի Մելիք Բեգլարյան մելիք Յուսուֆի՝ նույնպես դավաճանական գծերով օժտված որդու՝ մելիք Բեգլար II-ի կյանքի մասին: Բաֆթին նրան ներկայացնում է իբրև սաստիկ գոռոզ, քաջասիրտ ու պատերազմասեր, անպարտելի երիտասարդ, ով դեռևս հոր կենդանության ժամանակ, նրա մղած կռիվներին մասնակցելով, հայտնի է դարձել իր զարմանալի հաղթանակներով: Մելիք Բեգլար II երկար չվարեց իր հայրենի իշխանությունը, քանի որ լեզգիների դեմ մղած ճակատամարտում՝ Գանձակից ոչ հեռու գտնվող Գորան գետի, նույնանուն գյուղի մոտ սպանվում է հրացանից արձակած գնդակից: Բաֆթին նրա առեղծվածային մահվան շուրջ հյուսված ավանդությունը «լեզենդա» է անվանում, նշելով նաև, թե մելիք Բեգլարի սպանության մեջ կար մի ամբողջ ժաման, այսինքն՝ վեպ:

Մոր՝ բարեսիրտ Հերիքնազի խնդրանքը, որ որդին այդ անգամ չգնա պատերազմի, քանի որ վատ երագ էր տեսել, մելիք Բեգլարը խստասրտորեն մերժում է՝ նրան մի կողմ քաշելով, թռչում է ձիու գավակին ու գնում իր ճակատագրի հետևից՝ այլևս չվերադառնալով: Բարդ ու հոգեկան ներաշխարհով հարուստ կերպար է մելիքի տիպը, քաջագնական հատկություններով, ներքին մարդու գծերով օժտված:

Մելիք Բեգլար II ամուսնացած էր Մելիք Ծահնագարի աղջկա՝ Ամարնայի (Մարիամի) հետ, ով իր հոր նման նպատակին հասնելու միջոցների մեջ խորություն չէր դնում: Մելիք Բեգլար II սիրում էր նաև շրջապատին իր գեղեցկությամբ հայտնի Բալային: Ամարնան խանդի հողի վրա որոշում է վրեժխնդիր լինել ամուսնուց եւ սպանել Բալային: Հրաշագեղ կինը ապրում էր Գյուլիստանի Խարխափուտ գյուղի մոտերքում գտնվող «Մելիք Բեգլարի այգի» կոչված գեղատեսիլ վայրերից մեկում: Ամարնան իրենց ծառաներից Լալային ուղարկում է ավտյանտիտուն սպանելու: Լալան որոշված եղևնագործությունը կատարում է հմտորեն՝ Բալայի երկար վարսերը փաթաթելով նրա պարանոցով՝ խնդրամահ է անում վերջինիս, մարմինը գցում հորի մեջ:

Եվ այն պահին, երբ մելիքը պատրաստվում է ձին նստել կռիվ գնալու, նրան հայտնում են, թե Բալան սպանված է. «Երբ կվերադառնամ պատերազմից, ես գիտեմ, թե ինչ կանեմ սպանողներին»,- գոչում է այլայլված մելիքը:

Ամարնան լավ էր ճանաչում ամուսնուն, նրա խստասրտությունը ու համոզված էր, որ ամեն կերպ ամուսնուն կհաջողվի պարզել սիրած կնոջ սպանության մանրամասները, գտնելով եղևնագործին՝ սրի կքաշի ո՛չ միայն սպանողին, այլև ամբողջ ընտանիքը:

Ամարնան վախից մղվում է ավելի մեծ հանցագործության: Զգեստափոխվելով ամուսնուն հետևում է իբրև նրա թիկնապահներից մեկը: Կռիվ թե՛՛ պահին, Ամարնան թփերի միջից արձակում է գնդակը եւ տապալում ամուսնուն՝ երբևէ պարտություն չկրած սիրած մարդուն՝ Գյուլիստանի քաջակորով մելիք Բեգլար II-ին:

Մելիքի որդին՝ Ֆրեյդունը, անչափահաս էր, դրա համար Գյուլիստանի կառավարությունը ստանձնեց մելիք Բեգլար II-ի եղբայրը, նույնպես քաջագործություններով հայտնի, քաջ պատերազմող, Մելիք Բեգլարյան Աբով III:

Բաֆթին, իր հերթին նույնպես իբրև մեծ հայրենասեր, իր հայրենիքի դառը ճակատագրի ժառանգորդ՝ գրում է. «Դրա (մելիք Աբով III- Զ. Բ.) կառավարության օրերում, որպես պիտի տեսնենք, կատարվեցան Ղարաբաղի բախտավոր և ամենադժբախտ անցքերը...»¹, - ու ցավով, մեծ ափսոսանքով ավելացնում է. «Եվ այսպես, Գյուլիստանի Մելիք-Յուսուֆը մեռավ, նրա որդին՝ Մելիք-Բեգլարը սպանվեցավ. Տիգրակի Մելիք-Եսային Իբրահիմ-խանի խաբուխությանը գոհ դարձավ. Զրաբերդի Մելիք-Աթանը մեռավ: Նշանավոր փորձված մարդիկը անհետացան, մնացին դյուրագրգիռ, տաքարյուն երիտասարդները...»²:

Իբրահիմը՝ պարսից կրոնական մոլեռանդությունը որդեգրած հրեշտ, հնարավոր եւ անհնարին բոլոր միջոցները օգտագործում էր մելիքներին իրար դեմ լարելու, նրանց ուժերը ջլատելու, նրանց բարքերը ոտնահարելու, ազգային սովորություններն անբարոյականացնելու, քամահրելու, հայեցի դիմագիծը աղավաղելու, նրանց միաբանությունը քանդելու, հակառակ հոգևոր եւ աշխարհիկ պաշտոնավորներ ընտրելու, մելիքների որդիներին, ժառանգներին շանտաժի ենթարկելու կամ մահադեղով սպանելու, կրոնափոխելու՝ նրանց մղելով խոստովանության:

Այս ամենը պատճառ հանադիսացան, որ Արցախի մելիքները երկու մասի՝ հակառակ կուսակցությունների բաժանվեցին, մեկը Մելիք Ծահնագարյանների կուսակցությունն էր, որին պատկանում էին խանին համակրողներն ու Երիզմանկան վանքի կաթոնիկոսները, մյուսը՝ մելիք Մեջլումի եւ Մելիք Բեգլարյանների, որոնք հակառակ էին Իբրահիմ խանին ու միացած էին Գանձասարի վանքի կաթողիկոսի հետ: Արցախի միաբան մելիքներին հավատարիմ ու բարեկամ Գանձակի Զավաղ խանը համակրում էր մելիք Մեջլումի եւ մելիք Աբովի այն մտքին, որ չպետք է խաբեքա ու խարդախ Իբրահիմին հավատալ ու պետք է թե՛ նրա բույնը՝ Շուշի բերդը, քանդել եւ թե՛ Իբրահիմին այդ որջից հեռացնել:

Վիպական գեղեցիկ հյուսվածք է Զավաղ խանի հետևյալ խոսքը, որը կարելի է **աննժի** ժանրի տակ ընդունել՝ իմաստասիրական համեմատության երանգ նախանշելով. «Սոզվալ լինի Մելիք-Ծահնագարը, որ կյանք տվեց սառած օձին (Փանահին- Զ. Բ.), իր կործնի վրա ջերմացնելով նրան: Եթե չլիներ Շուշի բերդը, չէր լինի և ջուանձիդիցների խանությունը...»³:

Թիֆլիսի Հավաքար թաղամասի հայ կանանց շուրջներից լսվում էր հետևյալ **աննժը** (ապատեղեկատվության հետևանք), կապված Ադա Մահմեդ խանի կողմից Թիֆլիսի գրավման, ավերման պատմությանը. խանի բանակում էր

¹ Նույն տեղում, էջ 225 :
² Նույն տեղում, էջ 225 :
³ Նույն տեղում, էջ 252 :

գտնվում նաև մեծ հայրենասեր մելիք Ջուլշուդն ու իր զինակից բարեկամ Գանձակի Ջավադ խանը. մելիք Ջուլշուդին խանը խոստացել էր ձեռք չտալ հայերին, բայց այդպես էլ չէր կատարել տված խոստումը: Ահա այդ անեծքը.

Մելիք-Մեջլումը շուն դառնա,
Ջավադ-խանը պստիկ կուճի,
Մելիք-Մեջլումի ազգեմեն
Թող չմնա մեկը Շուշի¹:

Րաֆֆին Փանահին համարում է ավելի աննշան ու ստոր, սարյուջալու ցեղից ծնված: Ավելի գորել ու նշանավոր ցեղերը՝ ջուանշիրցիք, քաբիրլուցիք արհամարանքով էին նայում Փանահի վրա: Մելիք Շահնագարն եղավ այն ուժը, որի միջոցով Փանահը իրեն ենթարկեցրեց վերողիտված ցեղերին, որոնք ունեին իրենց ուրույն նահապետական սովորություններն ու ավելի ազատ բարքերը:

Րաֆֆին Մելիք Շահնագարի կերպավորումը տիպական գծերով է ներկայացնում՝ ընդգծելով վերջինիս բացասական հատկությունները, բացասական ներկայությունը՝ Արցախի մելիքությունների հնքնավարության քայքայման գործում. «Եվ իրավ,- գրում է վիպասանը,- այդ բերդը (Շուշին- Ջ. Բ.) հիմնեց Մելիք-Շահնագարը և տվեց Փանահ- խանին: Նա Ղարաբաղի կործրքի վրա սկսեց զարգացնել մի նենգավոր, օձաբարո մահմեդական խանություն...»²:

Վերջին պարբերությունը **համեմատության** լավագույն օրինակ պետք է ընդունել:

Ասույթի օրինակ կարելի է համարել հետևյալ միտքը. «Հանգամանքների շնորհիվ նա (Իբրահիմը- Ջ. Բ.) իրավունք գտավ հայոց հողերի վրա, որը մինչև այնօր չուներ»³ կամ հետևյալ պարբերությունը. «Հասարակության վրա տարածված բռնությունը այնքան զգալի չէ լինում անհատներին, մինչև իրանց անձի վրա դեռ չեն փորձել նրա ճնշող ներգործությունը»⁴:

Գրող Րաֆֆին «Նսամսայի մելիքությունները» շարադրելիս, վիպական հյուսվածքներ է դարձրել բանաստեղծությունը, ավանդությունը, լեզենդը, համեմատությունը, ասացվածքը, անեծքը, օրհնանքը, հակադրույթը, փոխաբերությունը, իմաստասիրությունը, ասույթը, նամականին եւ այլն⁵ :

Նամականու հիանալի օրինակներ շատ կան. այդպիսիներից է Մելիք Բեգլարյան մելիք Աբովի՝ 1807թ. նոյեմբերի 23-ին գրած նամակը՝ ուղարկված Սանկտ Պետերբուրգ՝ Մինաս Լազարյանին, որում երևում են հայ մելիքի կատարած գործերը, ճակատագրի որոգայթները, եւ որը համարյա տիպական է մնացած հարազատ մելիքների կերպարների, նրանց գործունեության բնույթագրման համար: Պետրոս I կայսրի բարձրագույն հրովարտակի համաձայն վրաց Հերակլ թագավորը Բոլնիսի գավառը շնորհել է մելիք Աբովին, իսկ Լոռին՝ մելիք Ջուլշուդին:

Նամականու մի այլ հետաքրքիր նմուշ է մելիք Ջուլշուդի՝ 1806թ. դեկտեմբերի 2-ի գրած նամակը Սանկտ Պետերբուրգ՝ Մինաս Լազարյանին, ապա մելիքների նամակը (համանման բովանդակությամբ)՝ գրված նույն հասցեով⁶:

Օգտագործված գրականություն

Րաֆֆի, Խամսայի մելիքությունները, ԵԺ, տասը հատորով, տասներորդ հատոր Երեւան, Հայպետհրատ, 1959 :

¹ Նույն տեղում էջ 269 :

² Նույն տեղում էջ 252 :

³ Նույն տեղում էջ 258 :

⁴ Նույն տեղում էջ 259 :

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 206-210, 209, 252, 269, 305, 306:

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 306-308 :

Մնայա Գրիգորյան
Բանասիրական գիտությունների թեկնածու,
Գ.Նարեկացի համալսարան

ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈԲՅԱՆԻ «ԿԵՆՂԱՆԻ ՊԱՏ» ՀԵՐՈՍՄՊԱՏՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ-ՓԻԼՈՍՓՈՍՓԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՐԱՑՈՒՄՆԵՐԸ

Սույն հոդվածում քննության ենթ առել բանաստեղծ Վարդան Հակոբյանի վերջերս գրած «Կենդանի պատ» պոեմը: Պոեմը գրվել է ապրիլյան քառօրյա պատերազմի անմիջական ու թարմ տպավորությունների տակ: Սյն ժանրային ձևի առումով նորույթ է Վ. Հակոբյանի պոեզիայում: Ազգային ոգու անսպարտելիությունն է ընկած պոեմի հիմքում, որը մեր քաջ հայրերին ներկայացնում է աննախադեպ սիրանքի ու խիզախության:

Խոր դիտողականությամբ, սուր սարկավմով ու պատկերավորման-արտահայտչական միջոցների համադրմամբ գրողը ստեղծել է մերօրյա ազգային, քաղաքական, ռազմական իրավիճակը ներկայացնող գեղարվեստական ուշագրավ գործ:

Բանալի բառեր: Հերոսապատում, ժանրային և ոճական առանձնահատկություններ, քնարակալական պոեմ, հայրենասիրական պոեզիա, ազգային ոգի, խուսի դինամիկա, պոեմ, իրական դեպքեր, պատկերավորման-արտահայտչական միջոցներ, մակդիր, համեմատություն, փոխաբերություն, հեզնանք, հարակրկություն, ժողովրդախոսակցական բառեր, ոճական հնարանքներ, մետաֆորի գեղագիտություն:

Амалия Григорян,
к.ф.н., Университет Г.Нарекаци

ПОЭМА ВАРДАНА АКОПЯНА "ЖИВАЯ СТЕНА" И ЕГО ХУДОЖЕСТВЕННО-ФИЛОСОФСКОЕ ОБОБЩЕНИЕ

В этой статье проанализирована поэма "Живая стена", написанная в последнее время поэтом Варданом Акопяном. Поэма была написана под новыми впечатлениями четырехдневной войны. В жанровом плане – это новшество в поэзии Вардана Акопяна. В основе поэмы лежит непобедимость национального духа, которая направила наших сыновей на беспрецедентные героические поступки.

Писатель создал художественную, выдающуюся работу, соединенную глубоким наблюдением, острым сарказмом и выразительными способами, в которой представлены: сегодняшняя национальная, политическая, военная ситуации.

Ключевые слова: Эпос, жанровые и стилистические особенности, патриотичная поэзия, национальный дух, динамика речи, сюжет, реальные случаи, визуализация выразительных средств, эпитет, сравнение, метафора, ирония, разговорный язык, фикция стиля, эстетика метафоры.

Amalya Grigoryan,
Ph.D in Philology, G.Narekatsi University

«KHENDANI PAT» POEM AND ITS ARTISTIC-PHILOSOPHICAL REVIEW

The article analyses the poem «Khendani pat» written by poet Vardan Hakobyan. The poem was written under the immediate influence of 4-day war in April. It is novelty in Vardan Hakobyan's poetry. The poem reflects the national unconquerable spirit, which leads our sons to bravery and heroic deeds.

With a deep and sarcastic observation and a number of stylistic means the author created a remarkable poem which reflects the national, political and military situation of our days.

Key words: epic, genre and stylistic features, patriotic poetry, national spirit, speech dynamics, plot, real cases, visualization of expressive means, epithet, comparison, metaphor, irony, spoken language, fiction of style, aesthetics of metaphor.

Վերջերս «Ազատ Արցախ», «Գրական թերթ» պարբերականներում տպագրվել է Վարդան Հակոբյանի «Կենդանի պատ» պոեմը, որը նվիրված է արցախյան քառօրյա պատերազմի նահատակներին: Սյն գրվել է ապրիլյան քառօրյա պատերազմի անմիջական ու թարմ տպավորությունների տակ և ընդգրկում է ինչպես պատերազմական իրավիճակը ներկայացնող դրվագներ, այնպես էլ արծարծում է ազգային, քաղաքական, սոցիալական և այլ հարցեր:

Վ. Հակոբյանը այն պոետներից է, ով ստեղծագործում է, ինչպես ասում են, մատր ժամանակի զարկերակի վրա: Իսկ երբ վտանգվում է հայրենի երկրի խաղաղությունը, նրա գրիչը դառնում է ավելի սուր, ձայնը՝ հուժկու: Լինելով արցախյան ազատագրական պայքարի ակտիվ մարտիկներից մեկը՝ նա գեղարվեստական ուրույն մարմնավորումների մեջ է ներկայացնում Արցախի ճակատագրին առնչվող յուրաքանչյուր երևույթ և իրադարձություն: Այդ ամենը նա անում է երկրի աչալուրջ զավակի ու դպիրի նվիրումով, ներքին մղումով. «Իսկ Մայակովսկին կամ Ուիթմենը որտեղից իմանան, թե ինչ

երանություն է չճանաչված երկրի քաղաքացի, առավել ևս՝ բանաստեղծ լինելը»¹: Ավելացնենք՝ մարտիկ-բանաստեղծ լինելը: Եվ պատահական չէ, որ Վ.Հակոբյանը որպես պոեմի բնաբան, ընտրել է Ե. Չարենցի հետևյալ երկտողը. «Տասնհինգ թվի վերջերին//Արթնացա ... գորքերի շարքում»²: Հեղինակը՝ դիմելով Չարենցին ու նրա ոճական միջոցներին, առաջին հերթին շեշտում է հայոց պատմության ողբերգական էջերի կրկնությունը, մեր ազգային պայքարի աննկուն ոգին ու ժողովրդի հավերժությունը՝ նեո ոստիսի ցեղասպան ոճիրների ընդհանուր ֆոնի վրա: Մա այն իրադրությունն է, որ ինքն է մարտիկ-բանաստեղծին(լինի երեկ, թե այսօր, հայ, թե համաշխարհային իրականության մեջ) հուշում բառերը՝ կտրուկ, դիպուկ, կես տոնից հասկացվող, այդպես թեժ կովի պահին մի հայացքից իրար հասկանում են զինվորները: Եվ տողը կրակում է ամեն մի հատիկ բառով.

Հայոց ապրիլի
1-ը
դարձյալ սկսվեց
ապրիլի
24-ով³:

Յուրաքանչյուր բառ բովանդակության մեջ բեռ է վերցնում իր վրա՝ խոսքը հեռու պահելով, ինչպես Նալբանդյանն է ասում՝ «արվեստական թույնից», էժան զգացմունքայնությունից՝ առավել խորություն և լրջություն հաղորդելով ասելիքին:

Պոեմը քնարաեպիկական է: Մեր ժողովրդի միասնականության ու անպարտ ոգու շնորհիվ թշնամին ջախջախիչ պարտություն է կրում: Հայ զինվորը իր կյանքի գնով ետ է շարժում բարբարոս թշնամուն՝ անառիկ պահելով մեր երկրի սահմանները:

Պոեմը ժանրային ձևի առումով նորույթ է Վ. Հակոբյանի պոեզիայում: Հեղինակը փորձում է աշխարհի ուշադրությունը սևեռել մեր տարածաշրջանում տիրող պատերազմական իրավիճակի վրա: Աղբբեջանի կողմից հրադադարի պայմանավորվածության խախտումներն արդեն խրոնիկ բնույթ են կրում: Գրկին հայությունը կանգնել է լինել-չլինելու ինդրի առաջ: Եվ բանաստեղծը վավերագրում է ողջ եղելությունը՝ գեղարվեստական հետաքրքիր հնարքների ու արտահայտչական հարուստ միջոցների համադրմամբ:

Խորհրդանշական է պոեմի սկիզբը: Դիմելով հայոց ոգու անմահ կրողներին՝ Վարուժան, Անդրանիկ, Չարենց, Նժդեհ, Սիամանթո, Սոնթե, Եղեռնի գոհերին, համայն աշխարհի մարդկությանը՝ կոչնակ է հնչեցնում, ձգում է ասես հավատի բոլոր բերդ-եկեղեցիների զանգաթելերը՝ սթափության հորդորներով: Անթեյի պես հողից նոր ուժ առած պոետի բառը դառնում է զենք: Եվ այստեղ կրկին պատմության խորհուրդն է մարմնավորում բանաստեղծը՝ Նոյի ժառանգ Առանի անպարտելիության մեջ ներկայանալով նորովի. «Ես եմ՝ Արցախիցի մի պոետ, մի նոր Առան, ձեր խոսքի տեր ու ծառան»⁴: Գրողն, այսպիսով, մարդասիրական իր խոսքն է ուղղում աշխարհին, նրա ուշադրությունը հրավիրելով հայ ժողովրդին սպառնացող արհավիրքների վրա: Բանաստեղծը կամրջում է հայրենիքի անցյալը ներկային: Եվ դա անում է նպատակադրված: Հարյուր տարի հետո ազերին՝ «քոչվոր թուրքիո քոչվոր պոչը», ելավ իր՝ մեծ Թուրան ստեղծելու վաղեմի ծրագիրն իրագործելու:

Հովանավորվելով Թուրքիայի կողմից՝ Աղբբեջանը մեծ քանակով զենք է գնել նաև մեր դաշնակից Ռուսաստանից, գերժամանակակից զենքեր՝ Բարայելից: Այստեղ ակնհայտ է գրողի վրդովմունքը: Նա ամբողջովին ընդունում է Դոստոևսկու, բայց ոչ երբեք Ռոզոգինի Ռուսաստանը: Եվ պոետն իր խոսքը թախճոտ իրոնիայով ուղղում է Դոստոևսկուն՝ դրանով իսկ ցույց տալիս («Բա՛, Ֆեոդոր Միխայլովիչ»), որ Ռուսաստանը զենք վաճառելով Աղբբեջանին, ոչ միայն անտեսում է իր դաշնակից Հայաստանի, այլ հենց իր՝ Ռուսաստանի շահերը, մարդկության ու մարդկայնության շահերը, քանի որ թուրքը բոլոր ժամանակներում մնում է նույն նենգ ու դավադիր թուրքը: Ահա Դոստոևսկու խոսքը («Կարամազով եղբայրներ»): «Իսկ այդ թուրքերը, ի միջի այլոց, հեշտասիրությամբ տանջել են նաև երեխաներին, մոր արգանդից դաշույնով կտրել-հանելուց սկսած մինչև ծծկեր երեխաներին վեր նետելը և սվինի ծայրով բռնելը այն էլ մոր աչքերի առաջ: Հենց բուն հեշտանքն էլ մոր աչքերի առաջ անելն էր: Բայց ահա այսպիսի մի տեսարան հատկապես հետաքրքրել է ինձ: Պատկերացրու. ծծկեր մանկիկը դողահար մոր ձեռքերին, շուրջը ներխուժած թուրքեր: Նրանք մի զվարճալի խաղ են սկսել. փայփայում են փոքրիկին, ծիծաղում են, որպեսզի նրան էլ ծիծաղեցնեն, և հաջողում են, մանկիկը ծիծաղում է: Այդ բոլորին թուրքը նրա վրա ատրճանակ է ուղղում դեմքից չորս մատնաչափ հեռավորությամբ: Մանկիկը ուրախ ծվլում է, թաթիկները երկարում, որ բռնի ատրճանակը, և արտիստը հանկարծ չրթացնում է բլթակը ուղիղ նրա երեսին, ջախջախում նրա գլուխը... Արվեստ է, այնպես չէ: Ի դեպ, ասում են, որ թուրքերը քաղցրավենիք շատ են սիրում»⁵:

Եվ բառերը, ասես, շիկանում են բանաստեղծի տողերում.

Եկավ ոսի տանկով
(բա՛, Ֆեոդոր
Միխայլովիչ),
«բեզպիլոտնիկներով»

¹ Հակոբյան Վ., Երկեր, հատոր Բ, «Դիզակ Պլյուս» հրատարակչություն, Ստեփանակերտ, 2007, էջ 296:

² Չարենց Ե., Ընտիր երկեր, «Նաիրի» հրատարակչություն, Երևան, 1997, էջ 66:

³ Գրական թերթ, թիվ 18, 3 հունիսի, 2016թ.:

⁴ Նույն տեղում:

⁵ Դոստոևսկի Ֆ. Մ., Կարամազով եղբայրներ, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1983, էջ 337:

Իսրայելի
(դավը հասցեն
չի փոխել էլի)
եկավ
թուր ու թվանքով,
նոնակով,
Բաքվի
նավթային
բանկով,
15 թվի հանգով,
եկավ՝ ավերով,
ավարով
արյան ծովերով,
մեծ թուրանի
հովերով՝:

Գրողը համոզիչ գույներով, սպանիչ սարկազմով է ներկայացնում ազերի ասկյարների կերպարը՝ տմարդի, վախկոտ, թույլ, ստորաքարշ, բայց և, զարմանալիորեն, ինքնագոհ: Ասկյարին թվում է, թե ռեմբոյական զգեստներ ու զենքեր կրելով, ինքն էլ Ռեմբո է դառնում... Իսկ զենքը վտանգավոր է, երբ թույլի ձեռքն է ընկնում: Թուրք-ասկյարները, ինչպես հեղինակն է բնորոշում «նեո ռեմբոները» կամ «իսլամիստական, մուջահեդիստական, օձ-կարիճների բյուր վտառները», հարձակվել են հայոց շեների վրա գիշերվա կեսին, թաքուն, ծպտված: Բանաստեղծը այստեղ ահազանգում է թշնամու ծրագրերի մասին: Մանավանդ, որ նրա գործերի շարքերում մեծ թիվ են կազմում «Իսլամիստական պետություն» խմբավորման ահաբեկիչները: Նրանց ձեռագիրը նույնն է, ինչ ազերիների: Սովոր են ավերել տարբեր ազգերի մշակութային արժեքներ, գրավել հողատարածքներ ուրիշ տերություններից և ստեղծել «նոր» պետություն: Միթե այդպես չէ կազմավորվել հենց ինքը՝ Թուրքիան, որն այսօր անգամ ՆԱՏՕ-ի անդամ է:

Հեղինակը բավականին դիպուկ ու պատկերավոր է նկարագրում թշնամուն՝ արտահայտելով նաև իր արհամարհական վերաբերմունքը, որն ակներև է.

Գայլի գորշ
գարշանքով,
նեխանքով,
գիշերաբոգի
աճապարանքով
եկավ,
զենքը
դողացող ձեռքին...²

Մեր պատմության ընթացքում մենք համոզվել ենք, որ թուրքն իր գործելակերպն ու պայքարի ոճը չի փոխում: Նա հարյուր տարի առաջ և այսօր էլ նույն վայրագ ու զագանաբարո տականքն է. որտեղ ոտք է դնում թուրքը, այնտեղ ավերվածություններ են լինում, մահ ու ավեր: Աշխարհահռչակ Վիկտոր Հյուգոն թուրքի պատճառած սարսափները ներկայացնելու համար ընդամենը գրում է մի քանի բառ. «Այստեղով անցել է թուրքը»³: Եվ դրանով ամեն ինչ ասվում է: Թուրքի կերպարն ամբողջականացնող ամենաբնութագրական գիծն է, որը չի վրիպում նրան «անդրադարձող» և ոչ մի գրչից: Ավերն ու արյունը, թալանը բնորոշ են թուրքին, դրանք նրա էության գլխավոր եզրույթներն են: Այդ են վկայում նաև Թալիշի, Մատադիսի դեպքերը.

Որտեղ եղել են
ազերիները,
ավեր է այնտեղ,
տուն լինի,
թե հանդ,
ճանապարհ,
թե արտ,
ուր որ մտել են,
մարդկանց
գլխատել.
մարդկանց
հոշոտել

¹ Գրական թերթ, թիվ 18, 3 հունիսի, 2016թ.:

² Նույն տեղում:

³ Chekhov.am:

ու
խոշտանգել են¹:

Կրկին Արցախը դարձավ աշխարհի ամենաթեժ կետը: Արցախցին ելավ պաշտպանելու իր հայրենի հողը և այդ հողի վրա ազատ ու անկախ ապրելու իր իրավունքը: Հայր միայն ու միայն խաղաղություն է տենչում: Մեր ժողովուրդը մաքառումների դժվարին ճանապարհ է անցել՝ մշտապես պայքարելով իր գոյության, ազատության համար՝ կրելով բազմաթիվ կորուստներ ու զրկանքներ: Սակայն, չնայած այդ ամենին, նա շարունակում է տոկլալ, դիմակայել ու պատվով հաղթահարել բոլոր տեսակի մարտահրավերները՝ շնորհիվ իր ազգային մտածողության ու բնավորության անփոփոխ եության (սուբստանց) բարձր որակների՝ ուժեղ կամքի, ազատատենչ հոգու, ազգային արժանապատվության, անկոտրուն ոգու: Մեր ազգի գերերևութականությունը, թերևս, հենց այս որակների պահպանման մեջ է: Եվ հեղինակը կատարում է գեղարվեստական խորն ընդհանրացում. «Թե թշնամիդ թուրք է, զգուշացիր ոչ թե պատերազմից, այլ խաղաղությունից»²: Այս տողերի մեջ ազգերիների ամբողջ «քաղաքականությունն է» ի ցույց դրվում՝ որպես դաս ու խորհուրդ: Եվ մյուս կարևոր եզրահանգումը, որ կատարում է հեղինակը, պակաս իմաստություն չի պարունակում իր մեջ՝ սերունդների պատգամելով ինքն իր ուժին ապավինելու ճշմարտությանը. «Արցախը սակայն Արցախ է մնում՝ իր ուժը միայն տեսնելով իր մեջ: Արցախի համար մնացածը «պընգըլ է, հեչ»³: Գրողի ելակետը սկզբունքային է, և հենց դրանով է, որ ամբողջանում է «տասնութ-քսան» տարեկան մեր զինվորի կերպարը, զինվոր, որ ներկայացնում է ոչ միայն «հայոց աննկուն աշխարհը», այլ նաև «ազգի հանճարը»:

Ազգային ոգու անպարտելիությունն է ընկած պոեմի հիմքում, որը մեր քաջ հայորդիներին մղել է աննախադեպ սխրանքի ու խիզախության: Այս առումով, հիրավի «Կենդանի պատը» հերոսապատում է: Նկատենք, Վարդան Հակոբյանի հայրենասիրական պոեզիայի հիմնական շեշտադրությունը ազգային ոգու գաղափարն է, այն մշտապես արտահայտվել է նրա բանաստեղծություններում, պոեմներում: Ժամանակին հետաքրքիր դիտարկում է կատարել անվանի գրականագետ Մևակ Արզումանյանը. «Իմ համոզմամբ, ավանդույթներից ամենազվազվազումը ազգային ոգու պահպանման գեղագիտական սկզբունքն է, որը Վարդան Հակոբյանի պոեզիային տալիս է առանձնակի փայլ ու հմայք: Այս առումով նա իր սերնդակիցների մեջ չունի հավասարը, իսկ դա այն չափանիշն է, որով բանաստեղծը երկարակեցություն է ապահովում իր համար մայրենի գրականության անդաստանում»⁴:

Պոեմում հեղինակը հայ ժողովրդի փրկությունը տեսնում է սպառազինվելու և միաբանվելու մեջ, նա հնչեցնում է զենքի ու միասնականության կոչնակները, որովհետև միայն զենքով կլինի հայի փրկությունը.

-Ելեք, Արցախ,
Հայաստան,
Մփյուռք,
Զենքով ելեք⁵:

Այստեղ բանաստեղծը միաբանված պայքարի կոչ է հղում ոչ միայն Արցախին ու Հայաստանին, այլև ամբողջ աշխարհով մեկ սփռված հայությանը: Ինչպես հեղինակն է բնորոշում. «Ինքն իր վաղվան զինվորյալն է հայոց աշխարհը»:

Հերոսապատումի մեջ հեղինակը վարպետորեն է կիրառում հայ նշանավոր գորականների, գրողների, ազգային-ազատագրական պայքարի խոշոր գործիչների անունների իմաստային կրկնությունը, որը զգալիորեն նպաստում է խոսքի ներքին դինամիզմին, սյուժեն դարձնում առավել հարուստ՝ պահպանելով գեղարվեստական խոսքի ազդեցության ներուժն ու բովանդակային լարումը: Տեղն է հիշելու Էլիոթի խոսքը՝ պոեզիան պիտի միշտ ազգի կյանքի վրա⁶: Գեղագետ Վ.Հակոբյանի մտածողական դաշտում ընգծված նոր երանգներով է դրսևորվում նրա անհատականացված և ուրույն ոճը, որը և իր հերթին ավելի խորքային է դարձնում ասելիքը՝ ընթերցողին հնարավորություն տալով անսխալ բացելու բառակողման հակոբյանական արվեստի «գաղտնիքը»:

Ու նրանց մեջ
դուք էիք,
Վարուժան,
Անդրանիկ,
Չարենց,
Նժդեհ,
Միամանթո,
Մոնթե,
ձեր ոգին էր
անհաղթ
ու

¹ Գրական թերթ, թիվ 18, 3 հունիսի, 2016թ.:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

⁴ Մոդոմոնյան Ս., Տաճարի ճանապարհին կամ մենարանի ուխտավորը, «Վաչագան Բարեպաշտ» հրատարակչություն, Ստեփանակերտ, 2007, էջ 13:

⁵ Գրական թերթ, թիվ 18, 3 հունիսի, 2016թ.:

⁶ Թոմաս Ս. Էլիոթ, Մեռյալ երկիրը, «Ապոլոն» հրատարակչություն, Երևան, 1991, էջ 124:

մեծ...¹

Վարդան Հակոբյանի պոեմում, բնականաբար, «գործում է» պատերազմական ծանր դրաման. գոհեր է տալիս երկիրը, անդառնալի կորուստներ կրում, «տասնութ քսան տարեկան մեր տղաները» իրենց երազները պահ են տալիս հայրենյաց հողին՝ հավերժ վերընձյուղվելու, ազգին խաղաղության մեջ տեսնելու բաղձանքով: Ենիչերը, չի դիմանում «մեր տղորանց հզոր բազկին»: Մեր տղաները դառնում են կենդանի պատ՝ իրենց արյամբ պաշտպանելով հայրենիքը:

Ազերին բախվեց
պատին
ընկավ,
ազերին բախվեց
պատին
հանգավ...²

Քսանմեկերորդ դարի հայ զինվորի կերպարը պոեմում ներկայացվում է մեր ժողովրդի նվիրական հատկանիշներով ու ասպետական գծերով: Այդ նրա բացառիկ սխազործության, անձնվիրության ու հերոսականության շնորհիվ փրկվեց հայրենիքը: Հեղինակը փառաբանում է մեր «ազնվագարմ, դավթակորով, դյուցազնական քաջերին», ովքեր խիզախեցին հանուն Արցախի լինելիության: Մեր խիզախ, անվեհեր զինվորները՝ «հարյուր արծիվ, հարյուր հերոս, հայոց երկնում՝ մի-մի փարոս» ձուլվեցին հայոց «մեծաց դասակին»:

Բավականին խորը և ոգեցունց վիճակ է պատկերված պոեմի վերջում: Հեղինակը տեղադրել է նահատակված զինվորների վերջին խոսքերը, որոնք հուզմունք, ցավ ու հպարտություն են պատճառում ընթերցողին, մանավանդ, որ դրանք իրական են և բանաստեղծը բառացի մեջբերել է: Բացառիկ հերոսություն են դրսևորել Ռոբերտ Աբաջյանը, Արմենակ Ուրֆանյանը, Քյարամ Սլոյանը, Սարգիս Սահակյանը, Մասուն Մկրտչյանը, Միշա Աղաջանյանը, Ռոբերտ Աբրահամյանը, Վլադիմիր Նարինյանը և էլի շատ շատերը:

Գրողն, իրական դեպքերի ու երևույթների հիման վրա ստեղծել է գեղարվեստական բարձրարժեք մի գործ՝ հավաստի ու դիպուկ բնորոշումներով, լեզվառճական տարբեր հնարանքներով:

Հեղինակը պոեմում դիմել է պատկերավորման-արտահայտչական բազմազան միջոցների՝ մակդիր, համեմատություն, փոխաբերություն, հարակրկնություն, նվազաբերություն, հեզնանք, օտարաբանություն, ժողովրդախոսակցական բառեր, ոճական հնարանքներ և այլն, որոնց շնորհիվ խոսքը առավել արտահայտիչ է ու համոզիչ: Բերենք օրինակներ, այսպես՝ մակդիրներ են. Մուրճ մեղքեր, անականջ աշխարհ, նեռ ոհմակ, արյան ծովեր, օձ-կարիճների բյուր վտառներ, շեթանագորք համշարի, կրկնակի թուրք, երկնային քույր, հրեղեն տեսիլ և այլն: Համեմատություններ են. «Եկավ որպես որդնած ճահիճներից փչող բուքը, նա ինքը-թուրքը», «բառերդ նուրբ, ճկուն են, գրողդ տանի, ձգվում են՝ ինչպես գեշի մերկ իրանը գրկած ռեզին, տաք, բոնկուն են՝ հանց էժանացված նավթ կամ բենզին», «Եվ գիտեն տղերքը, գիտեն, անշուշտ՝ որպես հայոց բեղուն հողի ոսկեղեն հունտ», «Արցախի սրտում՝ աստղի պես ծագող, հառնում են մեկ-մեկ հերոսները մեր՝ խիզախ, անվեհեր, ամեն մեկը՝ մի արեգակ, ամեն մեկը՝ մի աշխարհ»:

Պետք է ասել, որ Հակոբյանի պոեզիան աչքի է ընկնում փոխաբերությունների լայն ու հարուստ գործածումներով, որոնցից յուրաքանչյուրն իր խորհուրդն ու ասելիքն ունի: Հիրավի, մետաֆորը Հակոբյանի համար դարձել է աշխարհվելու ձև: Հիշենք, հույն փիլիսոփա Արիստոտելին, ով իր «Պոետիկայում», հանգամանորեն անդրադառնալով մետաֆորի գեղագիտությանը, կարևոր է համարել մետաֆորներից օգտվելը, քանի որ, ըստ նրա. «Պոետիկայի բոլոր գեղեցկություններից միայն դա է, որ սովորել չի կարելի: Այն իսկական տաղանդի նշան է, քանի որ գտնել բնական մետաֆորներ, նշանակում է կարողանալ բնության մեջ նկատել առարկաների նմանությունը»³:

Ինքնատիպ ու անընդգրկելի է Հակոբյանի մտածողությունը:

«Կենդանի պատ» պոեմը հարուստ է ինչպես բառային, այնպես էլ շարահյուսական հարակրկնություններով: Ինքնօրինակ ու հետաքրքիր պատկեր է ներկայացնում գրողը նվազաբերական հակիրճ խոսքի մեջ. «Կեռ լուսինը կոնատակին» և այլն:

Պետք է շեշտել, որ հեզնանքը գրողի ոճական հնարանքներից է և մեծ տեղ ունի այս պոեմում, մանավանդ, թշնամուն բնութագրելիս այն վերածվում է սարկազմի.. «Եկավ, եկավ՝ ասկյարներին վագրագուլեր հագցրած, մութ ու սմբած ճակատներին, քամակներին ռեմբոյական նախշ ու նշան թքած-կացրած, կապկահորանց պոչիկները խիստ խնամքով թաքցրած, կովի ահից շավարները թաց», «Բսկ այնտեղ՝ Բաքվում, «խմաստուն, գոգալ» մտքերի, հոխորտուն, «օգան» կրքերի «սայլուտ» է ու «շաբաշ»... Որպես դեռ դար չբոլորած Ազերբայջանի բազմադարյա «գարդաշ», չունեցած բեղերը սուլթանավարի ոլորած Ռոզոզինը, ահա, այսպես է կրակել՝ պարպելով խավիարից կուշտ «մագազինը», «Ու «հաշտարար» պահը եկավ, կողքից կախ՝ մուրացողի մախաղ ու մաղ, մաղի տակ՝ ծպտված և-ը, ինքը՝ Ալինը, «բեզպալտոսնիկի պիտոսնիկը» Մի ճապկե մահակ է իջնում ինքն իր մեզից հոտ առած քթին իշու» :

¹ Գրական թերթ, թիվ 18, 3 հունիսի, 2016թ.:

² Նույն տեղում:

³ Արիստոտել, Պոետիկա, Հայպետհրատ, Երևան, 1955, էջ 195:

Այստեղ էս ուզում եմ ընդգծել նաև Վարդան Հակոբյանի արցախյան բարբառից հմտորեն օգտվելու («պընգըլ», «ճապկե», «իշտահին՝ քացախ») դրանք գրական գործի մեջ, ըստ անհրաժեշտության, հելուզելու և, դրանով իսկ, կերպարային ընդհանրացումների հասնելու կարողությունների մասին:

Հեղինակը խոսքին անմիջականություն ու պատկերավորություն հաղորդելու նպատակով օգտագործել է մի շարք օտարաբանություններ, այսպես՝ բեզպիլոտնիկ, անգյուման, օգան, սայլուտ, շաբաշ, մագազին, էրմանի, կագիրոկ, մախմուր, իշտահ և այլն:

Պոմում հանդիպում ենք հետաքրքիր բառակերտումների՝ ռեմբոյական, կապկահորանց, շեյթանագորք, գիշերաբոզ, սուլթանավարի, թրքափամփուշտ, նավթաբանկ, կայծակնաթել և այլն:

Խոր դիտողունակությամբ, սուր սարկազմով ու պատկերավորման-արտահայտչական միջոցների համադրմամբ Վ. Հակոբյան ստեղծել է մերօրյա ազգային, քաղաքական, ռազմական իրավիճակն ներկայացնող գեղարվեստական ուշագրավ գործ:

Թամար Հայրապետյան
բանասիրական գիտությունների դոկտոր,
ԵՊՀ, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Բանահյուսության տեքստաբանության բաժնի վարիչ,

ՂԱՐԱԲԱՂԻ ԱՌԱԿԱՆՈՍ ՊԸԼ ՊՈՒՂԻՆ
(Հստ 1991-2015թթ. Արցախում գրառած նյութերի)

Պըլ Պուղու զվարճապատումների ծագման հայրենիքը Արցախի պատմաազգագրական շրջանն է, մասնավորապես Պատմական Վարանդա գավառի մելիքությունը՝ իշխանանիստ Ավետարանոց (Չանախչի) բերդավանով, որտեղից առակախոս Պուղու համբավը բանավոր կենցաղավարմամբ տարածվել է տեղական սահմաններից դուրս, հասել Մյունիք, իսկ ավելի ուշ՝ Բջնան ու Արարատյան դաշտավայր: Պուղին ունի մականուն՝ Պել (խենթ, ծուռ), ինչն էլ վկայում է նրա բանահյուսական բնավորության մասին:

Մակար վարդապետ Բարխուդարյանցի հաղորդմամբ՝ Պըլ Պուղին եղել է Վարանդայի իշխան Մելիք-Շահնագար Բ-ի զվարճախոս-կատակաբանը:

Պըլ Պուղին մելիքների ապարանքում եղել է ավելին, քան սովորական պալատական ծաղրածուն: «Նա գրավել է մի դիրք, որը կարելի է կոչել զվարճախոս-խորհրդատու»: Նա առակախոս էր, կրնկի վրա սուր խոսք հորինող, հնարամիտ ու արդարադատ: Պըլ Պուղին իր ժամանակի որոշակի սոցիալական, կրոնական, քաղաքական գաղափարների կրողն է և իբրև երգիծական կերպար բացահայտվում է անսպասելի իրավիճակներում: Պըլ Պուղի-Մելիք-Շահնագար գույգի փոխհարաբերությունը խաղարկվում է տեր և ծառա, սոլյալ դեպքում՝ իշխանավոր և ծաղրածու մակարդակով: Երկու կողմերն էլ, չնայած մշտական հակամարտությանը, գտնվում են անբաժան միասնության մեջ: Պըլ Պուղին ոչ միայն չի քծնում Մելիք-Շահնագարին, այլև իր հնարախոսություններով հաճախ սաղորդում է նրան՝ դրդելով հիմար արարքների, որպեսզի, ծիծաղաշարժ ու անբնական իրավիճակներում հայտնվելու վտանգից խուսափելով, տերը փորձի կանգնել ճիշտ ուղու վրա:

Պըլ Պուղու զվարճապատումները, փոխանցվելով սերնդեսերունդ, ձևավորել են արցախահայության վարքային համալիրի կարևոր բաղադրիչներից մեկը՝ ժամանցն ու զվարճանքը՝ նոր լույս սփռելով XVIII դարի երկրորդ կեսերից մինչև XIX-ի սկիզբն ընկած ժամանակահատվածում արցախահայության սոցիալ-քաղաքական

հարաբերությունների և պատմամշակութային իրողությունների վրա:

Բանալի բառեր՝ բանահյուսություն, հումոր, սուր երգիծանք, առակախոս, սոցիալ,

Tamar Hayrapetyan,
Doctor of Philological Sciences,
Erevan State University, The Institute of Archaeology and Ethnography of
National Academy of Sciences of Armenia

KARABAKH JESTER PELE PUGHI
(based on Material collected in Artsakh in 1991-2015)

Funny stories of Pele Pughy originated in Avetaranots (Chanakhchi) the capital of Varanda – one of melikdoms of Historical Artsagh. The fame of Pele Pughy spread orally by a word of mouth beyond the borders of his native land and reached Syunik, later Ijevan and Ararat valley. Pughy had a nickname – Pele, meaning mad, crazy, which proves the comical nature of his folk character. According to records of Makar vardapet Barkhudaryants, Pele Pughy was a jester of Melik Shahnazar the Second, the ruler of Varanda.

In court Pele Pughy was more than a mere jester. He occupied a position of jester-advisor. He was humorous, ready to put a witty remark on the spot, honest and fair. Pele Pughy carries certain social, religious and political views of the time. His satirical character is revealed in unpredictable situations. The relationship of Pele Pughy and Melik Shahnazar is similar to that of master and servant, in this case on the level of ruler and jester. Their union is indivisible though they are constantly having conflicts.

He doesn't flatter Melik Shahnazar, moreover, with his witty remarks he tries to direct him, showing the truth and the right path.

Passing from generation to generation funny stories and anecdotes of Pele Pughy shape satire as a constituent part of behavior of Artsakh Armenians. These stories shed light on social and political relations of Artsakh Armenians and represent historical and cultural facts of Artsakh in the XVIII – XIX centuries.

Key words: folklore, humour, satire, jester, social, political, fable

Тамар Айрапетян,

Доктор филологических наук,

**Ереванский Государственный Университет, Институт Археологии и Этнографии Национальной академии наук
Республики Армении**

КАРАБАХСКИЙ БАЛАГУР ПЫЛ-ПУГИ
(согласно собранным в Арцахе в 1991-2015 гг. материалам)

Историко-этнографическая родина забавных историй и анекдотов Пыл-Пуги – Арцах, точнее Варандское меликство, резиденция князей Аветараноц (Чанахчи). Отсюда слава Пуги вышла за пределы родной местности и достигла Сюника, а позднее Иджевана и Араратской долины. У Пуги было прозвище Пыл – означающее сумасшедший, что и свидетельствует о его народном характере. Согласно сообщениям вардапета Макара Бархударяна, Пыл-Пуги был балагуром князя Варанды Мелика Шахназара.

При дворе Пыл-Пуги был не только балагуром, но и советником. Он слыл смельчаком-острословом, позволяя себе хитро и изобретательно высмеивать недостатки и пороки власть имущих. Он является носителем определенных социальных, религиозных и политических взглядов и его сатирический образ раскрывается в самых непредсказуемых ситуациях. Отношения Пыл-Пуги – Мелик Шахназар обыгрываются на уровне отношений хозяина и слуги, в данном случае властителя и балагура. Несмотря на постоянный конфликт и противостояние они нераздельны и представляют единое целое. Пыл-Пуги не только не льстит мелику, а своей критикой и острословием пытается открыть ему глаза и указать путь истины.

Передаваясь из поколения в поколение, сатира Пыл-Пуги является важной составной частью национального мышления армян Арцаха. Данный фактор проливает новый свет на социальные и политические отношения с одной стороны, а с другой на историко-культурные факты Арцаха конца XVIII начала XIX вв.

Ключевые слова: фольклор, юмор, сатира, балагур, социальный, политический, басня

1878 թվականին Թիֆլիսում լույս տեսած Գալուստ Շերմազանյանի 198 էջանոց «Անեկդոտներ, զվարճալի գրույցներ, համառոտ դեպքեր և առակներ՝ մեծ մասամբ ազգային կյանքից առած» վերնագրով ժողովածուում ընթերցողն առաջին անգամ ծանոթանում է Պըլ Պուղու տասնհինգ միավոր առակ-զվարճապատումներին:

1883 թվականին Մակար Բարխուդարյանցը Թիֆլիսում հրատարակում է 189 զվարճապատումից բաղկացած «Պըլ-Պուղի» գիրքը, որտեղ զվարճախոսը հանրությանն է ներկայանում դարաբաղի ծերունիների հիշողության ծալքերում պահպանված իր համառոտ կենսագրական տվյալներով և իրական-պատմական դեմքով: Հետագայում նույնպես Պըլ Պուղին շարունակել է մնալ հայ բանահավաքների տեսադաշտում (Մարգիս Իսրայելյան, Մարգարիտ Գրիգորյան-Սպանդարյան, Սերո Խանգաղյան, Արտաշես Նազինյան, Ալվարդ Ղազինյան, Լևոն Հարությունյան և այլոք): Տպագրվել են նաև Պըլ Պուղու նյութերի վերապատումներ, թարգմանություններ ու գրական մշակումներ:

Պըլ Պուղու նկատմամբ շարունակվող հետաքրքրությունը բացատրվում է նրա երգիծապատումներում առկա արցախահայության սոցիալ-կենցաղային, հանրային-քաղաքական հարաբերությունների՝ մեր ժամանակների հետ ունեցած աղերսներով:

Հողվածի մեջ ուսումնասիրված դեպքերի և իրադարձությունների երգիծական արձագանքները բացահայտվել են ընդհանուր ու հայ բանագիտության մեջ ընդունված և կիրառվող պատմահամեմատական ու կառուցվածքաբանական մեթոդներով՝ հրնթացս լուսաբանելով և գիտական շրջանառության մեջ դնելով Անկախության տարիներին Արցախում Պըլ Պուղու անվան շուրջը կենցաղավարող և մեր կողմից գրառված դաշտային բանահյուսական նյութերը:

Պըլ Պուղու զվարճապատումների ծագման հայրենիքը Արցախ պատմաազգագրական շրջանն է, մասնավորապես Պատմական Վարանդա գավառի մելիքությունը՝ իշխանանիստ Ավետարանոց (Չանախչի) բերդավանով, որտեղից առակախոս Պուղու համբավը բանավոր կենցաղավարմամբ տարածվել է տեղական սահմաններից դուրս, հասել Սյունիք, իսկ ավելի ուշ՝ Իջևան ու Արարատյան դաշտավայր: Պուղին ունի մականուն՝ Պել (խենթ, ծուռ), և ինչպես իր բանահյուսական կրկնակները՝ Պուղոց Մուկուչը՝ Շիրակում, Հոբոսը՝ Լոռիում, քեռի Գինոսը՝ Ղափանում ներկայացնում են Հայաստանի տարբեր շրջաններ բնակչության հավաքական նկարագիրը: Որոշ շրջաններում ծությունը հատկապես դրսևորում է մասնավոր-տեղական բնույթ, գործիմանակ՝ Շատախում՝ կաճետա ծոերը, Գուգարքում՝ կուրթանցիները, Արցախում՝ շաշ հաթերքցիները: Ի դեպ, այստեղ շաշը պետք է հասկանալ ոչ թե շիլ, այլ ծուռ իմաստով:

Մակար վարդապետ Բարխուդարյանցի հաղորդմամբ՝ Պըլ Պուղին եղել է Վարանդայի իշխան Մելիք-Շահնազար Բ-ի զվարճախոս-կատակաբանը (Պըլը-Պուղի 1883, Գ): «Ըստ իմ կարծեաց Պուղու պարզ առակներն, գուարճաբանություններն եւ սրախոսություններն հայի համար ավելի արժէք ունին, քան թէ Եգոպոսին, Նասրաաղին Հօճային, Տանթէին, Քրիլովին եւ Լաֆօնտէին, որովհետև հայկական կեանքից բխած լինելով՝ աւելի յարմար են հայկական սովորութեանց, հայկական բնատրութեանց, հայկական առտնին ընտանեկան կենաց, վարուց եւ բարուց» (Պըլը-Պուղի 1883, Գ): Մելիք-Շահնազար Բ-ը, ըստ էության, իբրև ռազմավարչական կազմավորման գլուխ կանգնած միանձնյա իշխանապետական իրավունքներ ունեցող մարդ, պետք է աչքի ընկներ քաղաքական-դիվանագիտական լայնախոհ գործունեությամբ, սակայն նա Արցախում գերագահություն նվաճելու նպատակով դաշնակցել է վաչկատուն սարըջալի ցեղի զլխավոր Փանահի հետ, ով դավաճան հայ իշխանի աջակցությամբ, իր իսկ տոհմական

պատմիչի վկայությամբ՝ (Мирза-Адигезаль-Бек 1950:55-56) իրեն հայտարարել է Ղարաբաղի խան և թշնամական քաղաքականություն վարել Արցախի ու հարևան գավառների հայության նկատմամբ:

Փանահի իշխանության ձևավորման շրջանում Մելիք-Շահնագարը նյութապես սատարում է նրան: Ասում են, մի անգամ, դեռ Փանահ խանի իշխանության սկզբում Մելիք-Շահնագարը նրան ասում է. «Ինչու՞ ես մտահոգվում, յոթ տարի է, քո բանակը ընտիր աշորայով եմ պահում» (Միրզա Յուսուֆ Ներսեսով 2000, 42): Ավելին, Մելիք-Շահնագարն իր դիրքերն ամրապնդելու նպատակով դատերը՝ Հուրգաղին, կնության է տալիս Փանահի որդի Իբրահիմ խանին (Նույն տեղում):

Զվարճապատումներից մեկի համաձայն՝ Մելիք-Շահնագարը, դատեր՝ Հուրգաղի կամքին հակառակ, նրան ամուսնացնում է Իբրահիմ խանի հետ: Հուրգաղն էլ չի հնազանդվում ամուսնուն, ծուլանում է տուն ու տեղի, կենցաղի կազմակերպման հարցերի մեջ: Այս ամենից մտահոգ՝ Մելիք-Շահնագարը հանձնարարում է Պըլ Պուղին, որ իր համար ու անբան աղջկան հարսնություն անել սովորեցին: Պուղին երկար նայում է Մելիք-Շահնագարին ու հանդիմանանքով ասում. «Մելիքն ապրած կենա, այնքալ ախճիկըտ շատ էլ դուր ա անում է՛, ուրան իւելը հու քու իւելքատ չի, վեր էտ շներին ծառայի, էշին էշում ա, կյարին քըցում» (Հայրապետյան 1999, 23):

Տարիներ անց, քաղելով իր անհեռատես արարքների պտուղները, Շահնագար Բ-ը զոջացել է, փորձել հաշտվել հայ մելիքների հետ, սակայն ժողովուրդը չի ներել նրան՝ ստիպելով, որ դավաճանի մեղսավոր արարքների հետևանքները ուղեկցեն նրան իր երկարատև կյանքի ընթացքում:

Մի անգամ Մելիքը հարցնում է Պուղին, թե մարդու տունը ինչի՞ց է քանդվում: –Ներսի թշնամուց, պատասխանում է Պըլ Պուղին (Հայրապետյան 2015, 8):

Պըլ Պուղին մելիքների ապարանքում եղել է ավելին, քան սովորական պալատական ծաղրածուն: «Նա գրավել է մի դիրք, որը կարելի է կոչել զվարճախոս-խորհրդատու» (Ղազիյան 1978, 61):

Պըլ Պուղին առակախոս էր, կրնկի վրա սուր խոսք հորինող, հնարամիտ ու արդարադատ:

Պըլ Պուղի-Մելիք-Շահնագար զույգի (բանահյուսական միջազգային դիպաշարերում՝ Փախուլ-Հարուն ալ-Ռաշիդ, Աբու-Նուվաս-Խալիֆ, Մուլլա-Թիմուր, Բիրբալ-Փաղիշահ Ակբար) փոխհարաբերությունը խաղարկվում է տեր և ծառա, տվյալ դեպքում՝ իշխանավոր և ծաղրածու մակարդակով: Երկու կողմերն էլ, չնայած մշտական հակամարտությանը, գտնվում են անբաժան միասնության մեջ, ճիշտ այնպես, ինչպես լարախաղացն ու ծաղրածուն: Բայց եթե ներկայացման մեջ ծաղրածուն աստիճանաբար դառնում է պատրաստակամ, հլու-հնազանդ ծառա, ոգևորություն խաղում, հիանում իր տիրոջով, ապա Պըլ Պուղին ոչ միայն չի քծնում Մելիք-Շահնագարին, այլև իր հնարախոսություններով հաճախ սաղորում է նրան՝ դրդելով հիմար արարքների, որպեսզի, ծիծաղաշարժ ու անբնական իրավիճակներում հայտնվելու վտանգից խուսափելով, տերը փորձի կանգնել ճիշտ ուղու վրա. «Մեհեստ Մելիք-Շահնագարը Պուղուն ասում ա, էտ դուր ա՞, վեր պտուղը ծառան հեռու չի ընգնում: Պուղին մտածում ա, մտածում, ասում՝ չէ:

–Յանի, հունց չէ,- առարկում է Մելիքը:

–Չէ, լի՛,- պատասխանում է Պուղին, վեր դուր ինի տու քու լյուսահոքի հորդ թթի ծառին տակին կընիր վեր ընգած, վեչ թա Փանահին բաստանումը» (Հայրապետյան 1999, 11):

Դժվար չէ եզրակացնել, որ այս զվարճապատման մեջ Պուղին նկատի ունի Մելիք-Շահնագարի հայր Մելիք-Հուսեյնին, ով իբրև Վարանդայի ներքին կյանքի կազմակերպման ու կառավարման բոլոր հատկանիշներով օժտված օրինակելի մելիք, ի հակակշիռ Մելիք-Շահնագարի, սրբորեն էր պաշտպանում իր հողի, տիրույթի սեփականության ժառանգական իրավունքն ու ազգի ընդհանրական շահերը, հոգում իր երկրի շենացման մասին:

Ասվածի վառ օրինակն է 133 տարի առաջ Պըլ Պուղու՝ ավելի քան բաց տեքստով ազդարարած հանդիմանությունը՝ ուղղված Մելիքի արժոատպաշտությանն ու քաղաքական հավկուրությանը.

«–Մելի՛ք, դիւ մինակ մլըքութիւնը պիպնելու երրայ ըս մտծես: Հայոց Ազգը պիպնելու երրայ իսկի մտծես չըս» (Պըլը-Պուղի 1883,121):

Միջնադարյան արաբական գրականության մեջ վեզիրը մեծ մասամբ ներկայանում է որպես իմաստուն խորհրդատու, ով ուրիշներին խելք ու խրատ է տալիս՝ տարբեր կարճ պատմություններ պատմելով: Հետաքրքիր է նկատել, որ եթե Բաղդադի խալիֆ Հարուն ալ-Ռաշիդը ստորացնում էր մինչև իսկ իր վեզիր Ջաֆարին, ով խալիֆի անխոհեմ որոշումներին չափազանց երկչոտորեն էր ընդդիմանում (Դերխարժ 1984: 405), ապա դասային արտոնություններից զուրկ Պըլ Պուղին, մեղքերը քավել փորձող Մելիք-Շահնագարին համարձակորեն խարազանում է՝ Արցախում և նրա սահմանները դուրս շրջանառվող սրախոսություններով: Որոշ զվարճապատումներում Պըլ Պուղին սաստում է անգամ պարսից շահին, քանի որ 18-րդ դարի կեսերին Պարսկաստանն ապրում էր ներքին ու արտաքին քաղաքական ծանր ժամանակներ, և շահն ի վիճակի չէր տերության ծայրամասերում՝ անդրկովկասյան ու մերձկասպյան տարածքներում, սանձել Թուրքիային ու Ռուսաստանին՝ ամուր պահելու իր իշխանությունը, ինչն էլ հայերի համար ստեղծում էր ծանր վիճակ:

Զվարճապատումներում Պըլ Պուղին հաճախ հանդես է գալիս իբրև միջնադարյան դատավորի թատերախաղային արքետիպ՝ «Դատ-բեդադ անողի», «Շառ կտորողի» կերպարով:

Մի անգամ Մելիք-Շահնագարն ու Պըլ Պուղին հյուրընկալվում են Պարսկաստանում: Նաղիր շահի նվեր տված ձիուն գիշերը գողանում են: Շահը Պըլ Պուղուն մեղադրում է գիշերը քնելու և ձիուն չհսկելու համար: «Ես գիդացալ

չըմ, վեր շահն էլ Մելիքին նման մուշ-մուշ քոն իլած ա, թա չէ գյարթուն կը մնայի»,- պատասխանում է Պուղին: (Հայրապետյան 2015, 12):

Բանահյուսական գրառումների համաձայն՝ Պըլ Պուղին սոցիալական կերպար է՝ իր պարզ կենցաղավարությամբ, նրա ողջ ունեցվածքը տեղավորում է մի խուրջինում (Շերմազանյան 1878,189), գրաճանաչ չլինելու հանգամանքով, սակայն նրա զվարճապատումները իրենց մեջ առաքինության ու ժողովրդական շրջահայեցողության դասեր են պարունակում:

Մելիք-Շահնագարը գնում է հարևան գյուղ և պատվիրում Պուղուն երկու օրից իրեն ետ բերել: Երկու օր հետո, երբ Պուղին կանգնում է դարպասի մոտ և կանչում Մելիքին, տանտիրոջ շունը հաչոցով հարձակվում է Պըլ Պուղու վրա: Մելիքը ներսից գոռում է.

–Պուղի, հինչը՞ ս լըղաճաք իլալ, գյուղու՞մ չըս վեր հաչան շոնը կժան չի նիլ:

–Մելիքն ապրած կենա,- պատասխանում է Պուղին, - ես գյուղում ըմ է՛, ամմա գյուղում չըմ, շոնը գյուղում ա՛, թա չէ (Հայրապետյան 1999, 22):

Սակար Բարխուդարյանը 1883 թվականին Թիֆլիսում հրատարակած «Պըլը- Պուղի» գրքի առաջաբանում անդրադառնում է հին ժամանակների կայսրերին, թագավորներին, շահերին, խալիֆներին զվարճացնող ծաղրախոսներին, որոնց շնորհիվ պետական այրերը թեթևանում էին դատավճիռների ծանրությունից ու բացասական հույզերից, և «երբեմն նոցա պաշտօնական անդառնալի մահավճիռներն անգամ կը փոխուէին և յանցատրք կ'ազատուէին կախաղանի և քստրանքի դատապարտութիւնից» (Պըլը-Պուղի 1883, Գ): Այսպէս Մ. Բարխուդարյանը զվարճաբանությունը արժևորում է իբրև կյանքի կանոնակարգվածությամբ պայմանավորված հուզական լարվածության լիցքաթափման միջոց՝ ընդգծելով հատկապես զվարճախոսության դերը քաղաքական մշակույթի մեջ. «Հարկ չը կայ ասել, թէ քաղաքական աշխարհն արդէն ընդունած է զուարճաբանութիւնը իբրև կյանքի օգտակար միջոցներից մին...» (Պըլը-Պուղի 1883, Գ):

Պըլ Պուղու քաղաքական վարքագիծն արտահայտված է ոչ միայն նրա զվարճապատումներում, այլև Ա. Բեկնագարյանցի «Գաղտնիք Ղարաբաղի» գրքում, որտեղ Շեյթան Թունին անձամբ պատմում է, թէ ինչպես Պըլ Պուղու օժանդակությամբ իրեն հաջողվել է Մելիք-Շահնագար Բ-ի անվան և հագուստի մեջ ծայրված ներկա գտնվել երկու ճրտերի¹ (անօրեն, օտար, շինծու)՝ Իբրահիմ խանի և Բարայել կաթողիկոսի գաղտնի խորհրդակցությանը, որտեղ ընթերցվում է Իբրահիմ խանի բարեկամ Ջաֆար-բեկի՝ Գանձակից ուղարկած նամակը. «Բսկ Շեյթանն պատմեց թէ ինքն յաջողած էր իբրև Մելիք-Շահնագար ներկայանալ Իբրահիմ ճրտ-խանին՝ շնորհիվ Պըլը-Պուղուն, ուր ներկա եղած էր և Բարայել ճրտ կաթողիկոսն» (Բեկնագարեանց 1886, 101): Նամակից պարզվում է, որ Գանձակի Ջավադ խանը, դաշնադրություն կապելով Թիֆլիս գնացող հայ մելիքների հետ, նպատակ ունի Գանձասարի Մարգիս Ջալալյան եպիսկոպոսին Գանձակ տեղափոխել և մելիքների վերադառնալուն պես նրան քաղաքում կաթողիկոս օձել տալ՝ ի հակառակ Ամարասի Բարայել Գաթողիկոսի: Նամակում անհանգստություն է հայտնվում Ղարաբաղի հայ ժողովրդի՝ «յուր սիրական մելիքների և կաթողիկոսի հետ անանջատ սրտով» կապվածության մասին, ինչն էլ փլուզելու նպատակով՝ խորհուրդը ընդունում է հինգ կետից բաղկացած մի ստոր որոշում. մահադեղով սպանել Մարգիս Եպիսկոպոսին և նրա հետ Ջալալեան ազգի կաթողիկոսությունը, Մելիք-Աբովին և Մելիք-Մեծլումին, որոնք չէին հպատակվում Իբրահիմին, նույն ճանապարհով ուղարկել «վերին աշխարհ», Մյուլքի-բեկին հազար թումանով կաշառել և նրա ձեռքով սպանել տալ Ազրայել-Իբրահիմին (Իբրահիմ Բեկնագարեանց-Թ.Հ.), որն ի դերն է հանում խանական բոլոր ձեռնարկությունները, բռնագրավել Գանձասարի գաղտնի փաստաթղթերը և թանկագին անոթները, ինչպես նաև Գյուլիստանի և Ջրաբերդի ժողովրդի կեսը տեղափոխել Վարանդա և Դիզակ՝ նշված նախորդ գավառների ուժը տկարացնելու հեռատեսությամբ:

Հետաքրքիր է նկատել, որ Մարգիս սրբազանի թունավորումն ի կատար ածելու պարտականությունը դրվում է Բարայել ճրտ կաթողիկոսի վրա, իսկ Իբրահիմ Բեկնագարյանցի սպանությունը՝ Շեյթանի վրա, որը ոչ այլ ոք էր, եթե ոչ Պըլ Պուղու օգնությամբ Մելիք-Շահնագարի «շոր մտած» Շեյթան Թունին, ով, Իբրահիմի գաղտնի հրամանները ջրի երես հանելով, տեղեկացնում է Ղարաբաղի գորախմբերի հրամանատարներին, որպեսզի կարողանան կանխել քաղաքական հանցավոր դավերը (Բեկնագարեանց 1886, 101-105):

Ղարաբաղի բանահյուսական կենցաղում զվարճապատումներ են հյուսվել նաև Պըլ Պուղու և Արցախում շատ սիրված մեկ այլ զվարճախոսի՝ Տմբլաչի Խաչանի շուրջը, ով ժամանակագրորեն հաջորդել է Պըլ Պուղուն: Այսպես, ըստ Բերդաշենում (Մարտունու շրջան) գրառված մի զվարճապատման, Պըլ Պուղին դիմում է Խաչանին՝ գուռնան փոխ վերցնելու խնդրանքով.

–Խաչան, տիյեր աստուծ, տըվեր տու, սօր ուրուգուն գուռնատ փոխ տո ինձ:

Խաչանը կարծելով, թե Պուղին ուզում է նվազել սովորել, հարցնում է.

–Պուղին ապրած կենա, հանցա օգում ըս ածել սըվերի ս:

–Չէ՛, չէ՛, չէ՛, ես քե մատաղ, օգում ըմ թաք մին քըշեր անջուկըս դինջ քոն ինիմ (Հայրապետյան 1991, 52):

¹ «Այսպես կոչում էին Ղարաբաղի այն մելիքներին, որ բաժանված էին հարազատ մելիքների միաբանությունից և միացած էին նրանց թշնամի թուրք խաների՝ հետ, որոնք բռնությամբ տիրապետել էին Շուշիին և Ղարաբաղի մի մասը» (Լաֆֆի 1959, 424):

Պըլ Պուդին իր ժամանակի որոշակի սոցիալական, կրոնական, քաղաքական գաղափարների կրողն է և իբրև երգիծական կերպար բացահայտվում է անսպասելի իրավիճակներում :

Մի օր Պըլ Պուդին գյուղամեջ է դուրս գալիս՝ արխալուղը ծածկված «թագա» չթի բազմաթիվ կարկատաններով:

–Պուդի՛, խըլեղըս տեղ-տեղ շընհավեր ինի,- հեզնում է Մելիք-Շահնազարը:

–Օրումաչ ապրիս, Մելիք,- պատասխանում է Պուդին (Հայրապետյան 1999, 60):

Քաղաքական կարևոր հարցերի քննության նպատակով Պարսկաստան ուղարկված ծաղրածու Պըլ Պուդու արտաքին տեսքը, հագուստ-կապուստը վատահոնություն չի ներշնչում մեր հարևաններին, և երբ նրանք տարակուսած հարցնում են, թե Ղարաբաղում մի կարգին մարդ չկար, որ Պարսկաստան ուղարկեին, Պըլ Պուդին սառնասրտորեն պատասխանում է, թե՛ կա, ինի՞ չի կա: Բայց Ղարաբաղում կարգին մարդուն կարգին մարդկանց մոտ են ուղարկում (Հայրապետյան 2015, 41): Պըլ Պուդին մահացել է 1810 թվականին՝ իր կտակի համաձայն թաղվելով Շոշ և Արկաթալու գյուղերի միջև ընկած քարայրում, որը հետագայում կոչվել է Պուդուն Կարան (Պըլը-Պուդի 1883, Գ, Գրիգորյան-Սպանդարյան 1971, 377):

Պըլ Պուդու զվարճապատումները, փոխանցվելով սերնդեսերունդ, ձևավորել են արցախահայության վարքային համալիրի կարևոր բաղադրիչներից մեկը՝ ժամանցն ու զվարճանքը՝ նոր լույս սփռելով XVIII դարի երկրորդ կեսերից մինչև XIX-ի սկիզբն ընկած ժամանակահատվածում Արցախ պատմաագագաքական շրջանի սոցիալ-քաղաքական հարաբերությունների և ազգամշակութային իրողությունների վրա:

Պըլ Պուդու անվան շուրջը հորինված կամ նրան վերագրվող ժողովրդի մեջ տարածված շատ զվարճապատումներ իրական հիմքեր ունեն, որոնցից հորդող լիաթոք ծիծաղը այսօր էլ նպաստում է աշխարհաքաղաքական աղերսների հիմքով ստեղծված նորանոր իմաստությունների հարակցումներին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ապրես Բեկնազարեանց, Գաղտնիք Ղարաբաղի, Ս. Պետերբուրգ, 1886, Տպարան Ի.Սկորոխոդովի, 406 էջ:
2. Գրիգորյան-Սպանդարյան Մ., Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը, Երևան, 1971, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 377 էջ:
3. Հայրապետյան Թ., անձնական գրառում, Արցախ, տետր № 2, 1991թ., Արցախ, տետր № 1, 1999 թ., Արցախ, տետր № 2, 2015թ.:
4. Ղազիյան Ա., Ղարաբաղի զվարճախոս Պըլ Պուդին // Լրաբեր հասարակական գիտությունների, 1978, №9, էջ 60-69:
5. Միրզա Յուսուֆ Ներսեսով, Ճշմարտացի պատմություն, Թարգմանությունը բնագրից, ներածությունը և ծանոթագրությունները Բ. Պ. Կոստիկյանի, Երևան, 2000, «Զանգակ-97» հրատարակչություն, 321 էջ + 40 էջ (հավելված):
6. Շերմազանյան Գ., Անեկդոտներ, զվարճալի գրույցներ, համառոտ դեպքեր, մեծ մասամբ ազգային կյանքից առած, Թիֆլիս, 1878, տպ. Հովի. Մարտիրոսյանցի, 198 էջ:
7. Պըլը-Պուդի, գրեց Մ. Վ. Բարխուդարեանց, Թիֆլիս, 1883, Վարդանեան և ընկ. տպարան, 190 էջ:
8. Դաֆֆի, Երկերի ժողովածու տասը հատորով, հատոր տասներորդ, Երևան, 1959, Հայպետհրատ, 710 էջ:
9. Герхард М., Искусство повествования, Литературное исследование 1001 ночи, Москва, 1984, «Наука», 453 с.
10. Мирза-Адигезаль-Бек, Карабаг-Наме, Баку, 1950, изд-во Академии наук Азербайджанской ССР, 160 с.

ՀՏԴ 82-3(479.243)

Գրականագիտություն

Վալերի Փիլոյան
Բ.գ.թ., դոցենտ,
Վանաձորի պետական համալսարան

ԻՄԱՍՏՈՂ ՀԱՂԹԵԼՆ Է
(Արա Նազարեթյանի պատերազմական պատմվածքները)

Արցախյան պատերազմի զեղարվեստական տարեկրությունը մինչ օրս հորինումի կարիք չի գտում. այդ տարեկրությունը նախ և առաջ վավերագրական արձակ է՝ կյանքից եկող, կյանքին հավատարիմ և կյանքի չափ անսպասելի ու անկրկնելի: Լյանքից առնված փաստը, դեպքն ու դիպվածը, այս կյանքի դիմագծությունը ներկայացնում են կոնկրետ հեղինակներ, որոնցից է Արա Նազարեթյանը: Նրա պատմվածքների գլխավոր կերպարը ամենատիպական մարդն է, ով չի ձգտում բարձրագույն հայրենասիրության, չի դրսևորում փառասիրություն: Պատմվածքները հատվածական են, մեկ կամ մի քանի օրվա ժամանակագրություններ: Հեղինակը փորձում է յուրաքանչյուր դեպքում անկրկնելի դարձնել պատումը՝ գտնելով կյանքի նորավեպը, անսպասելին: Լինելով քաջասու՝ պատկերում է ամենատարբեր իրավիճակներ ու բացահայտում պատերազմի դաժան դեմքը:

Բանալի բառեր – վավերագրական-զեղարվեստական արձակ, արցախյան պատերազմ, նովելային պատում, մահկանացուներ:

Валерий Пилоян
к. ф. н., доцент
Ванадзорский государственный университет

СМЫСЛ—ПОБЕДИТЬ
(Военные рассказы Ара Назаретяна)

Художественная летопись Арцахской войны до сих пор не нуждается в вымысле: эта летопись прежде всего документальная—идущая от жизни, верная жизни и такая же неожиданная и неповторимая, как и сама жизнь. Жизненные коллизии, жизненные факты, эпизоды и события представляют конкретные авторы, среди которых — Ара Назаретян. Главный герой его рассказов—самый обыкновенный человек, который не стремится к высокопарному патриотизму, чужд честолюбивым планам. Рассказы фрагментарны, представляют собой хронику одного или нескольких дней. В любом случае писатель стремится придать повествованию неповторимый колорит, находя новую непредвиденную эпичку жизни. Будучи немногословным, автор описывает самые разные ситуации и выявляет жестокое лицо войны.

Ключевые слова: документально-художественная проза, Арцахская война, новеллистическое повествование, смертные.

Valery Piloyan
Candidate of Philology, associate professor, VSU, Armenia

THE ESSENCE IS TO WIN
(the war stories of Ara Nazaretyan)

The literary era of Artsakh war needs no invention. This era in itself is a documentary prose which depicts life, is loyal to life and is as unexpected and unique as life itself. The facts, occurrence and event taken from life, the life peculiarity are portrayed by concrete author,s among them Ara Nazaretyan. The main character of his stories is the ordinary person who never strives for pompous patriotism and does not demonstrate vanity. The stories are chronologically disconnected, comprising one or several days. The author tries to make the narration perfect finding the new life manifestation and the unexpected. Being laconic he depicts different situations revealing the cruel nature of war.

Key words: documentary-literary prose, Artsakh war, novelette narration, mortals.

Այս վերջին պատերազմն իր ներկայով ու շարունակական հետևանքներով արդեն բազմիցս դարձել է զեղարվեստական պատկերման նյութ ու առարկա Ռ. Հովսեփյանի, Ջ.Բալայանի, Լ. Խեչոյանի, Վ. Վարդումյանի, Հովհ. Երանյանի, Արա Նազարեթյանի, Լ. Ջավախյանի, Վ. Հակոբյանի, Կ. Գաբրիելյանի և այլոց ստեղծագործություններում: «Արցախյան պատերազմ» բառակապակցությունը թեև ճշմարիտ է, սակայն ճշգրիտ չէ, քանզի սա հայոց պատերազմն է, որչի անտեսվելու հայրենիքում և ի սփյուռս աշխարհի ամեն հայի ջանքն ու մասնակցությունը, անգամ ուրագումն ու փախուստը: Արցախյան պատերազմի զեղարվեստական տարեկրությունը մինչ օրս հորինումի կարիք համարյա չի գտում. այդ տարեկրությունը նախ և առաջ վավերագրական արձակ է՝ կյանքից եկող, կյանքին հավատարիմ և կյանքի չափ անսպասելի ու անկրկնելի: Լյանքից առնված փաստը, դեպքն ու դիպվածը, այս կյանքի դիմագծությունը ներկայացնում են կոնկրետ հեղինակներ, մարտիկներ, որ այսօր զենքը փոխարինել են գրչով. չկա միջնորդավորվածություն, կա անմիջականություն, որ այս գործերի ամենամեծ արժանիքն է անգամ երբեմն զեղարվեստական ինչ-ինչ անկատարությունների դեպքում:

Մարդու պատասխանատվությունն ու անպատասխանատվությունը, զոհվելն ու փախուստը, մարդու մղած պատերազմն ու մարդու ապրած ժամանակը ձևավորում են ոչ միայն իր կեցությունը, այլև մարդու և մարդկային հավաքականության պատմությունը: Արդյունքի ու հետևանքի տարբերություն այստեղ էլ է դրսևորվում, քանզի արդյունքը պատերազմն է, հետևանքը՝ մարդու հետագիծը՝ տեսանելի և անտեսանելի: Ի՞նչն է կարևոր՝ մա՞րդը, թե՞ պատմությունը: Չէ՞ որ մարդուց

հետո մի փշուր է մնում կամ չիմնում, իսկ պատմությունը գոնե միլիոնավոր փշուրներից մնացած շերտ է՝ մասնավոր ժամանակով: Պատմության օբյեկտն ու սուբյեկտը, պատմության նյութն ու աղբյուրն ու թե թե փաստն են, այլ անցավոր մարդը, մահկանացուն: Պատահական չէ այս իմաստով Ա. Նազարեթյանի գրքի «Մահկանացուներ» վերնագիրը: Ամենահասարակ մարդիկ, որոնք իրենց ապրածով պատմություն են կերտում, չնայած ամենասովորականներից են: Այս ամենին գումարենք ևս մի իրողություն. տեսակի պաշտպանություն իրականացնում է ոչ թե տեսակը, այլ կոնկրետ մարդը: Այս Մարդն է կարևորվում ու կարևոր է բոլոր տեսակի հարաբերություններում ու գոյակերպի մեջ: Այս մարդուն է դիտարկում Ա. Նազարեթյանն իր պատմվածք-նովելներում՝ չհավակնելով մեծ-մեծ գաղափարների, չպատկերելով ի ծնե հերոսների: Այս ամենասովորական մարդկանց կյանք-ապրածն ասես նրանց նախորդած վարքի շարունակությունն է, նրանց բարոյականության բնական վիճակը:

Եվ մի իրողություն. այս գործերում չկա հերոսի փնտրտուք, հերոսականի պատկերման մոլուցք, չկա պոռտուսություն ու բարձրագույն հայրենասիրություն, կա մարդն ավելի հաճախ իր թերություններով: Վերսի ու հերոսականի ռեգիստրը, փառքն ու փառասիրությունը («էդ փառք կոչված քաղցրավենիքից մի տակառ ստացել էինք, տղերքը կերան, հատավ») [1, 37]) հեռու են այս մարդկանցից. նրանք ապրում են իրենց դժվար ու ճշմարիտ կյանքը: Այս դեպքում էլ կարելի է հիշել Ժ. Ռասկինի միտքը. «Նրանք՝ ողբերգության կերպարները պետք է ունենան միջին արժանիքներ, այսինքն՝ թուլության ընդունակ առաքինություն»: Եվ ոչ միայն, նաև առաքինության ընդունակ թուլություն: Եթե Ա. Նազարեթյանի Վակոբը («Ընդ») պատմվածքից) առաջիններից է, ապա Իգորյուկ-ռատովցին՝ թվացյալ երկրորդներից, նաև մեր շատ կորուստների մի չնչին մասը փոխհատուցողներից՝ որպես ինքնիրեն գտած որդու վերադարձ («Վետախուզում՝ մարտով»):

Նազարեթյանի՝ պատերազմական թեմայով պատմվածքներն ամփոփված են «Մահկանացուներ» [1], «Ռազմավար պատմվածքներ» [2], «Վայկական պատմություններ դուրսի կի համար» [3] ժողովածուներում: Սրանցում տարբեր հաճախականություններ են տեսնելով պատերազմին ու հետպատերազմյան առանձին դրվագների վերաբերող 26 գործեր, որոնք ասես բեկորներ են պատերազմի հիշողություններից: Կան մեծ ու փոքր բեկորներ, ամբողջական ու թերի, որոնք չեն հասնում ամբողջական պատմվածքի կամ նովելի մակարդակին, սակայն բոլոր դեպքերում գործ ունենք ազնիվ ինքնարտահայտման հետ, որ բացառում է կեղծիքը, սարքովին: Սրանք հատվածական են նաև ժամանակային ընդգրկման տեսակետից: Մեկ դիպված, փոքրիկ գրույց, փոքր պատմություն, որ ժամանակային փոքր տարրություն ունի, սակայն կա ներուժ և իր ասելիքով ամբողջը հաստատելու գործառնություն: Իսկ եթե այս գործերը դիտարկենք որպես ամբողջ իրենց թեմայով, ասելիքով («իմաստը-պիտի հաղթենք»), ուրվագծվող, երբեմն գործից գործ փոխանցվող կերպարներով, ապա կունենանք յուրահատուկ մի վիպակ, որ դեռ գրվում է ու չի ավարտվել, քանի որ տարիների հետ նոր հատվածներ են հայտնվում նրա տարբեր էջերին:

Վեղիակը փորձում է յուրաքանչյուր դեպքում անկրկնելի դարձնել պատումը՝ գտնելով կյանքի նորավեպը, անսպասելին: Ամեն դեպքում յուրովի է կառուցվում գործը՝ հաշվի առնելով կոնկրետ թեմայի «առաջադրանքը»:

«Մահկանացուներ» ժողովածուն բացվում է հեղինակային ծանուցմամբ, որ թանկ է ինչպես ճշմարտությունը բացահայտելու, այնպես էլ ժամանակը ճշգրտելու տեսակետից: Եվ քանի որ այս երկու իրողություններն առիճնում են, և քանի որ կցանկանայի, որ այդ տողերը նաև իմը լինեին, մեջբերում եմ.

«Այս ժողովածուի գրեթե յուրաքանչյուր պատմվածքը կարելի է սկսել՝ ...Դա այն ժամանակն էր, երբ փայտն ու գիրքը վաճառվում էին կշռով և նույն գինն ունեին ու երկուսն էլ վառելու համար էին գնում...» բառերով, բայց եկող սերունդը դրան երբեք չի հավատա, ինչպես մենք չէինք հավատա մի հինգ տարի առաջ. ժամանակի հարահոսում այսքան արագափոխ ու բացառիկ հատված է մեր ապրածը:

Ու տեսնես մարդ-մահկանացուից բացի այս մոլորակի պտտապատճենած օր-միավորների հաշիվն ուրիշ պահող կա՞» [1,3]:

«Գնում էին երկուսով» պատումը պատերազմի մի փոքրիկ դրվագ է, մարդկային մի կորստի արժանագրում, որ միաժամ այդ մարդու ճակատագրի արտահայտություն է: Քիչ անտեղյակ ու անհաղորդ էինք Պապո Ազատի գոյության խորհրդին, բայց մարդու անհետացումից հետո արդեն հաստատագրվում է իր գոյությունը, և ձորը, ուր անհետացավ, սկսում են կոչել իր անունով: Բայց մինչ այդ՝ «Քամին մի բանով է լավ, որ թե հանկարծ մրսում ես, կարող ես ասել քամուց է: Ուժեղ քամի էր » [1, 13]:

«Ավերակ տունը» պատմվածքի թեման թերևս ազատությունն ու պատիժն են: Թշնամական կողմից դիպուկահարը, որ թորք չէ, այլ այլազգի վարձկան, չի սպանում, այլ վիրավորում է. «Չսպանեց, որովհետև ականջների համար, ասում են, դրանց հարյուր դուրս են տալիս, իսկ գերին, կենդանի գերին շատ ավելի թանկ է գնահատվում, դեռ ականջներն էլ վրան» [1, 20]: Սակայն այս դեպքում էլ ազդեցությանը պիտի հետևի հակազդեցությունը. «Ձախ՝ հիմնական աշխատող ձեռքն աշխատեց ինքնաբերաբար ու ճշգրիտ: Սովերի պես ոտքից գլուխ հանդերձանքով, փշովի-մարդահասակ տիկնիկ հիշեցնող մեկը գարնացած վրացու հանգույն ձեռքերը կողմերի վրա շարտելով, տատանվեց անվճռական՝ փոքրի վրա ընկնի, թե մեջքի, ապա, ասես փուրքը թողնելով, դանդաղ փլվեցու երբ հերթը հասավ գլխին, շիֆերի դարսը խուլ դիսկաց» [1, 19]:

Սակայն հեղինակը չի բավարարվում այսքանով, քանի որ կա ավերելու մեծ առեղծվածը. «Ընդերքվերջում հասավ: Ծունը կտրելով, դեռ տեղ չհասած, կանչեց գառիվերից.

-Բուշլատն իմն ա:
Ձմեռ էր» [1, 20]:

«Եթե որևէ բան ապացուցման կարիք ունի, ապա դա ոչ թե անմահության, այլ մահվան ֆենոմենն է» [4,130].- ասում է Է. Կասսիրերը: Մահվան կողքին, նրա հետ մերձավորագույն հարևանությանը ապրողները «վճռականորեն ժխտում են մահվան հնարավորությունն իսկ» [4, 130]:

Իսկ «Ինչպես հազար տարի առաջ» պատմվածքում դիպուկահար է մոջահեդը: Միքանիօրյա լռիկ մենամարտից հետո վաշտի հրամանատար Օնրոնը վիրավորում, իսկ Ղուկասն էլ ոչնչացնում է այս մոջահեդին. «Տիմա գալու են դիակի հետևից. դրանք մոջահեդներ են, գալու են տանն: Նայե՛ք՝ չլրիպե՛ք: Դրանց միայն վերջին դիակն է մնում անտեր» [1, 26]:

Արա Նազարեթյանի պատերազմական պատմվածքների մեջ մի շարք գործերի հետ առանձնանում է «Ճշմարիտ ախպերության կենսազր» գործը՝ ավարտուն, ամբողջական, առանց ավելորդ խճողումների, և կարող ենք այն իրապես դիտարկել նովելի տիրույթներում:

Պատերազմի չգրված օրենքներով բնական իրողություն «էլլադը»՝ ավարը՝ լինի անասուն, քար ու փայտ, ոսկի ու կահույք, գործն ու քիչ առաջվա բուշխարը...

Գյուղի բարձրադիր կողմի մեծ առանձնատուն են ներխուժել գրահամերկնայի վարորդն ու նշանառն: «Սալօջախին թնյնիկն իրենուտում էր, <...> սնդանին փլավը պաղել էր: Ունևորտուն էր, քաղաքային բնակարանի կահավորանքով, պատերն ու հատակը գորգապատ» [1, 28-29], սակայն երկուսն էլ նշանառն են հյուրասենյակի կահույքը: Մեկմեկու հանդեպ գերազանցություն ստանալու նպատակադրմամբ հոգեբանական «դիվերսիաների» են դիմում՝ մոտենալով ավալերության գաղափարին ու կենսացին: Բայց այդ պահին այդ ավալերություն կոչվածին հակադիր է կահույքը. «Ըս կենսացն էսպես չի խմվի... Ես դրա շինողի»:

Ու ավտոմատն առնելով՝ երկար մի կրակահերթ թողեց պատը գրաված եվրոպական կահույքով մեկ:

Լռություն տիրեց, ականջներում գնգացող լռություն: Ապա մեծ պահարանի դռները դանդաղ-ծանր բացվեցին...

Ավտոմատները գրկած երեք տղամարդու մարմին գլորվեց հատակի գորգին» [1, 33-34]: Ու հայտնիանում է ամենամեծ ճշմարտությունը. «Ըս կռիվը նախ հաղթել է պետք, ախպերս: Քիչ մնաց առաջ ընկնեինք: Հաղթանակի կենացը» [1, 34]: Սա էլ պատերազմի հազարավոր դեմքերից մեկն է՝ անկանխատեսելի, մեր տեսակն ու մեր դեմի այլատեսակը բացահայտող:

Եթե Լ. Սեչոյանն իր «Սև գիրք, ծանր բզեզ» վեպում իրեն հասուն կ պացիֆիզմով պատկերում է պատերազմի հոտը (ավելի շուտ՝ «հոտը պատերազմն էր» [5, 135]), ապա Արա Նազարեթյանն էլ պատկերում է «Պատերազմի համը»: Ձինվորներից Սեյրանը իր զինակիցների ու թղթակցի համար խորոված է պատրաստում. «Կզնաս քաղաք, կասես կխտարի միս եմ կերել» [1, 57]: «Կրակը թեժ արած, Սեյրանը միայն քաշում էր հոնն ճիպտաների ու հրացանի շամփորների վրա: Փափուկ, յուղոտ ոչխարի նման միս էր, միայն *կտրակներն ավելի կտր էին*» [1, 56]: Վերջին միտքը հանգուցալուծումը հուշող պայման է, որին վերադառնալու ենք քիչ անց (հեղինակն արդեն նովելի համար «թույն է կաթեցրել») կամ ինտրիգ է կառուցել), քանի որ «Պատերազմի համը բերանով չեն առնում, այլ ուղեղով գզում են» [1, 59]: Սյնինչ հանգուցալուծումն արդեն հաստատորեն փաստում է, որ զինվորների կերածը շան մսից «նրբախորտիկ» է, որից հետո ուղեղը լարվածությունից բժժում էր, ասես գլխարկը սնդում էր, իսկ քունքերին մրջյուններ էին վազվզում: «Գլխի մեջ ամայություն էր՝ *անխառն, անելանելի... անն գր ու ՓՄՍՍ*» [1, 61]:

«Ծանր երագ»: Երկն իր պայմանականությամբ ու հանգուցալուծմամբ միայն վերջին մի քանի տողում է վերածվում նովելի, որ բառացիորեն կրկնում է Շ. Ծահնուրի նախածաննած, բայց չգրած «Որդիք որոտման» վեպի միակ գլուխը՝ «Պոյնուզները» վերնագրված: Սա դաժանության վերջնասահմանն է, ծանր երագ, թերևս ճշտե՞նք՝ մո՞ճավանջ: Թշնամին արել է իրենը. » մի վիրավորի գրպանից նկարաշար դուրս եկավ... Առաջին նկարում ինքն էր՝ անվեներ կտրիճի տեսքով, ոտքը գետնաթափալ մեկի մեջքին: Հաջորդում դարձյալ ինքն էր՝ զոհի կրծքին ծնկած, դանակը բլին: Ծեղրը կիսով չափ մտել էր, մինչդեռ ինքը, դեմքը դարձրել լուսանկարչի կողմը, ժպտում էր ճիգով: Մյուս ձեռքը չոված մատներով ամուր գետնին էր սեղում ու երևի թպրտացող մատաղացուին: Երրորդ նկարում էլ ինքն էր՝ մարմնից անջատված գլուխը ձեռքին: Գլխի մագերի կտրած վզից երկար էին...» [3, 88]: Եվ նրանից հետո չիմում նաև մեր յուրայինը: Արդյունքում տեսնում ենք պատերազմի անմարդկային դեմքը: «Ըդ դաժանությունը իրենցից սովորեցինք», - ասում է «Գնում էին երկուտով» պատմվածքի կերպարներից մեկը, և պատմվում են դաժան պատմություններ, որոնք, ինչպես ասում են, բացարձակ սարսափի վկայություններ են՝ երկուստեք դաժան, և հաստատում են, որ «հուշը հիշատակով է լինում»:

«Դավաճանություն» և «Հրադադար» պատմվածքները ընդդիմադիր տեսակների տարբերություններն են բացահայտում: Քանի որ «հրադադարի լարված պարապությունը տղերքը դժվար են տանում», լեյտենանտ, նախկին բաքվեցի Ավակիմովը հակառակորդից տանկ է առգրավում, իսկ «Դավաճանություն» պատմվածքում հակառակորդ գորաջոկատները պայմանավորվում են իրար վրա չկրակել, սակայն... «Դավաճանության պես մի բան, իրոք, եղել է: Մինչև գետափ, լանջը, փխր, լրիվ ականապատած է: Նեղ մի արահետ կա, արահետով իջել, թուրքերը դրանց գնալ-գալու ԻՄԱՇԱՐՈՒԿԸ տեսել են, գիշերը նույն ճանապարհով եկել... Բայց հիմա ո՞ւմ պատժես: Իրենք իրենց պատժել են» [3, 75]:

Աստ հիշված Ավակիմովը թերևս «Հարևանները» պատմվածքի Միշա Ավանեսովն է. «Մինչև բաքվեցի փախստական ինժեներ Միշա Ավանեսովի գալը գումարտակի անձնակազմի ավելի քան քսան տոկոսը, զոհ թե վիրավոր, թշնամու ականանետը շարքից հանել էր առանց կռիվ-ճակատամարտի: Միշա Ավանեսովը եկավ-չեկավ, հակառակորդի ականանետին ինչ-որ բան պատահեց: Դիրքերի վրա այլևս չէր աշխատում, խփածն էլ բարձր էր գնում կամ լցվում էր ձորը» [1, 36]: Պատերազմական դժվար օրերին թշնամական դիրքերը գնալ-գալու իրավունք ունեցող, մեկ ամիս առաջ Բարու գնացած-եկած Ավակիմովը «փախչելու օրը տան բանալին հարևանիս էի տվել՝ ինչ կարող է ծախի, ինչ չէ՝ վերցնի իրեն: Էսքան ժամանակ չէի կարողանում գտնել: Վերջը գտա» [1, 38]:

Երեկվա հարևաններն այսօր «հարևան» են հակառակորդ խրամատներում: «Կեսօրի մոտ Միշա Ավանեսովը ուտելիքի կապոցն առավ, իջավ ձորը: Երեկոյան հետ եկավ քեֆը լավ, աղբբեջանական մուղամը ծուլի պես քթից կախ, կոթ բեղերի վրա փռած: Դժվար թե հարևանը իրենց դիրք վերադառնալիս կոմիտաս երգեր, բայց Միշա Ավանեսովն արդեն գումարտակի թալիսմանն էր» [1, 39-40]: Ու այս պատմությունը դառնում է սովորական իրողություն: Ու որ փորձանք չդառնա, ուղարկում են թիկունք, բայց գնալուց առաջ «Միշա Ավանեսովն ասաց.

-Միրտս դնգում ա, մի վատ բան ա լինելու: Քանի էստեղ էի, տղերքն ապահով էին, հիմի չգիտեմ: Երրորդ, հինգերորդ, վեցերորդ դիրքերին ասեք զգույշ կենան» [1, 40]: Տղաները պարզում են, որ »երրորդ, հինգերորդ, վեցերորդ դիրքերի ընդհանուրն այն էր, որ երեքն էլ, տարբեր կողմերից, նայում էին գետի մյուս ափի հանդարտ բլրի վրա ուլի պոզի պես աճած ժայռակտորին» [1, 41], կարգաբերում գնեք, որ ազապներն այդ ժայռի քերծի վրա շուտ-շուտ իջնեն:

Արա Նազարեթյանի «Առաջին բարձունքը» երկը հաստատապես լավագույններից է պատերազմական թեմայով գործերի շարքում: Տեղ է գտնում ոչ միայն կոնկրետ ենթաթեմայի իրացումը. սրանից առաջ հարկ է ընդգծել պատումի անսպասելիությունը, որ իրականացվում է խոսքի խաղային տարրերի կիրառմամբ:

Ձուկապետի «խոսքը խաղում էր, ինչպես ձին հմուտ վարժեցնողի տակ» [2, 18]: Խոսքի խաղը նշանակալի գործառույթ ունի՝ հավաստիացնել նորակոչիկներին, որ նրանք « գնում են թիվ «իքս» բարձունքում տղաներին փոխարինելու, քանի որ վերջիններս ավելի կարևոր առաջադրանք ունեն: Անհրաժեշտ հանձնարարականներից ու պարզաբանումներից հետո էլ »նրա արտիստիկ խոսքը խաղում էր ու փայլատակում, փայլատակում էր ու խաղում» [2, 20]: Այդպես խաղով էլ անփորձ տղաների կողմից գրավվում է թշնամական բարձունքը. «Պիտի ներք, տղերք, որ նախորդ շասացի հիմա զինվոր դառնալու

ճանապարհի ձեր առաջին բարձունքը նվաճված է, փորձ արդեն ունեք. հետագա գործողությունների համար անցնում եմ բաց տեքստի» [2, 21]: Մամանատիպ իրավիճակի մասին է ասում Յոհան Հայզինգան. «գրական նյութի կենտրոնական թեման մի առաջադրանք է, որը պետք է կատարի հերոսը, մի փորձություն, որին նա պետք է դիմանա, մի խոչընդոտ, որը պետք է հաղթահարի» [6, 191]: Փորձություն-խոչընդոտը հաղթահարված է, այլևս չկա փակ տեքստը: Ծաղրածուի գործառույթ ունեցող ջոկապետը վերադառնում է իր հայրական տնային, դեն նետում դիմակը. «Հերոսը չի ճանաչվում, ինչպես որ է, որովհետև թաքցնում է իր էությունը կամ ինքն այն չի ճանաչում, քանզի կարող է փոխել իր արտաքինը, կերպարանափոխվել: Մի խոսքով՝ հերոսը դիմակ է կրում, գործում է ծպտված, իր մեջ գաղտնիք կրում» [6, 191]: Պատանյակների կոիվ գնալու պայմանաձևը, որ իր ներսում ենթադրում է մանկան արքետիպը, հաստատվում է Նագարեթյանի այս անհավանական նովելում՝ իր հերթին հաստատելով մեր տեսակի գեներտիկ ու միջակայական ընդհանրականությունը:

«Տոթօր» երկը Լ. Խնչոյանի համահունչ պատմվածքի հետ աղերսներ չունի և ոչ կրքի, այլ աշխարհավերման պատմություն է: Սա Ա. Նագարեթյանի պատկերած բացարձակ ողբերգություններից և բացարձակ հաջողություններից մեկն է, որին ուշադիր վերաբերմունք է պետք, ոչ մեկ-երկու նախադասությամբ հպանցիկ անդրադարձ: Նույնը կարող ենք ասել «Պատասխան չի լինելու» նովելի վերաբերմամբ: Այս դեպքում գերակա է ոչ թե ի՞նչ-ը կամ ինչպե՞ս-ը, այլ ինչո՞ւ-ն, որ իր հետևից բերում է պատասխանը: Երիտասարդը տուն չի դառնալու, չի հանդիպելու իրեն սիրահարված աղջնակին, քանի որ «Դեմքի վրա բարձրագլած մուգ կանաչ թաշկինակի տակ տափաշշից օդին գուլ-գուլ լցվեց այնտեղ, ուր բերանը պիտի լիներ, բայց բերանի խռոչն էր այնպես բաց-ահարկու. արևի բեկորը ծնոտը տարել էր: Չկար» [2, 86]:

Պատերազմի մի այլ դիմագծություն կա «Լյանքի նովելը» և «Ծաղկամանը» պատմվածքներում, որ ներկայացնում են այդ օրերի թիկունքի կյանքի փորքիկ դրվագներ: Մասնավորապես «Ծաղկամանը» կյանքն է պատմում՝ նորաստեղծ ընտանիքի գավակի նախածնունդը մանրամասնելով, կնոջ հանդեպ վիրավոր ամուսնու վերաբերմունքով, աղքատությամբ ու սպասմամբ... Հոգեբանական նուրբ դիտարկումները, քչախոսք, սակայն բազմացույց այս պատումն իրոք աշխատված է, գուրգուրված և հեղինակի շնորհի առավատչյան է:

Ա. Նագարեթյանը շատախոս չէ: Իրեն վերադարձնենք իր իսկ նախադասությունը. «Ինքը երկար խոսքը, խոսքի ջուրը չի սիրում» [3, 84]: Եվ հեղինակն իր նպատակն է բերում արցախյան պատերազմի գեղարվեստական վավերագրությամբ: Ավելի հաճախ իրավացիորեն շրջանառվում են Լ. Խնչոյանի անունն ու վաստակը, բայց այս մարտիկ-գրագետը միայնակ չէ. նրա կողքին ու իր հետ ջոկ, դասա՞կ, վա՞շտ, թե՞ գումարտակ է քայլում, ուր հայոց գրի ու գորքի *գինավորներ* կան, և այս շարքում չենք կարող ուրանալ Արա Նագարեթյան նրբանկատ գրագետի անունը և այլոց, որոնց գործին անդրադառնալու պատենությունը մի օր պիտի գտնվի:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Նագարեթյան Արա, Մահկանացուներ, Ե., «Նաիրի», 1995,
2. Նագարեթյան Արա, Ռազմավար պատմվածքներ, Ե., «Ապագա», 2001,
3. Նագարեթյան Արա, Հայկական պատմություններ դուդուկի համար, Ե., ՀԳՄ հրատ., 2015,
4. Կասսիրեր Է., Ըստն մարդու մասին, Ե., Ս«արգիս Խաչենց-Փրինթինգ», 2008,
5. Խնչոյան Լևոն, Ձայներ և տեսիլքներ, Ե., «Նաիրի», 2006,
6. Հայզինգա Յոհ., Homo ludens. մշակույթի խաղային տարրի սահմանման փորձ, Ե., «Սարգիս Խաչենց-Փրինթինգ», 2007:

ՀՏԴ 82 (479.243)

Գրականագիտություն

Վիկտորյա Վասիլյան
ԵՊՀ Պատմության ֆակուլտետ,
Հնագիտության և ազգագրության ամբիոնի հայցորդ
v.vasilyan@mail.ru

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈԳՈՒ» ՎԵՐԱՇՆՈՒՆԴԸ «ՄԱՅՐ ԱՐՑԱՅԻՆ»

Հոդվածում քննարկվում է «Մայր Հայաստան» հուշարձանների կերտման և նրանց արմատների ծագման խնդիրը: Այսպիսով, մենք տեսնում են, թե ինչպիսի գաղափարական և պատկերագրական փոփոխություններ կրեց «Մայր Հայաստանի» թեման և ինչպես վերափոխվեց «Մայր Արցախի»: 1860-ական թվականներից Մայր Հայաստանի գաղափարը միաձուլվել է «Ոգի Հայաստանի» պատկերի հետ և լայնորեն ներթափանցել ազատասիրական գաղափարախոսության մեջ: Ապրել է բուն ժողովրդի ճակատագիրը, ստացել նորանոր տիպեր, մարմնավորվել ամեն սերնդի հետ ժամանակի և ոգու հրամայականի համահունչ:

Բանալի բառեր - Մայր Հայաստան, Մայր Արցախ, Բերդաշեն, Աղջկաբերդ, Հայաստանի ոգի, Հաղթանակի հուշակոթող, ԼՂՀ

Виктория Василян,
Факультет истории ЕГУ
Соискатель кафедры археологии и этнографии
v.vasilyan@mail.ru

ВОЗРОЖДЕНИЕ "ДУХА АРМЕНИИ" В "МАТЕРИ АРЦАХА"

В статье рассматривается вопрос о создании памятников Матери Армении и о их корнях. Таким образом, мы видим какие идеологические и иконографические изменения произошли с темой "Матери Армения" и как она превратилась в "Мать Арцах". В 1860-е годы идея "Мать Армения" объединилась с образом "Духа Армения", и широко проникла в свободолубивую идеологию наций. Она жила судьбой своего родного народа, получила новые типы, воплотилась в каждом поколении, в соответствии с императивами времени и духа.

Ключевые слова: Мать-Армения, Мать -Арцах, Бердашен, Akhchkaferd, Дух Армения, Монуменг Победы, НКР.

Victorya Vasilyan,
History Faculty of YSU
A post-graduate student of the chair of Archeology and Ethnography
v.vasilyan@mail.ru

THE REBIRTH OF "SPIRIT OF ARMENIA" IN THE "MOTHER ARTSAKH"

The article discusses the rebirth of the creation - The Monuments of Mother Armenia, and its roots. Thus, we see what the theme "Mother Armenia" underwent some ideological and iconographic and involved into "Mother Artsakh." In 1860s the idea of "Mother Armenia" has teamed up with the image of "the Spirit of Armenia", and widely penetrated into the ideology of freedom-loving nation. She lived the fate of her own people, received new types embodied in every generation, in accordance with the imperatives of time and spirit.

Keywords: Mother Armenia, Mother Artsakh, Berdashen, Akhchkaferd, Spirit of Armenia, Victory Monument, NKR

Խնդրո առարկան վերաբերում է «Մայր Հայաստանի» կամ «Ոգի Հայաստանի» թեմայի գաղափարաբանության և պատկերագրության ծագմանը և նրա հետագա վերափոխումներին Խորհրդային Միության տարիներին Հայաստանում՝ «Մայր Հայաստանի» (Նկ. 1) և Արցախում՝ «Մայր Արցախի» (Նկ. 3, 4): Մույն խնդրի արդիականությունը այն է, որ առաջին անգամ փորձ է արվում ներկայացնել Հայաստանի և Արցախի «Մայր Հայաստան» հուշարձանների պատկերագրության և իմաստաբանության համեմատական զարգացման ուղին՝ հետազոտական հիմք ընդունելով քննարկվող հիմնահարցերի, փաստական նյութի վերլուծության, պատմական, ազգագրական և արվեստաբանական համադրման և ընդհանրացման մեթոդաբանությունը:

Ազատագրական պայքարի բովում հայ կինը ոչ միայն դարձավ այդ պայքարի խորհրդանիշ ոգին, այլև զենքը ձեռքին՝ կանգնեց հայ զինվորի կողքին՝ հանդիսանալով նրա զինակիցն ու դրոշակակիրը: Հայ ռազմիկ կնոջ կերպարը, սկիզբ առնելով Ավարայրի հերոսամարտից, դարեր շարունակ հարստացվել է նոր կերպարներով՝ ի հավաստումն հայ կնոջ ազգային աննկուն ոգու ու աննահանջ ձգտման¹:

¹ «Հայուհիներ», Հտ. 1, Երևան, 2011, էջ 10:

«Մայր Հայաստանի» կերպարը առաջին անգամ ծագեց որպես ազգային-ազատագրական շարժման խորհրդանիշ¹: Նրա հեղինակն էր նկարիչ, գրող, հրապարակախոս Ճանիկ Արամյանը², որը այն տպագրեց 1860թ-ին Փարիզում «Դասարան Հայկազն մանկանց»³ դասագրքում⁴:

Նկարի տակ գրված է «Ոգի Հայաստանեայց»⁵ և կարծես հուշում է հայերի վաղեմի երազանքը. ազատագրված տեսնել հայրենի հողերը օտարի բռնապետությունից հայի քաջության ոգով և միացյալ հայրենիքում ազատ շրջել հարազատ վայրերով: «Հայաստանի Ոգին»⁶ միակն էր, որ կարող էր շրջել կորուսյալ հայրենիքի ավերակների վրա, հովանավորել իր գավալներին և հնարավորություն ուներ անտեսանելիորեն պաշտպանելու մայր հողը օտար բռնապետների ավերածություններից: Այս թեման լայնորեն տարածվեց 19-րդ դարից սկսած և դարձավ հայկական ազգային-ազատագրական պաստառների, զինանշանների, թատերական վարագույրների, փորագրանկարների, արծաթյա և փայտյա դեկորատիվ-կիրառական իրերի, ասեղնագործ և ձեռագործ կարպետների, նամականիշների, գրքերի և գորգերի նկարագրման սիրված պատկերաստիպ (Նկ. 5):

Մայր Հայաստանի կերպարի ու գաղափարաբանության հաջորդ փոփոխությունը եղավ 1918-1920թթ.⁷: Հայաստանի Առաջին Հանրապետության ստեղծումով նոր իրադրություն ստեղծվեց, վերականգնվեց շուրջ 600-ամյա կորցրած պետականությունը: Իրականացավ հայ ժողովրդի դարավոր երազանքը: Հայաստանը այլև չէր կարող լինել հռչակված, բոկոտն, խեղճ, որդեկորույս, նստած և ձեռքը այտին դրած: Հատկանշական է, որ 1918 թ.-ի մայիսի 28-ին առաջին հանրապետության ստեղծումով հուսահատ կնոջ կերպարը փոխարինվեց պայքարող և ռազմիկ կնոջ կերպարով՝ մի ձեռքին սուր, իսկ մյուս ձեռքով իր գավալներին կոչ էր անում գնալ պատմական հայրենիք և ազատագրել այն օտար գերությունից, նա հաստատակամ կանգնած էր՝ պատրաստ պաշտպանելու իր հայրենի երկիրն ու հողը: Գաղափարը մեկն էր. ազատ-անկախ և միացյալ Հայաստանի ստեղծումը: Այսինքն՝ Հայաստանի կերպարը ամեն ժամանակաշրջանին բնորոշ փոփոխում էր իր էությունը՝ որպես կորուսյալ հայրենիքի մայր և պայքարող հերոս կին:

Պայքարող Մայր Հայաստանի հերոսական կերպարը նոր վերածնունդ ապրեց 1945թ.-ից հետո Խորհրդային արվեստում⁸: Խորհրդային երկրներում հիմնվեցին «Մայր հայրենիքը» և Հայրենական պատերազմը գովերգող Հաղթանակի հուշակոթողներ: Նույնիսկ XX դարի երկու Համաշխարհային պատերազմները չվերացրին կնոջ իդեալը և հզոր պաշտամունքը⁹: «Մայր Հայաստանի» տիպով հուշարձաններ կանգնեցվեցին ինչպես Հայաստանում, այնպես էլ Արցախում:

Արցախում երկրամասի հավաքական խորհրդանիշը և ամենասիրված հուշարձանախումբը դարձավ «Մենք ենք, մեր սարերը» կարմիր տուֆից քանդակը, որը հեղինակել է Մարգիս Բաղդասարյանը, ճարտարապետ՝ Յ. Հակոբյան 1967թ. (Նկ. 6): Ժողովուրդը ի սկզբանե այն անվանեց նաև «Տատիկ ու պապիկ»: Այս կոթողն իրապես քարացած մի երգ է, որը միանգամայն տարբեր էլեկտրոններով հնչեց իր կառուցման օրից մինչև այսօր ընկած համեմատաբար կարճ ժամանակահատվածում: Մինչև 1988 թվականը Տատիկի և պապիկի հայացքում խտացած էր այն լուռ ցասումը, որը կար ամեն արցախցու սրտում Արցախին պարտադրված ապագայի համար, և պատահական չէ, որ տատիկն ու պապիկը համեմատվում էին Արարատի մեծ ու փոքր գագաթների հետ, որը միաժամանակ խորհրդանշում էր թե՛ Արցախի հարատևումը մեր բիրտիական լեռան նման և թե՛ ենթագիտակցական այն վախը, որ հանկարծ գուցե մի օր էլ նա չարժանանա մեր մայր լեռան ճակատագրին:

Մարտունու շրջանի Բերդաշեն գյուղի տարածքում է գտնվում ԼՂՀ-ում կառուցված ամենաբարձր հուշարձանը (Նկ. 3, 4): Մեծ Հայրենական պատերազմում զոհված արցախցիների հիշատակին նվիրված հուշարձանը կառուցվել է երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտի քառասունամյակին և իր տիպով բավականին նմանվում է Երևանում և Գյումրիում կանգնեցված համանուն հուշարձաններին: Հուշարձանն իրենից ներկայացնում է այլումբից ձուլված և ձեռքին դափնու ճյուղ բռնած կնոջ արձան, որը ներկայացված է արցախցի պայքարող և աննկուն հերոսուհու տիպով: Դեռատի աղջիկը ներկայացված է ազգագրական տարազով, գլխաշորով և ճակատնոցով: Նրա բարձրությունը 32 մետր է: Գյուղից 3 կմ հեռավորության վրա հյուսիսային մասում է գտնվում այն բարձրադիր սարը (երկ լեռնագանգվածը), որը տեղացիներն այժմ էլ անվանում են բերդ, կուսաբերդ, Աղջկաբերդ և որի հետ կապված առասպելներն ու անվանումը նմանվում են Դիլիջանում գտնվող Աղջկաբերդի առասպելներին¹⁰: Արցախի հզոր օրիորդի կերպարի հետ կապված են շատ առասպելներ. ստորև կներկայացնենք երկուսը.

Ա. Անհիշելի ժամանակներում այստեղ ապրում էր հայրենի լեռների պես հպարտ, Արցախի կուսական անտառների եղնիկի պես չքնաղ, բայց նաև քաջ ու համարձակ մի աղջիկ: Նա սիրում էր իր հայրենակից քաջ կորիճներից մեկին, որը նույնպես անսահմանափակ նվիրված էր աղջկան: Մակայն թշնամու դեմ մղված մարտերում

¹Ղազարյան Մ., «Ու՞մ ողբն է» (Մի գորգի տարօրինակ պատկանելիության մասին), «Երեկոյան Երևան», 1989, մայիսի 15, էջ 3:

² Հայկական Սովետական Հանրագիտարան, Հտ 9, Եր., 1983, էջ 316:

³ Հակոբյան Մ., Մայր Հայաստանի գաղափարը հայ ազատասիրական մտքի ոլորտներում, Էջմիածին ամսագիր, 1985, ապրիլ, Էջմիածին, 71-76:

⁴ Արամյան Ճ., Դասարան Հայկազն մանկանց: Առաջին եւ երկրորդ մաս, Փարիզ, 1860, էջ 94:

⁵ Հակոբյան Մ., Մայր Հայաստանի գաղափարը հայ ազատասիրական մտքի ոլորտներում, Էջմիածին ամսագիր, 1985, ապրիլ, Էջմիածին, 73:

⁶ Բազմավեպ, 1844, №17, էջ 271-272:

⁷ Դեմոյան Հ., Հայկական ազգային խորհրդանշաններ. Զինանշաններ. Դրոշներ. Պարզկներ, Երևան, 2012, էջ 286:

⁸ Վասիլյան Վ., «Հայաստանի» կնոջ կերպարով անձնավորումը եվ նրա չորս պատկերագրական տիպերը//Պատմություն և մշակույթ հայագիտական հանդես, Երևան, 2016, 435:

⁹ Վասիլյան Վ., Մայր Հայաստանի հնագույն նախատիպերը//Պատմություն և մշակույթ հայագիտական հանդես, Ա հատուկ. Երևան, 2013. էջ 209-223:

¹⁰ Էլյարյան Ի., Աղստևի հովտի պատմության և կուլտուրայի հուշարձաններ, Երևան, «Հայաստան», 1980, 39-40:

գոհվում է աղջկա սիրած երիտասարդը: Աղջիկը երկար սգում, ողբում է այդ կորուստը և երգվում սրբորեն պահել տղայի նկատմամբ ունեցած սերը: Անցնում են տարիներ: Աղջկա գեղեցկության համբավը տարածվում է ամենուրեք:

Եվ ահա նրա օտար երկրպագուներից մեկը որոշում է գեղեցիկ ուժով տիրանալ նրան: Աղջիկը բարձրանում է բերդի գագաթը, այնտեղ դղյակ կառուցում և պատսպարվում: Հայ կտրիճները պաշտպանում են աղջկան: Սակայն թշնամին նոր ու մեծ ուժով է պաշարում բերդը, զրկում այն ջրից, հույս ունենալով, որ աղջիկը ծարավից կհանձնվի: Քաջարի գեղեցկուհին, հավասարիմ մնալով իր երդմանը, ժայռի կատարից եղնիկի նման ցատկում է դեպի անդնդախոր ձորը: Ասում են, որ բերդասարի ստորոտում այժմ էլ բխող աղբյուրը ժայթքել է աղջկա ընկած տեղում: Ահա այդ ժամանակվանից ժայռասարը կոչվում է «Աղջկաբերդ»¹:

Բ. Մյուս լեգենդի համաձայն մոնղոլները մի հայ գեղջկուհու ցանկացել են առևանգել: Վերջինս էլ փրկություն գտնելու համար ցատկել է գյուղի «Աղջկաբերդ» կոչվող լեռան բարձունքից և ողջ մնացել, իսկ ողջ մնալու գաղտնիքը նրա լայնափեշ զգեստն էր: Այն տեղում, որտեղ աղջիկը ցատկել է, լիճ է գոյացել: Հետագայում, որպես հերոսական կնոջ մարմնացում Աղջկաբերդի դիմացի լեռան վրա կառուցվում է հուշարձան-թանգարանը: Հուշարձանը պատկերող կնոջ մի ձեռքին թուր է, մյուս ձեռքին՝ հավերժություն խորհրդանշող դափնու տերև: Ու թեև հերոսական կինը պատկերող հուշարձանը դեռ Արցախյան մարտերի ժամանակ բազմիցս վնասվել է թշնամու գնդակից, բայց մինչ այսօր կանգուն է՝ ի նշան հայի հաղթական կերպարի ու անհողորդ կամքի: Արցախ աշխարհի Մարտունու շրջանի Բերդաշեն գյուղը չորս կողմից պարուրված է լեռների մեջ, իր մեջ ամփոփում է պայքարող մարդու մի ամբողջական կերպար:

Անցնում են դարեր, բայց հայը չի կորցնում հանուն հայրենի հողի և հավատի պայքարելու հաստատակամությունը: Մեծ, ազատ, անկախ հայրենիքի լույսն է հաղթանակում հայերիս սրտում և մղում անհավասար և անվերջ գոյամարտի:

Այս գոյամարտում շուրջ հազար տարվա երկիրը իր հոգու սուրբ կանչով թողել է կյանքն ու հանուն այդ կյանքի կոմվեյթը գոհվել, գոհվելով հառնել ու ազատ կյանքի համար օրավուր գոյամարտ մղել: Հայը ըմպել է դառնության բաժակը մինչև հատակը, վրեժի ցատումն է ապրել... Փոքրիկ լեռնային երկիրը դրախտ, որ հազար տարի չէր եղել ազատ, հիմա բռունցքված վրեժ էր երգում, ու «Ոգով» արդար ազատության կռիվն էր կրում իր քաջամարտիկ զավակների հետ: Նա մեն-մենակ կանգնած էր, օտար, թշնամի հարևաններով լոկ շրջապատված ու մեծ աշխարհի պատանդական հայացքի ներքո: Եվ հաղթանակը ամեն մտքից վեր հրաշք էր իրավ, զարմանք էր բոլոր մեծագոր տերությունների համար, այս հաղթանակը զինն էր մեր արյան, բայց նաև կամքի, ամուր հավատքի: Ինքնագոհության կենաց պարզն էր այն անմահներին, ում հիշատակի աղոթքն ենք շնջում և պայծառ հպարտության արցունքով անվանում հայ նահատակներ:

Վերջապես տունդարձ էր ապրել Հայաստանի կորուսյալ, վտարյալ ոգին, հայրենի գիրկն էր ընկել և ազատորեն լսում էր իր հոգու աստվածային ձայնը: Վիրավորների ցավի ճիչերի և փամփուշտներից գոհված որդիների մեջ տառապող, մահու չափ հոգնած «Մայր Հայաստանը» վերստին գտել էր հոգու և մտքի անդորրը, կյանքի հավատը: Աստվածային սերը կրելով՝ հայը իր որդուն տվեց, եղբորը, հորը, քրոջը, աղջկան պայքարի մղեց, հայն այս պայքարում հավատով հաղթեց: Հաղթանակած «Հայաստանի ոգին» պահապան է իր սուրբ զինվորներին՝ երկիրը կեղեքող օտար հրոսակների դեմ պայքարում:

Մայր հայրենիքի աննկուն ոգու և պայքարելու ուժի հավաստիքն է, որ շուրջ մեկ դար է անցել, սակայն նույն կերպ էր խորհում արվեստագետ Ա. Ֆեթվաձյանը «Մայր Հայաստանի և ազատ հայրենիքի» մասին. «Այո՛, անկարելի է Հայ լինել, մի քիչ սիրտ ունենալ եւ չի մորմոքիլ տեսնելով մորթուած քաղաքակրթութեան, հին ազնուական արժէքների այնքա՛ն ընդարձակ աւերանքը... Այսօր այրիացած և թշուառ, կողոպտուած ու մերկացրած երբեմնի իւր շքեղ հանդերձանքից, բայց Հայաստան կայ եւ կպարի իւր բարձրավանդակում: Նա իւր կոչումին եւ արժէքին գիտակից, հաւատքով է, որ ինքն մէնակ իւր ուժերով կը հասնի մի օր ցույց տալու, ում հարկն է, որ նա բարձր է ինչպէս իւր սարը եւ կուռ, ինչպէս քերծը: Նա չի թողնելու որ վարնոցը վարերեն հասնի մինչեւ վերը, թէկուզ վարնոցը ունենայ էլ անդալու տաղանդը: Նրա մոտ թառելու կը գան արծիւները միայն եւ ոչ ոք ոտերով չի արատաւորելու իւր սահմանի ձիւնի մաքրութիւնը:

Եւ երբ կը խորհիք, կը զգաք, որ այդ ամենը մերն է, թէկուզ խաթարուած՝ բայց մերն է, Հայութեան առանձնայատուկ համով ու հոտով, թոյր ու բոյրով մերը, մեր երկնքի տակ, մեր արեւի լուսով կենդանի ու կենսալի, ձեր էութեան ներքին մտերմութիւնների մէջ մի բան կիսայտայ դուք կզգաք, որ մենք էլ դրա՛նցն ենք... Եւ ահա սիրտդ կելլէ հազագիդ մէջ դէմ կառնէ եւ արտասուքը կը պղտորեն աչքերդ...»²:

Կանայք ռազմի դաշտում գենք են վերցրել և տղամարդու հետ պայքարել հանուն հայրենիքի ազատության և հավատի հաղթանակի: Իսկ երբ մայրերն են գենք վերցնում, այդ պահից արդեն թշնամին պարտվում է: Հայրենիքն էլ է մայր, և մայրն էլ հայրենիք. մորից է սկսվում հայրենիքը, դրա համար էլ սահմաններ չունի, հայրենիքը մեր սիրտ սահմաններն են: Զինվորի մայրը և երկրի պահապանը նաև զինվոր է, որը հանուն որդու գենք է վերցնում և պայքարում սեփական զավակների ազատության համար³: «Մայր Հայաստան»-ի ձեռքի թուրը ոչ միայն արտաքին ատրիբուտ է, այլ ավելի շուտ կարևոր կերպարային դետալ, որը սիմվոլիկ իմաստով բացահայտում է խաղաղ հողի գաղափարը: Մարտական քաջությունն ու առաքինությունը և մայրության ուժը այստեղ միասնական են և համաձուլված⁴:

¹ Ղանալանյան Ա., Ավանդապատում, Երևան, 1969, 208, 209, 218:

² Հայաստանի կոչնակ, Հունվար 6, 1923, vol. XXIII, Մանուկ Հայաստան, նկ. Ա. Ֆեթվաձեանի, The Gotchnag, 287 fourth avenue, new york, n.1, 1923 թիվ, համար 39, էջ 1235:

³ Վասիլյան Վ., Մայր Հայաստանի հնագույն նախատիպերը//«Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, Ա հատոր, Երևան, 2013, էջ 209-223:

⁴ Зубов Б., Ара Арутюнян. Альбом, Москва, 1986, էջ 33:

«Մայր Հայաստան» ուներ որոշակի պատգամ. հավատի և հայրենիքի նկատմամբ սիրո շնորհիվ հայ ժողովուրդը դարեր շարունակ պայքարել է հանուն սեփական ազատության: Հավատի համար բազմաթիվ դարեր թափվել է հայի արյունը: Հայրենիքի և հավատի միավորումը սրբագործվեց Մարդարապատի և Ղարաբաղյան հերոսամարտերի հաղթանակներում¹:

Եվ եթե յուրաքանչյուր հորեյան իմաստավորումն է նաև տեղի ունեցած իրադարձության, ԼՂՀ անկախության հռչակման 25-րդ տարեդարձի կարևորագույն պարտականություններից մեկը պետք է լինի հետպատերազմյան ներկա և գալիք սերունդներին հիշեցնել, թե ինչ գնով է ձեռք բերվել այսօրվա հաղթանակը և անկախությունը: Չկորցնենք այն կամքն ու հաստատակամությունը, որով պայքարել են քաջ հայորդիները՝ հանուն ազատ Արցախի և «Մայր Հայաստանի» անկախության:

Եզրակացություններ

Այսպիսով, մենք տեսնում են, թե ինչպիսի գաղափարական և պատկերագրական փոփոխություններ կրեց «Մայր Հայաստանի» թեման և ինչպես վերափոխվեց պայքարող «Մայր Արցախի»: 1860-ական թվականներից Մայր Հայաստանի գաղափարը միաձուլվել է «Ոգի Հայաստանի» պատկերի հետ և լայնորեն ներթափանցել ազատասիրական գաղափարախոսության մեջ²: Ապրել է բուն ժողովրդի ճակատագիրը, ստացել նորանոր տիպեր, մարմնավորվել ամեն սերնդի հետ՝ ժամանակի և ոգու հրամայականին համահունչ:

Մայր Հայաստանի հերոսական կերպարը նոր վերածնունդ ապրեց 1945թ.-ից հետո Խորհրդային արվեստում³: Խորհրդային միության հաղթանակի հուշակոթողներ կանգնեցվեցին Հայաստանում և Արցախում:

Հետաքրքիր է, որ հիմնականում նրանք դասակարգվում էին երեք խմբի.

Ա. Մայր երկրի հաղթանակը և հովանավորությունը խորհրդանշող աստվածուհիների կերպարներ,

Բ. Որդեկորույս, սգացող մոր և զինվորի հուշարձաններ,

Գ. Ժողովրդի մեջ արմատացած և ազգագրական հանդերձանքով ներկայացվող, ուժեղ առասպելական կանանց կերպարներ՝ թագուհիներ, սրբուհիներ, հերոսուհիներ⁴:

Գրականության ցանկ


1. «Հայուհիներ», Հտ. 1, Երևան, 2011, էջ 10:
2. «Բազմավեպ», 1844, №17, էջ 271-272:
3. **Зубов Б.**, Ара Арутюнян. Альбом, Москва, 1986, էջ 33:
4. **Արամեան Ճ.**, Դասարան Հայկազն մանկանց: Առաջին եւ երկրորդ մաս, Փարիզ, 1860, էջ 94:
5. **Դեմոյան Հ.**, Հայկական ազգային խորհրդանշաններ. Զինանշաններ. Դրոշներ. Պարզներ, Երևան, 2012, էջ 286:
6. **Էլլարյան Ի.**, Աղստևի հովտի պատմության և կուլտուրայի հուշարձաններ, Երևան, «Հայաստան», 1980, 39-40:
7. **Հակոբյան Մ.**, Մայր Հայաստանի գաղափարը հայ ազատասիրական մտքի ոլորտներում, Էջմիածին ամսագիր, 1985, ապրիլ, Էջմիածին, 71-76:
8. Հայաստանի կոչնակ, Հունվար 6, 1923, vol. XXIII, Մանուկ Հայաստան, նկ. Ա. Ֆեթվաճեանի, The Gotchnag, 287 fourth avenue, new york, n.1, 1923 թիվ, համար 39, էջ 1235:
9. Հայկական Մովետական Հանրագիտարան, Հտ 9, Եր., 1983, էջ 316:
10. **Ղազարյան Մ.**, «Ու մ ողբն է» (Մի գորգի տարօրինակ պատկանելիության մասին), «Երեկոյան Երևան», 1989, մայիսի 15, էջ 3:
11. **Ղանալանյան Ա.**, Ավանդապատում, Երևան, 1969, 208, 209, 218:
12. **Մարտիկյան Հ.**, Հայ ինքնության պատկերագրությունը, Ցեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը, Հտ. 1, Երևան, 2009, էջ 29-30:
13. **Վասիլյան Վ.**, Մայր Հայաստանի հնագույն նախատիպերը//Պատմություն և մշակույթ հայագիտական հանդես, Ա հատոր, Երևան, 2013, էջ 209-223:
14. **Վասիլյան Վ.**, «Հայաստանի»՝ կնոջ կերպարով անձնավորումը եվ նրա չորս պատկերագրական տիպերը//Պատմություն և մշակույթ հայագիտական հանդես, Երևան, 2016, 418-435:

¹ **Վասիլյան Վ.**, Մայր Հայաստանի հնագույն նախատիպերը, էջ 223:

² **Հակոբյան Մ.**, Մայր Հայաստանի գաղափարը հայ ազատասիրական մտքի ոլորտներում, Էջմիածին ամսագիր, 1985, ապրիլ, Էջմիածին, 75:

³ **Վասիլյան Վ.**, «Հայաստանի»՝ կնոջ կերպարով անձնավորումը եվ նրա չորս պատկերագրական տիպերը//Պատմություն և մշակույթ հայագիտական հանդես, Երևան, 2016, 435:


⁴ **Մարտիկյան Հ.**, Հայ ինքնության պատկերագրությունը, Ցեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը, Հտ. 1, Երևան, 2009, էջ 29-30:



Նկար 1



Նկար 2



Նկար 3



Նկար 4



Նկար 5



Նկար 6

Միլիա Խաչատրյան
բ.գ.թ., ԱրՊՀ դոցենտ

ՎԱԶԳԵՆ ՕՎՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՎ ԲԱՆԱՍՏԵՂ ԵՐ

Վ.Օվյանը Արցախի գրական ընտանիքի այն բացառիկ դեմքերից է, ով, ԽՍՀՄ բռնատիրության ապագային տարիներին ճնշվելով գրաբնության պատենը, իր ստեղծագործություններում մերկացրել է ինտերնացիոնալիզմի բողոքի տակ Ադրբեյջանի վարած հայահալած քաղաքականությունն Արցախում, որի նպատակը Արցախը հայաթափելն էր:

Սույն հոդվածում արծարծվում է Վ.Օվյանի՝ իր ապրած ժամանակաշրջանում Արցախի ճշմարիտ պատկերը ներկայացնող ստեղծագործությունները, որոնք նոր էջ են արցախահայ գրականության մեջ:

Բանալի բառեր՝ կեղծ, հակահայ, հակազգային, ԽՍՀՄ, գրաբնություն, մերկացնել, խիզախ, բնապետություն, ինքնատիպ, սկզբունքային, Արցախ, նպատակային, նենգ, ասիմիլացնել

Силва Хачатрян,
к.ф.н., АрГУ, доц. каф. литературы и журналистики,
Арцахский государственный университет

АРЦАХ В ПРОИЗВЕДЕНИЯХ ВАЗГЕНА ОВЯНА

В.Овян - один из ярких представителей литературной семьи Арцаха, который в годы советского антинационализма, не обращая внимания на критику, выявлял в своих произведениях прикрываемую под маской интернационализма антиармянскую политику Азербайджана, целью которой являлась полная ассимиляция армянского населения Арцаха.

Проницательный писатель осуждает всю лживость интернациональной дружбы, обнажает коварную политику руководителей Азербайджана и зверства азербайджанцев в Арцахе.

В данной статье исследуются те произведения В.Овяна, в которых отражена реальная ситуация в Арцахе во времена азербайджанской тирании.

Ключевые слова – фальшивый, антиармянский, антинациональный, СССР, обнажать, цензура, тирания, смелый, патриот, оригинальный, принципиальный, Арцах, целевой, коварный, ассимилировать

Silva Xachatryan,
ASU, PhD in Philology, Associate Professor
Artsakh State University

ARTSAKH IN VAZGEN OVYAN'S WORKS

V. Ovyan is one of the bright representatives of the Artsakh literary family. Working in the times of the Soviet anti-nationalism, ignoring the criticism he revealed the covered behind a mask of internationalism anti-Armenian policy of Azerbaijan, which was aiming at a full assimilation of the Armenian population of Artsakh.

The shrewd writer condemns the falsity of international friendship, bares the treacherous policy of the leaders of Azerbaijan and the atrocities of Azerbaijanians in Artsakh.

In the given article the author investigates the works of V. Ovyan which display situation in Artsakh at the time of the Azerbaijani tyranny.

Keywords – false, anti-Armenian, antinational, the USSR, censorship, tyranny, courageous, the patriot, original, basic, Artsakh, target, artful, to assimilate

Վազգեն Օվյանը Արցախի գրական ընտանիքի այն հազվագյուտ դեմքերից է, որն իր գրչով ծառայեց թուրքական Ադրբեյջանի կեղծ բարեկամության շղարշով սրողված, բռնության ճիրաններում հեծող Արցախ աշխարհին ու կապանքներ չհանդուրժող նրա հերոսական ժողովրդին, բանաստեղծական ազնիվ կրակներով այրվեց հայրենի բնաշխարհի գավերով՝ իր փայլուն երգիծանքի սահել մտրակը ճոճելով ոչ միայն ազգուրաց, դրածո իշխանավորների, խառնածինների, այլև նրանց պնակը հաճությամբ լիզող, իրենց մտավորական համարող հայագոյի գրչակների վրա, որոնց համար գրականությունը ոչ թե արվեստ է ժողովրդին ծառայելու համար, այլ փողոփառքի տիրանալու արհեստավարժություն: Դիպուկ է նկատել ճանաչված լրագրող Գեղամ Բաղդասարյանը, գրելով, որ Վազգեն Օվյանի երգիծական ստեղծագործությունների «հերոսները» դեռ կենդանի են:

Կերպրկոյան հայահալած ժամանակներում ստեղծագործող գրողը, ի տարբերություն իր շատ գրչակիցների, երբեք չհաճոյացավ «վերններին», ինչպես վայել է ժողովրդի գրողին, անխաթար պահեց մարդու և բանաստեղծի իր քաղաքացիական ատենաբանող նկարագիրը՝ իր կենսակերպով ցույց տալով, թե ինչպես պետք է ծառայի գրողը ժողովրդին, և ինչպիսին պետք է լինի ժողովրդի գրողը:

Գրողին ճանաչելու համար նրա ստեղծագործությունները բավարար հիմք լինել չեն կարող, քանզի բոլոր ժամանակներում էլ խոսքի ու գործի աղաղակող հակատություններն առկա են եղել, արվեստի աշխարհում՝ նմանապես: Վազգեն Օվյանը Արցախի գրական ընտանիքի այն ընտրյալներից է, ում ապրած կյանքն ու ստեղծած գրականությունը միանգամայն ներդաշնակ եղան:

Բոլորիս հայտնի է, որ դեպի ընթերցողի սիրտը տանող ճանապարհը գրողի ազնվությունն է, նրա կերտած տողի շիտակությունը: Մաքրագործող այս ազնվությամբ էլ Վ.Օվյանի տողը նվաճում է ընթերցողի սիրտը՝ նրան առնելով իր կախարհիչ գերության մեջ:

Վազգեն Օվյանի պոեզիայի զարկերակը հայրենասիրությունն է: Ընթացման մարդասեր բանաստեղծը հայրենիքի սիրով ու ցավով շաղախված իր քերթվածքներում երբեք ռազմի փող չի հնչեցնում և ոչ էլ հնազանդության ու համակերպման կոչ է անում: Արժանավայել ասարել մեր ապ ու պապերի արյամբ (այսօր նաև՝ մեր գավակների, եղբայրների և հայրերի արյամբ) սրբացած մեր հայրենիքում՝ հավատարիմ մնալով մարդկային ու ազգային այն ավանդական նկարագրին, որը ժառանգել ենք մեր նախնիներից. սա է բանաստեղծի պահանջն ու պատգամը:

Հայրենիքը՝ Արցախը, Վ.Օվյանի ուրախությունների ուրախությունը և հոգների հոգան է: Եվ գրականությունը դառնում է նրա փրկությունը: Այն Օվյան գրողի համար ոչ թե «պարաս պախտի խաղալիք», այլ ժողովրդին ու Հայրենիքին ծառայելու գործը գն է, հոգում կուտակված տագնապի ու ցավի արտահայտման միջոց: Նա բարձր պահեց գրողի փսմ կոչումը և գրականությունը երբեք չօգտագործեց որպես հաց աշխատելու միջոց: Վ.Օվյանը մարտիկ - բանաստեղծ է, և դա ցայտուն երևում է նրա հայրենասիրական քնարերգության մեջ: Կտրկովյան հայամերժ ժամանակներում ստեղծագործական սխրանք են նրա բազմաթիվ բանաստեղծությունները:

Որպես Թուր Կեմակի, Ադրբեջանի բռնատիրության ծանր ժամանակներում շողարձակել է Վ.Օվյանի խոսքը՝ բացահայտելով կողմերի տակ փակված ճշմարտություններ, որոնց ծարավի էր Արցախի ժողովուրդը, որի աչքի առաջ բազում անօրինություններ էին կատարվում, սակայն չէր թույլատրվում բարբառել այդ մասին: Ճշմարտությունը պետք է որոտար ազգի մարգարեն, նրա բանաստեղծը, ում կոչումը ժողովրդին ծառայելն է: Եվ Վ.Օվյանը, բարձր պահելով բանաստեղծի կոչումը, մեր սրբավայրերից խաչքարեր գողացող «Մուսուլմանի թռուներին» «երես չի տալիս» շատերի պես.

Հին գայլ է եղել այս նենգ աղվեսը,

Ու չենք հասկացել,

Մտել մեր տունը, թրքացրել է

Արցախի կենը, ու չենք հասկացել...

Թերևս, «ու չենք հասկանալու» պատճառը կեղծ բարեկամության խլացուցիչ ճառերն են եղել, ինչպես բանաստեղծն է նկատում.

Այնքան արցունք խլեց Վանը իմ աչքերից,

Որ չիմացա՝ Արցախս ո՞նց գողացան...

«Եղբայրության» դրոշով քողարկված գավթիչների կեղծ վայնասունին ի պատասխան, բանաստեղծը գրում է.

Ավերելն ու թալանելը

Ձեր արհեստն է թեկուզ եղել,

Բայց աշխարհում ձեր երգերով

Ամենից շատ դուք եք լալիս:

«Տարին խիստ նահանջ էր», և երգի վերածված բողոքի ճիշդ շատ անգամ հնարավոր չէր հրապարակել: Ինչպես Հովհ. Ծիրազի «Ողբ Ղարաբաղին» ու մյուս անտիպները, այնպես էլ Վ.Օվյանի ձեռագիր բանաստեղծությունները տարածվում էին անտիպ: «Այս Ղարաբաղն է» և մյուս բանաստեղծությունները, դեռ մինչև գրքով հրատարակվելը, մեքենագիր ձևով հասել էին Արցախի ամենահեռավոր գյուղերը.

Ուրիշներից թոցրած երգը

Չայլանայի տաղ է դարձել,

Պատմությունը կեղծելն անգամ

Տգնտների խաղ է դարձել... -

դառնացած գրում է բանաստեղծը և հարց տալիս բարեկամ ձևացող երեկվա քոչվորներին.

Ախր, ինչպե՞ս մենք հավատանք

Երդումներին ձեր կեղծավոր,

Երբ գերված է Արարատը, -

Մեր ժողովրդի հավերժության խորհրդանիշը:

«Նահանջ տարիներին» երբեմն հուսահատվել է նա, բայց երբեք չի վիստովի: Դիմելով կեղծ բարեկամներին, մեր հավատի ու ազատության թշնամուն՝ նա գրել է.

Բայց իմացեք, թե ալլահն էլ

Իջնի անգամ վերևից,

Մեր այս գերված Արարատին

դուք չեք կարող թալանել:

Կտրկովյան ազգակործան ժամանակներում, երբ երեսով դեպի Մայր Հայաստան քննելն անգամ հանգստեք էր համարվում, շղթայված Արցախի համար տառապող գրողի սիրտը լցվում է ցատումով, և երբեմն, հոգեկան ծանր դրամայի պահին, գլուխ է բարձրացնում հուսահատությունը: Ասվածի վկայություն կարող է լինել Վահան Տերյանի «Մի՞թե վերջին պոետն են են» տողը քնաբան կրող «Կկորչեն հավետ և փառք, և անուն» բանաստեղծությունը.

Քո ողբասացը կլինեմ վերջին,

Օտար ոտքի տակ տորված ածուղ,

Կլինեմ վերջին հառաչանքը քո:

Սակայն, բարեբախտաբար, դա կարճ է տևում, հուսահատությունը տնդի է տալիս, և բանաստեղծի արդար ցատումից շիկացած գրիչը, բարեկամի թիկնոցի տակ ծալված ու մեր տունը մտած թշնամուն ձաղկում է նոր թափով՝ անխնայ ու աննահանջ: Ահավասիկ «Հուդային» բանաստեղծությունը, որի «հերոսը» դրածո կտրկովն է.

Դու ատում են այն, ինչ հայկական է,

Մեսրոպագիր է ու մեսրոպատառ,

Քո դեմ մեր հայոց երգը ական է,

Եվ թուրք է հայոց երգը քեզ համար:

Բանաստեղծի ընդվզումն ահագնացող չափերի է հասնում Ռ.Պատկանյանի «Տիմի է՞լ լռենք» բանաստեղծության մոտիվներով գրած չափածո այս քերթվածքներում.

Տիմա է՞լ լռենք, երբայրք, հիմա էլ՞,
Երբ թուրքը եկել, մտնլ տունը մեր,
Ոտնատակ տվել այգի ու պարտեզ,
Օրը գերեկով անպատվում է մեզ:
Տիմա է՞լ լռենք, երբ մեր քաղաքում
Ծնյխի թռռները շիրաստ են երգում:
Տիմա է՞լ լռենք, երբ շողոքորթը
Համբուրում է մեզ յանդրողի ոտը:

Բանաստեղծի կոչումը ոչ միայն բանարվեստով մարդուն դաստիարակելն ու մարդ պահելն է, այլև միշտ հալածական ճշմարտության ջանակիրը լինելը: Ուրիշ էլ ո՞վ, եթե ոչ բանաստեղծը պիտի «ամպի նման խուլ որոտա» ճշմարտությունը, երբ խոսքը ոչ միայն մարդկային հարաբերությունների կեղծիքին է վերաբերում, այլև արնախում թշնամու երկերեսանիությունը: Օվյանը խոսքի գեներով նշան է բռնում ուղիղ կեղծիքի վրա՝ պսակագերծելով սուտ առաքյալներին...

Ամեն ժայռի տակից «Լույս աղբյուր է բխում», անդունդների մեջ գետեր են շառաչում, լեռների լանջին թառած գյուղերում «վարդեր կան վառված արևի բոցով», արտեր կան ծփում ու երգեր սրտահույզ, որոնք նա որոնում է «հայրենախոս մագաղաթների տաղիկների մեջ» և փառք տալիս Արարչին՝ իր «աստղացող լեռնաստանի գնգում» յուսաբացների համար:

Վազգեն Օվյանի արգասականում միահյուսված են սերը, հպարտությունը, ցավը և ցասումը, քանզի բանաստեղծի սիրտը լաց է լինում, երբ «Ղարաբաղ է տեսնում»: Այլ կերպ լինել չի էլ կարող. Մայր երանից՝ Հայաստան հայրենիքից գատված նրա 10-րդ նահանգը՝ հերոսական Արցախը, «աուրբ նշխար էր շան բերանում»:

Բանաստեղծը հոգու աչքերով տեսնում է կուլիաների հետևում թաքնված սև յաթաղանը... Չնայած տնտեսական ակնառու «հաջողություններին» (միայն ճարտար գյուղը տարեկան 12 000 տոննա քաղցրահամ խաղող էր տալիս Արդթեչանին), երիտասարդության լավագույն մասը թողնում, հեռանում էր ծննդավայրից: Այս ամենը և այն, ինչ չեն կարող տեսնել շատերը, տեսնում էր Վազգեն Օվյանը, տեսնում և չէր կարողանում լռել, որովհետև ազնիվ էր և ըմբոստ, որովհետև ատում էր մորթապաշտներին ու համակերպվողներին, հացի համար վիզ ծողներին: Նա չէր կարող չգրել.

Ղարաբաղ եմ ատում
Երգս թև է առնում,
Ղարաբաղ եմ տեսնում
Սիրտս սև է դառնում...
Ղարաբաղ եմ ատում
Երագներ եմ հիմում,
Ղարաբաղ եմ տեսնում
Թևաթափ եմ լինում:

«Ղարաբաղ եմ ատում» տողով սկսվող այս բանաստեղծության շարունակության մեջ Օվյանը հակադրության միջոցով խաղաղ եղևերը ուռանների թանձր ծխածածկությունը սրողող իրականությանն և թվագյալ բարգավաճման հակադրմամբ արտահայտում է իր անհուն մորմոքը կործանվող բնաշխարհի համար: Ինչպես այս, այնպես էլ Օվյանի քնարերգության մեջ տեղ գտած իրապաշտական մյուս բանաստեղծություններում զգացվում է բանաստեղծի «արյունակցական» կապը հայ դասական քնարերգության բնապաշտական լիրիկայի անգուզական վարպետ, մեղմ գույների, նրբին երանգների ու խոր ասպրումների բանաստեղծ Համո Սահյանի հետ:

Բերված բանաստեղծությունը կառուցված է Հ.Սահյանի «Հայաստան ասելիս» քերթվածքի ոճական նմանությամբ:

Տարբերությունն այն է, որ Հ.Սահյանի նշված բանաստեղծության մեջ ճակարակ է խանդավառությունը՝ անհուն սիրով ու կարոտով աղեղուն, իսկ Օվյանի երկում խանդավառ սիրուն միահյուսված են ցավը և ցասումը: Բերենք բանաստեղծության վերջին երկու տողերը.

Ղարաբաղ եմ տեսնում...

Ա՛խ, ես ձեր ինչն ասեմ:

Բանաստեղծի սիրտը արցանի պես սեղմող նույն ցավը խորանում է շարքի «Ինձ ստիպեցին ուղտի պես չոքել» տողով սկսվող քերթվածքում: Տիրապի, հոգու դրամատիկ անկումներից հոգևոր մեծ արժեքներ են ծնվում. ճշմարիտ պոեզիան անկեղծ ու խոր ցավից ու այդ ցավի բոցում ողջակիզվելուց է արարվում...

Որքա՛ն խոր ցավ, անընդգրկելի սեր ու նվիրում, նաև ակնհայտ հուսահատություն կան հետևյալ քառատողերում.

Ես ամուր էի լեռներդ գրկել,
Քո հողի մեջ էր ուժն իմ առնացի...
Չկարողացան ինձ քեզից պոկել,
Բայց քեզ ինձանից ինչպե՛ս պոկեցին:

Եվ կա՞ ավելի պատիժ մի դաժան,
Քան այս գրկանքը՝ թիրտ ու ահավոր.
Երբ հողիդ վրա տները չեն քո տան,
Քո տնկած ծառը ու՞մ է հարկավոր:

Իրավ, «թիրտ ու ահավոր» է աներևակայելիորեն լկտի ու սանձարձակ այն փաստը, որ նավակին խորհրդային ընտանիքում ընդգրկված քոչվոր մեր «եղբայրը» մեր սեփական տանը, մեր քաղաքում գտնվող բուխին՝ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտին, «Մտորդային Աղբթեչանի 60-ամյակ» խայտառակ ու անհեթեթ անունն էր փայթաթել, կարծես թե իրենց պես երեկվա վաչկատունն ենք և չունենք Նարեկացի ու Մայրաթ-Նովա, Աբովյան ու Չարենց, Սիամանյոն և Հովհաննես Ծիրազ, և այդ նույն բուխում, մեր քաղաքում ու մեր տանը արգելվում էր «Հայոց պատմություն» առարկայի ուսուցանումը... Ահա թե ինչու Արցախի ազնվագույն գավակը գրել է. «Երբ հողիդ վրա տները չեն քո տան...»:

Օվյանի չափածոն շնչում է Արցախով և առ Արցախը տածած բանաստեղծի անեզրական սիրով: Բնության շնչավորման հիանալի օրինակներ կան Օվյանի պոեզիայում: Անվերապահորեն կարող եմք ասել, որ այստեղ նրա գրական ուսուցիչը Համո Սահյանն է, որի քնարերգության գույլալ ակունքներից «ջուր է խմել նաև Օվյանը՝ «խոսեցնելով» հայրենի Արցախի բերդերն ու տաճարները, սարերն ու ժայռերը, անձնավորելով թուփչ բնաշխարհը:

Մշտարթուն ցավը այն իրողության խոր գիտակցումի, որ «գանձերի հանք է, ճաքած մի գանգ է և կռվախնձոր այս Ղարաբաղը»:

Խոսում եմ վայ է,
Լռում եմ ցավ է,
Ո՞նց չասեմ հայ է
Այս Ղարաբաղը:

«Խոսում եմ վայ է», - մի ամբողջ դրամա է պարունակում բանաստեղծական այս տողը:

Յոթ միլիոնանոց Ադրբեյջանի՝ խորհրդային իշխանության կողմից օրինականացված բռնատիրությունն, ինչպես ծանր բռունցք, ճգնում էր հայաստանից կտրված հայկական մարզը, քամում ավիչը (հագարավոր տոննաներով միս, հացահատիկ, յապող և այլ մթերքներ էին հանձնում նրան՝ հայ հանրային տնտեսությունները) և շքերթ էր՝ ազգամերժ, հայ-ադրբեյջանական «բարեկամության» սուտ ու փուտ հանդեսներ, ճառեր, կերուխումներ՝ ուղեկցվող թմրեցնող մոլորամտերով ու շիքյաստներով, կոմիտասամոռ երգերով: Եվ վայ նրան, ով այս աճաբարություններից մի կողմ կանգնած, կփորձեր նայել երևույթների խորքը և իրերին իրենց անունը տալ: Ծախու հացկատակների ջանադիր օգնությամբ «նացիոնալիստի» պիտակը կկայցնեին իսկույն, կքշեին իր ապուպապերի հողից, իր տուն ու տեղից: Սա՛ լավագույն դեպքում, իսկ վատագույնը՝ Ադրբեյջանի բանտ. բանտի մեջ՝ բանտ...

Յնցող է «Հոտը գալիս է» բանաստեղծությունը: «Ճարհաթով ու մոլորամաթով» ծորուն նամագով, օբա վրանով և ամենագոր իրենց դուրանով գալիս են հոտին հատուկ ծուլությամբ, բայց հաստատակամ իրենց հին դավով: Մորելիս սև ամպի նման գալիս են բիրտ ու ահավոր.

Գալիս, ասում եմ՝
Սա մեր երկիրն է...
Մուտ են Գանձասարն
Ու Ամարասը,
Ճիշտը Ղուրանն է,
Մեկ էլ՝ նամագը...
Ավագոտ ու չոր
Տափաստաններից
Հոտը գալիս է,
Քոչը հետևից...

«Մորելիս սև ամպի նման ահարկու» այս քոչն ու հոտը, որ գալիս լցվում էին Արցախի հովիտները՝ զբաղեցնելով ամենաբերրի ու արգավանդ հողերը և սևալի նման խրվելով հայկական գյուղերի արանքը, ամենևին պատահական չէին: Դա խիստ գաղտնի և ամենայն խնամքով կազմված՝ հայոց Արցախը թուրքացնելու ծրագիր էր, որն իրագործվում էր անարգել ու փուլթաջանորեն: Մտավորականությունը, որը կոչված է լինելու ազգի պթափ ուղեղը, տեսնում էր այս ամենը: Նրա մի մասը ջայլամային կենսակերպն էր գերադասում՝ գյուղը թաղելով տաք ավազի մեջ, մի այլ մասը «բավական» ակտիվ «նղբայրություն» էր անում և ձոներ թնդացնում պանծացնելով ազերիների «մշակույթի երևելիներին» և «բարգավաճող» Ղարաբաղի համար երախտագիտությամբ աղեցուն, ճառեր էր ճամարտակում, երկտակվելով պաշտոնական Բաքվի առաջ: Ժողովրդի խիզախ ու ազնվագարն որդիները, նրա ճշմարիտ գրիչները՝ Լեոնիդ Հուրունցը, Բագրատ Ուլուբաբյանը, Ժան Անդրյանը և Վազգեն Օվյանը փորձում էին արթուն պահել ժողովրդի հիշողությունը և աղաղակում էին անիրավությունների դեմ...

«Հոտը գալիս է» բանաստեղծության առավել թղերգական շարունակությունն է նրան հաջորդող «Դիւ յաման» տողով սկսվող քերթվածքը, որ բանաստեղծն ասելիքը չի թաքցնում, հստակ տալիս է օրհասական իրավիճակի միանգամայն իրատեսական պատկերը.

Դիւ յաման,
Կայծակ խփեց Մռավ սարին,
Վայ դիւ յաման,
Թորքը տիրեց մեր աշխարհին,
Յաման, յաման...

«Մելավի պես» եկող քոչը մեր հողից մեզ քշելու, ավերելու ընդգծված միտում ունեւ, որի պատճառով էլ մեր «Թարթառը տնքում է տրտում»: Բանաստեղծությունն ավարտվում է հետևյալ քառատողով.

Դիւ յաման,
Հողը կենաց ծառս պոկեց,
Վայ դիւ յաման,
Սև ուղտը մեր դրան չորեց,
Յաման, յաման...

Համատարած կեղծիքի ու մորթապաշտության հեղձուցիչ միջավայրում, որ մոլախոտի պես փարթամանում էր ձոներգության ժանրին պատկանող գրական խոսանք, Վազգեն Օվյանը, ի տարբերություն իր գրչակների մի զգալի մասի, ոչ միայն հեռու է մնում այդ «տուա»-ներից, այլև դատապարտում է նմաններին, «նղբայրության» աչք ծակող և աչք փակող շքերթների հետևում բանաստեղծը խորը ներքնատեսությամբ զգում է դարանակալ դավն ու թաքնված դրամատիզմը:

«Մեմք» բանաստեղծության մեջ, որն ընդգրկված է «Լեռների լեզները» գրքի համանուն շարքում, դատապարտման խոսք է հնչեցնում գտնելով, որ աններելի է լինել այդ աստիճան «փխրուն ու փափուկ» միամիտ ու անխելք, թույլ ու վախկոտ» և կարճատև.

Մեր դուռն այնքան մեր ստի պես բաց է,

Որ մենք կարող ենք մեր տունը մտած

Ամեն հողայի Աստվածացնել...

Դեռ ավելին՝ բախտից գոհանալ, խաբել ինքներս մեզ, կարծելով թե «աշխարհը մերն է», և բանաստեղծը զայրացած հարց է տալիս.

Թե սա կոչվում է՝ ապրել մեծ կյանքով,

Հասպա ասացելք՝ խեղդվելը ո՞րն է:

Օվյան բանաստեղծի սերն Արցախի աշխարհի նկատմամբ անկաշառ է: Նա տեսնում, զգում էր, որ հայ ժողովրդի Արցախի հատվածին սեղմող օղակն օրավոր անտանելի է դառնում: Ի տարբերություն ընդդեմ ջայլամային կենսակերպ որդեգրած, գլուխ պահող իր շատ գրչակիցների՝ Օվյանը մշտադրօն է պահում բանաստեղծի իր խիղճը և տազնապի ձայն է հնչեցնում շերկնչելով «բաց ճակատով բախվել պատին»:

Բանասիրական գիտությունների թեկնածու, ԱրՊՀ դոցենտ Հեղինե (Լենա) Գրիգորյանը «Մեր լեռների նման միշտ անառիկ կամ վազզեն Օվյանի «Արցախականը» ծավալուն հոդվածում՝ գրված 1990-ին, նկատում է. Օվյանի «Արցախականն» այնքան է համահունչ մեր օրերին, որ թվում է՝ բանաստեղծը գրել է ոչ թե տարիներ առաջ, այլ հենց այսօր՝ արցախյան շարժման օրերին... Օվյանի տանայակ տարիներ առաջ գրած արցախյան թեմայով բանաստեղծություններն այժմեական հնչողություն և արցախյան հողի վրա ապրելու, գոյատևելու ելակետային խորհուրդն ունեն: Ահա թե ինչու կրկնակի հոգեհարազատ է մեզ Օվյանի արցախականը: Ասել է թե՛ մեզ հետ է ինքը՝ բանաստեղծը: Մեր պայքարի առաջին շարքում»:

Ավա դ, Օվյանը չտեսավ 1988-ին համաժողովրդական ցամաքն և համազգային ազատագրական շարժման հրդեհը հայրենի Արցախում, սակայն իր ապրած բոլոր տարիներին, նյարդի յուրաքանչյուր թելով նա զգացել էր նման փոթորկի հնարավորությունը, բաղձանքով սպասել այդ օրվան: Թմրած հանրությանը պայքարի կոչող, ազգային ոգին արթնացնող, ապ ու պապերից մեզ ավանդված համազգային սրբությունները պահպանելու կոչող զանգ է վ.Օվյանի յուրաքանչյուր բանաստեղծություն՝ հյուսված մեծ հայրենասերի ազնիվ, հորդահույզ ու տազնապալից ապրումներից:

**Սոկրատ Խանյան,
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ**

ԱՐՅԱԽԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՈՂ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԸՐՁԱՆԻ ՀԱՅ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

Սույն հոդվածում լուսաբանվում է գնահատվում են չափածո այն ստեղծագործությունները, որոնցում պատկերվում են Արցախը և արցախահայության վտանգված ճակատագիրն ու բախտորոշ մաքառումներն օտար լծի դեմ՝ սկսած 1920-ական թթ. մինչև մեր օրերը՝ ներառյալ 1988-94 թթ. ազգային ազատագրական գոյամարտը: Ընդգծվում են Արցախի գեղարվեստական պատկերի առանձնահատկությունները, ժողովրդի հերոսական ոգին, ավանդական երկիրը թշնամուց պաշտպանելու ու պահպանելու վճռականությունը:

Բանալի բառեր. Արցախ, անկախություն, պայքար, պեղծիչ, ազատություն, մաքառում, հայրենիք, թշնամի, բռնապետություն, հայրենիքի պաշտպանություն, հայրենի հողի պահպանում:

**Сократ Ханян,
д.ф.н., профессор,
заслуженный деятель наук НКР**

ХУДОЖЕСТВЕННЫЙ ОБРАЗ АРЦАХА В АРМЯНСКОЙ ПОЭЗИИ НОВЕЙШЕГО ПЕРИОДА

В данной статье освещаются и оцениваются те стихотворные произведения, в которых раскрываются образ Арцаха и борьба арцахцев против ига Азербайджана, начиная с 1920-ых годов до наших дней, включая национально-освободительную борьбу 1988-1994-ых гг.. Отмечаются также художественные особенности обсуждаемых произведений, героический дух народа, идея защиты и сохранения нашей древней страны.

Ключевые слова: Арцах, независимость, борьба, деспотизм, поэзия, свобода, сражение, родина, защита, сохранение родной земли.

**Socrat Khanyan,
Doctor of Science, Professor,
Honorary Worker of Sciences of NKR**

ARTISTIC IMAGE OF ARTSAKH IN ARMENIAN POETRY OF MODERN PERIOD

This article highlights and assesses those poetic works which reveals the image of Artsakh and the struggle of the Artsakh people against the yoke of Azerbaijan from the 1920s to the present day, including the national liberation struggle of 1988-1994-s. Artistic features of the discussed works, the heroic spirit of the people, the idea of protection and preservation of our ancient country are also noted.

Keywords: Artsakh, independence, struggle, despotism, poetry, freedom, battle, home, protection, preservation of native land.

Արցախի տարիքն այնքան է, որքան պատմական Հայաստանինն է: Տարբերել կամ անջատել դրանք իրարից, նշանակում է՝ կիսել այն սիրտը, որը մեկն է, միակն է: Ժողովրդի բանավոր ստեղծագործության հոլովությունը լինի, թե՛ գրավոր գրականության ոսկե էջերում, Մեծ Հայքի 15 նահանգներից տասներորդը՝ Արցախ անունով, փառաբանվել է որպես խիզախ և իմաստուն դյուցազն, արթուն ու արիասիրտ սահմանապահ, հավատարիմ զինվորյալ, օջախների սրբասիրտ պահապան: Նրա անունը հյուսվել է բնության աստվածային հրաշագործություններով՝ որպես դրախտային- ավետյաց երկիր՝ մի թե՛ր Մոռվ, մյուսը՝ Քիրս, մի երգը՝ Թարթառ, մյուսը՝ Խաչեն, մի աղոթարանն Ամարաս, մյուսը՝ Դաղիվանք, մի ուխտավայրը Դիզափայտ, մյուսը՝ Գանձասար՝ հավերժի ճամփին միշտ միասին, միակամ, միատենչ, հզոր ու անպարտ և՛ հեթանոս Տիգրան Մեծի օրոք, և՛ քրիստոնյա Տրդատ թագավորի արհեստի արվեստով ժամանակներում: Նրա հավերժացման հավատը կանթեղվել է Գրիգոր Լուսավորչի հոգեպարար հրից, նրա աստղավեգու դպրոցը ծիածանվել Մաշտոցյան այբուբենով:

Այդպես՝ տարեցտարի, դարից դար նա՝ Արցախ անունով այդ դրախտավայրը, ներկայացել է աշխարհին իր հայալեզու վանքերով ու եկեղեցիներով, մատուռներով ու խաչքարերով, իր մատենագիր ու քերթող մարգարեներով անուններն անգամ պերճախոս. Մովսես Կաղանկատվացի ու Դավթակ Քերթող, Վարդան Արևելցի ու Մխիթար Գոշ, Կիրակոս Գանձակեցի ու Եսայի Հասան Ջալալյան և շատ ուրիշներ:

Նա՝ Առանշահիկների այդ պարզեցական դրախտավայրը՝ Արցախ անունով, երբեք ծնկի չի եկել օտար զավթիչների առջև, պաշտպանելով իր անառիկ սահմանները, դարձել է նաև երկաթակուռ դարպասն իր մայր Հայաստանի: Թուրք միշտ փայլատակել է իր առյուծափրոս որդիների ձեռքերում, որոնց արժանի զավակները հետագա դարերում ևս մարտնչել են իրենց քաջակորով նախնիների հանգույն: Թշնամուն չեն ներել անգամ նրբասիրտ ու պատվասեր դուստրերը՝ Ռուզանն ու Գայանն անուններով: Հարատևել է Մեծ Հայքի Արցախ գավակը՝ անցնելով կրակների միջով, թուրք չդնելով պատյան՝ բյուզանդական նենգամիտ կայսրերի, պարսկական դաժան արքաների, վայրենաբարո սելջուկ-թուրքերի, մոնղոլ հրոսակների, շեղաչ Լեւնկ Թեմուրի, ազերի քոչվոր ցեղերի դեմ:

Ի հիմնովու չարանենգ հարևան տերությունների, Արցախն ու շրջապատում անվտանգ իր ընթացքն ապահովելը փառապանծ մելիքական տների շնորհիվ: Ցավոք, նրա որդիներից Մելիք Երկրորդ Շահնագարը, վարելով պիղծ կյանք, կայենի պես սրախողտող արևը իր եղբորը հանուն գահի, Շուշի բերդը հանձնեց շնաբար Փանահին, որն այնքան աղետներ պատճառեց մեր հայրենի երկրին: Մակայն Արցախը շարունակեց մաքառել ու հարատևել:

Իրար հաջորդեցին դարերը... Պատմության համապատկերի վրա նկատելի քայլ քայլեց 19-րդ դարը, սակայն կրկին քաղաքական-սոցիալական-ազգային-մշակութային հակասական ու իրարամերժ գործընթացով: Արցախի գեներալ ուրիշ էր, տաղանդն անգուցական, միտքը զարդարուն, օջախները քրիստոսված, ձեռքերն՝ արարող: Շուշին դարձավ կրթօջախ, դարբնոց, դպրատուն, արվեստանոց, գրադարան-թանգարան: Այդ ամենը տեսնելով, սելջուկյան գազանամիտ ուղեղով տեղում դոփող ազերի-թուրքերը 1920թ. մարտին հրո ճարակ դարձրին այն ու, չկարողանալով առաջընթաց ապրել, թավալվեցին հարևան հայերի վառված օջախների մոխիրներում, նախանձելով անգամ դեռևս ճարճատող գերանների:

Եկան նոր օրեր, նոր կարգեր՝ Սովետներ անունով: Պատմության խաչմերուկներում հեղափոխություն կատարողները եղան հայ ժողովրդի ազնվասիրտ զավակներ՝ Սուրեն Սպանդարյանը, Ստեփան Շահումյանը, Ալեքսանդր Մյասնիկյանը, Ադախ Սահյանը և այլ հսկաներ, սակայն շեղաչ-թուրքամետ Լենինն ու ցարական կառավարության երբեմնի լրտես, պատմական բիճ, հայապաշտ Ստալինը բաժակ բարձրացրին մարդակեր-խաբեքա Մուստաֆա Աթաթուրքի ու երկդիմի Նարիման Նարիմանովի համար, Թուրքիային հանձնեցին Արևմտյան Հայաստանը՝ Մասիսների փնջով, իսկ Նախիջևանը, Արցախն իր հյուսիսային տարածքներով ընծայեցին նորաթուխ Ադրբեջանին:

Այս հրեշավոր բաժանումից հետո անգամ Հայոց Արցախն իր անձնուրաց զավակների ջանքերով ստացավ ինքնավար մարզի կարգավիճակ: Եվ լծվեց իր պապենական օջախների վերականգնմանը, քարից հաց քամելու բազմադարյան փորձին, կրթօջախների բացմանը, մեքոպյան գրերով իր հերոսապատումի ստեղծմանը:

Ինչ էլ որ լիներ, Ադրբեջանի կողմից հայահալած ինչպիսի քաղաքականություն էլ որ վարվեր, Արցախի արյան կանչը պետք է վերածվեր ապագային միտված երգերի փնջի: Գրիգոր Ներսիսյանը պիտի հյուսեր իր Արցախապատումը, թեկուզ գիտեր, որ իր գերեզմանը փորվելու է հեռավոր Սիբիրում: Շուշիից Ստեփանակերտ գաղթած Արտնմ դայու Միքայել որդին պիտի ձեռքը դներ սրտին ու բարձրաձայններ.

Ինչ որ լավ է այս աշխարհում,
Բոլորն էլ կա՝ Ղարաբաղում,
Բոլորն էլ կա, և ավելին,
Մար չի հասնի մեր սարերին...
Ինչպես մայրն իմ ողջ աշխարհի
Մայրերից էլ լավն է, բարի,
Այնպես հողն իմ Ղարաբաղի
Քահոբ է, և թող Աստված պահի,
Եվ կապահի՛, մի՛ կասկածի,
Աստված էլ է դարաբաղի...¹

(*1. Ա. Հարությունյան, «Նամակ Նոյին», «Ապոլոն» հրատ., 1977, էջ 31*):

Մարտունի դարձած պատմական վարանդայի այգեգործ Թաղավարդ գյուղից հայության մայրաքաղաք երևան մեկնած բանաստեղծ Աշոտ Գրաշին պիտի հորիներ իր կարոտի երգը՝ ձոնված Ղարաբաղին ու կտակեր.

Երբ ես մահանամ, ինձ խարոյկ նետեք,
Մոխրանամ նրա ուրախ բոցերում,
Մոխիրս տվե՛ք հովին սրաթև,
Որ տանի շաղ տա նա ձեռքով թեթև
Իմ Ղարաբաղի կապույտ լեռներում:⁶²

(*2. «Սովետահայ պոեզիա», Բրնստոմատիա, ԵՊՀ հրատ., 1986, էջ 541*):

Այսպես, հարստության ու կարոտի արցախապատումը պետք է հնչեցներ և Դիզակա հազարամյա Տումի թագավորանիստ գյուղի տառապյալ բանաստեղծ-որդի, Մեծ Հայրենականի մասնակից Բոգդան Ջանյանը, ով 1948-ին Ստեփանակերտում որդիաբար ընդունեց Ավետիք Իսահակյանին: Իսկ Ադրբեջանի իշխանություններն այդ պատճառով նրան արտորեցին Սիբիր: Ու որպես այդ դաժան վերաբերմունքի պատասխան, արքայից վերադառնալուց հետո, նա դիմեց իր մայր Արցախին.

Թե՛ դու Թարթառն ես, ես քո բարբառն եմ,
Քո վագրը ահեղ ու ընթոստ վարքը,
Ու թե՛ Թարթառի հովիտն ես դու հին,
Քո հնությունն եմ, քո խոթավանքը,
Թե՛ այդ հովիտով անցնող ճամփա եմ,
Ազդանշան եմ ոլորաններիդ,
Թե՛ տուն ես լքված, քո հզոր կանչն եմ,
Որ ետ է բերում մոլորայլներիդ...³

(*3. Բ. Ջանյան, «Իշխանաձորի կանչը», «Սովետական գրող» հրատ., 1986, էջ 5*)

Ինչպես տեսնում ենք, կարոտի և ցավի զգացումից բանաստեղծն ասես տարրալուծվում է արցախյան երանգների մեջ: Իրար են խառնվում նրա ուրախ և տխուր զգացումները: Որպես քնարական հերոս՝ նա հպարտությունից ցնծում է և ապա անմիջապես զգաստանում կորուստների գավից: Նա տեսնում է, որ ազերի-թուրքերն Արցախը հայաթափ անելու քաղաքականություն են վարում, և գրում է «Նույն գազաթներն են» բանաստեղծությունը, որտեղ կորուստի ճիչ կա, կա տագնապ՝ մելիքական Տող գյուղը կորցնելու առիթով.

Նույն Տողասարն է՝ ծաղկունքով լիբը,
Գտիչն է ուրիշ, լանջերն են ուրիշ,
Նույն Սթնաձորն է, նույն Իշխանիկը,

Ձայներն են ուրիշ, կանչներն են ուրիշ...⁴

(4. Նույն տեղում, էջ 68):

Սակայն բանաստեղծի տաղանապար լացի չի փոխվում, նա դառնում է հայրենիքի զինվորյալ, երկրի հարատևման ուղին տեսնում ազգային-ազատագրական պայքարի մեջ:

Ապա հանդես են գալիս Գ. Գաբրիելյանը, Ն. Բեգլարյանը, Վ. Հակոբյանը, Ս. Խանյանը, Ա. Հովհաննիսյանը, Ն. Ավագյանը, Ա. Թովմասյանը, և այլք: Նրանց համար, ինչպես նշել է Պ. Սևակը. «Հայրենասիրությունը հայ գրողի մոտ հանդես է գալիս ոչ որպես սոսկական մի զգացում, այլ որպես աշխարհայացք, որպես գաղափարախոսություն»⁵: (5. Պ. Սևակ, Երկեր 6 հատորով, «Հայաստան» հրատ., հ. 6, 1976, էջ 327):

Ղարաբաղը դառնում է Գ. Գաբրիելյանի բանաստեղծական ոգևորության աղբյուրը, որի գրկի մեջ միշտ կարոտում է նրան: Նրա երգերում հնչում է մի տաղանապար՝ Արցախի համար: Դա պատահական չէր: Խորհրդային 70 տարիների ընթացքում Ադրբեջանի կառավարող շրջաններն Արցախին նայել են խորթ աչքով՝ ձգտելով լրիվ հայաթափ անել այն: Բանաստեղծի երգաշարերում ընդգծվում է երկրին տեր մնալու, պապենական սուրբ օջախները վառ պահելու գաղափարը: Դիմելով հայրենի երկրին՝ նա բացականչում է.

Այդ ի՞նչ հևք ու հնար ունես,

Այդ ի՞նչ երգ ու քնար ունես,

Որ քեզ մի օր տեսնողն ասես

Քոնն է դառնում քո որդու պես:

Կարոտում է քո Քիրս սարին,

Քո Թարթառին, Գանձասարին,

Դու երգ ու տաղ, դու բերք ու բաղ,

Դու մոր պես թանկ մեր Ղարաբաղ:⁶

(6. Գ. Գաբրիելյան, «Ընտրանի», «Դիզակ պլյուս» հրատ., 2007, էջ 204):

Ն. Բեգլարյանն իր ավագ գրչեղբոր հետ միասին լծվում է հայրենասպառումի հարստացմանը: Նա չարից ու ավագակից վրեժ է լուծում իր լեռնաշխարհի հանդեպ ունեցած հպարտ ու անմնացորդ սիրով, նրանից ստացած վեհությամբ ու թռիչքներով, որ ժառանգել է խիզախ պապերից.

Մի օր հարցրի պապիս ծերացած.

Թե՛ քաջ են նղևի նախնիները մեր,

Էլ ինչո՞ւ անձիր դաշտերը թողած,

Լեռների մեջ են շինել ամրոցներ:

Քթի տակ ժպտաց պապիկս բարի,

Հայոց դարավոր վիշտը աչքերում

Ու պատասխանեց նա իմաստալի.

-Արծիվները միշտ բարձունք են սիրում:⁷

(7. Ն. Բեգլարյան, «Արցախ-Նամե», Ստեփ., 2000թ., էջ 9):

Մեր ժողովրդի հոգու ամրությունն ու վեհությունը, դարերի քմահաճույքների հանդեպ նրա տարած հաղթանակը, գրին ու երգին ապավինելու նրա իմաստությունը, հավերժության հետ քարերի լեզվով խոսելու նրա անզուգական հմտությունը շնչում ու բաբախում են Ն. Բեգլարյանի հայրենասիրական երգերում: Այդ բարեմասնությունների ընդգծումը մեր պատմության առավելությունն ապացուցելու ճշմարրիտ խոսք է, ներկան կերտելու և դեպի ապագան քայլելու դաս, որ արտահայտվում է բանաստեղծական անմիջականությամբ ու ազգային արժանապատվության զգացումով: Արցախը՝ հայ ժողովրդի արարչագործ ոգու և հրաշագործ ձեռքի այդ առաժափատչյան, Ն. Բեգլարյանի երգերում խոսում է հայոց լեզվով, հայկական վավերագրությամբ.

Այստեղ ամեն քար

Քարե մատյան է,

Քարե պատմություն,

Որ գրել են մեր

Խնկրք պապերը:⁸

(8. Նույն տեղում, էջ 16):

Ն. Բեգլարյանն, անձնավորելով հող հայրենին, ապրելու, զոյատևելու ամենագործող ուժը տեսնում է հողի մեջ: Նրա քնարական հերոսը մայր հողի խնկարկուն է, մշակն ու տերը: Գրելով «Ղարաբաղցին» բանաստեղծությունը՝ նա բարձրաձայնեց արցախցու աշխատասիրության, հյուրասիրության, բարության, խիզախության, իմաստության, գորավարության, անձնուրաց ընկերասիրության մասին:

Արցախի գեղարվեստական պատկերի ստեղծմանը ոգևորությամբ մասնակցեցին Արցախի գրական ընտանիքի բոլոր անդամները: 1950-60-ական թվականներին ասպարեզ իջած սերնդակիցների մեջ իր տաղանդով առանձնանում է Վ. Հակոբյանը: Պոեզիայի թեմատիկ ընդգրկումներում ինչի մասին գրում է նա, ունենում է իր հոգևոր մթնոլորտի առանձնահատկությունները: Նրա երգերում երկրի ու քաղաքացու ներդաշնակության խորհուրդը քնարական հերոսին մղում է դեպի ժողովրդի ու հայրենիքի ճակատագրի շրջանակները, որ նույնպես պայմանավորված է կյանքը գեղեցկացնելու, Արցախն ամրակառ պահելու գաղափարներով: Հայրենի լեռներն առած թևերին՝ բանաստեղծն իր մեջ զգում է դարերի այն ուժը, որ իրեն է անցել պապից ու հորից: Այդ առումով հետաքրքրական է, որ նրա հայրենաշունչ երգերում քով քովի կանգնում են պապը-հայրը-թողը: Բոլոր դեպքերում նրան թևավորում է դարերի արհավիրքներին դիմացած արիության ու անկոտրում կամքի տեր մայր ժողովուրդը: Հակոբյանի հանրահայտ «Ես երգ չունեմ Ղարաբաղի մասին» բանաստեղծությունն արժեքավորվում է հենց այդ դիտակետից: Որքան շոշափելի է բանաստեղծության բովանդակությունը, նույնքան վարակիչ է խոսքը: Արժավարյուն Ղարաբաղը, որ սերվել է սեզ լեռներից ու սրբավայրերից, ի հեճուկս բոլոր խարդավանքների, պիտի հավերժվի, քանզի ինչպես բանաստեղծն է հաստատում.

Ղարաբաղը ելք է բացված սրտի նման,

Ղարաբաղը երգ է, բառեր չունեն սակայն,

Իմ պապերի ձայնով միայն երգեցեր այն:⁹

(9.Վ. Հակոբյան, «Վաղվա աչքերով», «Սովետական գրող» հրատ., 1987, էջ 8)

Վ.Հակոբյանը՝ որպես կարոտի ու սիրո երգիչ, տեսավ 20-րդ դարի մոճավանջը արցախցիների ազատաբաղձ ոգու դեմ, գաստումով խարազանեց թշնամական ուժերի ցինիզմն ու դաժանությունը: »1988 թիվ, փետրվար» բանաստեղծության մեջ նա ընդգծեց.«Գայլը գայլն է նույն՝ բնույթով պատիր՝ գառան մորթու մեջ, թե որչափ անտես»: Նկատի ունենալով նոր զգեստներ հագած դաժան ուժերի վայրենությունը՝ բանաստեղծը գրեց.

Ատամը արյան համ առավ կրկին,

Նորից երևաց մռայլ գայլի...¹⁰

(10. Վ.Հակոբյան, «Արցախա ծուխ», «Լույս» հրատ., 1989 թ., էջ 9):

Բանաստեղծը միաժամանակ հնչեցնում է հարատևելու կոչը, ընդգծելով, որ հողը պետք է բերդ դարձնել, դուռը չբացել, սրբել մամուռը, չմոռանալ, որ.

Մենք՝ որդիք Հայկի, արդար ու վսեմ,

Ցավ ու դառնությունը այդ ե՞րբ չենք տեսել,

Բայց ոչ մի անգամ, Աստված է վկա,

Արցախին հաղթող չի եղել, չկա...¹¹

(11. Նույն տեղում, էջ 10):

Իր ստեղծագործական ճանապարհին տողերիս հեղինակը Արցախին ընծայած երգերում զուգահեռ անդրադարձել է մայր Հայաստանին ու նրա հաղթական առաջընթացին: Գրախոսելով նրա »Արևսար« ժողովածուն՝ անվանի գրականագետ Ն. Մերոբյանը նշել է. «Իր հայրենի լեռնաշխարհին՝ արծիվների բույն Ղարաբաղին շատ անգամ է անդրադարձել Սահյանը՝ գրախոսվող գրքում գետնեղիով բանաստեղծությունների մի ամբողջ փունջ «Իմ հայրենի լեռնաշխարհում» խորագրով: Նա որդիական խորունկ սիրով խոսք է բացել հավերժ դալարուն Ուխտաձորի, գմբուխ հագած Արևսարի, «Կռունկ», «Երագ» երգող քաղցրալուր աղբյուրների մասին, քնարական շնչով, խորունկ սիրով համոզելով իր ընթերցողին»:¹² (12.«Գրական Աղբյուր» հանդես, 1970, թիվ 1): Իսկ ակնհայտ գրականագետ Դ. Գասպարյանը «Լեռների երգը» ժողովածուի առթիվ ընդգծել է. «Ս. Սահյանի պոեզիայում հայրենիքը և քնարական հերոսը հանդես են գալիս միաժամույլ, ոչ իրարից մեկուսացած: Բանաստեղծի մոտ «հայրենիք» հասկացությունը հաճախ բացահայտվում է հայրենի երգերի նկարագրով: Բնականորեն այս դեպքում դառնում է հայրենասիրական մղումների դրսևորման, նրանց պատկերման միջոց»:¹³ (13.«Գրական թերթ», 1973, 21 օգոստոսի):

Ազերի բռնակալների դեմ անկախության և ազատության համար ոտքի ելած արցախցիների վճռականության, ազատաբաղձ ոգու գեղարվեստական մի պատկեր է Ս. Սահյանի «Արցախցիներ» քնարական պոեմը: Դոճիկ հյուսվածքի մեջ բերելով Գրիգոր Նարեկացու գրույցն Աստծո հետ՝ նա ընդգծում է հայ մարդու ընդվզումն անարդարության դեմ: Արցախցիների նորոգյա կոչը մայր Հայաստանին վերամիավորվելու պահանջն է, որին հավատում են նրանք, և բանաստեղծը ներկայացնում է այդ հավատը.

Արցախցիները պողպատից կարծր են,

Վեհ են ու բարձր են և անողոր,

Բարեկամների դիմաց միշտ քաղցր են,

Իսկ չարերի դեմ՝ բռունցք, բողոք:

Դարի ոգին են արցախցիները,

Խղճի դրոշմ են ազգերի մեջ,

Արցախցիները նոր աստվածներ են,

Կհասնեն իրենց երազին պերճ:¹⁴

(14. Ս.Սահյան, «Արցախյան դողանջներ», ԵՊՀ հրատ., 1994 թ., էջ 7):

Մինչև 1988 թվականը լույս ընծայած իրենց բանաստեղծական ժողովածուներում Արցախում ապրող և ստեղծագործող գրողները, զգալով Ադրբեջանի կառավարող շրջանների հայահալած քաղաքականության վտանգը, արարել են տազնապի և հույսի երգեր՝ ընդգծելով հավատը հայրենի երկրի փրկության հանդեպ:

Եվ եկավ պահը: Ոտքի ելավ ժողովուրդը՝ թոթափելու Ադրբեջանի հայահալած լուծը: Ազատագրական պայքարին լծվեց գրականությունը, դառնալով նրա գաղափարախոսն ու դրոշակակիրը մարտական դիրքերում:

Բանաստեղծներն անմիջապես մարտաշունչ խոսքեր փնջեցին, ստեղծեցին բալլադներ, լեզենդներ, պոեմներ, չափածո ակնարկներ, քնարական շարքեր, ընդգծելով, որ մեր ժողովուրդն ինքնահաստատման իր խոսքն է ուղղում աշխարհին՝ որպես ազատ ու անկախ ապրելու վճռականություն: Ղարաբաղյան շարժման առաջին օրից իրենց կրակոտ խոսքն ասացին Վ. Դավթյանը, Ս. Կապուտիկյանը, Գ. Էմինը, Ն. Սահյանը, Ռ. Դավոյանը, Մ.Նուրբան, Բ. Ջանյանը, Յու. Սահակյանը, Գ. Սաչատուրը և ուրիշներ:

Արցախցի երիտասարդ բանաստեղծներ Դ. Միքայելյանը, Ժ. Բեգլարյանը, Ռ. Եսայանը, Ն. Ալեքսանյանը, Ն. Գասպարյանը, Կ. Գաբրիելյանը, Արիս Արսենին, մի ձեռքին գրիչ, մյուսում՝ զենք, մասնակցեցին Արցախյան գոյամարտին, արարելով հայրենասիրական իրենց երգերը: Երիտասարդ բանաստեղծ Կ. Հակոբյանը նահատակվեց՝ հայրենի երգը շուրթերին:

Չնայած պատերազմական դժվարին պայմաններին և զիբր տպագրելու սուղ հնարավորություններին՝ Արցախի գրական ընտանիքի անդամներն ընթերցողի սեղանին դրեցին ուշագրավ ժողովածուներ: Դրանցից են Վ. Հակոբյանի «Արցախա ծուխ», «Ամարասի գանգերը», «Տաճարն Աստծո», «Մոսն», Գ. Գաբրիելյանի «Մեր Գագույան», «Անդրանիկ», «Մուսա լեռան... երկու որդին», «Ողջակիզված կյանք» չափածո ակնարկները, Ն. Բեգլարյանի «Հրաշք երկիր իմ Ղարաբաղ», «Արցախն Ավարայր», Ն. Ավագյանի »Հասուն իմ հասկ«, Ա. Հովհաննիսյանի »Ավանդապատում«, Ս. Սահյանի «Կարոտի կրակներ», «Արցախյան դողանջներ», «Արցախի արծիվը», «Նահատակ լուստ», Ա. Թովմասյանի «Արցախցի եմ ես», »Զգույշ քայլեր, մարդիկ«, Ռ. Եսայանի «Նժար», «Նենակետեր», Ն. Գասպարյանի «Հավատ Արցախի», Ն. Ալեքսանյանի «Կենսատաշտ», Դ. Միքայելյանի «Հավատի ժամ» ժողովածուները: Դրանցում բանաստեղծները շոշափել են հետևյալ

հիմնական թեմաները՝ 1.խորհրդային բռնապետության դեմ արցախցիների ընդվզումը,՝ Ադրբեյջանի լծից ազատվելու և Մայր Հայաստանին վերամիավորվելու նպատակով Ադրբեյջանի իշխանությունների կողմից սանձազերծված պատերազմում հայ ժողովրդի միասնական պայքարը, 2. հայ ժողովրդի պատմական անցյալի և առօրյա մաքառումների առնչությունների դասը, 3. նահատակված դյուցազունների անմոռաց հիշատակի, ինչպես նաև հերոս ազատամարտիկների անձնուրացության, սիրո, կարոտի, ցավի, հույսի, հավատի զգացումները:

Շարժման առաջին օրերին հնչում էր Ն. Շիրազի «Ղարաբաղի ողբը» բանաստեղծությունը՝ որպես պայքարի կոչ.

Ղարաբաղը մորս կանչն է՝ ինձ է կանչում հույսով տրտում,
 Ղարաբաղը իմ կակաչն է՝ կարմիր, բայց սև ունի սրտում,
 -Ա՛խ, ե՞րբ պիտի ելնես բանտից՝ Նախիջևանի ձեռքից բռնած,
 Որ ազգովին Մասիս ելնենք, քարավանի նառից բռնած,

Նորից ազգի ավագանում հայ մկրտվես, հայ Ղարաբաղ:¹⁵

(15. Ս. Խանյանի արխիվ)

Գնալով ծնվեց Ղարաբաղյան շարժման և Արցախյան պատերազմի երզը, որ համահունչ էր զենքի ուժին: Պեղծիկան զինվորագրվեց հայ ժողովրդի ազատագրական պայքարին՝ Արցախը համարելով ողջ հայության ազատության ու գոյատևման ջահակիրը:

Նորագույն շրջանի հայ պոեզիայում Արցախի գեղարվեստական պատկերն ստեղծվել է հետևյալ փուլերով.

1.1930-ական թվականներ: Անհատի պաշտամունքի ժամանակաշրջան: Արցախը փառաբանող հայ բանաստեղծներին արտորում էին Սիբիր: Առաջիններից Գ. Ներսիսյանն էր, ով տուն չդարձավ Սիբիրից:

2.Հայրենական մեծ պատերազմի տարիներ: Տասնյակ երիտասարդ տաղանդավոր բանաստեղծներ, որոնք նոր էին ասպարեզ իջել, մեկնեցին ռազմաճակատ, մարտնչեցին հերոսաբար, դարձան սրբագործ նահատակներ՝ հայրենի դրախտային երկրի անունն իրենց կրակված շուրթերին: Պատերազմից հետո նրանց հայրենասիրական երգերը տպագրվեցին առանձին ժողովջածուով «Երդում» խորագրով:

3.Հետպատերազմյան շրջան. 1945-1988: Արցախի երզը հնչեց տագնապի և հույսի երանգներով, որովհետև դեռևս զգացվում էր խորհրդային գրաբննչության սադրիչ աչքը՝ ՊԱԿ անունով: Զգացվում էին Ադրբեյջանի իշխանությունների հայահալած քաղաքականության մտրակի շառաչը, ԼՂԻՄ-ի որոշ ղեկավարների վախվորած աթոռապաշտությունը: Ամեն դեպքում արարվում էր պոետական արցախապատումը:

4.1988-ին սկիզբ առած Շարժման, պատերազմի, հաղթանակի, ոչ պատերազմ-ոչ խաղաղություն շրջան: Համահայկական պոեզիայի տեսադաշտ բերվեց Արցախի գեղարվեստական պատկերը գրական ժանրերի ու թեմաների բազմազանությամբ, որն իր արժանի գնահատականն է ստանում ոչ միայն հայ, այլև օտարազգի անվանի գրականագետների և խստապահանջ ընթերցողների կողմից:

Սուսաննա Ամիրջանյան
Խ. Արթուրյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան
Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ
E-mail: amirjanyan-susanna@mail.ru

ՂԱՐԱՐԱՊԻ ԲԱՐԲԱՌԻ ՄԻ ՔԱՆԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՀՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս հոդվածում ներկայացված են Ղարաբաղի բարբառի մի քանի բարբառային հնաբանություններ, որոնք ժամանակագրորեն հին են և ավելի մոտ հնդեվրոպական նախաձևերին: Դրանք Ղարաբաղի բարբառի բառապաշարի գործուն շերտի լեզվական միավորներն են: Ուստի կարևոր ենք համարում բարբառային հնաբանությունների ուսուցումը հայերենի համեմատական քերականության, հայոց լեզվի պատմության, բարբառագիտության դասընթացներում, քանի որ դրանք բացահայտում են հնդեվրոպական նախալեզվի, գրաբարի և բարբառների առնչությունները:

Բարբառային հնաբանություններ, հնդեվրոպական նախաձևեր, գրաբար, Ղարաբաղի բարբառ, բառապաշարի գործուն շերտ, ձայնդարձ, աճական, աճանց:

Susanna Amirjanyan
PhD associate professor of The Chair of department A
of the Armenian language and its teaching methodology
of the ASPU after Kh.Abovyan

SOME DIALECTICAL ARCHAIC WORDS OF THE KARABAKH DIALECT

Some dialectal archaic words of the Karabakh dialect are introduced in this article, which are chronologically old and closer to the Indo-European preforms. They are the linguistic units of the active layer of the lexics of the Karabakh dialect. Therefore, we consider the teaching of the dialectal archaic words important in the courses of the comparative grammar of Armenian, history of the Armenian language, dialectology, as they discover the connections of the Indo-European prelanguage, Old Armenian and dialects.

Сусанна Амирджанян
Кандидат технических наук, доцент кафедры А
Армянского языка и методики его преподавания
АГПУ им. Х.Абовяна

ДИАЛЕКТНЫЕ АРХАИЧЕСКИЕ ФОРМЫ ДИАЛЕКТА КАРАБАХА

В настоящей работе представлено несколько диалектных архаических форм карабахского диалекта, которые ближе к формам индоевропейского праязыка и сегодня же являются словами активного слоя диалекта.

Имея в виду, что архаические формы диалектов выявляют некоторую соотнесенность грабара, диалектов и индоевропейского проаязыка, придаем важное значение изучению этих форм в курсах предметов сравнительной грамматики, диалектологии, истории армянского языка.

Բարբառային հնաբանությունները, ի տարբերություն ժամանակակից հայերենի հնաբանությունների, պատմաբաների, որակապես այլ լեզվական միավորներ են: Ինչպես հայերենագիտական ուսումնասիրություններն են հաստատում, վերջիններս ժամանակագրորեն այնքան հին են, որ գոյություն են ունեցել նույնիսկ վաղնջահայերենով [1]:

Բարբառային հնաբանությունների հետազոտությունը կարևոր է ոչ միայն բարբառագիտության, այլև հայոց լեզվի պատմության, համեմատական քննության տեսակետից: Վերոնշյալ հնաբանությունների հետազոտությունը բացահայտում է գրական լեզվի և բարբառների, նույնիսկ հնդեվրոպական նախալեզվի, վաղնջահայերենի ու բարբառների առնչությունները. դա ակնհայտ է դարձնում բարբառային հնաբանությունների ուսումնասիրության պատմությունը:

Դեռևս 19-րդ դարում լեզվաբան Քերովբե Պատկանյանը, հետազոտելով հայերենի բարբառները և դրանք չհամարելով գրաբարի հետագա ձևափոխություններ, բարբառագետներից առաջինն է նկատում գրաբարում չվկայված կամ իրենց հնչյունական տեսքով գրաբարից տարբերվող բնիկ հայերեն բառեր, քերականական ձևեր, որոնք առկա են բարբառներում: Այդ հնագույն բարբառային տարբերությունները նա համեմատում է հնդեվրոպական լեզուների և նախալեզվի համապատասխան ձևերի հետ: Առանձնացնում է բարբառներում h հավելվածով բառերը և գտնում, որ դրանք ավելի հին են, քան գրաբարյան համապատասխան ձևերը, քանի որ h-ն համապատասխանում է հնդեվրոպական նախալեզվի S-ին [2]: Հետագայում արբենալ բառի բարբառային հարվել ձևը հնդեվրոպական բարբառային հնաբանություն է համարվել: Ք.Պատկանյանն առանձնացրել է նաև գրաբարից տարբերվող բարբառային ձևեր, որոնք հնդեվրոպական ձայնադարձի մնացորդներն են, ինչպես օրինակ տկողեն-կաղին, օրդում-երդում ձևերը Ղարաբառի բարբառում: Նրա ուշադրությունից

դուրս չեն մնացել նաև բառակազմական հնաբանությունները. գրաբարյան բաղադրյալ (նախդրավոր) ձևի դիմաց բարբառում արմատական ձևի հանդես գալը, որն ավելի նախնական է ծագմամբ: Դա ապացուցելու համար բարբառագետը ներկայացնում է Ղարաբաղի բարբառի գենալ (կենալ) բառը գրաբարի զգենուլ բառի դիմաց [2, էջ 67]: Ղարաբաղի բարբառում պահպանված գենալ բառից պարզվում է գեն արմատը, որը գրաբարում առանց զ-նախդրի չի գործածվում: Բարբառային գենալ արմատը հնդեվրոպական նախալեզվի *ues-nu արմատին ավելի մոտ է, քան գրաբարյան զգենուլը:

Հետագայում Հ. Աճառյանը գրում է, որ աննախդիր ձևերը պահպանված են մինչև այսօր գավառականներում (բարբառներում)՝ Ղարաբաղ կենալ <<հագնել>>, Ալաշկերտ, Մուշ գետ <<զգեստ>> [4, էջ 88]:

Պատկանյանը լեզվաբանական սուր զգացողությամբ հստակ կռահել է աղբերը, ալերը ձևերի նախագրային բառեր լինել: Նրա ներկայացրած ե/է և ի/է երկբարբառներով տարբերակները վկայում են մինչև գրաբարի հանդես գալը բարբառային տարբերությունների մասին:

Ա. Մեյեն է երկբարբառ ունեցող բառը համարում է հնագույն ձև, որի հիման վրա Հր. Աճառյանը գրում է, որ ալերը ավելի հին է, քան ալիքը [3, էջ 95]: Աղայանը դրանք համարում է հնագույն բարբառներին հատուկ երևույթներ [5, էջ 67]:

Պատկանյանը, բարբառներում պահպանված հնչյունական, բառակազմական հնաբանություններից բացի, հետագոտել և ներկայացրել է նաև քերականական հնաբանության օրինակ: Բարբառային քուեր սեռականով ձևը բխեցնում է ոչ թե գրաբարյան քեռ ձևից, այլ հնդեվրոպական* suoseros-ից: Է. Աղայանը քուեր-ի հետ միասին քուեր բարբառային ձևը ևս համարում է հնագույն տարբերությունների հետք [5, էջ 13]:

Պատկանյանը նույն ձևով հին նախնական ձև է համարել բարբառային անում ձևը: Փաստորեն Պատկանյանի առաջ քաշած տեսակետը, որ բարբառներում պահպանվել են գրաբարից տարբեր բառեր, բառաձևեր, որոնք ժամանակագրորեն հին են և ավելի մոտ են հնդեվրոպական նախաձևերին, հաստատել և ընդունել են հաջորդ սերնդի համեմատաբանները: Նրանք զարգացրին այդ տեսակետը՝ իրենց ուսումնասիրություններում մեծ տեղ տալով բարբառային հնաբանությունների հետազոտությանը: Արդեն XX դարում Հ. Աճառյանը հայերենի բարբառները թեև համարում է գրաբարից ավելի ուշ գոյացումներ, այնուամենայնիվ իր <<Հայոց լեզվի պատմություն>> աշխատությունում, <<Հայերեն արմատական բառարանում>> նկատում և ուսումնասիրում է բարբառային բառեր, որոնք գրաբարում արմատական ձևով չեն ավանդվել, հնդեվրոպական ծագման արմատներ, որոնք պահպանվել են բարբառներում, բայց չեն ավանդվել կամ չեն եղել հին հայերենում: Լեզվաբանը <<Հայոց լեզվի պատմություն>> աշխատության մեջ ներկայացնում է բարբառային հին բառերի ցանկ՝ համեմատված հնդեվրոպական մյուս լեզուների և նախալեզվի համապատասխան ձևերի հետ, որոնք հետաքրքրություն են ներկայացնում: Ղարաբաղի բարբառի առե բառը <<հույժ, շատ>> հին ձև համարելով՝ համեմատում է հունարենի *ari, eri*, վեդայական *ari* բառաձևերի հետ, որոնք սաստկություն ցույց տվող բառեր են: Նույն բարբառի պիւքի (բուքի) <<վայրի ծառ>> համեմատում է հինս**bhugos*, հուն. *phago* <<կաղնի>>, գերմ. *Buch*, ռուս. *byk* <<հաճարենի>> բառաձևերի հետ: Լոք տալ <<ցատկել>> <հինս**lok* ցատկել, հուն. *lekao* ցատկել, լատ. *locusta*: Բուլը <<խմորի գունդը>> ծագում է հնդեվրոպական նախալեզվի **bhol* արմատից, Ղարաբաղի, Շամախու բարբառներում դրսևորվում է պիւլ (պուլ), Ագուլիսում՝ քիւլ ձևերով [6, էջ 119-120]:

Բարբառներում կան արմատական բառեր, որոնք ավելի մոտ են հնդեվրոպական նախաձևերին: Այդ առումով կարևոր է լքել արմատի ստուգաբանությունը: Հ.Հյուբշանը բնիկ հայերեն լքել արմատը բխեցնում է հնդեվրոպական **kles* նախաձևից, որի ստորին աստիճանի ձայնադարձն է **klu*. մյուս հնդեվրոպական լեզուները, ինչպես նաև հայերենը աճականներ են ավելացրել. Հայերենում ունենք **klu* արմատից լու բառաձևը՝ *s(u)* աճականով. հնիս **klusr*>լուս: լուսել>լսել), հնիս **klsru*>լուս:

Հ. Աճառյանը վերոհիշյալ բառը ստուգաբանելիս նկատում է, որ լու արմատը, որը ծագմամբ մոտ է հնդեվրոպական նախաձևին, առանց աճականի գործածվում է Ղարաբաղի բարբառում՝ լի (լու) <<լսի՛ր, թո՛ղ, կա՛ց>>, լի՛ւ կաց>> [4, էջ 307]:

Հետագայում Գ. Ջահուկյանն իր <<Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան>> աշխատության մեջ քննելով հայերենի բարբառներում պահպանված հին բառերը և համեմատելով հնդեվրոպական լեզուների համապատասխան ձևերի հետ, առանձնացնում է հնչյունական տարբերակներ: Ներկայացնենք դրանցից մի քանիսը:

Հնդեվրոպական նախալեզվի **bh*-ի դիմաց սովորական բ-ի կողքին պ՝ քրքջակ և պղպջակ: Հնդեվրոպական **t*, **k*-ի դիմաց սովորական թ, ք-ի կողքին տ, կ՝ թեն <<թաց>> (այլև թան/անձրե/, թանամ, թաց): Հնդեվրոպական **ph*-ի դիմաց սովորական ք-ի և ք-ի կողքին պ՝ փաղփաղիմ, փողեմ, փողփողեմ, փակլ և պաղ <<փայլ>>, պող <<կայծ, կրակ>> (հ.ե. *(s)p(h)el. հմմտ. հ. հնդկերեն *sphulinga* <<կայծ>>):

Բառակազմի ձայնավորից առաջ հավելուրդային կ-ի առկայություն՝ ոզնի և բարբառային կոզնի (հ.ե. **oghiniio*. հմմտ. հուն. *eptnos*, ռուս. *ож*), ոստ, բարբառային ոստղ և կոստղ (հ.-ե. **ozdos*):

Հ.ե. ձայնորդներից առաջ ա) ձայնավոր նախահավելված և բ) նախահավելվածի բացակայություն՝ անաթի և նալթի (**naguh*, հմմտ. հուն. *nepo* <<զգաստ ժուժկալ լինել>>) [1, 252-253]: Նա դասդասել է նաև բարբառների պահպանված հնդեվրոպական այն արմատական ձևերը, որոնք բացակայում են հայերենի գրավոր հուշարձաններում, որոնց մեծ մասը բնաձայնական-նկարագրական, պատկերավոր գործածություն ունեցող բառեր են, ինչպես դիդեղ <<հրել>>, թալ, թելուկ հ.ե. **tal*, լապո <<թույլ, կախ ընկած կաշի>>, հ.ե. **leb*, **lab*, լոք <<մեծ քայլ>>, հ.ե. **lok*, մուլ <<ծուխ>>, մլուլ, մլվլալ (հ.ե. **mel*) և այլն:

Ներկայացնում ենք վերոհիշյալ բարբառային հնաբանությունները հնդեվրոպական նախալեզվի համապատասխան բառերի համեմատությամբ.

Թալ, թելուկ - հ.ե. **tal*

Լապո - հ.ե. *leb, lab
 Լոք - հ.ե. *lok
 Լու, լսիր - հ.ե. *klusr
 Մլմլալ - հ.ե. *mel
 Պուլ - հ.ե. *bhol
 Պոդ - հ.ե. *(s)p(h)el
 Գենալ - հ.ե. *ues-nu
 Պիսի - հ.ե. *bhugos
 Կոգնի - հ.ե. *oghiniio

Այսպիսով, հայերենի բարբառներում պահպանվել են հնդեվրոպական ծագման բառեր, որոնք գրավոր աղբյուրներում, մասնավորապես գրաբարի գրավոր հուշարձաններում, ավանդված բառերի համարմատ տարբերակներն են: Սակայն դրանք տարբերվում են գրաբարյան ձևերից ձայնադարձի, աճականի, ածանցի, իմաստի դրսևորման առանձնահատկություններով:

Ուշագրավ է, որ հայերենի համեմատական ուսումնասիրություններում հետազոտվող բարբառային հնաբանություններով հարուստ է Ղարաբաղի բարբառը, որի պուլ (խմորի գունդ), թան, թօն (անձրեւ), կոգնի (ոգնի), լապո (կախ ընկած կաշի), նոթի (քաղցած), կենալ (հագնել), պոդ (կայծ), լի ւ, լո ւ (լսի ը), լոք (մեծ քայլ), մլմլալ (ծխել) և այլ բառեր մոտ են հնդեվրոպական համապատասխան նախաձևերին և մինչև այժմ էլ նրա բառապաշարի ակտիվ, գործուն շերտի լեզվական միավորներն են և աչքի են ընկնում գործածության հաճախականությամբ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ջահուկյան Գ.Բ., Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, 748 էջ:
2. Патканов К.П., Исследование о диалектах армянского языка, Санкт-Петербург, 1869, с.110.
3. Աճառյան Հ.Հ., Հայերեն արմատական բառարան, հ.1, Երևան, 1971, 698 էջ:
4. Աճառյան Հ.Հ., Հայերեն արմատական բառարան, հ.2, Երևան, 1973, 687 էջ:
5. Աղայան Է.Բ., Բարբառային հնագույն տարբերությունները հայերենում, ԳՍՏ, 1958, 5, 98 էջ:
6. Աճառյան Հ.Հ., Հայոց լեզվի պատմություն, Երևան, մաս 1, 1940, 608 էջ:
7. Հյուբշման Հ., Հայերենի քերականություն, Երևան, 2003թ. 580 էջ:
8. Джаукян Г.Б., Сравнительная грамматика армянского языка, 1982, с. 275.

УДК 941(479.243)

История
Нунэ Аракелян,
кандидат филологических наук, АрГУ
anune777@rambler.ru

АРМЯНСКАЯ ДИАСПОРА РОССИИ И ЧЕТЫРЕХДНЕВНАЯ АПРЕЛЬСКАЯ ВОЙНА 2016 ГОДА

Апрельская война войдет в историю армянского народа не только как короткая война, в результате которой было пролито много крови и совершены акты героизма со стороны армянских воинов, но и как событие, объединившее армянство мира. Статья затрагивает некоторые аспекты моральной и материальной помощи армии обороны НКР и пострадавшим во время войны со стороны армянской диаспоры России.

Ключевые слова: апрель. война, диаспора, акции протеста, помощь, оружие, добровольцы, сплоченность, решительность, нерешительность.

**Նունէ Առաքելյան,
բ.գ.թ. ԱրՊՀ**

ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ և 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼՅԱՆ ՔԱՌՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Ապրիլյան պատերազմը կմտնի հայ ազգի պատմության մեջ, ոչ միայն որպես կարճատև պատերազմ, որի արդյունքում շատ արյուն թափվեց և որտեղ դրսևորվեցին հայ զինվորների հերոսությունները, այլև իրադարձություն, որը համախմբեց ողջ հայ ժողովուրդը: Հոդվածը անդրադառնում է Ռուսաստանում բնակվող սփյուռքահայերի կողմից ԼՂՀ ՊԲ-ին և պատերազմից տուժած քաղաքացիներին հասցված բարոյական և նյութական օգնությունը:

Բանալի բառեր: Ապրիլի պատերազմը սփյուռք, բողոքի ակցիաներին, աջակցություն, զենք, կամավորներ համախմբվածության. ինքնորոշման եւ անվճարականությունը:

Summary

**Nune Arakelyan,
Candidate of Philology**

THE ARMENIAN DIASPORA OF RUSSIA AND THE FOUR-DAY WAR IN APRIL 2016

The April war will go down in the history of the Armenian people, not only as a short war, which resulted in much blood shed and Armenian soldiers committed the acts of heroism on the part of the, but also as an event, uniting the Armenians all over the world. The article deals with some aspects of the moral and material assistance to the victims of the war and the NKR Defense Army from the Armenian Diaspora in Russia.

Key words: April war, the Diaspora, protest, support, weapons, volunteers, solidarity, determination and indecision.

Четырехдневная война между Азербайджаном и Республикой Арцах еще долго будет оставаться предметом исследований специалистов: политологов, конфликтологов, журналистов, военных аналитиков. Апрельская война войдет в историю армянского народа не только как война, краткость которой была обратно пропорциональна количеству пролитой крови с обеих сторон и героизму армянского воина, но и как событие, объединившее армянство мира. Армянские диаспоры всего мира еще раз продемонстрировали акт солидарности с соотечественниками, живущими на Родине. Забыв о своих политических и иных разногласиях, армянство сплотилось в едином порыве защитить Арцах.

По всему миру проходили многочисленные мероприятия в поддержку Карабаха, которые организовали армянские диаспоры: от акций протеста, пикетов и митингов с требованием остановить агрессивные действия Азербайджана против Нагорно-Карабахской республики (НКР) до сборов многомиллионной помощи. Реакция армянского общества и диаспоры на апрельские события показала скептикам, как они ошибались, уверяя всех, что разочарованный за прошедшие годы независимости народ уже не будет с таким энтузиазмом защищать Карабах.

Апрельская разведка боем Азербайджана позволила нам и всему миру еще раз убедиться в том, насколько патриотична и беззаветно храбра армянская молодежь и насколько преданна Родине армянская диаспора, оперативно начавшая мобилизацию добровольцев, организовавшая сбор материальной помощи, массовые акции армян в Лос-Анджелесе, Париже, Бейруте и Буэнос-Айресе и серьезный натиск зарубежных армянских лоббистов. Все армянские структуры в диаспорах Америки и Европы сработали настолько согласованно и эффективно, что армянским триколором засияло даже здание мэрии Лос-Анджелеса – в память павших на поле боя армянских воинов.

Армянская община России является крупнейшей из диаспор. Согласно последней переписи населения (2010 год), численность армян в РФ составляет 1,182 млн. человек, и они являются седьмым по количеству людей народом в России (0,86% населения). Однако представители армянских организаций РФ уверены, что перепись не полностью отражает подлинное число армян в России. Так, глава Союза армян России Ара Абрамян считает, что с учетом трудовых мигрантов в России живет около 2,5 млн. армян.

¹ Подласый И.П. Педагогика: 100 вопросов - 100 ответов: учеб. пособие для вузов/ И. П. Подласый . -- М.: ВЛАДОС-пресс, 2004. - 365 с.

² Маркова А. К. Формирование мотивации учения в школьном возрасте. М., 1983

³ Реан А. А. Психология педагогической деятельности. Ижевск, 1994

⁴ Якунин В. А. Психология учебной деятельности студентов. М., 1994

⁵ Ильин Е. П. Мотивы человека: теория и методы изучения. Киев, 1998

⁶ Мильман В. Э. «Мотивация и творчество» / В.Э. Мильман. - М.: «Миря и Ко », 2005 г. – 165

⁷ Ильин Е. П. Мотивы человека: теория и методы изучения. Киев, 1998

⁸ Якобсон П. М. Психологические проблемы мотивации поведения человека. М., 1969

⁹ Вилюнас В.К. Психологические механизмы мотивации человека / В.К.Вилюнас - М.: Изд-во МГУ, 1990.- с.288

¹⁰ Гордашников В. А., Осин А. Я. Образование и здоровье студентов медицинского колледжа. Изд: Академия Естествознания, 2009

Ключ: ответ «да» означает + 1 балл, ответ «нет» означает - 1 балл. По сумме баллов можно судить о своей степени мотивации обучения.

Однако по сей день существует много недостатков в мотивационных подходах в преподавании, приводящие к полному снижению учебной мотивации студентов. Среди них основными являются:¹

- преподаватели дают много “голых знаний” без обоснования их нужности;
- между преподавателем и студентом нет никакого общения;
- отсутствие уважения преподавателя к студенту, как к личности;
- использование метода «кнута и пряника» - способа, когда студентов за успехи в учебе поощряют “автоматом”, а за отсутствие на занятиях наказывают дополнительными вопросами на экзамене.

Психолог Ю. Д. Красовский предлагает преподавателям использовать такие стимулы, как: ²

- подбадривающая критика («Ничего. В следующий раз сделаешь лучше. А в этот раз не получилось»);
- критика-упрек («Ну, что же ты? А я на тебя так рассчитывал»);
- критика-аналогия («Когда я был таким, как ты, я допустил точно такую же ошибку. Ну и попало же мне тогда от моего педагога»);
- критика-надежда («Надеюсь, что в следующий раз ты выполнишь задание лучше»);
- критика-похвала («Работа сделана хорошо. Но только не для этого случая»);
- безличная критика («В нашей группе есть еще учащиеся, которые не справляются со своими обязанностями. Не будем называть их фамилии»);
- критика-озабоченность («Я очень озабочен сложившейся ситуацией, особенно у таких наших учащихся как...»);
- критика-сопереживание («Я хорошо тебя понимаю, вхожу в твоё положение, но и ты войди в мое. Ведь работа-то не выполнена...»);
- критика-сожаление («Я очень сожалею, но должен сказать, что работа выполнена не качественно»);
- критика-удивление («Как? Неужели ты не подготовил урок? Не ожидал...»);
- критика-ирония («Делали, делали и... сделали. Работа - что надо! Только как теперь в глаза людям будем смотреть?!»);
- критика-упрек («Эх, ты! Я был о тебе гораздо более высокого мнения...»);
- критика-намек («Я знал одного человека, который поступил точно так же, как и ты. Потом ему пришлось плохо...»);
- критика-смягчение («Наверное, в том, что произошло, виноват не только ты...»);
- критика-укоризна («Что же ты сделал так неаккуратно? Не вовремя?»);
- критика-замечание («Не так сделал. В следующий раз постарайся сделать лучше»);
- критика-требование («Работу тебе придётся переделать!»);
- конструктивная критика («Задание выполнено неправильно. Что ты собираешься теперь предпринять?»);
- критика-опасение («Я очень опасюсь, что в следующий раз работа будет выполнена на таком же уровне»).

Существует также некоторое количество профессиональных ролей преподавателя в рамках образовательного процесса, каждая из которых обладает определёнными характеристиками: преподаватель-фасилитатор, преподаватель-консультант, преподаватель-модератор, преподаватель-тьютор, преподаватель-тренер.³

▪ *Преподаватель-фасилитатор* оказывает педагогическую помощь и поддержку студентам для развития их мышления и креативности, ставит студентов в позицию помощников, дает студентам полную свободу действий;

▪ *Преподаватель-консультант* осуществляет обучающую функцию через консультирование в решениях конкретных проблем;

▪ *Преподаватель-модератор* реализует деятельность, которая направлена на раскрытие потенциальных возможностей и способностей студентов созданием атмосферы сотрудничества.

▪ *Преподаватель-тьютор* анализирует интересы и потребности каждого, разрабатывает специальные упражнения и задания, определяет способы мотивации студентов.

▪ *Преподаватель-тренер* помогает студентам в прохождении определенных учебных курсов, в подготовке к семинарским и практическим занятиям, докладам и т.д.

Таким образом, задачей каждого педагога должно быть не только предоставление студентам фактических знаний, а создание таких условий в учебном процессе, в которых каждый студент мог бы развить свои профессиональные, личностные и творческие способности в меру индивидуальных возможностей. Одним из самых эффективных способов для решения этой задачи является организация индивидуальной самостоятельной работы студентов. «Научить студента самому учиться» - особенно актуально в современном быстроразвивающемся обществе, в котором невозможно «выжить» без постоянной самостоятельной работы над собой, известной как «образование в течение всей жизни» (life-long-learning).

В этом контексте важно также соблюдать законы Йеркса-Додсона, которые показывают зависимость качества выполняемой деятельности от интенсивности мотивации. Согласно первому закону, «по мере увеличения интенсивности мотивации качество деятельности изменяется по колоколообразной кривой» (сначала повышается, затем, постепенно понижается), при этом «уровень мотивации, при котором деятельность выполняется максимально успешно, называется

¹ Жестокова Ю.Е. Методические указания по мотивации студентов, Ярославль, 2014 г.

² Красовский, Ю.Д. Организационное поведение : учебник / Ю.Д. Красовский. — 4-е изд., перераб. и доп. — М. : ЮНИТИ-ДАНА, 2012. — 488 с.

³ Кудряшова А. В., Горбатова Т. Н. Роли преподавателя в процессе развития творческой самостоятельности студентов высших учебных заведений // Молодой ученый. — 2015. — №4. — С. 581-584.

оптимумом мотивации». Согласно второму закону, «чем сложнее для субъекта выполняемая деятельность, тем более низкий уровень мотивации является для нее оптимальным».¹ Таким образом, для достижения успеха необходим умеренный уровень мотивации.

Однако, следует отметить, что в вопросе самомотивации как преподавателя, так и студента, немаловажную роль играет и «образовательная среда» в целом, что входит в задачи учебного заведения:²

- физические условия труда (оптимальный для занятий уровень шума, температуры, освещенности рабочего места);
- гигиенические условия труда (поддержание всех помещений в чистоте и порядке);
- дизайн, эстетика (использование современных при оформлении учебных помещений);
- столовая (с выполнением санитарно-гигиенических требований);
- материально-техническая база обеспеченности учебного процесса (учебники, научная литература, компьютерное, техническое оснащение);
- вспомогательные учебно-воспитательные помещения (спортивные залы, актовъй зал, конференц-зал);
- поощрения: материально-социальные вознаграждения (повышение зарплаты, стипендии, снижение платы за обучение, грамоты и пр.);
- здоровый морально-психологический климат в коллективе;
- возможности для расширения своего учебно-профессионального мировоззрения (факультативы, спецкурсы, участие в научных конференциях, семинарах; практические занятия по выбранной специальности на предприятии, в учреждении; встречи, дискуссии с интересными людьми профессии);
- создание перспектив дальнейшего образования по избранной профессии (аспирантура, факультет повышения квалификации.);
- возможность экспериментирования, творчества, самовыражения (участие в научно-исследовательской деятельности, в кружках художественной самодеятельности, ансамблях, в студенческих, молодежных движениях, общественных организациях и т.д.);
- информированность о делах, планах, перспективах образовательного учреждения (газета, информационный бюллетень, периодические научные издания образовательного учреждения; возможности участия в общих собраниях, совещаниях и т.д.);
- соревнование в учебной деятельности (аттестация, сессия, конкурсы лучший проект, лучший студент).

А.В. Хуторской под образовательной средой понимает: «естественное или искусственное создаваемое социокультурное окружение ученика, включающее различные виды средств и содержания образования, способные обеспечивать его продуктивную деятельность».³

Все эти теории и классификации мотивации тесно связаны с иерархической теорией потребностей американского психолога А. Маслоу, известная под названием «Пирамида потребностей Маслоу». В своей работе «Мотивация и личность» (1954) Маслоу подробно описал, что мотивирующие потребности человека имеют свою иерархию приоритета.⁴

1. *физиологические* (голод, жажда, отдых, половое влечение);
2. *потребности в безопасности* (защищенность, уверенность, комфорт);
3. *социальные* (потребность в принадлежности, любви, общении, заботе);
4. *потребность в признании* (уважение, нужность, значимость);
5. *познавательные* (знать, уметь, творить);
6. *эстетические* (красота, гармония, радость);
7. *духовные* (самопознание, самосовершенствование, самореализация).

Такую иерархию Маслоу объяснил тем, что человек не может испытывать потребности высокого уровня, пока нуждается в потребностях низкого уровня (первые четыре ступени иерархии). Последние три потребности (познавательные, эстетические и духовные) обычно представляют как потребности высокого уровня, под одним общим названием «самоактуализация».

Самоактуализация (от лат. actualis - "подлинный", "настоящий") - стремление человека к выявлению и развитию своих возможностей и талантов. По Маслоу, это стремление человека быть тем, кем он способен и кем должен стать: "Композитор должен сочинять музыку, художнику надлежит создавать картины, а поэту – слагать стихотворения. Людям следует быть теми, кем им предназначено быть, если они желают жить в гармонии с самими собой. Им необходимо оставаться верными собственной природе». По его мнению, средний человек удовлетворяет свои физиологические потребности на 85%, потребности в безопасности на 70%, в общении на 50%, в уважении на 40%, в самовыражении и творчестве только на 10%, «самоактуализации» достигает не более 2 % людей.

¹ Краткий психологический словарь. — Ростов-на-Дону: «ФЕНИКС». Л.А.Карпенко, А.В.Петровский, М. Г. Ярошевский. 1998.

² Тарасов С. В. Образовательная среда: понятие, структура, типология. Журнал «Вестник ЛГУ им. А.С. Пушкина», Выпуск № 3 / том 3 / 2011

³ Хуторской А.В. Методика личностно-ориентированного обучения. Как обучать всех по-разному?: Пособие для учителя. – М.: ВЛАДОС-ПРЕСС, 2005. – 383 с., с.72

⁴ Маслоу А. Мотивация и личность = Motivation and Personality / пер. с англ. А. М. Татлыбаевой. — СПб.: Евразия, 1999. — 478 с.

Таким образом, мотивация является основной психологической характеристикой любой деятельности человека, в том числе и обучения, представляющей собой комплексную систему взаимодействующих факторов, средств, структур, отношений и связей.

Литература

1. Вилюнас В.К. Психологические механизмы мотивации человека / В.К.Вилюнас - М.: Изд-во МГУ, 1990.- с.288, Выпуск№3 / том 3 / 2011
2. Гордашников В. А., Осин А. Я. Образование и здоровье студентов медицинского колледжа. Изд: Академия Естествознания, 2009
3. Гурова Н. А. Мотиваци студентов к учебной и научной деятельности // Личность, семья и общество: вопросы педагогики и психологии: сб. ст. по матер. XLVII междунар. науч.-практ. конф. № 12(47). – Новосибирск: СибАК, 2014
4. Ильин, Е. П. Мотивация и мотивы — СПб.: Питер, 2011. — 512 с.
5. Жестокова Ю.Е. Методические указания по мотивации студентов, Ярославль, 2014 г.
6. Карнеги Д. Как приобретать друзей и оказывать влияние на людей- М.: Прогресс, 1989
7. Клепцова Е. Ю., Рубцова Д. О. Проблемы мотивации студентов вуза // Научно-методический электронный журнал «Концепт». – 2016. – Т. 32. – С. 60–66
8. Красовский, Ю.Д. Организационное поведение: учебник / Ю.Д. Красовский .— 4-е изд., перераб. и доп. — М. : ЮНИТИ-ДАНА, 2012 .— 488 с.
9. Краткий психологический словарь. — Ростов-на-Дону: «ФЕНИКС». Л.А.Карпенко, А.В.Петровский, М. Г. Ярошевский. 1998
10. Кудряшова А. В., Горбатова Т. Н. Роли преподавателя в процессе развития творческой самостоятельности студентов высших учебных заведений // Молодой ученый. — 2015. — №4. — С. 581-584
11. Маркова А.К. Формирование мотивации учения [/ А.К. Маркова, Т.А.Матис, А.Б.Орлов - М.,1990. – с.212
12. Маркова А. К. Формирование мотивации учения в школьном возрасте. М.,1983
13. Маслоу А. Мотивация и личность = Motivation and Personality / пер. с англ. А. М. Татлыбаевой. — СПб.: Евразия, 1999. — 478 с.
14. Мильман В. Э. «Мотивация и творчество» / В.Э. Мильман. - М.: «Миря и Ко », 2005 г. – 165с.
15. Мормушева Н. В. Мотивация обучения студентов профессиональных учреждений // Педагогика: традиции и инновации: материалы IV междунар. науч. конф. (г. Челябинск, декабрь 2013 г.). — Челябинск: Два комсомольца, 2013. — С. 160–163
16. Педагогический словарь. — М.: Академия. Г. М. Коджаспирова, А. Ю. Коджаспиров. 2005
17. Подласый И.П. Педагогика: 100 вопросов - 100 ответов: учеб. пособие для вузов/М.: ВЛАДОС-пресс, 2004. - 365 с.
18. Реан А. А. Психология педагогической деятельности. Ижевск, 1994
19. Тарасов С. В. Образовательная среда: понятие, структура, типология. Журнал «Вестник ЛГУ им. А.С. Пушкина», -- М.: ВЛАДОС-пресс, 2004. - 365 с.
20. Хуторской А.В. Методика личностно-ориентированного обучения. Как обучать всех по-разному?: Пособие для учителя. – М.: ВЛАДОС-ПРЕСС, 2005. – 383 с.
21. Шагивалеева Г. Р., Калашникова В. Ю. Изучение учебной мотивации студентов вуза // Молодой ученый. — 2015. — №19. — С. 341-343
22. Якобсон П. М. Психологические проблемы мотивации поведения человека. М., 1969
23. Якунин В. А. Психология учебной деятельности студентов. М.. 1994

Շուշանիկ Ասրյան,
 տ.գ.թ., ԱրՊՀ տնտեսագիտության տեսության և
 կառավարման ամբիոնի դոցենտ

**ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
 ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

Ազգային տնտեսությունների վերականգնման դանդաղ ընթացքի նոր իրողությունները, որոնք պայմանավորված են համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով, համաշխարհային հասարակարգում պետությունների փոխկապվածության և համաշխարհային տնտեսության գլոբալ փոփոխություններով, աշխարհաքաղաքական նոր ռիսկերով, սոցիալտնտեսական հիմնախնդիրների սրացմամբ առաջադրում են տնտեսության կայունության վերախմաստավորման հարցեր: Հոդվածի նպատակն է նախանշել հայկական երկու տնտեսությունների զարգացման ուղիները կայունության հիմնահարցերի ուսումնասիրման միջոցով:

Բանալի բաներ- Ազգային տնտեսության կայունություն, ազգային տնտեսության դիմակայություն, համաշխարհային տնտեսական աճ, համաշխարհային գործազրկության մակարդակ, համաշխարհային ինֆլյացիա, համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամ, համաշխարհային արտաքին պարտք, ազգային կարողություններ:

Шушаник Асрян
 к.э.н. доцент кафедры экономической
 теории и управления АРГУ.

ПРОБЛЕМЫ ОБЕСПЕЧЕНИЯ СТАБИЛЬНОСТИ НАЦИОНАЛЬНОЙ ЭКОНОМИКИ В СОВРЕМЕННЫХ УСЛОВИЯХ

Новые явления медленного восстановления национальных экономик, обусловленные финансово-экономическим мировым кризисом. В условиях глобального изменения мировой экономики и взаимозависимости стран, а также новых рисков геополитических изменений и обострения социально-экономических проблем, возникают вопросы переосмысления стабильности национальных экономик.

В статье изучены проблемы стабильности экономик Армении и НКР и намечены пути ее обеспечения.

Ключевые слова: Стабильность национальной экономики, сопротивление национальной экономики, мировой экономический рост, мировой уровень безработицы, мировая инфляция, мировой финансово-экономический кризис, мировой внешний долг, национальные возможности.

Shushanik Asryan,
 Associate professor, Ph.D. of the Department of the Theory of Economics and
 Management of Artsakh State University.

ISSUES OF ENSURING NATIONAL ECONOMIC STABILITY IN MODERN CONDITIONS

The developments caused by global financial and economic crisis and the new realities of the slow process of recovery of national economies and the global economy during post-crisis, the interdependence of states in global social system and the global changes in the conditions of acute social and economic problems caused by new geopolitical risks put forward rethinking issues of economic stability. The aim of the article is to indicate the ways of stability of the latter's development through study of stability issues of the two Armenian economies.

Key-words: stability of national economy, resistance of national economy, world economic growth, world unemployment rate, world inflation, the global financial-economic crisis, world external debt, national capabilities.

Ժամանակակից մակրոտնտեսական վերլուծություններում ազգային տնտեսության անվտանգության ապահովումը դիտարկվում է ըստ տնտեսական անկախության, ինքնազարգացման և առաջընթացի ընդունակության ու կայունության բաղադրիչի:

Որոշ տնտեսագետների կարծիքով տնտեսության կայունությունը ենթադրում է տնտեսական համակարգի բոլոր տարրերի կայունություն և ամրություն, բոլոր սեփականությունների պաշտպանություն, ապակայունացնող տարրերի զսպում: «Կայունությունը» տնտեսական համակարգի այնպիսի իրավիճակ է, երբ տնտեսական ցուցանիշները պահպանվում են ցանկացած պայմաններում: Որպես կայունության ցուցանիշներ կարող են լինել բյուջեի եկամուտները, արժույթի կուրսը և այլն:

Տնտեսության կայունությունը նպաստում է տնտեսության «դիմակայության» բարձրացմանը, այսինքն՝ տնտեսության կողմից դիմակայության աճին՝ ինչպես զարգացման արտաքին գործոնների, այնպես էլ՝ ներքին

գործոնների փոփոխությունների նկատմամբ:

Տնտեսության կայունությունը փոխառնչվում է նաև համակարգի հավասարակշիռ վիճակի հետ, երբ պահպանվում են համակարգի տարրերի միջև հիմնական համամասնությունները, հարաբերակցությունը: Հետևապես, հավասարակշիռ վիճակը բխում է տնտեսության կայուն վիճակից: Տնտեսական համակարգի հավասարակշիռ իրավիճակի հիմնական, կարևոր բնութագրիչներից է արտադրության ճյուղերի համամասնական աճը: Մյուս կողմից կարելի է նշել, որ հավասարակշռվածությունը տնտեսության կայունության հիմքն է: Տնտեսական համակարգի կայունության, հավասարակշռվածության վիճակները ամենին էլ չեն նշանակում, որ համակարգը գտնվում է լճացման մեջ և չի զարգանում կամ առաջընթաց չի արձանագրում: Բացի կայունությունից՝ տնտեսական համակարգը բնորոշվում է նաև ցուցանիշներով, որոնք արտահայտում են համակարգի զարգացումը, դրանք են՝ տնտեսական աճը, ՀՆԱ-ում ներդրումների տեսակարար կշիռը, բնակչության եկամուտների աճը և այլն: Կարծում ենք՝ կայուն զարգացման դեպքում խոսքը տվյալ ցուցանիշների կայուն փոփոխությունների մասին է:

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով պայմանավորված զարգացումները և ազգային տնտեսությունների վերականգնման դանդաղ ընթացքի նոր իրողությունները առաջադրում են տնտեսության կայունության վերախնամախոսական անհրաժեշտություն:

Ազգային տնտեսություններում սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների սրացումը, պայմանավորված համաշխարհային տնտեսության գլոբալ փոփոխություններով, փաստում է համաշխարհային տնտեսության դերը ազգային տնտեսությունների կայունության ապահովման գործընթացում: Այդ առումով կարևոր է անդրադառնալ համաշխարհային զարգացումների վերջին միտումներին՝ որպես ազգային տնտեսության կայունության վրա ազդող արտաքին գործոնների:


Ըստ Համաշխարհային բանկի վերլուծաբանների՝ տնտեսական աճի տեմպերը զարգացող երկրներում 2015թ. կկազմեն 4,4 տոկոս, 2016թ. այդ ցուցանիշը կհասնի մինչև 5,2 տոկոսի, իսկ 2017թ.՝ 5,4¹ տոկոսի:

Համաշխարհային տնտեսության զարգացման դիտարկումները հետճգնաժամային ժամանակահատվածում ցույց են տալիս, որ 2014թ. ֆինանսական տարվա վերջում համաշխարհային տնտեսությունը աստիճանաբար դուրս եկավ մեծ ռեցեսիայից, սակայն տնտեսական աճը շատ դանդաղ է, և աճի միջճգնաժամային տեմպերը դեռևս չեն վերականգնվել: 2015թ. համաշխարհային ՀՆԱ-ի աճի տեմպը կազմել է 3%², որը զիջում է թե՛ կանխատեսվող և թե՛ նախաճգնաժամային աճի համապատասխան ցուցանիշին, ինչը բացատրվում է նավթի գների անկմամբ և աշխարհաքաղաքական լարվածության գործոններով:

Ըստ Համաշխարհային բանկի՝ եվրոպական երկրներում զգալիորեն կրճատվել են կրիտիկական իրավիճակներ առաջանալու ռիսկերը, և գրանցվող տնտեսական աճը վերականգնում է հասարակության վստահությունը բանկային համակարգի նկատմամբ: Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում դա պայմանավորված է նաև անուղղակի ազդեցություններով, այդ թվում Ռուսաստանի շուրջ ստեղծված իրավիճակով: Ընդհանուր առմամբ զարգացող երկրների աճի տեմպերի թուլացման արտաքին հիմնական գործոններ են համարվում ***նավթի գների անկման և Ամերիկյան դաշնային պահուստային համակարգի կողմից տոկոսադրույքների բարձրացման հետևանքով զարգացող տնտեսությունների համար վարկերի արժեքի բարձրացման ազդեցությունները*** :

¹<http://www.data.worldbank.org>


². <http://www.tradingecenemics.com>



Գծապատկեր 1. Համաշխարհային, ՀՀ, ԼՂՀ և Ադրբեջանի ՀՆԱ-ի աճի տեմպերը %-ով:

Հետզհետե աճի հիմնական առանձնահատկությունն այն է, որ անընդհատ փոխվում են աճի գործոնները:

Համաշխարհային տնտեսության կայունության բնութագրիչներից գործազրկության մակարդակը և բարձր է և չի հաղթահարել հետզհետե աճի սկզբնական մակարդակը: Այն 2015թ. արձանագրել է 2008թ. ցուցանիշը՝ կազմելով 8%:




Գծապատկեր 2- Համաշխարհային տնտեսության, ՀՀ, ԼՂՀ և Ադրբեջանի գործազրկության մակարդակը, %-ով :

Համաշխարհային տնտեսության կայունության հաջորդ կարևորագույն բնութագրիչը կարելի է համարել համաշխարհային պետական պարտքի տեսակարար կշիռը համաշխարհային ՀՆԱ-ում: Ինչպես տեսնում ենք գծապատկեր 3-ից , 2008թ. ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո համաշխարհային պետական պարտքի


տեսակարար կշիռը համաշխարհային ՀՆԱ-ում կտրուկ աճել է և գերազանցել համաշխարհային տնտեսության անվտանգության համապատասխան ցուցանիշը: Նախորդ տարիների աճից հետո նվազման որոշ միտումները 2015թ. վերափոխվեցին աճի, և ցուցանիշը կազմեց 59,0%:

Համաշխարհային տնտեսության աճի տեմպերի թուլացման և համաշխարհային պետական պարտքի աճի դրական դինամիկայում կայան ակնհայտ է:



Պատկեր 3- Համաշխարհային պետական պարտքը՝ %-ով համաշխարհային ՀՆԱ-ի նկատմամբ, ՀՀ-ի, Ադրբեջանի պետական պարտքը ՀՆԱ-ի նկատմամբ:

Նավթի համաշխարհային գների անկման, համաշխարհային անբավարար պահանջարկի պայմաններում համաշխարհային գնաճը զգալի ցածր է: Այն 2015թ. կազմել է 3,8%¹:



Պատկեր 4- Համաշխարհային, ՀՀ, ԼՂՀ Ադրբեջանի ինֆլացիայի, մակարդակը:

Համաշխարհային տնտեսության կայունության բնութագրիչների դիտարկումները ցույց են տալիս, որ, իսկապես, համաշխարհային տնտեսության զարգացման տեմպերը նկատելիորեն թուլանում են, իսկ տնտեսության կայունության ապագա խաթարման ռիսկերը, հակառակը, դրսևորվում են առավել ցայտուն: Հետևապես, այդ իմաստով ազգային տնտեսությունների կայունության վրա համաշխարհային տնտեսության բացասական ազդեցությունները մոտ ապագայում շարունակվելու են:

Համաշխարհային տնտեսական իրավիճակի ազդեցությունը՝ պայմանավորված նավթի համաշխարհային գների անկմամբ, առավել մեծ է Ադրբեջանի տնտեսության վրա: Տնտեսական դիտարկվող ցուցանիշներով այն դրսևորում է առավել բարձր անկայունության մակարդակ, քան համաշխարհային տնտեսությունը, ինչպես նաև ՀՀ-ն ու ԼՂՀ-ն:

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությամբ Հայաստանում ՀՆԱ-ն 2009թ. գրանցեց 14.1 տոկոս անկում: Ճգնաժամը դադարեց 2010թ., երբ համաշխարհային տնտեսությունը, այդ թվում նաև Հայաստանը, որտեղ գրանցվեց 2.2 տոկոս տնտեսական աճ, մտան վերականգնման փուլ:

ՀՀ՝ մինչ ճգնաժամը (2002–2008թթ.) ձևավորված տնտեսական աճի մոդելը հիմնված էր տարբեր աճող արտաքին ֆինանսավորման վրա (օտարերկրյա ուղղակի ներդրումների, պաշտոնական և ոչ պաշտոնական տրանսֆերտների): Մակայն երկնիշ տնտեսական աճը չհանգեցրեց ներմուծման կրճատման, այլ հակառակը՝

¹ <http://www.data.worldbank.org>

առաջանցիկ աճի, որն էլ բերեց ներքին շուկայում տեղական արդյունաբերական արտադրանքի մրցունակության աստիճանի նվազմանը, ոչ գյուղատնտեսական զբաղվածության աճի գրեթե բացակայությանը, արտաքին առևտրում թե՛ արտահանման հարաբերական և թե՛ բացարձակ կրճատմանը: Նշված պայմաններում երկրի տնտեսական զարգացման հիմնական շարժիչ ուժը դարձան շինարարությունը և ծառայությունների ոլորտը, որոնց գումարային տեսակարար կշիռը ՀՆԱ-ում, 2002 թ. 56.9 տոկոսից աճելով, 2008 թվականին համապատասխանաբար կազմեց է 63.8 տոկոս: Մինևույն ժամանակ, արդյունաբերության և գյուղատնտեսության գումարային տեսակարար կշիռը, 2003 թ. 47,0 տոկոսից կրճատվելով, 2008թ. կազմել է 29.7 տոկոս:

ՀՀ տնտեսական աճը 2015-ի ընթացքում կազմել է 3% կանխատեսվող 4.1%-ի փոխարեն: Հարցն այն է, որ համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանքով էականորեն փոխվել է ՀՀ տնտեսության առկա ճյուղային կառուցվածքը, որտեղ շինարարության տեսակարար կշռի կրճատումը ուղեկցվել է մնացած բոլոր մակրոոլորտների տեսակարար կշիռների աճով: Ներկա կառուցվածքը, լինելով ավելի քիչ կախված արտաքին ֆինանսավորման ծավալներից, թեև առավել կայուն է՝ համեմատած նախաճգնաժամային կառուցվածքի հետ, սակայն միաժամանակ չի կարող ապահովել շատ բարձր աճի տեմպեր, ինչը նկատելի էր նախորդ մոդելում: Պատճառը շինարարության ծավալների և տնտեսական աճում ներդրումների կտրուկ կրճատումն է՝


Սակայն ԼՂՀ-ում ճգնաժամային երևույթները էական ազդեցություն չունեցան տնտեսական աճի վրա: Եթե ՀՀ-ում վերականգնողական աճը շարունակվել է 2011-2013թթ. և կազմել 5.1 տոկոս, ապա ԼՂՀ-ում այդ նույն ժամանակահատվածում միջին տնտեսական աճը կազմել է 9,6%: Աճը հիմնականում տեղի է ունեցել ծառայությունների հաշվին, իսկ շինարարության ազդեցությունը դրսևորվել է անկայուն ձևով:

ԼՂՀ 2015թ. համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) կազմել է 209,3 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նկատմամբ արձանագրելով 9,1% աճ²: Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն կազմել է 1 մլն 414,3 հազ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա 1 մլն 268,1 հազ դրամի դիմաց:

2015թ.ին պետական բյուջեի սեփական եկամուտները կազմել են տարվա ծրագրով նախատեսված մուտքերի մակարդակի 92,7%-ը: Պետական բյուջեի փաստացի ծախսերը կազմել են 83 մլրդ 107,7 մլն դրամ, որը նախատեսված ծրագրի 94,7%-ն է:

ԼՂՀ-ում գործազրկության պաշտոնական մակարդակը ցածր է գործազրկության բնական մակարդակից, իսկ ինֆլյացիայի մակարդակը համահունչ է չափավոր ինֆլյացիայի մակարդակին:

ԼՂՀ տնտեսության համար մակրոտնտեսական ցուցանիշների կայուն մակարդակի ապահովման համար որպես անվտանգության գործոն է ծառայել միջպետական վարկը:



Գծապատկեր 5- ԼՂՀ միջպետական վարկի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի նկատմամբ

ԼՂՀ տնտեսական աճը պետք է լինի կայուն, դիվերսիֆիկացված՝ ըստ աճի ճյուղային կառուցվածքի, թողարկվող արտադրանքի և ծառայությունների տեսականու, վերջիններիս՝ սպառողների բազմազանության: Այն պետք է լինի էական ու առաջանցիկ՝ նկատի ունենալով ԼՂՀ-ում միավոր աշխատուժին ընկնող բնական ռեսուրսների ավելի մեծ գործակիցը, քան Հայաստանում: ԼՂՀ տնտեսական աճը պետք է խորացնի կոռպորացիան ԼՂՀ և ՀՀ տնտեսավարող սուբյեկտների միջև, իրապես ինտեգրացնի հայկական միավորների տնտեսությունները, ինչպես նաև ապահովվի մրցունակ աշխատատեղերի հաշվին, նպաստի արտագաղթի թուլացմանը, խթաններ ստեղծի Հայաստանից ԼՂՀ ներգաղթի համար:

Ելնելով տնտեսական ներկա անկայունության վիճակից, արտաքին ֆինանսավորման և դրանով պայմանավորված ներքին պահանջարկի աճի վրա հիմնված տնտեսական աճի մոդելը չի կարող պահպանվել

¹ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն
² ԼՂՀ Ազգային վիճակագրական ծառայություն

երկարաժամկետ հեռանկարում. անհրաժեշտ է աստիճանական անցում կատարել ապրանքների և ծառայությունների արտահանման առաջանցիկ աճի վրա հիմնված տնտեսական զարգացման մոդելի, որի արդյունքում աստիճանաբար կարող է նվազել երկրի կախվածությունը արտաքին ֆինանսավորումից, և տնտեսությունը կկողմնորոշվի դեպի ապրանքների արտահանման մոդել:

Արցախում ապրիլյան ռազմական գործողությունները հասցրեցին ինչպես մեծ նյութական վնասներ, այնպես էլ տնտեսավարող սուբյեկտների սպասումների և հետևապես, նաև՝ նրանց հետագա տնտեսական գործունեության վրա:

Հաշվի առնելով նախանշված նպատակները և ելնելով երկրի զարգացման ներկա փուլի առանձնահատկություններից՝ կարող ենք նշել, որ տնտեսական ճգնաժամը, ինչպես նաև տնտեսական զարգացման վերջին իրադարձությունները ի հայտ են բերել նոր գլոբալ մարտահրավերներ, որոնց պայմաններում կարևորվում է երկրի երկարաժամկետ զարգացման ռազմավարության վերանայումը:

Նոր ռազմավարական ծրագրի մշակումը կարևոր է նաև ինչպես տնտեսական քաղաքականության, այնպես էլ դրա գործիքակազմի նկատմամբ տեսակետների փոփոխության պատճառով, ինչ դրսևորվել է համաշխարհային տնտեսական ճգնաժամի ժամանակ և շարունակվում է մինչ այժմ՝ հիմնականում շեշտադրելով պետության կարգավորիչ դերի և «ուղղակի» քաղաքականության նշանակության մեծացման կարևորությունը: Այդ

առումով կայուն զարգացման ազգային ծրագրի ընդունումը կարող է հետճգնաժամային ռազմավարական համակարգված շրջանակ ապահովել Կառավարության քաղաքականությունների ձևավորման համար: Այն Կառավարությանը հնարավորություն կտա միավորելու ազգային կարողությունները երկրի երկարաժամկետ զարգացման տեսլականի ձևավորման շուրջ՝ հաշվի առնելով կուտակված փորձը, առկա պայմաններն ու գլոբալ զարգացման մարտահրավերները: Միայն այդպիսի ծրագրի իրականացումը կարող է երաշխավորել հասարակության յուրաքանչյուր անդամի սեփական պետության կողմից պաշտպանված և սոցիալապես ապահովված լինելու անվերապահ ընկալման ամրապնդումը:

Գրականության ցանկ

1. Եղիազարյան Աշոտ Արծրունի, Հայ-ռուսական սլավոնական համալսարան, «Հայաստանի տնտեսության կառուցվածքային հիմնախնդիրները տարածաշրջանային զարգացումներում», Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» և Ը.00.06 «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտություններով տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության Մեղմնագիր, Երևան, 2014թ.:
2. ԼՂՀ Կառավարության 2015-2017թթ. գործունեության ծրագիր:
3. Հայաստանի հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր:
4. И. П. Воробьева., Устойчивость экономики и проблемы ее обеспечения в современной России, Вестник, Томский государственный университет №1(17),2012 г..
5. Петров В.К., Селеванов С.Г., Устойчивость государства. М.: Экономика,2005 год.
6. arm.stat.am
7. stat.nkr.am
8. <http://www.tradingecenemics.com>
9. <http://www.data.worldbank.org>

ՀՏԴ 339.9

Արտաքին տնտեսական քաղաքականություն

Աշոտ Եղիազարյան
ՀՊՏՀ, միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական
Գործունեության կազմակերպում ամբիոնի
դոցենտ, տնտեսագիտության դոկտոր

**ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ և ՊԱՐՍԻԳ ԾՈՑ-Սև ԾՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋԱՆՅՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ
ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԻՐԱՆԱՎԱՆ ԴԻՏԱՆԿՑՈՒՆԻՑ**

Միջազգային տրանսպորտային միջանցքները որոշիչ դեր են խաղում դրանցում ընդգրկված պետությունների համագործակցության ու զարգացման հարցում: Այդպիսի միջանցքները որոշակի աշխարհատնտեսական տարածքների ձևավորման առանցքներն են:

Սույն հոդվածում բացահայտվել են Հյուսիս-Հարավ և Պարսից ծոց – Սև ծով միջազգային տրանսպորտային միջանցքների հիմնական առանձնահատկությունները և զարգացման հեռանկարները, ինչպես նաև դրանց և դրանցում ընդգրկված երկրների նկատմամբ Իրանի հետաքրքրությունների հիմնական ասպեկտները: Ներկայացված են նաև տրանսպորտային միջանցքում ընդգրկված երկրների նկատմամբ Իրանի հետաքրքրությունների հիմնական ասպեկտները

Բանալի բառեր՝ տրանսպորտ, միջանցք, Պարսից ծոց, Սև ծով, այլընտրանք:

Ashot Yeghiazaryan
Doctor of Economic Sciences,
Associated Professor of the Armenian State Economic University

**THE PROSPECTS OF THE INTERNATIONAL TRANSPORT CORRIDORS NORTH-SOUTH AND THE PERSIAN SEA
BLACK SEA FROM THE POINT OF VIEW OF IRAN**

International transportation corridors are very important for countries that are involved in that network and have an important meaning for the development and cooperation between them. Such corridors are the basis of creation of some geoeconomic areas.

This article discusses “North-South” and “Persian Gulf”-“Black Sea” international transportation systems, their major features and development perspectives. There are also introduced interests from Iran to the countries that are in that transportation corridors.

Key words: transport, corridor, Persian Gulf, Black sea, alternative.

Ашот Егиазарян
доктор экономических наук,
доцент Армянского государственного
экономического университета

**ПЕРСПЕКТИВЫ МЕЖДУНАРОДНЫХ ТРАНСПОРТНЫХ КОРИДОРОВ СЕВЕР-ЮГ И ПЕРСИДСКИЙ ЗАЛИВ-
ЧЕРНОЕ МОРЕ С ТОЧКИ ЗРЕНИЯ ИРАНА**

Международные транспортные коридоры играют решающую роль в сотрудничестве и развитии государств, входящих в нее. Такие коридоры являются осью формирования определенных геоэкономических пространств.

В данной статье раскрыты основные особенности и проблемы развития международных транспортных коридоров “Север-Юг” и “Персидский залив – Черное море”. Также представлены основные аспекты заинтересованности Ирана по отношению к этим коридорам и входящих в нее государств.

Ключевые слова: транспорт, коридор, Персидский залив, Черное море, альтернатива.

Հյուսիս-Հարավ միջազգային տրանսպորտային միջանցքը

2000թ. սեպտեմբերի 12-ին Սանկտ-Պետերբուրգում կայացած երկրորդ եվրասիական տրանսպորտային համաժողովի ընթացքում Ռուսաստանի, Իրանի և Հնդկաստանի միջև ստորագրվեց Հյուսիս-Հարավ միջազգային տրանսպորտային միջանցքի ստեղծման մասին համաձայնագիր: Իսկ 2002թ. մայիսին ստորագրվեց միջանցքի

պաշտոնական բացման մասին արձանագրությունը: Հետագայում նախագծին միացան Ադրբեջանը, Հայաստանը, Բելառուսը, Ղազախստանը, Օմանը, Սիրիան: Միանալու դիմումներ են տվել Թուրքիան և Ուկրաինան: «Հյուսիս-հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքը կոչված էր ապահովելու տրանսպորտային կապը Բալթյան երկրների և Հնդկաստանի միջև՝ Իրանի և Ռուսաստանի միջոցով, ավելացնելու այդ հսկայական տարածաշրջանի երկրների միջև ապրանքաշրջանառությունը, ինչպես նաև նպաստելու նրանց տնտեսական և մշակութային կապերի ամրապնդմանը:

Միջանցքը նախատեսում է երեք հիմնական երթուղիներ. տրանսկասպյան (Աստրախան, Օլյա, Մախաչկալա նավահանգիստներով), արևելյան (ուղղակի երկաթուղային հաղորդակցություն Ղազախստանով, Ուզբեկստանով և Թուրքմենստանով՝ Թեջեն-Մերախ սահմանային անցման միջոցով դուրս գալով Իրանի երկաթուղային ցանց) և արևմտյան (Աստրախան-Մախաչկալա-Մամուր ուղղություն, հետո Ադրբեջանի տարածքով մինչև պլանավորվող սահմանային Աստրախ կայարան):

Սկզբնական շրջանում Հնդկաստանից բազմաթիվ կոնտեյներներ տեղափոխվեցին այդ միջանցքով: Հետո տեխնիկական և քաղաքական բարդությունների պատճառով Հյուսիս-Հարավ միջանցքը սահմանափակվեց Ռուսաստան-Իրան-Ռուսաստան երթուղով: Ռուսաստանը պետք է արդիականացներ աստրախանյան տրանսպորտային հանգույցը, զարգացներ նավահանգստային հզորությունները, որը հնարավոր էր Օլյա նավահանգստի ընդլայնման միջոցով: 2004թ. կառուցվեց երկաթուղագիծ մինչև Օլյա նավահանգիստ: Սակայն, Օլյա նավահանգստի հզորությունը այդպես էլ չհասցվեց նախագծային 8 մլն. տոննայի: Ներկայումս նավահանգստի հզորությունը կազմում է 2.65 մլն. տոննա: Նույնիսկ այդ հզորությամբ այն չի աշխատում: Նավահանգստում մշակվում են աննշան քանակությամբ բեռներ: Այդ նավահանգիստն այդպես էլ չդարձավ “դարպասներ դեպի Հնդկաստան”: Փոխադրումները Հնդկաստանից Աստրախանի միջոցով նույնպես սառեցվեցին: Այսօր “Հյուսիս-Հարավ” տրանսպորտային միջանցքում ձևավորվել է մոտավորապես հետևյալ պատկերը: Եթե նախագծի իրականացման սկզբնական շրջանում ենթադրվում էր, որ հիմնական բեռնահոսքերը կկազմեն Ռուսաստանի տարածքով տարանցումային բեռները Հնդկաստանից դեպի Հյուսիսային և Արևմտյան Եվրոպա, և հակառակ ուղղությամբ, ապա այսօր միջանցքի գործունեությունը հիմնականում հենված է ռուս-իրանական բեռնաշրջանառության վրա: Հարավից գնում են միայն որոշ քանակությամբ հնդկական բեռներ, իսկ հակառակ հոսքը գրեթե բացակայում է: Տրանսպորտային միջանցքը սպասարկում է հիմնականում դեպի Իրան և Պարսից ծոց բեռնահոսքերը, որի 70 տոկոսը սև մետաղներ են: Ռուսաստանի երկաթուղիներով արտաքին առևտրային բեռների փոխադրման ծավալները Հյուսիս-Հարավ միջանցքի շրջանակներում 2015թ. կազմել է 7,3 մլն. տոննա[1]: Այսպիսով, եթե 2000-ական թվականների սկզբում Մոսկվան չափազանց հավակնոտ պլաններ ուներ Հյուսիս-Հարավ միջազգային տրանսպորտային նախագծի ապագայի առումով և մտադիր էր ներգրավել խոշոր տարանցումային բեռնահոսքեր, ապա հիմա հաստատապես կարելի է պնդել, որ մեծ հաշվով միջանցքի նախագիծը շատ հեռու է իրագործված համարվելու համար՝ իր սկզբնական նպատակների և հավակնությունների ամբողջ մեծության տեսանկյունից: Մոսկվային այդպես էլ չհաջողվեց ստեղծել լիարժեք տրանսպորտային միջանցք: Նախագիծը ընդգրկող երկրների մեծ մասի աշխարհաքաղաքական շահերի վերակողմնորոշման պատճառով այն փաստացի դուրս չեկավ պլանավորման փուլից իրագործման փուլ:

Նախագծի շրջանակներում Իրանը դեռ նախորդ նախագահ Ահմադինեջաթի ժամանակ պլանավորում էր կառուցել Կասպից ծովը Պարսից ծոցին միացնող տրանսիրանական ջրանցքը: Ակնկալվում էր, որ այն շահագործման կհանձնվի 2020-ական թվականներին: Իր հերթին Մոսկվան ակնկալում էր, որ այն կմիացվի Վոլգա-Դոն ջրանցքին՝ միացնելով Կասպից և Սև ծովերը (ռուս-իրանական համատեղ նախագիծը հայտնի է Եվրասիա ջրանցք անվանումով): Ջրանցքը կարող էր ռազմավարական նշանակություն ունենալ ռուս-իրանական հարաբերությունների համար: Տրանսիրանական ջրանցքը, կամ ինչպես այն հաճախ իրանցիները անվանում են “իրանական մեծ գետ”, բավական թանկ նախագիծ է: Ըստ Իրանի էներգետիկայի նախկին նախարարի, 2012թ. կատարած հաշվարկների համաձայն նախագիծը կարժենա 7 մլրդ. դոլար[2]: Բացի այդ, այս նախագիծը բախվում է բազմաթիվ այլ հիմնախնդիրների հետ: Նախատեսվում է ջրանցքի միջոցով Կասպից ծովից ջուր տեղափոխել Իրանի կենտրոնական մասեր՝ գյուղատնտեսության համար ջրի դեֆիցիտի հիմնախնդիրը լուծելու համար: Բայց այն հղի է բացասական հետևանքներով՝ բնապահպանական համակարգի խախտման և կլիմայի փոփոխության առումներով: Երբ ջրանցքը կառուցվի, անհրաժեշտ կլինի ինչ որ կերպ տարանցիկ կապեր հաստատել ջրանցքից արևելք և արևմուտք ընկած տարածքների միջև, ինչը պահանջում է լրացուցիչ ներդրումներ և բարձրացնում նախագծի առանց այդ էլ բարձր գինը: Որպեսզի ջրանցքը լինի նավարկելի, այն պահանջում է մեծ խորություն և լայնություն, ինչը շինարարության համար մեծ դժվարություններ է ստեղծում՝ հաշվի առնելով բարձրության տարբերությունը Կասպից և Պարսից ծոցի միջև ընկած շրջաններում: Այս ամենը լուրջ արգելքներ են նախագծի արդիականության հիմնավորման համար:

Արևելակասպիական ուղղությամբ 2015թ. վերջին շահագործման հանձնվեց Իրան-Թուրքմենստան-Ղազախստան 677 կմ-ոց երկաթգիծը, որը 600 կմ-ով կարճ է, քան Մերախսով անցնող գիծը: Ներկայումս միջանցքի այդ ուղղությունը ակտիվորեն օգտագործում է Ղազախստանից Իրան հացահատիկ արտահանելու համար:

Արևմտակասպիական երթուղին պահանջում էր Կազվին-Ռեշտ-Էնգելի երկաթուղային գծի կառուցում, ապա դրա ձյուղավորում մինչև Ադրբեջանի սահման: Թեհրանի և Բաքվի միջև ստորագրված “Մահմանային երկաթուղային գծի

մասին” համաձայնագրով Իրանը նախագծում էր կառուցել 101 կմ-ոց երկաթուղագիծ մինչև իրանական Աստարա: 205 կմ-ոց Կազվին-Ռեշտ երկաթգծի բացումը պլանավորված է ընթացիկ տարում (իրանական օրացույցով): Նախնական տվյալներով դրա թողունակությունը կկազմի տարեկան 5-7 մլն. տոննա բեռ: Ռեշտ-իրանական Աստարա հատվածը դեռ գտնվում է նախագծային փուլում[3]:

Պարսից Օոց – Սև ծով միջազգային տրանսպորտային միջանցքը

Հատկանշական է, որ վերջերս Իրանի ճանապարհների և քաղաքային զարգացման նախարարը հայտարարեց, որ Թեհրանը փորձում է իրանական Ռեշտ քաղաքը երկաթգծով միացնել Թուրքիայի և Հայաստանի քաղաքներին և Նախիջևանին[4]: Կարելի է ենթադրել, որ Իրանի համար կարևորվում է երկրի երկաթուղային ցանցի էլքերը Թուրքիայի և Հայաստանի ուղղությամբ (Նախիջևան-Հայաստան անցումը փակ է քաղաքական պատճառներով), ինչը վկայում է Թեհրանի արտաքին առևտրային քաղաքականությունում եվրոպական վեկտորի գերակայությունը ռուսականի նկատմամբ պատժամիջոցների վերացումից հետո: Թեհրանի քաղաքականությունում նման արմատական փոփոխությունը իր հերթին ենթադրում է Հյուսիս-Հարավ տրանսպորտային միջանցքի առնվազն արևմտակասպիական ուղղության ոչ միայն տնտեսական, այլև աշխարհաքաղաքական նշանակության էական նվազեցում:

Մինչև պատժամիջոցների հանումը Թեհրանի դիրքորոշումը հանգում էր նրան, որ Իրանը կարող էր ավելի արդյունավետ օգտագործել տարանցման իր ամբողջ ներուժը տարածաշրջանում՝ կարևոր դեր խաղալով Հնդկաստանից և Պարսից ծոցի երկրներից Կենտրոնական Ասիայի, Կովկասի և Ռուսաստանի միջոցով դեպի Եվրոպա բեռների փոխադրման հարցում: Դեպի Եվրոպա բեռնափոխադրումների հոսքի ապահովման նպատակով Իրանը մեծ աշխատանքներ էր իրականացրել Պարսից ծոցի և Կասպից ծովի նավահանգիստների զարգացման համար, ընդլայնել էր երկաթուղային ցանցը, մասնավորապես կառուցել էր 1500 կիլոմետրանոց Չաբահար-Սերախս երկաթգիծը, հաստատել էր ճանապարհային շարժի անվտանգության 2010-2019թթ. ռազմավարական պլանը: Իրանը և Հնդկաստանը 2015թ. մայիսին մի քանի տարվա բանակցություններից հետո ստորագրել են համաձայնագիր Չաբահար նավահանգստի զարգացման համար: Այդ նավահանգիստը Հնդկաստանը կկապի Աֆղանստանի և Կենտրոնական Ասիայի հետ: Հնդկաստանը Չաբահարում վարձակալել է երկու տերմինալ և հինգ կառանատեղեր, դրանցում պետք է ներդնի 200 մլն. դոլար[5], որպեսզի վերջիններս վերածվեն բազմանպատակային կոնտեյներային և բեռնային տերմինալների:

Պատժամիջոցները հանելուց հետո Իրանի հավակնությունները մեծացել են, արմատապես վերանայվում են նաև գերակայությունները: Արևմտյան մամուլը գրում է, որ Իրանը կարող է նոր ուղի լինել Մերձավոր Արևելքում շնորհիվ իր դիրքի, անվտանգության բարձր մակարդակի, տնտեսության դիվերսիֆիկացիայի և կրթված աշխատուժի: Շատերը այն կարծիքին են, որ Իրանը ոչ թե պարզապես 78 մլն. բնակչությամբ շուկա է, այլ հանդես է գալիս որպես առևտրային հանգույց 300 մլն-ոց շուկայի համար, մուտք ապահովելով արաբական պետությունների համար՝ հարավում և արևմուտքում, Կենտրոնական Ասիայի համար՝ հյուսիսում և Աֆղանստանի ու Պակիստանի համար՝ արևելքում[6]:

Իրանը ձգտում է վերածվել առևտրային հանգույցի ոչ միայն Մերձավոր Արևելքի և Ասիայի երկրների, այլև նրանց Եվրոպային կապելու համար: Թեհրանն առաջ է քաշել Պարսից ծոց - Սև ծով կամ Իրանը, Հայաստանը, Վրաստանը և Բուլղարիան կապող նոր տրանսպորտային միջանցքի ստեղծման նախագիծը: Բուլղարիան համաձայնվել է միանալ նախագծին՝ օգտագործելով իր Վառնա և Բուրգաս նավահանգիստները: Անհրաժեշտության դեպքում Վառնայում և Բուրգասում կկառուցվեն մասնագիտացված տերմինալներ: Ընթացիկ տարում այս երկրների փորձագետներն արդեն երկու հանդիպում են ունեցել (Թեհրանում և Սոֆիայում)՝ նախագծի մանրամասները քննարկելու համար: Մասնավորապես քննարկվում են Մերձավոր Արևելքի և Բալկանյան թերակղզու միջև բեռնափոխադրումների համար բարենպաստ պայմանների ստեղծման հարցեր:

Բացի այդ, տվյալ տրանսպորտային միջանցքի շրջանակներում Իրաքը և Սիրիան նույնպես դիտարկվում են որպես նոր շուկաներ: Իրանը ծանոթ է իրաքյան մշակույթին և շուկային, այդ պատճառով կարող է նրա համար ծառայել որպես Եվրոպային կապող առևտրային գոտի: Իրանը կապող օդակ կարող է լինել նաև Սիրիայի համար՝ պատերազմի ավարտից հետո: Չի բացառվում նաև միջանցքին Հնդկաստանի և Օմանի հնարավոր անդամակցությունը:

Նոր միջանցքը նախատեսված է իրանական բեռնատարների համար, որոնք պետք է անցնեն Հայաստանով և Վրաստանով, որպեսզի հասնեն Սև ծով, որտեղից էլ կարող են տեղափոխվել Բուլղարիա, Հունաստան և նույնիսկ Իտալիա, օգտագործելով roll-on/roll-off (RORO) նավեր: Մերձավոր Արևելքում լարվածությունը բարձրացնում է միջանցքի կարևորությունը և դերը: Իրանը կարող է Հունաստան դուրս գալ Թուրքիայի տարածքով ձգվող ավտոմոբիլային երթուղով: Սակայն, ձգտում է ունենալ զուգահեռ ճանապարհներ իր բեռնատարների համար, որպեսզի դիվերսիֆիկացնի և մեծացնի հնարավորությունները: Թուրքիային այլընտրանքային երթուղին կարևոր է ոչ միայն երկու երկրների սահմանին հաճախ առաջացող հերթերի, այլև քաղաքական անկայության և աշխարհատնտեսական պատճառներով: Օրինակ, վերջերս սահմանամերձ քրդաբնակ Բազարգանիում վառվեցին բեռնատարներ և ավտոբուսներ: Իրանը պաշտոնապես փոխհատուցում պահանջեց Թուրքիայից, սակայն գործընթացը մնացել է անարդյունք: Ինչ վերաբերում է երկաթուղային հաղորդակցությանը, ապա Թուրքիայի

տարածքով Իրանից դեպի Եվրոպա տանող երկաթգծի թողունակությունը շատ փոքր է և ունի լաստանավային անցում Վանա լճի վրայով, ինչը գործնականում անհնար է դարձնում դրա օգտագործումը մեծ ծավալի բեռների համար:

Իրանը և Թուրքիան մրցակիցներ են տարածաշրջանում: 1990-ական թվականներին Իրանը առաջարկեց ստեղծել կասպյան երկրների կազմակերպություն (CSO): Այդ նախաձեռնությունը պայմանավորված էր կասպյան ավազանում թուրք-իրանական մրցակցությամբ: Այդ կերպ Իրանը փորձում էր մեկուսացնել Թուրքիային և խուսափել նրա ներթափանցումից տարածաշրջան: Սակայն, Իրանին խանգարում էր միջազգային մեկուսացումը:

Ներկայումս Մերձավոր Արևելքի երկրների և Եվրոպայի միջև կապը ապահովվում է Թուրքիայի միջոցով: Անկարան ձգտում է դառնալ սնծովյան տարածաշրջանի հիմնական խաղացողը և որպես իր տարածաշրջանային հավակնությունների իրականացման գործիք է դիտում Սնծովյան տնտեսական համագործակցության կազմակերպությունը (USZԿ): Թուրքիան փորձում է USZԿ-ն օգտագործել որպես Հարավային Գովկասում և Սնծովյան ավազանում իր ազդեցությունն ավելացնելու և վերջին հաշվով գերիշխելու համար գործիք: Այս կազմակերպության միջոցով Թուրքիան սկսեց կատարել փորձեր՝ Եվրոպայի արտոնյալ գործընկերը դառնալու համար: Սակայն, իրական համագործակցության տեսանկյունից պրակտիկ քայլերը շատ քիչ են, քանի որ կազմակերպությունը տնօրինում է շատ սուղ ֆինանսական ռեսուրսների: Առավել հայտնի ճյուղային տնտեսական նախագծերը կապված են տրանսպորտային ենթակառուցվածքի և էներգետիկայի հետ:

Թեհրանի կողմից առաջ քաշված Պարսից ծոց – Հայաստան – Վրաստան – Սև ծով – Բուլղարիա – Հունաստան միջազգային տրանսպորտային միջանցքի ստեղծման նախագիծն ըստ էության այլընտրանքային է ՄՕՏՀ-ի ինչպես տրանսպորտային, այնպես էլ էներգետիկ փոխադրման ճանապարհներին: Փաստացի այն այլընտրանքային է նաև Հյուսիս-Հարավ տրանսպորտային միջանցքին:

Իրանը և Պարսից Ծոց – Սև ծով միջազգային տրանսպորտային միջանցքի մասնակիցները

Իրան-Հայաստան: Թեհրանը պաշտոնական Երևանին առաջարկել է բոլոր ջանքերը գործադրել Պարսից ծոցը Սև ծովին Հայաստանի տարածքով միացնելու նախագիծը իրականացնելու համար: Ի տարբերություն Թուրքիայի և Ադրբեջանի, Հայաստանի հետ Իրանը քաղաքական հակասություններ և խնդիրներ չունի: Այս նախագծի իրականացումը Հայաստանին փակուղային տրանսպորտային տարածաշրջանից կվերածի տարանցումային: Միաժամանակ, Թեհրանը պատրաստակամություն է հայտնել միջանցքի ստեղծման համար տրամադրել տեխնիկական և ինժեներական ծառայություններ: Ներկայումս Հայաստանը չունի լուրջ ենթակառուցվածքներ իրանական բեռների փոխադրման համար: Վրաստանը և Իրանը կապող Հայաստանի 550 կմ-ոց հիմնական մայրուղիները հարկ է արդիականացնել: Նախատեսվում է, որ այդ նպատակով Եվրասիական զարգացման բանկը կտրամադրի 150 մլն. դոլար փոխառություն, Եվրոպական ներդրումային բանկը՝ 60 մլն. դոլար և Ասիական զարգացման բանկը՝ մոտ 500 մլն. դոլար[7]:

Գոյություն ունի Իրանը Հայաստանին կապող երկաթգծի կառուցման նախագիծ, որի իրագործման դեպքում Պարսից ծոցը և Սև ծովը կկապվեն երկաթուղով: Իրան-Հայաստան երկաթգծի արժեքը ըստ նախնական գնահատումների հասնում է մինչև 3,5 մլրդ. դոլարի: Իրանական Ջուլֆայից մինչև Մեդրի ընկած 90 կմ-ոց հատվածը Իրանը պատրաստ է կառուցել սեփական միջոցներով: Սակայն երկաթգծի կառուցման նախագծի հայկական հատվածը բխվում է Հայկական երկաթուղիների ռուսական կոնցեսիոների դիմադրությանը: Այդ երկաթգիծը Մոսկվայի համար տնտեսական հետաքրքրություն չի ներկայացնում: Ավելին, այն կուժեղացնի Իրանի և ԵՄ ազդեցությունը Հայաստանում և տարածաշրջանում: Բացի Իրանից երկաթուղու շինարարությամբ որոշակի շահագրգռվածություն է ցուցաբերում Չինաստանը: Ժամանակին Հայաստանը Չինաստանին է փոխանցել երկաթգծի շինարարության տեխնիկատնտեսական զեկույցը, որպեսզի վերջինս ուսումնասիրի իր մասնակցության հնարավորությունը նախագծին: Ասիական զարգացման բանկը հետաքրքրություն է ցուցաբերում այդ ծրագրի ուսումնասիրության և նախագծային փուլերի ֆինանսավորման, իսկ ապագայում նաև շինարարական աշխատանքներին մասնակցելու առումով: Նախագծի վերաբերյալ քննարկումներ են եղել նաև Համաշխարհային բանկի և Վերակառուցման ու Զարգացման Եվրոպական Բանկի հետ: Ընդհանուր առմամբ Հայաստանում գործող միջազգային ֆինանսական կազմակերպությունները դրական են գնահատում շինարարության գաղափարը և պատրաստ են մասնակցել ֆինանսավորմանը: Պարսից ծոց - Սև ծով - Բուլղարիա և Հունաստան տրանսպորտային միջանցքի ստեղծման նախագիծը ցույց է տալիս որ երկաթգծի նկատմամբ դրական վերաբերմունք է առկա ԵՄ-ում: Դեռ 2008թ. նոյեմբերին Եվրահանձնաժողովի փոխնախագահ, տրանսպորտի հարցերով հանձնակատար Անտոնիո Տայանան ողջունել է Հայաստան - Իրան երկաթգծի շինարարությունը, ինչպես նաև նոր ավտոճանապարհի կառուցման Հայաստանի և Վրաստանի նախագահների պայմանավորվածությունը[8]:

Թեպետ Իրանը տնտեսական և համագործակցության այլ ոլորտներում համարվում է Հայաստանի կարևորագույն գործընկերներից մեկը և երկու երկրների միջև ստորագրվել են համագործակցության շուրջ 100 փաստաթղթեր, գրանցվել են հարյուրավոր հայ-իրանական համատեղ ձեռնարկություններ և վերջերս ստորագրվել է վիզաների չեղարկման մասին համաձայնագիր, առևտրի և ներդրումների ներկա վիճակը հեռու է բավարար համարվելուց: Դեռ 2010թ. Իրանը Հայաստանին առաջարկել է ազատ առևտրի վերաբերյալ համաձայնագիր ստորագրել երկու երկրների

միջև: Ենթադրվում էր, որ այդպիսի համաձայնագրի ստորագրումը թույլ կտա երկու երկրների միջև տարեկան ապրանքաշրջանառությունը մեկ տարվա ընթացքում հասցնել 500 մլն. դոլարի և էապես ավելացնել սահմանային փոխանակումները և բեռնատարների երթևեկությունը: Սակայն, համաձայնագիրն այդպես էլ չի ստորագրվում՝ ամենայն հավանականությամբ Երևանի վրա Մոսկվայի ճնշման պատճառով: Ներկայումս այդ ամենը բարդանում է նրանով, որ Հայաստանը լինելով ԵՏՄ անդամ, փաստացի զրկված է Իրանի հետ ինքնուրույն առևտրատնտեսական հարաբերություններ կառուցելու հնարավորություններից: 2015թ. տվյալներով հայ-իրանական ապրանքաշրջանառությունը կազմել է 276 մլն. դոլար, ինչը Հայաստանի արտաքին առևտրաշրջանառության ընդամենը 5.8 տոկոսն է[9]: Հատկանշական է, որ այդ ծավալի զգալի մասը բաժին է ընկնում էլեկտրաէներգիա գազի դիմաց բարտերային պայմանագրով նախատեսված գազի ներմուծմանն ու էլեկտրաէներգիայի արտահանմանը: Հայաստանի տնտեսության իրական հատվածում կատարված իրանական ներդրումների համախառն հոսքը 2015թ. դեկտեմբերի վերջի դրությամբ կազմել է ընդամենը 6,2 մլն. դոլար (կամ ընդհանուր ներդրումների 0,06 տոկոսը), որից ուղղակի ներդրումները 4,6 մլն. դոլար (կամ ընդհանուր ներդրումների 0,07 տոկոսը) [10]:

Իրան-Վրաստան: Իրանի և Վրաստանի հարաբերություններում շրջադարձային է դիտարկվում 2010թ.: Այդ տարվա նոյեմբերին պայմանավորվածություն է ձեռք բերվում երկկողմանի առանց վիզայի ռեժիմ կիրառելու վերաբերյալ, ուղղակի ավիահաղորդակցություն է հաստատվում երկու երկրների մայրաքաղաքների միջև, իսկ Բաթումում բացվում է Իսլամական Հանրապետության գլխավոր հյուպատոսարանը: Արդյունքում՝ նկատելիորեն աշխուժանում են զբոսաշրջային հոսքերը և տնտեսական հարաբերությունները: 2011թ. հունվարին իրանական այցելությունները Վրաստան ավելացան հասնելով 21,300, իսկ 2012թ.՝ ավելի քան 89,600 մարդու[11]: Վրաստանում գրանցված իրանական ձեռնարկությունների թիվը երկու տարվա ընթացքում ավելացավ 100-ից մինչև 1500: Սակայն, 2013թ. «Վրացական երգանք»-ի կողմից կառավարությունը չեղարկեց առանց վիզային ռեժիմը միակողմանի կարգով: Արդյունքում իրանցի այցելուների թիվը 2015թ. կրճատվեց 72%-ով 2012 թվականի համեմատությամբ[12]:

Առանց վիզայի ռեժիմը նպաստել է Իրանի և Վրաստանի միջև առևտրաշրջանառության ավելացմանը: Եթե 2010թ. փոխադարձ ապրանքաշրջանառությունը կազմել է մոտ 42 մլն. դոլար, ապա 2013թ. արդյունաբերվել այն գերազանցել է 100 մլն. դոլարը: Առևտրաշրջանառությունը շարունակել է ավելանալ նաև 2014թ., հասնելով 151 մլն. դոլարի, 2015թ.-ին կազմել է 128,1 մլն. դոլար, իսկ 2016թ. հունվար հուլիսին՝ 65,3 մլն. դոլար[13]: 2013թ. գարնանը երկու երկրների միջև ստորագրվել է ազատ տնտեսական գոտիների ոլորտում երկկողմանի համագործակցության համաձայնագիր: Թեհրանը ձգտում է հասնել երկու երկրների միջև արտոնյալ մաքսատուրքերի կիրառման վերաբերյալ համաձայնագրի կնքմանը: Իրանը շահագրգռված է Վրաստանի՝ որպես ԵՄ ազատ առևտրի կարգավիճակ ունեցող երկրի հետ առևտրա-տնտեսական հարաբերությունների ընդլայնման և խորացման հարցում: Այդ հարաբերությունների զարգացմանը զուգընթաց Իրանը շահագրգռված կլինի կառուցել պահեստներ, նավահանգիստներ և ներդրումներ կատարել Վրաստանի ինդուստրիալ գոտիներում: 2013թ. վերջին հայտարարվել է իրանա-վրացական առևտրա-արդյունաբերական պալատի ստեղծման պլանների մասին: Վրաստանում այն կարող է ներկայացնել Քութայիսի ինդուստրիալ գոտին և Աջարիայի առևտրա-արդյունաբերական պալատը: Իրանի և Վրաստանի միջև առանց վիզայի ռեժիմը վերականգնվել է 2016թ. փետրվարին:

